ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Բարոյական դաստիարակությունն ընտանիքում*

ԿԱՏԱՐՈՂ՝ *Թեհմինե Աշրաֆյան*

ՂԵԿԱՎԱՐ՝ *Մ.Գ.Թ. Լուսինե Միրաբյան*

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն---------- 3

Գլուխ 1.Երեխայի բարոյական դաստիարակության տեսական ասպեկտներն ընտանիքում--- ---------- 6

1.1 Խնդրի պատմությունից ---------- 6

1.2 Բարոյական դաստիարակության էությունը ---------- 8

Գլուխ 2. Բարոյական դաստիարակության հիմնախնդիրներն ընտանիքում - 13

Փորձարարական աշխատանք ---------- 17

Հավելվածներ ---------- 28

Եզրակացություն ---------- 37

Գրականություն ---------- 38

Ներածություն

Մարդուն մտավոր դաստիարակել, առանց նրան բարոյապես դաստիարակելու, նշանակում է հասարակության համար սպառնալիք դաստիարակել

Թեոդոր Ռուզվելտ

Բարոյական դաստիարակությունը երեխային համամարդկային և սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Բարոյական դաստիարակության խնդիրը լայն իմաստով մարդկության զարգացման ողջ ընթացքի առաջացրած խնդիրներից մեկն է: Ցանկացած դարաշրջան, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման իր առանձնահատուկ խնդիրներին համապատասխան թելադրում է բարոյական դաստիարակության և վարքի ձևավորման անհրաժեշտություն:

Ընտանիքը եղել և մնում է անձի բարոյական դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը: Ընտանիքում են դրվում բարոյական դաստիարակության նախահիմքերը, իսկ այդ նախահիմքերից էլ հետագայում ձևավորվում և ամրապնդվում են անձի վարքի ձևերը: Ընտանիքն այն առաջին սոցիալական բջիջն է, ուր երեխան ոտք է դնում ծնվելուց հետո: Ընտանեկան միկրոմիջավայրն աճող երեխային փոխանցում է նախորդ սերունդների կուտակած սոցիալական փորձն ու գիտելիքները: Երեխան վաղ տարիքում սովորում է ծնողների վարքագծի նորմերը և դրանց համապատասխան կառուցում է իր հարբերությունները շրջապատի մարդկանց հետ: ՈՒստի, ընտանիքը պիտի կարողանա դաստիարակել հոգեպես հարուստ, բարոյական բարձր սկզբունքներով առաջնորդվող սերունդ: Այն պետք է դառնա հասարակական կարգի, բարոյական սկզբունքների ամենահուսալի հենարանը: Ընտանիքում է, որ երեխան սովորում է իր գործողությունները փոխկապակցել այլ մարդկանց շահերի հետ, հաշվի առնել նրանց ցանկություններն ու տեսակետները որոշակի խնդրի վերաբերյալ և հոգ տանել ուրիշների մասին: Ծնողի անձնական օրինակը հանդես է գալիս որպես բարոյական փորձի փոխանցման յուրահատուկ և հիմնական ձև: ,,Անկարգություն չի լինի այն ընտանիքում, որտեղ

ծնողի վարքը բարոյականության բարձրագույն տիպար է„- ասել է ռուս գրող Ի.Ս. Տուրգենևը:

Ի՞նչ բարոյական արժեքների, բարոյական իդեալների և հասկացությունների հետ պետք է ծանոթացնել երեխաներին: Ինչպե՞ս ճիշտ կազմակերպել նրանց կենսագործունեությունը: Ո՞րն է ընտանիքի դերը երեխայի բարոյական դաստիարակության գործում: Ինչպե՞ս կարելի է երեխայի մեջ արթնացնել լուսավոր և բարի զգացմունքներ:

Սույն հետազոտական աշխատանքի ***արդիականությունը*** կայանում է նրանում, որ մեր օրերում, առավել քան երբևէ մեծանում է բարոյական դաստիարակության, բարոյական արժեքների դերը: Համընդհանուր բարոյական արժեքները / արժանապատվություն, պատիվ, պարտականություն, պարտքի և պատասխանատվության զգացում և այլն / պետք է դառնան ներքին խթաններ՝ ձևավորվող անհատականության զարգացման համար:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- ✓ *Ուսումնասիրել բարոյական դաստիարակությանը վերաբերող գիտական, գիտա-մեթոդական գրականությունը, այլոց փորձը, կատարել եզրահանգումներ:*

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

1. *վերլուծել բարոյական դաստիարակության խնդիրները հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ, նկարագրել բարոյական դաստիարակության էությունը,*
2. *բացահայտել ընտանիքում երեխաների բարոյական դաստիարակության հիմնախնդիրները,*
3. *իրականացնել հետազոտություն ծնողների և երեխաների շրջանում՝ վերհանելով բարոյական դաստիարակության խնդիրներն ընտանիքում :*

ՈՒսումնասիրության նպատակին հասնելու և աշխատանքում առաջադրված խնդիրները լուծելու համար օգտագործվել են հետազոտության հետևյալ ***մեթոդները՝***

- *Երեխաների բարոյական դաստիարակության խնդրի վերաբերյալ մանկավարժական, հոգեբանական և մեթոդական գրականության և լավագույն փորձի ուսումնասիրություն և վերլուծություն*
- *Ծնողների և երեխաների հետ զրույցների վերլուծություն*
- *Թեստավորում, փորձարարական տվյալների քանական և որակական մշակում, արդյունքների ներկայացում*

Աշխատանքի կառուցվածքը՝

Աշխատանքը բաղկացած է 38 տպագիր էջից, որն իր մեջ ներառում է՝

- Ներածական մաս
- 2 գլուխ. 1-ին գլուխը բաղկացած է 2 ենթագլխից
- Փորձարարական աշխատանք
- Հավելվածներ
- Եզրացություն
- Գրականություն

Հետազոտությանը մասնակցել են թվով 30 ծնող, 25 երեխա: Հետազոտությունն իրականացվել է Վանաձորի Ֆ. Նանսենի անվան թիվ 2 մանկապարտեզի միջին խմբի ծնողների և երեխաների հետ: Հարցաթերթերի նմուշները կցված են:

ԳԼՈՒԽ 1

Երեխայի բարոյական դաստիարակության տեսական ասպեկտներն ընտանիքում

1.1Խնդրի պատմությունից

Երեխայի դաստիարակության վրա ընտանիքի ազդեցության հարցի պատմությունն իր արմատներով գալիս է հին ժամանակներից: Բացի ուսուցիչներից այն հուզել է դրաշրջանների և ժողովրդների բազմաթիվ ականավոր ներկայացուցիչների: Է. Կանտը, Հեգելը, Ժ.Ժ. Ռուսոն և այլոք իրենց աշխատություններում ուշադրություն են դարձրել ընտանեկան դաստիարակությանը: Փաստն այն է, որ ընտանեկան դաստիարակությունն անքակտելիորեն կապված է հասարակության, պետության կյանքի հետ:

Մարդկության պատմության ընթացքում մանկավարժության ոլորտի ներկայացուցիչները զբաղվել են երեխաների բարոյական դաստիարակության խնդիրներով: Եթե համեմատենք հիմնական հայտնի մանկավարժական տեսություններն ընդհանուր առումներով, ապա կարող ենք պարզել, որ դրանք միավորող գաղափարը մանկավարժներին գիտելիքների պաշար տալն է, թե ինչպես և ինչ միջոցներով դաստիարակել երեխաների մեջ բարոյական արժեքներ: Հարկ է նշել, որ մանկապարտեզը, ապա՝ դպրոցը, ազդում են երեխայի բարոյական գիտակցության ձևավորման վրա: Բայց միայն ընտանիքում են դրվում անհատի բարոյական հիմքի առաջին աղյուսները:

Սոցիալական, հասարակական, քաղաքական բարոյական դժվարությունները պատմության յուրաքանչյուր ժամանակաշրջանում ունեն իրենց առանձնահատկությունները: Սա ժամանակի մտածողներին /մանկավարժներ, հոգեբաններ, փիլիսոփաներ / հուշում է այս խնդիրը դիտարկել այն տեսանկյունից, որն ավելի մեծ չափով արտացոլում է այդ հատկանիշները: Տեսակետները միշտ չէ որ համընկնում են և, ավելին, հաճախ տրամագծորեն հակադիր են:

<<Ֆ. Ֆրադկինը և Մ. Պլոխովան նշում էին, որ մինչ հեղափոխությունը դպրոցական կրթությունը համարվում էր հիմականին՝ ընտանեկան կրթությանն ու դաստիարակությանը հավելյալ: Բարոյական հիմքերը, - պնդում էին Լ. Ն. Տոլստոյը, Ս. Ա. Ռաչինսկին, Կ. Դ. ՈՒշինսկին և այլ մանկավարժներ,- դրվում են ընտանեկան դաստիարակության արդյունքում, իսկ դպրոցի հիմնական խնդիրը երեխաներին կրթություն տալն է: Դաստիարակությունն արդյունավետ է, եթե կա անցյալի, ներկայի և ապագայի շարունակականություն: Հենց ընտանիքն էլ ապահովում է այդ կապը: Մարդու բարի կամքն ու խիղճն արթնանում են բարենպաստ ընտանեկան միջավայրում: Հարցը սկզբունքորեն այլ կերպ լուծվեց հեղափոխությունից հետո: Մարդկանց նոր տեսակի ձևավորման խնդիրը պահանջում էր <<անջատում>> ընտանեկան <<պահպանողական>> դաստիարակությունից: Ենթադրվում էր, որ յուրաքանչյուր ընտանիք երեխաներին անվճար մանկական հաստատություններ տանելու հնարավորություն ունենար:

60-ական թթ. հայտնի մանկավարժ Վ. Ա. Սուխոմլինսկին պայքարի մեջ է մտնում 30–ական թթ. մանկավարժական մոտեցման դեմ: Նա առաջինն էր խորհրդային մանկավարժության մեջ, ով դիմեց երեխայի հոգևոր կյանքի գործընթացներին, կարեկցանքի, համակրանքի անհրաժեշտությանը, երեխաների և ծնողների դաստիարակչական գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը>>:[8,15]

Այսպիսով, տարբեր ժամանակներում բարոյական դաստիարակության խնդրի լուծման ուղիները և ընտանիքի տեղն ու դերն այդ գործընթացում հակադրվում են միմյանց: Երբեմն հարցականի տակ է դրվում ծնողների դերը, ծնվում է երեխային ընտանիքից հեռացնելու և համայնքային դպրոցներում մեծացնելու գաղափարը, երբեմն, ընդհակառակը, ասվում է, որ պետք է ստեղծել բոլոր պայմանները ծնողների և մանկավարժների կրթական գործունեության համար:

1.2 Բարոյական դաստիարակության էությունը

Բարոյականությունը հասարակական գիտակցության ձև է, որը փոխանցվում և գնահատվում է հասարակության կողմից: << Բարոյականություն >> տերմինը ծագել է բնավորություն բառից: Լատիներենում բարքեր բառը հնչում է moralis ՝ բարոյականություն: Բարոյականությունը այն չափանիշներն ու նորմերն են, որոնք առաջնորդում են մարդկանց իրենց վարքագծում, առօրյա արարքներում: Բարոյական նորմերը որոշակի հիմնավորում են ստանում պատկերացումների տեսքով, թե ինչպես պետք է մարդն ապրի և իրեն պահի հասարակության մեջ: Բարոյականության մասին պատկերացումները փոխվում են հասարակության զարգացման հետ մեկտեղ: Հասարակության, սոցիալ-տնտեսական ձևավորումների փոփոխությանը զուգահեռ փոխվում են պատկերացումները բարոյական, սոցիալական միջավայրում վարքագծի համապատասխան նորմերի և սովորույթների մասին: Լ. Ս. Գրիգորովիչը տվել է բարոյականության հետևյալ սահմանումը. << Սա անձնական հատկանիշ է, որը միավորում է այնպիսի հատկություններ, ինչպիսիք են բարությունը, պարկեշտությունը, կարգապահությունը, կոլեկտիվիզմը>>: [5,104]

<<Բարոյականության հիմնական չափանիշը բարոյական վարքագիծն է, որը դրսևորվում է հասարակական հարաբերություններում և բնութագրվում է հետևյալ համամարդկային արժեքներով.

- Բարությամբ՝ մարդասիրական վարքագծով, բարյացկամ վերաբերմունքով արտաքին աշխարհի հանդեպ;
- Արդարամտությամբ՝ վարքագծին բնորոշ է սեփական և դիմացինի գործողությունների ճշմարիտ և օբյեկտիվ գնահատում;
- Գեղեցկությամբ՝ գեղեցիկի սկզբունքներին համապատասխանող վարքագծով, գեղեցիկը տգեղից տարանջատելու կարողությամբ;
- Հանդուրժողականությամբ՝ ներողամիտ վարքագծով, սխալվելու հնարավորության ընդունմամբ:

Բարոյական վարքագիծը ձեռք է բերվում սոցիալականացման ընթացքում, ինչպես նաև ենթակա է ձևավորման բարոյական դաստիարակության միջոցով: Բարոյական դաստիարակության տեսական հիմունքները բխում են բարոյագիտությունից, որը ուսումնասիրում և մշակում է բարոյական վարքագծի հիմնական չափանիշները՝ համամարդկային արժեքների և հասարակության կողմից ներկայացվող էթիկական պահանջների համադրման եղանակով: Բարոյականությունը բարոյական վարքի նորմերի և կանոնների գիտակցման աստիճան է, որը դրսևորվում է ներքին սուբյեկտիվ դիրքորոշմամբ աշխարհի հանդեպ: Աշխարհի կարևորագույն բաղկացուցիչ մասն է նաև <<ես կառույցը>>: Այսպիսով, բարոյականությունն իր մեջ պարունակում է օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրեր, որոնք փոխպայմանավորված ձևավորելով միասնաբար ներկայացնում են անձնավորության բարոյական որակներն ու սոցիալական ուղղվածությունը: Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների մանկավարժական վարպետությամբ: Բարոյական դաստիարակությունը սոցիալական արժեքներին հաղորդակից դարձնելու նպատակաուղղված գործընթաց է: Այն կազմակերպվում և ղեկավարվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է ցանկացած ներգործության նկատմամբ, նա սպունգի նման ընկալում է սոցիալական միջավայրի ներգործությունը և, ընդօրինակելով մեծահասակներին, փորձում է համապատասխանել մարդկային կենսակերպին բնորոշ չափանիշներին, դրսևորումներին: Փաստորեն, բարոյական որակը համալիր բարոյական հատկություն է, այն արդյունք է զարգացած բարոյական գիտակցության: Բարոյական գիտակցության հետ մեկտեղ ձևավորվում են անձնային կարևորագույն հատկություններ, որոնք դաստիարակվում են բարոյական գիտակցությունից անկախ: Այդպիսի հատկություններց են, օրինակ՝ բարությունը, մարդասիրությունը, ընկերասիրությունը, հայրենասիրությունը և այլն: Բարոյական դաստիարակության ընթացքն առաջին հերթին ենթադրում է բարոյական որակի ձևավորում, որի հիմքերը դրվում են նախադպրոցական տարիքում: Կարելի է առանձնացնել բարոյական որակի ձևավորման հետևյալ ընթացքը.

- ✓ Բարոյականության մասին գիտելիքների և պատկերացումների ձևավորում,
- ✓ Արարքների և վարքի դրդապատճառների զարգացում,
- ✓ Աշխարհի հանդեպ դրական վերաբերմունքի և սոցիալական զգացմունքների ձևավորում,
- ✓ Բարոյական արարքների խթանում և բարոյական վարքագծի ձևավորում:

Բարոյական դաստիարակության պրակտիկան նախադպրոցական տարիքում ցույց է տալիս, որ նշված մեխանիզմը՝ բաղադրատարրերի հաջորդական ձավորման պայմաններում, նպաստում է ցանկացած բարոյական հատկության ձեռքբերմանը: Հետաքրքիր է այն, որ նշված մեխանիզմը բավական արդյունավետ է, նույնիսկ, բացասական որակների ձևավորման ընթացքում: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ բարոյական որակի դաստիարակության նշված եղանակը օբյեկտիվ է և կարող է համարվել նաև բարոյական դաստիարակության ուղի: Բարոյական դաստիարակության մեխանիզմն է.

/գիտելիքներ և պատկերացումներ/ + /արարքներ և վարքագիծ/ + / վերաբերմունք և զգացմունքներ / + / արարքներ և վարքագիծ /-- ***բարոյական որակ***

Մեխանիզմի գլխավոր առանձնահատկությունը նրա շղթայաձև կառուցվածքն է, այսինքն՝ բաղադրատարրերի տրամաբանական հաջորդականության անհրաժեշտությունը: ՈՒղին արդյունավետ է միայն բոլոր տարրերի որոշակի հերթափոխման պայմաններում: Բաղադրատարրերը չեն կարող ո՛չ փոխարինվել, ո՛չ էլ դուրս մնալ շղթայից: Բարոյական դաստիարակության մեխանիզմն ամբոջական է իր մանկավարժական ներգործության ընթացքով և տրամաբանությամբ: Միևնույն ժամանակ այն ճկուն համակարգ է, ուր հնարավոր են տարրերի տեղափոխություններ՝ պայմանավորված ձևավորվող բարոյական որակի բարդությամբ կամ երեխայի անհատական առանձնահատկություններով:

Բարոյական որակի ձևավորման արդյունքում երեխան ձեռք է բերում բարոյականության երեք կարևորագույն հատկանիշ՝ *բարոյական գիտակցություն*, *բարոյական վերաբերմունք արտաքին աշխարհին* և *բարոյական վարքագիծ*>>: [1,161]

Նշված հատկանիշներն օգնում են նրան կառուցել արժևորված հարաբերությունների համակարգ՝ բարոյականության սկզբունքներով:

Ըստ Ս. Ի. Վարյուխինայի մարդու բարոյական գիտակցությունը կամ մարդու բարոյական աշխարհը ներառում է 3 մակարդակ՝

- *Մոտիվացիոն և խրախուսական*
- *Զգացմունքային-զգայական*
- *Ռացիոնալ կամ մտավոր*

Այս մակարդակներից յուրաքանչյուրը բաղկացած է տարրերից, որոնք կազմում են մարդու բարոյական աշխարհի էությունը:

Մոտիվացիոն և խրախուսական մակարդակը պարունակում է գործողություններ, դրդապատճառներ, բարոյական համոզմունքներ: Բարոյական դաստիարակությունը ճիշտ է միայն այն դեպքում, երբ երեխան ինքն է ակտիվ իր բարոյական զարգացման մեջ, այսինքն՝ երբ ինքն է ցանկանում լավը լինել: Այս մակարդակն ամենակարևորն է: Այստեղ է, որ մարդու վարքագծի սաղմերն արմատավորվում, դատապարտվում կամ ընդունվում են մարդկանց և հասարակության կողմից;

Զգացմունքային-զգայական մակարդակը բաղկացած է բարոյական զգացմունքներից և հույզերից: Չեխ ուսուցչուհի Մ. Կլիմովա-Ֆյուգներովան նշում է. <<Ծնողական տունը զգացմունքների ձևավորման և զարգացման գործում առաջնային տեղ է զբաղեցնում: Ոչինչ չի կարող փոխարինել նրան: Երեխայի համար ընտանիքը կյանքին պատրաստվելու դպրոց է: Սերը, արդարությունը, հանդուրժողականությունը պետք է տիրեն ընտանիքում ոչ միայն երեխաների, այլև ընտանիքի մյուս անդամների հանդեպ>>; [6, 38] Դրա վառ օրինակն է ուսուցողական հեքիաթը, որը պատմում է, թե ինչպես երիտասարդ ծնողները, ունենալով ծեր հայր, թույլ չեն տվել նրան ընդհանուր սեղանի շուրջ նստել և ճաշել: Եվ որպեսզի, Աստված մի արասցե, ճենապակի ափսեն չկոտրի, նրա համար փայտե գդալ ու ափսե են գնել, որոնցից նա գործնականում չէր կարող ուտել: Որոշ ժամանակ անց, նրանք տեսել են թե ինչպես իրենց 4-ամյա որդին փայտից ինչ-որ բան է պատրաստում: Ծնողների այն հարցին, թե ինչ է պատրաստում երեխան, փոքրիկը պատասխանել է, որ իր ծնողների

համար ափսե է պատրաստում, որ երբ նրանք ծերանան, դրանից ուտեն: Արդյո՞ք սա երեխայի սեփական տանն ապրած հույզերի և զգացմունքների օրինակ չէ:

Նպատակին հասնելու շարժիչ ուժը զգացմունքներն են:

Ռացիոնալ կամ մտավոր մակարդակը պարունակում է բարոյական գիտելիքներ, հասկացություններ կյանքի իմաստի, բարու և չարի, պատվի, արժանապատվության մասին: Բացի հասկացություններից բարոյական գիտելիքը ներառում է նաև սկզբունքներ, իդեալներ, վարքագծի նորմեր և բարոյական գնահատականներ: Երեխան դեռ խոսել չկարողանալով, չգիտակցելով մեծերի խոսքն ու գործողություններն արդեն հասկանում, <<ընկալում>>է ընտանեկան միջավայրի բարոյական մթնոլորտը և յուրովի արձագանքում դրան: Միմյանց հանդեպ բարի կամքը, հանգիստ խոսքը երեխայի բարոյական դաստիարակության դրական նախադրյալներ են ստեղծում, մինչդեռ գոռալը, կոպիտ խոսքը, ընտանեկան լարված մթնոլորտը կհանգեցնեն հակառակ արդյունքների:

<<Մարդու բարոյական դաստիարակությունը բարդ և բազմակողմանի գործընթաց է: Այն նյութականացվում է անհատի սոցիալապես արժեքավոր որակների մեջ, դրսևորվում է հարաբերություններում, գործունեության մեջ, հաղորդակցության մեջ: Բարոյական դաստիարակությունը շարունակական գործընթաց է՝ այն սկսվում է մարդու ծննդից և շարունակվում է ողջ կյանքի ընթացում>>:[3,55]

ԳԼՈՒԽ 2

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Փոքր տարիքում երեխան շրջապատող աշխարհն ընկալում է ընտանիքի պրիզմայով: Նա ընտրում է այն ամենը, ինչ սիրում է մայրը, ծիծաղում է այն ամենի վրա, ինչ ծիծաղելի է հայրիկի համար: Երեխայի համար շատ կարևոր է ծնողի՝ աշխարհի հետ շփվելու փորձը: Երեխայի բարոյական դաստիարակության գործում շատ կարևոր դեր է խաղում ծնողների օրինակը: Այն, ինչ երեխան ձեռք է բերում ընտանիքում մանկության տարիներին, նա պահպանում է իր հետագա կյանքում: Ընտանիքի կարևորությունը պայմանավորված է նրանով, որ երեխան գտնվում է ընտանիքում իր կյանքի զգալի հատվածում, և անհատականության վրա ընտանիքի ազդեցության տևողության առումով, կրթական հաստատություններից ոչ մեկը չի կարող առավել լինել, քան ընտանիքը: Այստեղ է դրվում երեխայի անհատականության հիմքերը և երբ նա մտնում է դպրոց, երեխան արդեն կեսից ավելի չափով ձևավորված է որպես անհատ: Ընտանիքը դաստիարակության մեջ կարող է հանդես գալ և՛ որպես դրական, և՛ որպես բացասական գործոն: Երեխայի անհատականության վրա դրական ազդեցությունն այն է , որ ոչ ոք բացի ընտանիքում երեխային մոտ մարդկանցից / հայր, մայր, տատիկ, պապիկ, քույր, եղբայր / երեխային ավելի շատ չեն սիրում և նրա մասին այդչափ մեծ հոգածություն չեն դրսևորում: Եվ, միևնույն ժամանակ, ոչ մի սոցիալական հաստատություն չի կարող պոտենցիալ այդքան վնաս հասցնել երեխաներին, որքան կարող է ընտանիքը: Երեխան ծնողների մշտական հոգածության և ուշադրության կարիքն ունի: Երեխայի հետ շփվելու ժամանակը պետք է օգտագործել ոչ թե նախատիքների ու բողոքների, այլ ընկերական զրույցների, համատեղ զբոսանքների կամ զվարճալի էքսկուրսիաների համար: Քաղաքային այգիներում և հրապարակներում հաճախ կարելի է հանդիպել ծնողների, ովքեր զբոսնում են իրենց մանկահասակ երեխաների հետ, ավելի հազվադեպ կարելի է տեսնել դպոցականների, շատ հազվադեպ դեռահասի՝ ծնողների կողքին զբոսնելիս:

Բարոյական զարգացման մեկ այլ խնդիրն այն է, որ հին ժամանակներում ավանդական ընտանիքում /բաղկացած՝ պապիկից, տատիկից, ծնողներից և երեխաներից/ երեխաների դաստիարակությանը մասնակցել են մեծ թվով հարազատներ: Ավագ սերունդը, հատկապես տատիկներն առանձնահատուկ տեղ էին զբաղեցնում: Նրանք իրենց թոռնիկներին փոխանցում էին ընտանեկան ավանդույթները, տարիների ընթացքում կուտակած փորձը, տեղեկություններ ընտանիքի արմատների, արժեքների և հիմքերի մասին, որոնք մեծ ազդեցություն էին ունենում երեխաների հոգևոր և բարոյական զարգացման վրա: Ժամանակակից ընտանիքը տարբերվում է ավանդականից: 19-րդ դարի վերջից սկսած ընտանիքի զարգացումը բոլոր ոլորտներում գնաց ընտանիքի փոքրացման ճանապարհով:

Ժամանակակից հասարակության մեջ շատ առումներով փոխվել է նաև կնոջ դերը: Մեր ժամանակներում շատ մայրեր տարբեր պատճառներով դադարել են զբաղվել միայն երեխաների դաստիարակությամբ և տնային տնտեսությամբ: Նրանք գնալով ավելի են ձգտում մասնագիտական գործունեության մեջ կարիերայի աճի: Ժամանակակից տատիկներն ակտիվ հասարակական կյանք են վարում, շարունակում են աշխատել թոշակի անցնելուց հետո, ոչ բոլորն են իրենց վրա վերցնում թոռներին մեծացնելու պատասխանատվությունը:

<<Ոչ լիարժեք>> ընտանիքները ներկայացնում են առանձին հատուկ խումբ: Սոցիալական այս երևույթի պատճառները տարբեր են: Ամենից հաճախ պատճառը տամուսնալուծությունն է: Որպես կանոն, երեխան, մնում է մոր մոտ: Նման ընտանիքներում հաճախ դիտվում է դրամատիկ պատկեր: Նման ընտանիքներում տղա երեխաները չեն ունենում օրինակ՝ ում կձգտեն նմանվել / ի դեմս իրենց հոր /, իսկ աղջիկ երեխաների պարագայում նրանք գրեթե զրկվում են զգացմունքային շփման հնարավորությունից;

Մեր իրականությանը բնորոշ է նաև 1 երեխա ունեցող ընտանիքների առկայությունը: Նման ընտանիքներում մեծացող երեխաների վերաբերյալ անհանգստությունը կայանում է նրանում, որ այդ երեխաների մեջ չձևավորվի անտարբերություն այլոց հանդեպ, եսասիրություն: 2 և ավելի երեխա ունեցող ընտանիքներում առավել բարենպաստ պայմաններ են ստեղծվում աղջիկների և

տղաների համակողմանի զարգացման համար: Նման ընտանիքներում դաստիարակության հաջողությունը կապված է օրինակելի հոր և մոր անձանական օրինակի, երեխաների կյանքն ու գործունեությունը ռացիոնալ կազմակերպելու ունակության հետ:

<<Ժամանակակից ընտանիքի համար ակտուալ է ընտանիքի անդամների հարաբերությունների ոճի խնդիրը: Ընտանեկան դաստիարակության 2 հակադիր ոճ կա՝

- *ավտորիտար*
- *դեմոկրատական*

Ավտորիտար ոճը բնութագրվում է ծնողների / հաճախ հոր / գերակայությամբ: Նման ընտանիքներում չկա ընկերական թիմ, մեծահասակները չեն ընդունում երեխայի անհատականությունը, հաշվի չեն առնում երեխայի ցանկություններն ու հետաքրքրությունները:

Դեմոկրատական ոճում ծնողները ընտանիքի ողջ թիմի կյանքի ու գործունեության կազմակերպիչներն են: Ընտանեկան հարաբերությունները բնութագրվում են փոխադարձ սիրով և հարգանքով, մեծահասակներն ու երեխաները ուշադիր և հոգատար են միմյանց նկատմամբ: Նման ընտանիքներում երեխաները դառնում են նախաձեռնող, հնարամիտ, գիտակցված կարգապահ, սոցիալական կյանքի իրադարձությունների հանդեպ դրսևորում են համապատասխան վերաբերմունք>>:[11]

Երեխայի բարոյական դաստիարակությունը մեծապես կախված է ծնողների *անձնական օրինակից*: Դրա հիմքում ընկած է երեխաների՝ ընդօրինակելու կարողությունը: Դա վերաբերում է նաև բարոյական ոլորտին: Փոքր երեխան, չունենալով կյանքի անհրաժեշտ փորձ, ընդօրինակում է մեծահասակներին: Նա հիանալի է զգում ընտանիքի մթնոլորտը, վերահսկում է հայրիկի և մայրիկի հարա բերությունների բնույթը, միմյանց նկատմամբ հարգանքի աստիճանը, ընկալում է նրանց խոսակցությունների տոնայնությունն ու բնույթը, նկատում է, թե ինչպես են ծնողները լուծում առաջացող կոնֆլիկտները և կյանքի դժվարին իրավիճակները:

Ներընտանեկան կյանքի դիտարկումներն ու տպավորությունները կազմում են նրա սեփական վարքագծի հիմքը և դառնում շրջապատող աշխարհի նկատմամբ նրա վերաբերմունքի չափանիշ:

Այսօր, առավել քան երբևէ, կարևոր է դաստիարակել բարոյական բարձր արժեքներով և սկզբունքներով առաջնորդվող սերունդ:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական աշխատանք կատարելիս օգտվել եմ, **զրույցի, հարցաթերթիկների, փորձարարական տվյալների քանակական և որակական մշակման մեթոդներից**, որոնք ուղղված են եղել ծնողների բարոյական դաստիարակության մասին պատկերացումների բացահայտմանը և երեխաների՝ հարաբերությունների բարոյական կողմի մասին պատկերացումների բացահայտմանը:

Առաջին քայլը ծնողների հետ աշխատանքն էր: Նախնական ***զրույց*** է տեղի ունեցել <<***Բարոյական դաստիարակությունն ընտանիքում***>> թեմայով, որից հետո ծնողները լրացրել են <<Բարոյական դաստիարակությունն ընտանիքում>>հետազոտության համար հատուկ մշակված ***հարցաթերթիկ***՝ բաղկացած 10 հարցից:

Նպատակը՝ բացահայտել, թե ինչն են ծնողները համարում կարևոր բարոյական դաստիարակության մեջ և ինչ մեթոդներ ու միջոցներ են կիրառում:

Անցկացման մեթոդաբանությունը՝ ծնողներին առաջարկվել է պատասխանել ուսումնասիրության համար հատուկ պատրաստված հարցերին, որոնք հնարավորություն են տվել բացահայտել բարոյական դաստիարակության վերաբերյալ ծնողների պատկերացումներն ու մոտեցումները: /Հավելված 1/

Այնուհետև, երեխաների նկատմամբ ծնողների վերաբերմունքը բացահայտելու համար կիրառվել է ծնողական վերաբերմունքի *թեստային հարցաշար*:

Նպատակը՝ բացահայտել ծնողների վերաբերմունքը երեխաների հանդեպ:

Անցկացման մեթոդաբանությունը ՝ ծնողներին առաջարկվել է պատասխանել 15 հարցի /Հավելված 2 /: Յուրաքանչյուր հարցի տրվում է դրական կամ բացասական պատասխան: Արդյունքների գնահատման և մշակման հիմքը հարցաշարի բանալին է, որը հնարավորություն է տվել բացահայտել ծնողական հարաբերությունների մակարդակը:

Հաջորդ քայլը երեխաների հետ աշխատանքն է: Օգտագործվել է <<*Պատմություն նկարներով*>>/ տեխնիկան /Հավելված 3 /

Նպատակը ՝ պարզել, թե արդյոք երեխաները տեղյակ են օբյեկտիվ գործունեության մեջ հարաբերությունների բարոյական կողմին:

Անցկացման մեթոդաբանությունը ՝ Յուրաքանչյուր երեխայի տրվում է մի շարք նկարներ /թվով 10 նկար/, որոնք պատկերում են երեխաների տարբեր գործողություններ: Երեխան պետք է այնպես դասավորի նկարները, որ մի կողմում լինեն այն նկարները, որոնք պատկերում են << լավ>> արարքները, իսկ մյուս կողմում պիտի կլինեն <<վատ>> արարքները: Հետո երեխան բացատրում է, թե ինչու է այդպես դասավորել: Երեխաների պատասխանների և մեկնաբանությունների վերլուծությունը պատկերացում է տալիս երեխաների կողմից համապատասխան բարոյական չափանիշների ընկալման և ըմբռնման մասին:

Ստորև ներկայացնում եմ հարցարանները, վերլուծությունը և մաթեմատիկական մշակումը:

Հարցաթերթ 1

/ ծնողների համար /

1. *Ի՞նչն եք համարում առաջնային ընտանեկան դաստիարակության մեջ:*

Ա. սեր և հարգանք

Բ. ազնվություն

Գ. բարություն և հոգատարություն



2. *Որքա՞ն հաճախ եք ուշադրություն դարձնում երեխաների՝ կոպտության, եսասիրության և այլնի նկատմամբ բացասական վերաբերմունքի դաստիարակությանը / զարգացնել առանց վիճելու խաղալու, միմյանց օգնելու կարողություն /:*

Ա. անմիջապես

Բ ամեն օր

Գ. հաճախ



3. Հնարավո՞ր է բարոյական դաստիարակություն իրականացնել մանկապարտեզում:

Ա. այո

Բ. ոչ

Գ. մասամբ



4. Ո՞վ է կրում երեխայի բարոյական դաստիարակության պատասխանատվությունը:

Ա. ծնողներ

Բ. հասարակություն

Գ. ծնողներ և հասարակություն



5. Ընտանեկան ո՞ր ավանդույթներն են օգնում ամրապնդել Ձեր ընտանիքը:

Ա. ընտանեկան արձակուրդներ

Բ. համատեղ հանգիստ

Գ. հանգստյան օրերի համատեղ անցկացում



6. Ձեր ընտանիքում վեճեր, կոնֆլիկտներ լինո՞ւմ են :

Ա. այո

Բ. ոչ

Գ. մասամբ



7. Վեճերի լուծման ի՞նչ միջոցներ և մեթոդներ եք կիրառում:

Ա. զրույցներ

Բ. զիջումներ

Գ. պատիժներ



8. Երեխայի դաստիարակության հարցում դիմո՞ւմ եք մեծահասակների/ տատիկ, պապիկ / օգնությանը:

Ա. միշտ

Բ. հաճախ

Գ. երբեմն



9. Բարոյական դաստիարակության ո՞ր մեթոդներն ու միջոցներն են ամենաարդյունավետը:

Ա. անձնական օրինակ

Բ. պատիժ և խրախուսանք

Գ. բարոյական թեմայով զրույցներ



10. Ի՞նչ գիտելիքների հիման վրա եք դաստիարակում Ձեր երեխային:

Ա. սեփական փորձ

Բ. խորհուրդներ

Գ. մասնագիտական օգնություն



Ծնողների կողմից լրացված ,,*Բարոյական դաստիարակությունն ընտանիքում*., հարցաթերթիկի տվյալների մշակումը ցույց է տվել, որ 30 ծնողների կեսից ավելին (76.5%) գտնում է, որ երեխայի բարոյական դաստիարակության պատասխանատվությունը պիտի կրեն ծնողները: Բոլոր ծնողներն այդ ուղղությամբ աշխատանքներ են տանում: Ընտանիքի մեծամասնություններում լինում են վեճեր, կոնֆլիկտներ, որոնք հարթվում են զրույցների, փոխզիջումների միջոցով: Ծնողների միայն մի մասն է(12.5 %) երեխայի դաստիարակության հարցում դիմում ավագ սերնդի / տատիկ, պապիկ / օգնությանը:

<<*Ծնողական վերաբերմունքը երեխաների նկատմամբ* >> *թեստային հարցաշարը* և վերջինիս արդյունքների մշակումը հնարավորություն է տվել բնութագրել ծնող-երեխա հարաբերությունները ուսումնասիրվող ընտանիքներում: << Այն հոգեախտորոշիչ գործիք է, որի նպատակն է բացահայտել ծնողների վերաբերմունքը / ծնողների և երեխաների հարաբերությունները /: Հարցաթերթիկը բաղկացած է 5 սանդղակից.

1. *Ընդունում / մերժում*- սանդղակն արտացոլում է երեխայի նկատմամբ հուզական վերաբերմունքը: Սանդղակի մի բևեռի բովանդակությունը հետևյալն է՝ ծնողին դուր է գալիս երեխան այնպիսին, ինչպիսին նա կա: Ծնողը հարգում է երեխայի անհատականությունը, ձգտում է շատ ժամանակ անցկացնել երեխայի հետ, հավանություն է տալիս նրա հետաքրքրություններին: Սանդղակի մյուս բևեռի բովանդակությունը հետևյալն է՝ ծնողն իր երեխային ընկալում է որպես վատ, անհաջողակ: Նրան թվում է, թե երեխան կյանքում հաջողության չի հասնի, վատ հակումների, սահմանափակ կարողությունների պատճառով: Ծնողը զայրույթ է զգում երեխայի հանդեպ, չի վստահում և չի հարգում նրան:

2. *Համագործակցությունը* ծնողական հարաբերությունների սոցիալապես ցանկալի պատկեր է: Բովանդակային առումով այս սանդղակը բացահայտվում է հետևյալ կերպ՝ ծնողը հետաքրքրվում է երեխայի գործերով, փորձում է օգնել ամեն հարցում: Ծնողը բարձր է գնահատում

երեխայի ստեղծագործական կարողությունները, խրախուսում է երեխայի նախաձեռնողականությունը:

3. ***Սինմբիոզ*** սանդղակն արտացոլում է միջանձնային հեռավորությունը երեխայի հետ շփման մեջ: Այս միտումը բնութագրվում է հետևյալ կերպ՝ ծնողն իրեն զգում է երեխայի հետ որպես մեկ ամբողջություն, ձգտում է բավարարել նրա բոլոր պահանջմունքներն ու կարիքները, պաշտպանել նրան կյանքի դժվարություններից և անախորժություններից: Ծնողն անընդհատ անհանգստություն է զգում երեխայի համար, երեխան նրան թվում է անպաշտպան ու փոքր / անգամ հասուն տարիքում /:

4. ***Ավտորիտար հիպերսոցիալականացում*** – արտացոլում է երեխայի վարքագծի նկատմամբ վերահսկողության ձևն ու ուղղությունը: Ծնողը երեխայից պահանջում է անվերապահ հնազանդություն և կարգապահություն; Նա ամեն ինչում փորձում է երեխային պարտադրել իր կամքը՝ չկարողանալով ընդունել երեխայի տեսակետը:

5. ***Փոքրիկ անհաջողակ*** – արտացոլում է ծնողի կողմից երեխայի ընկալման և ըմբռման առանձնահատկությունները: Ծնողի վերաբերմունքի մեջ առկա է այն հանգամանքը, որ նա երեխային տեսնում է իր իրական տարիքից փոքր: Ծնողը չի վստահում իր երեխային, նյարդայնանում է երեխայի անհաջողություններից>>: [9]

Ներկայացված և նկարագրված սանդղակներից ամենաօպտիմալը ծնողական հարաբերությունների այնպիսի մակարդակն է, ինչպիսին համագործակցությունն է: Սա ծնողական վարքագծի սոցիալապես ցանկալի պատկեր է: Ծնողը բարձր է գնահատում իր երեխայի ունակությունները, հպարտություն է զգում երեխայի համար, խրախուսում է նախաձեռնողությունը:

Չեզոք մակարդակին կարելի է վերագրել <<սիմբիոզ>> և <<փոքրիկ անհաջողակ>> տիպի հրաբերությունները: Ծնողը երեխային տեսնում է իր իրական տարիքից փոքր, ձգտում է բավարարել նրա բոլոր կարիքները, անկախություն չի ապահովում:

Ծնողների հարաբերությունների բացասական մակարդակը ներառում է ծնողական հարաբերությունների այնպիսի տեսակ, ինչպիսիք են <<մերժումը>> և <<ավտորիտար հիպերսոցիալականացումը>>: Ծնողն իր երեխայից պահանջում է անվերապահ հնազանդություն:

Ծնողների պատասխանները վերլուծելուց հետո ստացվել է երեխաների նկատմամբ ծնողական վերաբերմունքի հետևյալ պատկերը. երեխայի նկատմամբ ծնողական **օպտիմալ** վերաբերմունք նկատվում է 30 ընտանիքից 16- ում (52 %): ՈՒսումնասիրվող ընտանիքներից 11-ում (38 %) ծնողական հարաբերությունները գտնվում են **չեզոք** մակարդակում և ուսումնասիրվող 3 ընտանիքում (10%) ծնողական հարաբերությունները գտնվում են **բացասական** մակարդակում:



<<***Ծնողական վերաբերմունքը երեխաների նկատմամբ*** >> ***թեստային հարցաշարի*** վերլուծությունը, ցույց է տվել, որ ծնողների և երեխաների հարաբերություններում էական խախտումներ չկան:

<< ***Պատմություն նկարներով***>> տեխնիկայով ախտորոշումը ցույց է տվել, որ խմբի 10 երեխա ստացել են թեստի բարձր միավորներ՝ անվրեպ դասավորել են նկարները, հեշտությամբ մեկնաբանել են իրենց ընտրությունը և ցույց են տվել համարժեք հուզական ռեակցիաներ: 13 երեխա ստացել են 2 միավոր, ճիշտ են դասավորել նկարները, հիմնավորել են իրենց գործողությունները, բայց հուզական ռեակցիաները թույլ են արտահայտվել: 2 երեխա ստացել են 1 միավոր՝ չնայած որ ճիշտ են դասավորել նկարները, սակայն չեն կարողացել մեկնաբանել իրենց գործողությունները:

Ստորև ներկայացնում եմ ***թեստավորման արդյունքների մշակումն ու տվյալների քանակական վերլուծությունը.***

0 միավոր—երեխան սխալ է դնում նկարները, հուզական ռեակցիաները անբավարար են կամ բացակայում են

1 միավոր --- երեխան ճիշտ է դնում նկարները, բայց չի կարողանում մեկնաբանել իր գործողությունները, հուզական ռեակցիաները տեղին չեն:

2 միավոր --- ճիշտ դնելով նկարները՝ երեխան կարողանում է մեկնաբանել իր գործողությունները, հուզական ռեակցիաները համարժեք են, բայց թույլ արտահայտված

3 միավոր --- երեխան մեկնաբանում և հիմնավորում է իր ընտրությունը, հուզական ռեակցիաները համարժեք են, վառ դրսևորվում են դեմքի արտահայտություններով, ժեստերով և այլն:

<< ***Պատմություն նկարներով***>> տեխնիկայով հետազոտությանը մասնակցած երեխաների մեծամասնությունը (86 %) ունի բարձր և միջին մակարդակի ըմբռնում և հուզական վերաբերմունք բարոյական նորմերի նկատմամբ; Նրանց մոտ բարոյական նորմերի հուզական ռեակցիաների համարժեքության գնահատումը դրական է եղել (ժպիտ, գովասանք, հավանություն) լավ արարքներ և բացասական(զայրույթ, վրդովմունք, դատապարտում) վատ արարքների համար: ՈՒսումնասիրվող երեխաների 14 % ունի բարոյական նորմերի նկատմամբ ընկալման և հուզական ռեակցիաների միջինից ցածր մակարդակ: Նրանց հուզական ռեակցիաների համարժեքության գնահատումը ցույց է տվել, որ երեխաների մի մասը վատ արարքները համարել են նորմա, ընդունել են, որ իրենք էլ են այդպես վարվել:



Այսպիսով, փորձարարական հետազոտության ընթացում ձեռք բերված տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ ընտանիքի դերը բարոյական դաստիարակության գործում անչափ մեծ է; Ծնողներն, ովքեր ցանկանում են իրենց երեխաներին դաստիարակել ոչ թե ինքնաբուխ, այլ գիտակցաբար, պետք է նախ և առաջ կարևորեն իրենց բարոյական կերպարը, իրենց անձնական օրինակը, խոսքի և վարվելակերպի միասնությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հարցաթերթ 1

/ Ծնողների համար /

1. *Ի՞նչն եք համարում առաջնային ընտանեկան դաստիարակության մեջ:*

   Ա. սեր և հարգանք

   Բ. ազնվություն

   Գ. բարություն և հոգատարություն

2. *Որքա՞ն հաճախ եք ուշադրություն դարձնում երեխաների՝ կոպտության, եսասիրության և այլնի նկատմամբ բացասական վերաբերմունքի դաստիարակությանը / զարգացնել առանց վիճելու խաղալու, միմյանց օգնելու կարողություն /:*

   Ա. անմիջապես

   Բ ամեն օր

   Գ. հաճախ

3. *Հնարավո՞ր է բարոյական դաստիարակություն իրականացնել մանկապարտեզում:*

   Ա. այո

   Բ. ոչ

   Գ. մասամբ

4. *Ո՞վ է կրում երեխայի բարոյական դաստիարակության պատասխանատվությունը:*

   Ա. ծնողներ

   Բ. հասարակություն

   Գ. ծնողներ և հասարակություն

5. *Ընտանեկան ո՞ր ավանդույթներն են օգնում ամրապնդել Ձեր ընտանիքը:*

Ա. ընտանեկան արձակուրդներ

Բ. համատեղ հանգիստ

Գ. հանգստյան օրերի համատեղ անցկացում

6. *Ձեր ընտանիքում վեճեր, կոնֆլիկտներ լինո՞ւմ են :*

Ա. այո

Բ. ոչ

Գ. մասամբ

7. *Վեճերի լուծման ի՞նչ միջոցներ և մեթոդներ եք կիրառում:*

Ա. զրույցներ

Բ. զիջումներ

Գ. պատիժներ

8. *Երեխայի դաստիարակության հարցում դիմո՞ւմ եք մեծահասակների/ տատիկ, պապիկ / օգնությանը:*

Ա. միշտ

Բ. հաճախ

Գ. երբեմն

9. *Բարոյական դաստիարակության ո՞ր մեթոդներն ու միջոցներն են ամենաարդյունավետը:*

Ա. անձնական օրինակ

Բ. պատիժ և խրախուսանք

Գ. բարոյական թեմայով զրույցներ

10. Ի՞նչ գիտելիքների հիման վրա եք դաստիարակում Ձեր երեխային:

Ա. սեփական փորձ

Բ. խորհուրդներ

Գ. մասնագիտական օգնություն

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Թեստ- հարցաշար

/ծնողների համար /

1. *Ես հարգում եմ իմ երեխային:*

   Ա. այո

   Բ. ոչ

2. *Լավ ծնողները երեխային պաշտպանում են կյանքի դժվարություններից:*

   Ա. այո

   Բ. ոչ

3. *Ես միշտ փորձում եմ օգնել իմ երեխային:*

   Ա. այո

   Բ. ոչ

4. *Իմ երեխան կյանքում ոչնչի չի հասնի:*

   Ա. այո

   Բ. ոչ

5. *Իր տարիքի համար իմ երեխան մի քիչ անհաս է:*

   Ա. այո

   Բ. ոչ

6. *Երբ ծանոթների շրջապատում խոսում են երեխաների մասին, մի փոքր ամաչում եմ, որ իմ երեխան այնքան խելացի և ընդունակ չէ, որքան ես կուզեի:*

   Ա. այո

   Բ. ոչ

7. Ես հաճույքով եմ ազատ ժամանակս անցկացնում երեխայիս հետ:

Ա. այո

Բ. ոչ

8. Ծնողները պիտի հարմարվեն երեխային, այլ ոչ թե պարզապես պահանջներ ներկայացնեն նրան:

Ա. այո

Բ. ոչ

9. Ընտանեկան որոշումներ կայացնելիս պետք է հաշվի առնել երեխայի կարծիքը:

Ա. այո

Բ. ոչ

10. Անհնար է նորմալ հանգստանալ, եթե երեխայի հետ արձակուրդում ես:

Ա. այո

Բ. ոչ

11. *Իմ երեխան հաճախ զայրացնում է ինձ*:

Ա. այո

Բ. ոչ

12. Իմ երեխան ինձ դուր է գալիս այնպիսին, ինչպիսին որ կա:

Ա. այո

Բ. ոչ

13. Պետք է երեխային հեռու պահել իրական կյանքի դժվարություններից, եթե դրանք վնասում են նրան:

Ա. այո

Բ. ոչ

14. *Ես փորձում եմ կատարել երեխայիս բոլոր խնդրանքները:*

Ա. այո

Բ. ոչ

15. Ամենակարևորն այն է, որ երեխան հանգիստ մանկություն ունենա, մացած ամեն ինչ կլինի:

Ա. այո

Բ. ոչ

ՀԱՎԵԼՎԱԾ 3

/ երեխաների համար /

detsadik.my1.ru

shutterstock

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով <<***Բարոյական դաստիարակությունն ընտանիքում***>> թեմայով հետազոտական աշխատանքս՝ եկա այն եզրակացության, որ բարոյական դաստիարակության մեջ անգնահատելի է ընտանիքի՝ որպես երեխայի կյանքի առաջին օղակի դերն ու նշանակությունը: Երեխա-ընտանիք, երեխա-հասարակություն, ընտանիք-հասարակություն. սրանք անխզելիորեն փոխկապակցված հասկացություններ են, որոնք ունեն հետևյալ դասավորությունը՝ ընտանիք-երեխա-հասարակություն: Երեխան մեծացավ, դարձավ հասարակության գիտակից անդամ, ստեղծեց ընտանիք, ուր կրկին ծնվեցին երեխաներ ... Այստեղից կարող ենք եզրակացնել, որ մեր հասարակության բարոյական առողջությունը կախված է նրանից, թե որքան բարոյական, բարի ու պարկեշտ կլինեն մեր երեխաները: ՈՒշադրության, սիրո, արդարացի պահանջկոտության մթնոլորտում մեծացող երեխան իր ողջ կյանքի ընթացքում պահպանում է մանկության տարիներին ունեցած հաճելի ապրումները: Եվ որպեսզի երեխան ճիշտ զարգանա անհրաժեշտ է ընտանիքում պատշաճ կազմակերպել նրա դաստիարակությունը: Ընտանեկան միջավայրը, ընտանեկան դաստիարակության ոճը, նրա առանձնահատկություններն ու թերությունները մեծ ազդեցություն ունեն ժամանակակից պայմաններում երեխաների բարոյական դաստիարակության վրա:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ բարոյապես զարգացած անհատականության ձևավորման գործում ընտանիքն ունի առաջնային դեր և նշանակություն; Ընտանեկան ճիշտ դաստիարակության, ծնողի սիրո հանդեպ երեխայի վստահության պայմաններով է հնարավոր ճիշտ ձևավորել մարդու հոգեկան ներաշխարհը, դաստիարակել բարոյական բարձր արժեքներով ու բարոյական սկզբունքներով օժտված մարդ:

Երեխաները մեր ամենամեծ հարստությունն են: Արժանի օրինակ ցույց տանք մեր երեխաներին և ինչպես հայ մեծանուն գրող Համո Սահյանն է ասել. ***<<Ճշմարիտ հողի վրա կեղծ սերմեր չդնենք>>:***

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, ուս. ձեռնարկ, Եր. 2005թ., 288 էջ
2. Է. Ա. Ալեքսանդրյան Նախադպրոցական մանկավարժություն, դասագիրք 2003թ.,
3. Бабанский Р. К Педагогика; учебник для вузов, М. 1988, 388 стр.
4. Варюхина С. И. Истоки доброты; беседы о нравственном воспитании детей ж семье, Минск 1987г, 125 стр.
5. Григорович Л. А. Педагогика и психология; учебное пособие, М. 2001г., 480стр.
6. Климова- Фюгнерова Эмоциональное воспитание в семье; родителям о детях, Минск, 1981г., 174 стр
7. Розанов В. В. Сумерки просвещения, науно-популярное издание, М., 1990г., 624 стр.
8. Фрадкин Ф. Воспитание в семье и школе: взгляд сквозь десятилетия/ Ф. Фрадкин, М. Плохова // Воспитание школьников.- 1993. –номер 6, стр 15
9. Опросник родительского отношения (А.Я. Варга, В. В. Столин)
10. www.kraskizhizni.com-2015
11. m.vk.com/@nskstars-o-vospitanii-v-seme

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Այլընտրանքային նկարչության դերը նախադպրոցականի գեղագիտական դաստիարակության գործում»

ԿԱՏԱՐՈՂ՝ Ինեսա Եգանյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.Գ.Թ. Լ. Միրաբյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն

Գլուխ1. Գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում:

1.1 Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները.

1.2.Մանկական նկարչության զարգացման փուլերը

Գլուխ 2. Մոտորիկայի զարգացում:

2.1.Մանր մոտորիկայի զարգացման դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում.

2.2 Մատնանկարչությունը՝ որպես մոտորիկայի զարգացման միջոց.

Գլուխ 3. Այլընտրանքային նկարչության նպատակն ու կարևորությունը

3.1 Այլընտրանքային նկարչության դերն ու նշանակությունը գեղագիտական դաստիարակության համատեքստում

Եզրակացություն

Գրականություն

Ներածություն

Գեղագիտական դաստիարակությունը հատուկ կազմակերպված մանկավարժական գործընթաց է'ուղղված երեխայիգեղագիտական զգացումների,կյանքում և արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը,շրջապատող իրականության հանդեպ գեղագիտական վերաբերմունքի,գեղագիտական գնահատականի ձևավորմանը: Թեման արդիական է նրանով,որ գեղագիտական դաստիարակությունը նպաստում է նախադպրոցականի հուզական ոլորտի զարգացմանը ևզգայական փորձի հարստացմանը,ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության,բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխաների գեղագիտական դաստիարակությանը վերաբերող գիտական, մեթոդական , գիտամեթոդական գրականություն , այլոց փորձը,կատարել վերլուծություններ և եզրահանգումներ:

Հետազոտության խնդիրներն են՝

1. նկարագրել գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները

և մանկական նկարչության զարգացման փուլերը

2. բացահայտել մանր մոտորիկայի զարգացման դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների մոտ,

3. կարևորել այլընտրանքային նկարչության նպատակն ու կարևորությունը նախադպրոցականի գեղագիտական ճաշակի զարգացման համատեքստում

4. ներկայացնել և նկարագրել այլընտրանքային նկարչության կազմակերպման առավելությունները:

Հետազոտական աշխատանքը կառուցված է երեք գլուխներից՝ յուրաքանչյուրը երկուական ենթագլուխ,եզրակացություններից և գրականության ցանկից:

Ծավալը՝18 տպագիր էջ:՝

Գեղագիտական դաստիարակության մեջ կարևորվում է
գեղեցիկի,արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցումը,գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակությանձևավորումը, գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների ձևավորումը,գեղեցիկը ճանաչելու պահանջմունքի զարգացումը,գեղագիտական ճաշակի դաստիարակությունը: Նշված խնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը:
Գեղագիտական ուսուցման եղանակով լուծվում են
գեղագիտականդաստիարակությանը միտված մի շարք խնդիրներ՝

- ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորում,
- նկարչական ունակությունների և կարողությունների ձևավորում,
- -ապլիկացիայի ուսուցումը.-կառուցողական (ճարտարապետաշինարարական)ունակությունների և կարողություններիձևավորում,
- երաժշտական ընդունակությունների զարգացում,
- -երաժշտա-ռիթմիկ կարողությունների ձևավորում,
- -պարարվեստի տարրերի ձևավորում,
- -դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորում,
- -արտաքին և ներքին միջավայրի ձևավորման(դիզայնի)մասին ընդհանուր գաղափարների փոխանցում,
- գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորում:

Գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը երեխայի մշտական հաղորդակցումն է արտաքին միջավայրի նկենցաղի գեղագիտական կողմերի հետ:Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը,
գեղեցիկի կառուցմանը,ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը,պահանջմունքի զարգացմանը:Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:

Գլուխ1. Գեղագիտական դաստիարակության դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում:

1.1 Գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները.

Գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակնէ՝ նպաստել երեխայի գեղագիտական զարգացմանը, կյանքում, արվեստում գեղեցիկի վերաբերյալ պատկերացումների ձևավորմանը, շրջապատող
իրականության հանդեպ գեղագիտական գնահատականի և ճաշակի ձևավորմանը:
Գեղագիտական դաստիարակության հիմքում ընկած է հուզազգացումնքային
ոլորտի զարգացումը: Գեղագիտական դաստիրարակությունը նպաստում է
նախադպրոցական երեխաների հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը
և դրդում ստեղծագործության, բացահայտում
երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:Գեղագիտական դաստիարակությանխնդիրներն ուղղված են երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը, դրանք են՝

- գեղեցիկի,արվեստի մասին տարրական գիտելիքների փոխանցումը,
- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակության ձևավարումը,
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների ձևավորումը,
- գեղեցիկը ճանաչելուպահանջմունքիզարգացումը,
- գեղագիտական ճաշակիդաստիարակությանը:

Հաջորդ խնդիրները նպաստում են գեղագիտագեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողությունների ձևավորմանը:
Գեղագիտական ուսուցման եղանակով իրականացվում են գեղագիտական դաստիարակության հետևյալ խնդիրները.

- նկարչականունակությունների ձևավորումը,
- ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորումը,
- ապլիկացիայիուսուցումը,
- կառուցողականունակություններին կարողությունների ձևավորումը,

- դեկորատիվարվեստիտարրերիձևավորումը,
- գեղարվեստա-խոսքայինընդունակություններիզարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորում:

Գեղագիտական դաստիարակության հիմնական միջոցը երեխայիմշտական հաղորդ ակցումնարտաքին միջավայրի հետև կենցաղի գեղագիտական կողմերիհետ: Ամենօրյա շփումը գեղեցիկի հետնպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը:: Գեղեցիկ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը: Քննարկելով երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրը, ինչպես նաև հաշվի առնելով ներկայիս գեղագիտական դաստիարակությանը ներկայացվող պահանջներն ու նախադպրոցականի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները նշենք,որ գեղագիտական դաստիարակությունը երեխային գեղեցիկը զգալ տալու նպատակաուղղված գործընթաց է:Այն ինչպես արվեստում, այնպես էլ կյանքում ձևավորում է անձի՝ գեղեցիկը տեսնելու և ընկալելու կարողությունները: [1]

1. Գեղագիտական դաստիարակությունը նպաստում է երեխայի ինքնուրույն ստեղծագործելու կարողության ձևավորմանը ու զարգացմանը:

2. Այն օժանդակում է նաև մարդու բարոյական որակների ձևավորմանը, հարստացնում է նրա ճանչողությունը աշխարհի և բնության վերաբերյալ:

3.Գեղագիտական դաստիարակության ուղղվածությամբ պարապմունքները նպաստում են երեխայի մտածողության, երևակայության, կազմակերպվածության, կարգապահության զարգացմանը, հարստացնում նրա հուզազգացմունքային փորձը: [1;էջ 10]

1.2.Մանկական նկարչության զարգացման փուլերը

Մանկական նկարչությունը պատմում է երեխայի զարգացման ընթացքի, նրա հուզական, մտավոր, ֆիզիկակական փորձառության մասին: Մանկական նկարչությունը անցնում է զարգացման իր յուրահատուկ փուլերը, որոնք համընդհանուր են, իսկ այդ փուլերից շեղումները կարող են հուշել երեխայի զարգացման բնականոն ընթացքի խաթարումների մասին:Մանկական նկարներում յուրահատուկ կերպով արտացոլվում է երեխայի հոգեբանական զարգացումը: Օրինակ, կրտսեր նախադպրոցական տարիքում երեխաները կոնկրետ բաներ դեռևս չեն նկարում, նրանք չունեն դրա համար ֆիզիկական, մտավոր համապատասխան ունակություններ: Նրանք նկարում են պարզ, ոչ կոնկրետ պատկերներ:Այսպես, այս տարիքում երեխաները գրեթե չեն նկարում մի քանի մարդ կամ մի քանի կենդանի մի նկարում: Նրանց նկարները պատմում են մեկ կերպարի մասին:Սա ոչ թե երեխայի միայնության նշան է, այլ այդ տարիքին հատուկ վառ դրսևորում: Իսկ, ահա կրտսեր դպրոցական տարիքից սկսած երեխան արդեն սկսում է նկարել մարդկանց խմբավորումներ, քանի որ երեխան մուտք է գործում ավելի մեծ խումբ և սովորում է համագործակցել ու խմբային աշխատել:Մանկական նկարները երկար ժամանակ է, ինչ հետաքրքրում են հոգեբաններին, քանի որ դրանք հանդիսանում են երեխայի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման միջոց: Կան հատուկ մշակված բազմաթիվ թեստեր, որոնք թույլ են տալիս ուսումնասիրել այս կամ այն անհատական առանձնահատկությունը նկարչության միջոցով: Եվ դրանք մեկնաբանվում են ըստ որոշակի չափորոշիչների:Երեխաները շատ են սիրում նկարել: Նրանց համար նկարչութունը յուրահատուկ լեզու է: Բոլոր երեխաները ունեն նկարելու ձգտում, դա նրանց համար ոչ թե արվեստ է, այլ ինքնուրույն արտահայտվելու միջոց: Այն իր բնույթով նման է խաղին , հետևաբար երեխայի համար արտահայտվելու, դրսևորվելու առավել հետաքրքիր, հաճելի և բնականոն տարբերակ է: Երեխայի շրջապատի գիտակցումը ավելի արագ է տեղի ունենում, քան՝ բառապաշարի զարգացումը: Իսկ նկարչությունը առավել հեշտ տարբերակն է արտահայտելու այն, ինչ երեխան գիտի իր շրջապատի մասին, այն, ինչ զգում է: Այսինքն, նկարչությունը նպաստում է, որ երեխան ասի այն, ինչ չի կարող ասել խոսքով:Բացի դա նկարչությունը զարգացնող դեր ունի երեխայի համար:

Կապված լինելով ձեռքի աշխատանքի հետ՝ նկարչությունը ձեռքը վերածում է խոսքի օրգանի:Նկարչությունը զարգացնող դեր ունի նաև տեսողության,շարժողական կոորդինացիայի, խոսքի, մտածողության, երևակայության համար: Այն նաև համաձայնեցում է միջկիսագնդային փոխազդեցությունը:Այսպիսով, մանկական նկարները մասնագետների համար կարող են ծառայել որպես ախտորոշիչ և թերապևտիկ միջոց, իսկ առօրյա կյանքում նկարչությունը նպաստում է երեխայի ընդհանուր զարգացմանը: Մանկական նկարները յուրահատուկ պատմություններ են երեխայի զարգացման, հուզական վիճակի, ընդհանուր հոգեբանական վիճակի մասին: Եվ , անշուշտ, նկարչությունը պետք է լինի երեխայի առօրյա զբաղմունքների ցանկում:Մանկական նկարի զարգացման շատ հետազոտողներ ընդգծում են դրա փուլային զարգացումը:Յուրաքանչյուր փուլում նկարն ունի իր առանձնահատկությունները:Յուրաքանչյուր տարիքին համապատասխանում են շրջապատի, աշխարհի սեփական բացահայտումները, և դրանք արտահայտվում են նկարներում:Հետազոտողներն առանձնացնում են մանկական նկարչության զարգացման հետևյալ հիմնական փուլերը. [2; էջ 18]

Խզբզոցի փուլ. 1-3 տարեկան երեխաներ

Երեխաներին այս փուլում հետաքրքիր է նկարչության ֆիզիկական կողմը: Այս փուլում երեխան բացառապես հաճույք է ստանում ստեղծագործական գործընթացից, իսկ արդյունքը հետաքրքրիր չէ:Երեխան նկարել սկսում է անկանոն բծերից,խզբզանքներից՝ բացահայտելով իր հետքը թողնելու հնարավորությունը:Առաջին փուլում երեխան նոր-նոր է իրեն սկսում առանձնացնել շրջակա տարածությունից և ձգտում է հայտնել իր մասին իրեն հասանելի բոլոր միջոցներով: [3; էջ 46]

Նախասխեմատիկ փուլ 3-4 տարեկան երեխաներ

Այս փուլում երեխաները սկսում են բացահայտել իրենց նկարած պատկերների և արտաքին աշխարհի առարկաների միջև նմանություններ և կապեր: Երեխաները հաճախ նկարում են շրջաններ, գծեր, որոնք նմանեցնում են մարդկանց, կենդանիների կամ այլ առարկաների, որոնք իրենց շրջապատում են:

Հաճախ միայն երեխային է հասկանալի, թե ինքն ինչ է նկարել:Բնօրինակի հետ նմանությունը նվազագույն է:

Սխեմատիկ փուլ 5-6 տարեկան երեխաներ

Այս փուլում երեխան սկսում է կոնկրետ պատկերներ անել՝ օգտագործելով երկրաչափական մարմինները, հստակ տարբերակում է երկինքը հողից: Երկինքը նկարվում է կապույտ գծով, իսկ հողը՝ կանաչ գծով: Մնացած օբյեկտները տեղակայվում են այդ կանաչ գծի վրա՝ ի տարբերություն նախորդ փուլի, երբ պատկերները կարծես օդի մեջ լինեն:Նկարի առավել կարևոր մասերը նկարվում են ավելի մեծ՝ մնացած ավելի քիչ կարևոր մասերի համեմատ: Նկարները այս փուլում աչքի են ընկնում կառուցվածքով ու կազմակերպվածությամբ:Այս փուլում մանկական նկարներում հայտնվում է մարդը:Դա տեղի է ունենում,երբ երեխան գիտակցում է իր Ես-ը և սկսում իր մասին խոսել առաջին դեմքով :Մարդու առաջին պատկերները շատ սխեմատիկ են ՝ կան միայն գլուխը, ոտքերը և ձեռքերը:Այս փուլում երեխան նկարում է միայն իրեն շրջապատող մարդկանց:Եվ ընդհանրապես երեխան նկարում է այն, ինչ գիտի, այլ ոչ թե այն, ինչ աչքերի առաջ է: Նա նկարում է այն, ինչ իր համար կարևոր է:

Գլուխ 2. Մոտորիկայի զարգացում:

2.1.Մանր մոտորիկայի զարգացման դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքում.

Առկա են մոտորիկայի երկու տեսակ՝ մանր և խոշոր: Այս երկու մոտորիկաների վաղ զարգացումը շատ կարևոր է երեխայի ընդհանուր զարգացման գործընթացում: Մոտորիկայի հետ կապված հարցերը հարկավոր է լուծել ժամանակին, քանի որ բացթողումները կարող են առաջացնել լուրջ խնդիրներ:Մանր մոտորիկան՝ լավ կոորդինացված մատների հստակ շարժումն է:Խոշոր մոտորիկան մարմնի մասերի շարժումն է՝ իրանի, ձեռքերի, ոտքերի:Մանր մոտորիկան գործողություններ կատարելու ընթացքում մարդու ձեռքերի դաստակների ու մատների տարբերակված և համակցված շարժումների կարողությունն է:Երեխաների մտածողությունը զարգացնելու գործում շատ կարևոր է մանր մոտորիկայի դերը:Այդ են վկայում վերջին տարիների հետազոտությունների արդյունքներն այն մասին,որ երեխաները առօրյայում և ուսումնական գործընթացում շատ դժվարություններ և խնդիրներ են ունենում այն պատճառով, որ զարգացած չէ նրանց մոտորիկան:Չէ որ մանր մոտորիկայի զարգացումը ակտիվացնում է ուղեղի աշխատանքը, խթանում նրա խոսքը, մտածողության, տրամաբանության զարգացումը: Եթե երեխան ունի զարգացած ընդհանուր մոտորիկա, ապա նա կարողանում է հստակ կառավարել իր շարժումները, ունի զարգացած հիշողություն, ուշադրություն, տրամաբանություն և կապակցված խոսք:Ահա, թե որտեղ պետք է փնտրել այն անհաջողությունների ակունքները, որոնց հանդիպում է առաջին դասարանցին՝ դպրոց ոտք դնելու առաջին պահից:Նկարչությունը , հատկապես, այլընտրանքային նկարչությունը, մեծ խթան է մոտորիկայի զարգացմանը:Այն իրենից ներկայացնում է նյարդային, մկանային և ոսկրային համակարգերի զարգացում՝ նպատակային, մանր, կենտրոնացված շարժումների, գործողությունների միջոցով, որոնք հիմնականում իրականացվում են ձեռքի մատների միջոցով: Եվ որքան զարգացած է մոտորիկան, այնքան անձը ավելի ճկուն է հասարակական միջավայրում, և ավելի երաշխավորված է նրա կյանքի որակի ապահովումը:Նկարչության միջոցով, ակտիվացնելով երեխաների մատների աշխատանքը՝ խթանում ենք մանր մոտորիկայի

զարգացումը և նպաստում ուղեղի ընդհանուր հասունությանը:Մարդու ուղեղում խոսքի և ձեռքի մատների շարժումները կոորդինացնող կենտրոնները գտնվում են հարևանությամբ:Բոլոր շարժումները ղեկավարող կենտրոնի 1/3 –ը զբաղեցնում է ձեռքի մատների շարժումների կենտրոնը:Մոտորիկան անմիջականորեն խթանիչ է հանդիսանում կենսական շատ կարևոր համակարգերի կայուն զարգացման համար:[3] Դրանք են իմացական գործընթացները՝

- ուշադրություն,
- երևակայություն,
- խոսքի ձևավորում և զարգացում:

Մատիկները, որոնց միջոցով հիմնականում զարգանում և ամրապնդվում է մոտորիկան, իրենց շարժունակությամբ խթանում են նաև մտածողության զարգացմանը: Ինչի համար անհրաժեշտ է կատարել մատների վարժություններ, շատ նկարել, հատկապես նպաստել, որ երեխաները մատնանկարչություն անեն:Երեխայի ձեռքերի մատների վարժեցումը պարզապես անհրաժեշտ պայման է: Իսկ, որ տարիքից սկսել զարգացնել մոտորիկան:Ճիշտ են նկատել գիտնականները՝ «Լավ է մեկ տարի շուտ, քան մեկ տարի ուշ»:Մարմնի և հատկապես ձեռքերի մատների շարժումները ուղիղ կապ ունեն և ազդում են մարդու նյարդային համակարգի, խոսքի, գրելու և նկարելու հմտությունների վրա:Եթե երեխան դժվարանում է կատարել իր տարիքին համապատասխան հանձնարարություններ մատների միջոցով, ապա պետք է լուրջ զբաղվել նրա մանր մոտորիկայի զարգացմամբ:Իսկ, եթե ձեռքը ճկուն է, հստակ ղեկավավում է երեխայի կողմից, ապա զարգացած է երեխայի կապակցված խոսքը, ունի իր տարիքին համապատասխան զարգացած ուշադրություն, հիշողություն, երևակայություն և մտածողություն:Մանկապարտեզում երեխաները նկարում են, ծեփում են, աշխատում մկրատով, կատարում են տարբեր աշխատանքներ: Այս ամենը նպաստում է մանր մոտորիկայի զարգացմանը, նախապատրաստում է երեխայի ձեռքը գրելուն:Սա շատ կարևոր խնդիր է, ուստի պետք է կիրառել տարբեր միջոցներ՝ երեխայի ձեռքը գրելուն նպաստելու համար: [1; էջ 8]

2.2 Մատնանկարչությունը՝ որպես մոտորիկայի զարգացման միջոց.

Նկարչության մեջ առաջին քայլերը պետք է սկսել պարզ ձևերի պատկերմամբ:Հաջորդաբար կարելի է անցնել բարդ ձևերի՝ կիրառելով ավանդական և ոչ ավանդական մեթոդներ:Ոչ ավանդական մեթոդներով կարելի է ստանալ պատկերներ տարբեր արտահայտչամիջոցներով՝ գունավորված մատիկներով, ճմրթված թղթով, սպունգով, տերևներով, բամբակե փայտիկներով, թելով և այլն: Մատնանկարչությունը ոչ ավանդական մեթոդով նկարչության տեսակ է:Գունաներկված ձեռքերի, մատների, ափի միջոցով կատարվող նկարչությունն ընդունված է անվանել մատնանկարչություն: Այս տիպի նկարչությամբ զբաղվելու ընթացքում ակտիվ են երեխայի երկու ձեռքերը:Նա կարող է նկարել աջ կամ ձախ ձեռքով, երկու ձեռքով, ձեռքի ափով, մատներով: Իսկ երբ աշխատում են երեխայի երկու ձեռքը միաժամանակ, դա նպաստում է ուղեղի երկու կիսագնդերի զարգացմանը:Մատնանկարչության նպատակն է զարգացնել երեխայի մանր մոտորիկան, և հետաքրքրասիրություն մատների և ներկերի միջոցով ստացվող պատկերների նկատմամբ: Ձեռքերով, մատներով, ափի միջոցով նկարելը կարելի է համարել նկարչության այլընտրանքային ձևերից մեկը, որի շնորհիվ կարելի է յուրովի վերարտադրել առարկաների, երևույթների պատկերները՝ գործի դնելով վառ երևակայությունը:Մատնանկարչության ժամանակ գույները նախապես խառնելով և միասին աշխատելով՝ երեխաները տեսնում են, թե ինչպես են փոխվում դրանք: Նրանք նկատում են, որ գույները խառնելիս ի հայտ են գալիս նոր երանգներ: Սկսում են զրուցել, հաղորդակցվել միմյանց հետ, կիսել մատնանկարչության պատճառած հրճվանքը:Այսպիսով, ուսումնասիրելով մատնանկարչությունը՝ որպես ոչ ավանդական նկարչության մեթոդ, գալիս ենք այն եզրահանգման, որ մատնանկարչությունը նպաստում է. [2; էջ 15]

- երեխայի շոշափելիքի զգայարան ակտիվացմանը
- նոր գույներ ստանալու գաղտնիքները՝ հայտնաբերելուն
- հաղորդակցվելու ունակության զարգացմանը
- մանր մոտորիկայի զարգացմանը

Գլուխ 3. Այլընտրանքային նկարչության նպատակն ու կարևորությունը

3.1 Այլընտրանքային նկարչության դերն ու նշանակությունը գեղագիտական դաստիարակության համատեքստում

Սա արվեստ է, որը հիմնված չէ ավանդույթների վրա, հավատարիմ չի դրանց, բայց առանձնանում է իր ինքնատիպությամբ ու յուրօրինակությամբ: Ոչ ավանդական՝ այլընտրանքային նկարչությունը, գրավում է, հիացնում, զարմացնում ու զարգացնում երեխաներին: Այլընտրանքային նկարչությունը նկարչության ձև է, որը չունի սահմաններ և արգելքներ, որտեղ նկարչության գործիք է դառնում շրջապատում ցանկացած իր: Այս մեթոդը երեխաներիին սովորեցնում է ազատորեն արտահայտել իրենց գաղափարները՝առանց որևէ սահմանափակումների:Ինչպես նաև թուլանում են երեխաների վախերը, հայտնվում է ինքնավստահություն:Այլընտրանքային նկարչությունը այն է, ինչը երեխաներին հնարավորություն է տալիս լինել ազատ, ինքնուրույն և արագորեն հասնել ցանկալի արդյունքի: Իսկ ազատ, ինքնուրույն ստեղծագործելու հնարավորությունը շատ կարևոր է երեխաների երևակայության ու մտածողության զարգացման գործում:Այլընտրանքային նկարչության միջոցով բացահայտվում է երեխաների ներաշխարհը, հոգեվիճակը՝ նպաստելով զարգացնել երևակայությունը, մտածելու և ստեղծագործելու ունակությունը:Երբ երեխան սկսկում է նկարել, թղթին է հանձնում այն ամեն, ինչ պատկերացնում է, բայց չի կարող արտահայտել բառերով:Նկարչության ընթացքում կատարելագործվում են բոլոր հոգեկան ֆունկցիաները՝ տեսողական, ընկալում, պատկերացում, երևակայություն, հիշողություն, մտածողություն:Նկարչությունը նպաստում է երեխայի միջավայրի ճանաչողական գործընթացին, երեխաների գունային ճանաչողությանը և մտապահմանը: Այն նպաստում է նաև երեխայի հուզական ոլորտի զարգացմանը և զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում նրա իմացական գործունեությունը և դրդում ստեղծագործության ,բացահայտում երեխայի ընդունակությունները և ձևավորում անձնային կարևոր հատկություններ:Այն նպաստավոր պայմաններ է ստեղծում անհատի ամբողջական դաստիարակության համար: Այն ինքնաարտահայտման և միաժամանակ հոգեբանական լարվածության վերացման միջոց է:Այլընտրանքային նկարչությունը նպաստում է ինչպես ստեղծագործական մտածողության, երևակայության, մոտորիկայի զարգացմանը, այնպես էլ տարբեր

նյութերի այլընտրանքային կիրառմանը:Այդ նյութերը կարող են լինել տարբեր՝ թափոններ, թելեր, տնտեսական իրեր, բանջարեղեն, մրգեր և այն ամենը ինչ մտքովդ կանցնի:Երեխաների զարմանքը, հիացմունքը ու հրճվանքը սահմաններ չունի, երբ իրենց շրջապատող, այլ նպատակով ծառայող իրերը, առարկաները, սնունդը նկարելիս կարող են փոխարինել վրձնին: [2; էջ 10]

Նկարել կարելի տարբեր միջոցներով և տարբեր դիրքերով՝ հատակին պառկած, սեղանի տակ կամ սեղանի վրա, ափսեների, տերևների, ապակիների, գունավոր կամ սպիտակ թղթի վրա և այլն:Այլընտրանքային նկարչության ժամանակ վրձինը կարելի է փոխարինել գունավորված մատիկներով, ճմրթված թղթով, փուչիկով, փրփրապլաստով, թելերով, սպունգով, օճառի պղպջակներով, բամբակե փայտիկներով, կարտոֆիլով, մոմով, նեխուրի կամ հազարի կոթերով, ավազով, աղով, մանրաձավարով, պատառաքաղով, և շատ ու շատ այլ միջոցներով:Մեծ հետաքրքրությամբ կարող ենք հետևել, թե ինչ հաճույքով են աշխատում երեխաները թվարկված միջոցներով: Արտահայտում են իրենց զգացողությունները, տպավորությունները, պատմում, ներկայացնում են թե ինչ են նկարել, ինչով աշխատեցին, ինչ նոր գուներանգներ ստացան:Երեխաները շատ են սիրում ավազով խաղալ, ավազի վրա նկարչություն անել:Ավազով նկարչությունը ստեղծագործական հետաքրքիր ուղղություններից մեկն է:Երեխաները ավազի վրա հրաշքներ են արարում:Ավազի հետ խաղը , որը հոգեբանները որպես թերապիա են օգտագործում, թույլ է տալիս ակտիվացնել երևակայությունը: Ավազի փոխարեն կարելի է օգտագործել ցանկացած ավազանման զանգված. օրինակ՝ սպիտակաձավար, աղ , ալյուր: Ավազով երեխաները շատ հանգիստ են աշխատում, քանի որ գիտեն, որ պատկերը միշտ կարող են շտկել, նկարածը կարող են մաքրել և նոր պատկեր նկարել:Ավազանկարչությունը նպաստում է անհատականացման գործընթացին, երեխաների համար ինքնարտահայտման միջոց է, ազատում է ներքին զգացմունքները և ակտիվացնում հիշողությունը:

Երեխաների համար շատ հետաքրքիր, անակնկալ, կախարդական նկարչություն է համրվում մոմանկարչությունը, նկարելու ընթացքում երեխան չի տեսնում նկարը, չի պատկերացնում իր նկարածը, որովհետև նկարում է սպիտակ մոմով՝ սպիտակ թղթին:Վերջում՝ թուղթը գունավորելուց հետո, երևում է նկարը, մոմով ներկված հատվածները չի ներկվում:Անակնկալ նկարչություն է նաև ջրային նկարչությունը, երբ նկարում ենք անձեռոցիկի վրա, նոր, մաքուր անձեռոցիկը դնելով նկարված պատկերի վրա՝ ուրվագծում ենք նկարը ,ապա դնում ջրի մեջ, վայրկաններ անց տեղի է ունենում հրաշքը: Անձեռոցիկը թրջվելով՝ գունավորվում է ուրվագծված պատկերը:Բավականին հետաքրքիր զբաղմունք է նաև դրոշմակնիքով՝ տպիչով,

նկարչությունը:Երեխաները մեծ սիրով ու ոգևորությամբ են աշխատում, երբ կարտոֆիլի միջոցով ստանում են տարբեր մրգերի պատկերներ:

Եզրակացություն

Սույն հետազոտության արդյունքում հանգեցինք հետևյալին՝

ա/ որ գեղագիտական դաստիարակությունն ապահովում է յուրահատուկկապ կյանքի և արվեստի միջև:Միաժամանակ այն զարգացնում է երեխայի
իրականությունըհուզականորեն ընկալելու, գեղեցիկը նկատելու և արտահայտելու ը նդունաությունները,

բ/ որ գեղեցիկ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը ,

գ/ որ մանր մոտորիկայի զարգացմանը միտված այլընտրանքային նկարչության եղանակները հանդիսանում են գեղագիտական դաստիարակության կարևոր գործոններ:

Քննարկելով երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրը, ինչպես նաև հաշվի առնելով ներկայիս գեղագիտական դաստիարակությանը ներկայացվող պահանջներն ու նախադպրոցականի ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները նշենք,որ գեղագիտական դաստիարակությունը երեխային գեղեցիկը զգալ տալու նպատակաուղղված գործընթաց է:Այն ինչպես արվեստում, այնպես էլ կյանքում ձևավորում է անձի՝ գեղեցիկը տեսնելու և ընկալելու կարողությունները:

Գրականություն

1.Նաիրա Գրիգորյան «Նախադպրոցական մանկավարժություն»

2.Ս. Վարդումյան «Հրաշք մատիկներ»,Երևան 2002թ, 31 էջ

3. «Նախաշավիղ 2» գիտամեթոդականհանդես, Երևան 2010, 62 էջ

4. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր,Երեվան 2000թ

5. С.А. Козлова. «Дошкольная петагогика» Москва 1999

6. 5-6 տարեկանների «Դաստիարակի ուղեցույց».

7. Երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ.

8.Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր,Երեվան 2000թ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ *Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում*

Կատարող՝ **Լաուրա Գևորգյան**

Ղեկավար՝ **Գ. Էմինյան**

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ 1. Ազգային տոների և ծեսերի նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործում 5

Գլուխ 2. Ծես և ծիսակարգ.....9

Եզրակացություն.....15

Գրականության ցանկ.....16

Ներածություն

Մարդկությունը հարատևում է այն ժամանակ, երբ մի սերունդը կարողանում է իր ստեղծածը, իր փորձը՝ թե՛ գիտական, թե՛ արտադրական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային, անկորուստ փոխանցել հաջորդ սերնդին[5]:

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր են զբաղեցնում ավանդույթներն ու ծեսերը: Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչները նկարագրում են, թե ինչ պետք է իմանա և ինչ պետք է կարողանա անել երեխան որոշակի տարիքում: Դրանք զարգացման տարբեր ոլորտներում երեխաների վերաբերյալ ունեցած ակնկալիքներն են՝ պայմանավորված տաիքային բնականոն զարգացման օրինաչափություններով և ազգային-մշակութային առանձնահատկություններով: Այս գործում մեծ ներդրում են ունենում նախադպրոցական ուսումնական հաստատությունները:

Երեխաներն ամենաակտիվ սովորողներն են, որոնք ուզում են հասկանալ այն աշխարհը որտեղ ապրում են: Նրանք իրենց գիտելիքները և արժեքները ձևավորում են հասակակիցների, ծնողների, դաստիարակների հետ փոխհարաբերությունների, շրջապատող միջավայրի ակտիվ ուսումնասիրությունների միջոցով: Նրանց իմացական ոլորտի զարգացման կարևոր և հետաքրքիր մաս է կազմում ազգային տոների, ծեսերի, արարողակարգերի մասին տեղեկատվությունը:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ ժամնակակից աշխարհում կատարվող փոփոխությունները, ուբանիզացիան, մարդկանց հետզհետե հեռացրնում են ծիսական առօրյայից, և, հաճախ, որոշ ծեսեր դուրս են մնում գործածությունից: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հատկապես Լոռու մարզում առավել քիչ են պահպանվել ազգային տոները: Այդ պատճառով կարևորում ենք այն, որ դեռ նախադպրոցական տարիքից անհրաժեշտ է

երեխաների մեջ սերմանել ազգային տոների, ծեսերի նկատմամբ հետաքրքրություն, պահպանողականություն, որպեսզի այսօրվա սերունդը դառնա այդ ամենի ոչ թե կրկնողը, այլ կրողը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել ազգային տոների և ծեսերի ուսուցման նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների կրթադաստիարակչական գործընթացում:

Մեր առջև դրված նպատակներին հասնելու համար սահմանել ենք հետևյալ խնդիրները.

- Նկարագրել ազգային տոների և ծեսերի նշանակությունը հանրակրթության ոլորտում, ներկայացնել այդ աշխատանքների բարելավման, կատարելագործման հիմնական ուղղությունները
- Հատուկ կահավորված դասասենյակում երեխաներին ծանոթացնել ազգային մշակութայինի ակունքներին
- Իրականացնել «սերունդների խաչմերուկ» ծնող-երեխա-եկեղեցի կապը՝ ծնողներին, հատկապես՝ տատիկներին, ներգրավել ուսումնական գործընթացին:
- Ներկայացնել մանկավարժական այնպիսի պայմաններ, որոնք միտված կլինեն բարձրացնել հետաքրքրությունն ու սերը ազգային մշակույթի, ժողովրդական արվեստի, սովորույթների, ավանդույթների, ծեսերի, ժողովրդական օրացույցային տոների, ժողովրդական խաղերի, ասիկների, երգերի նկատմամբ:

Հետազոտական աշխատանքը բացի բովանդակային մասից ներառում է նաև փորձարարական մաս, որտեղ ներկայացրել ենք մեր կողմից իրականացված բաց պարապմունքի օրինակ:

Աշխատանքի ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները. իրավիճակների խաղարկում, դերախաղ, խմբային աշխատանք:

Գլուխ 1. Ազգային տոների և ծեսերի նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության գործում

Աշխարհի ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, բազմամշակութային դաստիարակության հիմքերը դրվում են ազգայինի մեջ համամարդկայինը ընդգծելու միջոցով: Երեխայի բարոյագեղագիտական դաստիարակությունը պետք է իրականացվի համընդհանուր, համամարդկային արժեքների հետ շփման միջոցով: Դրանք բացահայտվում են ազգային մշակույթին՝ գրականությանը, արվեստին, ճարտարապետությանը, քանդակագործությանը, ազգային ավանդույթներին, հերոսական պատմությանը, պարերին, երգերին, առածներին, ասացվածքներին երեխայի ծանոթացման ընթացքում[3. էջ 26]:

Ազգային ավանդույթը մշակույթի այն տարրն է, որն առավել պահպանողական է ազգային արժեքների պահպանման գործում[1. էջ 15]:

«Ավանդույթ» հասկացությունը ստուգաբանորեն նշանակում է փոխանցում, հաղորդում (լատիներեն tradition (որպես բայ trader) նշանակում է «փոխանցել»): Իմաստաբանական նշանակությունը հստակորեն մատնանշում է, որ «ավանդույթը» ամենից առաջ այն է, ինչը ոչ թե անհատի կողմից կամ նրա գործունեության արդյունքում է ստեղծվել, այլ փոխանցվել է ուրիշներից և որպես այդպիսին միայն իրեն չի պատկանում[4. էջ53]:

Այսպիսով, «Ամենալայն ըմբռնմամբ՝ ավանդույթն այն ամենն է, ինչը ժառանգվում է նախնիներից: Ավելի նեղ սահմանման դեպքում ավանդույթը դիտվում է որպես սոցիալական փորձի (գիտելիք, ապրում, վարքագիծ) կայուն ձևերի ամրագրում, արմատավորում, փոխանցում և վերարտադրություն: Մեկ այլ դեպքում ավանդույթ համարվում է սոցիալական փորձի պահպանման, փոխանցման, վերարտադրման մեխանիզմը»[1, էջ 30]:

Ժամանակի փոփոխությունները հաճախ ստիպում են հետին պլանում թողնել մի շարք ազգային տոներ և ծեսեր: Ծեսը մարդու կյանքի ամենակարևոր բաղկացուցիչ մասն է, յուրաքանչյուր սերունդ և յուրաքանչյուր դարաշրջան արտացոլվում է ծիսատոնական արարողակարգերում և դրանից խուսափելով հանգում ենք ծեսի վերացմանը:

Ազգային տոների, ծեսերի պահպանումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

- երեխաները ծանոթանում են ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային,
- սովորում են ծիսական երգեր, խաղեր, խաղերգեր ու ասիկներ,
- երգերի միջոցով հաղթահարում են բարբառային դժվարությունները,
- երեխաները դաստիարակի օգնությամբ ստեղծում են ծիսական միջավայրը,
- մասնակից են դառնում ծիսակարգի,
- արդյունքում վերականգվում է տոնն իր ամբողջ ծիսակարգով:

Այդ պատճառով ճիշտ ենք համարում վաղ տարիքից երեխաներին ծանոթացնել ազգային տոներին, նրանց մոտ ավելացնել շրջակա աշխարհի մասին պատկերացումները:

Վաղ տարիքի երեխաները հաճախ են դիտում օտարալեզու մուլտֆիլմեր, հաղորդումներ (Like Nastya, Влад и Ники և այլն), որտեղ բացի կենցաղից, ներկայացնում են նաև իրենց մշակույթը և այդպես անընդհատ դիտելով այդ, երեխաները իրենց վրա են կրում օտար մշակույթի ազդեցությունը (Halloween, Thanksgiving Day և այլն):

Ուստի խնդիրը հատկապես հրատապ է՝ երեխաների մեջ սեր սերմանել ազգային մշակույթի հանդեպ, նրանց ծանոթացնել նրա ծագմանը, սովորույթներին, ավանդույթներին: Հենց նախադպրոցական տարիքն է այն ժամանակաշրջանը, երբ հնարավոր է իրական, անկեղծ ընկղմվել ազգային մշակույթի ակունքներում:

Նախադպրոցական տարիքում երեխաներին ազգային տոներին սկսել ենք ծանոթացնել «տարվա եղանակներ» թեման ուսումնասիրելու ժամանակ՝ կիրառելով

խմբային աշխատանքի մեթոդը: Թեմայի ուսուցման ընթացքում երեխաներին բաժանեցինք երեք-չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին տրվեցին նկարներով քարտեր (հիմնականում իրենց ծանոթ տոների) պատկերված՝ Ամանոր, Սուրբ Զատիկ, Ծաղկազարդ և այլ տոներ: Հանձնարարվեց երեխաներին ուշադիր ուսումնասիրել քարտերը և յուրաքանչյուր տոն տեղադրել նախապես փակցված պաստառի վրա, որտեղ պատկերված են տարվա չորս եղանակները: Այսպես, կապելով տոնը տարվա եղանակի հետ, ստացանք հետևյալ պատկերը: Ձմռան պատկերով նկարին երեխաները տեղադրեցին Նոր տարին, Սուրբ Ծնունդը, գարնան պատկերով նկարին՝ Սուրբ Զատիկը, Ծաղկազարդը և այլն: Այնուհետև, երեխաներին ներկայացրեցինք, որ դրանք բոլորը ազգային տոներ են, որոնք ունեն իրենց նշելու նշանակությունը, ժամանակը, և որ ունենք բազմաթիվ ազգային տոներ և ծեսեր, որոնք թեև չեն նշվում, սակայն չեն մոռացվել, և որ այդ ծեսերի ու ավանդույթների պահպանողը և շարունակողը, փոխանցողը դեպի տուն և շրջակա աշխարհ իրենք են լինելու:

Երեխաները գիտակցում են, թե ինչ սեզոնային փոփոխություններ են տեղի ունենում բնության մեջ, ինչպես է փոխվում մարդկանց կյանքը՝ աշնանը կարելի է գնալ բերքահավաքի, ձմռանը սահել չմուշկներով, սահնակով և դահուկներով, տոնել Ամանորը, ստանալ նվերներ և այլն: Տոներն ավարտվում են ավանդական տոնական ուտեստներով, հյուրասիրությամբ, Սուրբ Զատկի համար՝ ներկած ձու և Զատկի տորթ, Ամանորին՝ քաղցրավենիք, ընդեղեն և այլն: Մեր նպատակն է ծանոթացնել ազգային տոներին, դրանց նշանակությանը, ինչպես նաև երեխաների հիշողության մեջ թողնել ազգային տոնի անմոռանալի ուրախությունն ու ջերմությունը, ավելի լավը, բարի դառնալու ցանկությունը:

Կյանքի յուրաքանչյուր շրջանին բնորոշ են տարբեր տոներ, մինչդեռ դրանցից մեկը գալիս ու գնում է, իսկ մյուսները դարեր շարունակ պահպանում է իր գոյությունը: Որոշ ազգային տոներ կապված են բնական փոփոխությունների հետ (ձմեռը ճանապարհելը, գարունը դիմավորելը), մյուսները՝ կրոնական օրացույցի (Սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն, Սուրբ Զատիկ, Խաչվերա, Վերափոխումն Սուրբ Աստվածածնի, Վարդավառ):

Յուրաքանչյուր տոն ունի իր սովորույթները, ավանդույթները և այլն: Դրանք համախմբում են հարազատներին, օգնում մարդուն գիտակցել իր ազգային ինքնությունը: Թեմայի ուսումնասիրությունը հնարավորություն կտա երեխաներին. պարզել, թե իրենց նախնիները ինչ հագուստով են մշակել հողը, ինչ հանդերձանքով են նստել սեղանի շուրջ և ինչ տարազով են կատարել տոնական արարողությունները:

Աշունը բերքահավաքի և թռչունների հեռանալու ժամանակն է: Մեր նախնիները նշել են աշնանային բազմաթիվ ժողովրդական տոներ, կատարել ծեսեր: Հիմնականում դրանք բոլորը նվիրված էին երախտագիտությանը՝ բերքի համար: Աշնանը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնում է Խաչվերացի տոնը, որը տաղավար հինգերորդ և վերջին տոնն է: Հիմնական ձմեռային ազգային տոնը, որին անհամբեր սպասում եք՝ առասպելական, ուրախ Նոր տարին է: Տարվա այս եղանակին նշվում է նաև տաղավար տոներից Սուրբ Ծնունդը և Աստվածահայտնությունը, Տեառնընդառաջը: Տարվա հաջորդ եղանակը գարունն է: Գարնան ամենապայծառ տոներից են Սուրբ Զատիկը, Ծաղկազարդը: Ամռանը տոնում ենք Վարդավառը:

Պարապմունքի շնորհիվ միջին խմբի երեխաները որոշակի պատկերացում կկազմեն ազգային տոների վերաբերյալ: Հետագա, արդեն Ավագ խմբում կատարվելիք միջոցառումները հիանալի հնարավորություն կստեղծեն երեխաների համար, ծանոթացնելու ժողովրդական մշակույթի ակունքներին: Սա չափազանց կարևոր է ներկա ժամանակաշրջանում, երբ նյութական արժեքները գերակայում են հոգևոր արժեքների վրա և խեղաթյուրված են երեխաների պատկերացումները բարության, գթասրտության, առատաձեռնության, արդարության և հայրենասիրության մասին: Այսպիսով, ազգային տոներն օգնում են երեխաներին զգալ իրենց ժողովրդի մի մասը, սովորել նրա ավանդույթները, զարգացնել ստեղծագործական կարողությունները: Այս տոները պատկերացում են տալիս ժողովրդական հավատալիքների, ավանդական ծեսերի և հայ գյուղացու առօրյայի մասին: Նրանք սովորեցնում են նուրբ վերաբերմունք բնության, իրենց հայրենի հողի, իրենց նախնիների և ժողովրդի պատմության նկատմամբ:

Գլուխ 2. Ծես և ծիսակարգ

Ծեսերի իրականացումը նախադպրոցական հաստատություններում նպատակ է հետապնդում երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության այնպիսի արժեքներ, որոնք կնպաստեն երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը: 4-6 տարեկան երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստն ու նշանակությունը, սակայն ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով կարելի է հասնել շատ մեծ արդյունքների:

Դաստիարակը պետք է կարողանա «Ծես» հասկացությունն այնպես մատուցի երեխային, որ վերջինս լիարժեք հասկանա, որ ծեսերի շնորհիվ են պահպանվել և սերնդեսերունդ փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը: Ծեսերի բովանդակությունը դարերի ընթացքում իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել ժողովրդի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները: Ծիսական միջավայրում կատարում են նախօրոք ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծականության մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել[2, էջ 16]:

Այսպիսով, պարապմունքները պետք է կազմակերպել այնպես. որ երեխաները քայլ առ քայլ, համապատասխան միջավայրում, արդյունավետ գործունեությամբ, իրենց լիարժեք մասնակցությամբ, ձեռք բերած կարողությունների և հմտությունների միջոցով յուրացնի ծեսը: Օգտագործենք ամեն տեսակի բանահյուսություն (հեքիաթներ, երգեր, մանկական ոտանավորներ, հմայություններ, ասացվածքներ, ասացվածքներ,

հանելուկներ, պարեր), քանի որ բանահյուսությունը երեխաների ճանաչողական և բարոյական զարգացման ամենահարուստ աղբյուրն է:

Ծիսական գործողությունները մանկապարտեզում կարելի է կազմակերպել երգելով, պարելով, խաղալով: Այսպես երեխաներին հնարավորություն է տրվում նաև ստեղծականության և ինքնադրսևորման:

Նախակրթական ուսումնական հաստատությունում մեր կարծիքով ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, քանի որ այդպես ավելի տպավորիչ ու հասանելի, հասկանալի է երեխաների համար:

ԽԱՂԸ ԶԱՐԳԱՑՆՈՒՄ Է ԵՐԵԽԱՅԻ

- **հասարակական կյանքում է ընդգրկում** — վերարտադրել, համադրել կանոնները
- **ինքնաարտահայտումը** — դիտելու և կրկնելու կանոնները
- **ակտիվությունը** — լսելու կանոնները
- **շարժողականությունը** — շոշափելու, ուսումնասիրելու, հի դիտողականությունները
- **շարժողականությունը (կոմունիկատիվ) հաղորդակցման կանոնները** — շարժումներին տրվող տեղեկատվական կանոնները
- **ստեղծագործական կանոնների ընդլայնումը** — ճիշտ կողմնորոշվելու կանոնները
- **հիշողությունը** — երգերի մեջ խաղ խաղալու
- **ուշադրությունը**

Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք

թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զագացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևերը[6]:

Առաջարկում ենք պարապմունքների ժամանակ կիրառել հետևյալ մեթոդները.

- իրավիճակների խաղարկում
- դերախաղ
- խմբային աշխատանք:

Այդ խաղերը կարելի է խաղալ ինչպես համապատասխան ծեսի, այնպես էլ ցանկացած ժամանակ՝ անհրաժեշտության դեպքում:

Եթե կան ընկույզներ, կարելի է խաղալ ընկույզով խաղեր, տիկնիկներով խաղալու համար պարտադիր չէ սպասել Բարեկենդանին, եթե հարկավոր է «չքացնել, աղալ» ամեն վատը և խանգարողը, պարտադիր չէ սպասել Զատկի Ավագ շաբաթվա չորեքշաբթի օրվան: Ավելին, եթե աշխատելիս կարիք կա սանի կամ սաների ուշադրությունը գրավել, կարելի է «չքացնել, աղալ» նրա (նրանց) անուշադրությունը, ցրվածությունը: Տվյալ դեպքում ծիսական խաղը, բացի հիմնովին յուրացնելուց, երկու կողմերի համար դառնում է հետաքրքիր ու անմիջական շփման միջոց՝ ներառելով իր մեջ, բացի իմացականից, նաև՝ հումոր[6]:

Մեր առջև դպրված է խնդիր՝ որոնել ուսուցման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնց շնորհիվ կկարողանանք լուծել գերխնդիրը, այն է,

1. երեխան պետք է ոչ միայն սովորի, այլ ապրի ծեսերն ու ավանդույթները,
2. մանկապարտեզի տարիներից այն պետք է դառնա նրա կյանքի ու կենցաղի անբաժանելի մասը,
3. երգն ու պարը դառնան ոչ թե սոսկ դաս, այլ իր հույզերն ու զգացմունքները դրսևորելու բնական միջոց,
4. տոնը պետք է ոչ թե բեմադրվի, այլ ապրվի, որ երեխան ինքը դառնա տոնի, ծեսի, ծիսակատարության ոչ թե հանդիսատես, այլ՝ մասնակից:

Այդ նպատակով Սուրբ Զատկի տոնին ընդառաջ կազմակերպել ենք միջոցառում: Միջոցառմանը կենտրոնական տեղ ենք հատկացնելը երեխաների

հետաքրքրություններին, որը խթանեց երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը:

Միջոցառման ծրագրման ժամանակ հաշվի ենք առնվել հետևյալը,

- թեմայի համապատասխանությունը երեխաների հետաքրքրություններին,
- երեխաների երևակայության ու ստեղծագործական մտածողության խթանում,
- երեխաներին համագործակցության և որոշակի պատասխանատվություն կրելու հնարավորության ընձեռում,
- ստեղծել պայմաններ երեխաների կողմից ձեռք բերված գիտելիքների և հմտությունների ինքնուրույն արտահայտելու համար,
- գիտելիքների համալրում և փորձ՝ առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Թեմա՝ *Սուրբ Զատիկ*

Նպատակ՝ *երեխաներին ծանոթացնել մեր ազգային Սուրբ Զատկի տոնին: Նրանց մեջ դաստիարակել սեր և հարգանք ազգային տոների և ավանդույթների նկատմամբ:*

Ընթացք՝

Երեխաների հետ սովորեցինք երգ՝ Յալալի և պատրաստեցինք բեմականացում: Պատրաստեցինք տոնի խորհրդանիշ զատիկներ՝ գունավոր թղթերով և պլաստիլինով ապլիկացիա:

Ավագ հինգշաբթի երեխաների հետ գնացինք եկեղեցի, մասնակցեցինք Սուրբ Զատկի տոնին նախորդող պատարագին: Երեխաներն ստացան Հայր Ներսեսի օրհնությունը, ապա բոլորով խնդրեցինք, որ Հայր Ներսեսը ներկա գտնվի մեր մանկապարտեզում Սուրբ Զատկի տոնին նվիրված բաց պարապմունքին:

Շաբաթ օրը կազմակերպեցինք տոնի համար նախատեսված ձվերի ներկման արարողություն, որին ներկա էին նաև ծնողները: երեխաները մեծ ոգևորությամբ իրանց ձեռքով ներկեցին ձվիկները, պատրաստեցին ավանդական չամիչով փլավը: Ընթացքում կրկին զրուցեցինք տոնի խորհրդի, տոնին նվիրված խորհրդանիշների մասին: Զարդարեցինք նաև խումբը, որին մեզ օգնեց եկեղեցու սպասավոր Հայր Կարենը:

Կիրակի առավոտյան բոլորով այցելեցինք եկեղեցի և երեխաները իրենց ձեռքով ներկած կարմիր ձվերը դրեցին Խորհանի վրա, սկսվեց Սուրբ Զատկի պատարագը:

Ավարտից հետո եկանք մանկապարտեզ և սկսեցինք Սուրբ Զատկի տոնին նվիրված մեր բաց պարապմունքը, որին ներկա էին Քահանա Հայր Ներսեսը և Տաշիրումգտնվող Տիրամայր կենտրոնի Քույրերը:

Պարապմունքն սկսվեց Տերունական աղոթքով, զատկական տոնը խորհրդանշող երգերով և փոքրիկ բեմականություններով: Բեմադրության անմիջական մասնակիցներից էին երեխաների տարեց տատիկները, որոնք պատմություններ էին պատմում

տարբեր ավանդույթների վերաբերյալ, երեխաների մոտ պարապմունքի ընթացքն ավելի տպավորիչ էր դառնում: Վերջում Քահանա Հայր Ներսեսը երեխաներին ներկայացրեց Սուրբ Զատկի տոնի նախապատմությունը, թե ինչպես են մեր նախնիները տոնել ազգային այս տոնը, ինչ հագուստներով, ներկայացրեց նաև տոնին հաջորդող մյուս եկեղեցական տոները:

Պարապմուքն ավարտվեց ձվախաղով:

Եզրակացություն՝

Բաց պարապմունքի շնորհիվ երեխաները ձեռք բերեցինմեր ավանդույթների և եկեղեցական տոների մասին գիտելիքներ, և որպես այդ ամենի մասնակից և «կազմակերպիչ», ունեցան բավականի հաջողված, հագեցած և ուրախ օր:

Եզրակացություն

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ազգային մշակույթի նկատմամբ կայուն հետաքրքրություն զարգացնելու համար անհրաժեշտ պայման է նրանց ծանոթացնել օրացույցային տոներին, ծեսերին, ավանդույթներին, արվեստին և արհեստներին:

Ազգային տոներն օգնում են երեխաներին զգալ իրենց ժողովրդի մի մասը, սովորել նրա ավանդույթները, զարգացնել ստեղծագործական կարողությունները: Այս տոները պատկերացում են տալիս ժողովրդական հավատալիքների, ավանդական ծեսերի և հայ գյուղացու առօրյայի մասին: Նրանք սովորեցնում են նուրբ վերաբերմունք բնության, իրենց հայրենի հողի, իրենց նախնիների և ժողովրդի պատմության նկատմամբ:

Պարապմունքները պետք է կազմակերպել այնպես. որ երեխաները քայլ առ քայլ, համապատասխան միջավայրում, արդյունավետ գործունեությամբ, իրենց լիարժեք մասնակցությամբ, ձեռք բերած կարողությունների և հմտությունների միջոցով յուրացնի յուրաքանչյուր ազգային տոն, ծես: Այդ նպատակով անհրաժեշտ է օգտագործել ամեն տեսակի բանահյուսություն (հեքիաթներ, երգեր, մանկական ոտանավորներ, հմայություններ, ասացվածքներ, ասացվածքներ, հանելուկներ, պարեր), քանի որ բանահյուսությունը երեխաների ճանաչողական և բարոյական զարգացման ամենահարուստ աղբյուրն է:

Մանկական ազգային, ծիսական խաղերը նախադպրոցական տարիքի երեխաների համար շատ կարևոր ու պահանջարկ ունեցող նյութեր են: Մանկավարժական այս խնդրի հաջող լուծումը պայմանավորված է ամենից առաջ այն մթնոլորտով և զարգացնող միջավայրով, որոնք ստեղծում է դաստիարակը՝ հաշվի առնելով իր խմբի երեխաների անհատական, հոգեբանական առանձնահատկությունները և կարիքները:

Գրականության ցանկ

1. Ալավերդյան Ն., Ավանդույթը որպես սոցիալական համակարգի կառուցարկման եղանակ, ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 160 էջ:

2. Խառատյան Հ, -Առաքելյան, Հայ ժողովրդական տոները, 2005թ

3. Ծառուկյան Ռ., Հ. Միտոյան ,Լ. Սմբատյան, Ն. Նիկողոսյան, Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը, Երևան, 2010թ:

4. Каиров В. М., Традиции и исторический процесс. М., «Луч», 1994,

5.https://mskhethno.wordpress.com/2020/04/23/%D5%B0%D5%A1%D5%B6%D6%80%D5%A1%D5%AF%D6%80%D5%A9%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AE%D5%A5%D5%BD-%D5%BD%D5%BF%D5%A5%D5%B2%D5%AE%D5%B8%D6%82%D5%B4-%D6%83%D5%B8%D5%AD%D5%A1%D5%B6%D6%81%D5%B8%D6%82%D5%B4/

6. http://ablog.gratun.am/

ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցում

Դաստիարակ՝ Լաուրա Մելքոնյան

Ղեկավար՝ Գագիկ Էմինյան

ՎԱՆԱՁՈՐ-2022

Բովանդակություն

Ներածություն……..3

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը……..…4

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ……8

Ընտանիքի գրանցման թերթիկ……12

Եզրակացություն…….....15

Օգտագործված գրականության ցանկ……...16

Ներածություն

Թեմայի արդիականությունը .Մանկավարժի համագործակցությունը ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ ծնողներին ապահովում է այնպիսի տեղեկատվությամբ, որը սովորեցնում է, թե ինչպիսի խնամք է պետք երեխաներին տալ նրանց ներուժը՝ ֆիզիկական, հասարակական, զգացմունքային, ինտելեկտուալ և հոգևոր, առավելագույնս զարգացնելու համար:

Մանկավարժ – ծնող համագործակցություն նպատակն է դրական ազդեցություն ունենալ ոչ միայն երեխաների, այլև ծնողների վրա,այն նաև ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակում է:Կարևոր նպատակներից է մանկապարտեզ -ընտանիք կապը դարձնել ավելի գործնական և վստահելի,որի արդյունքում ծնողները կդառնան մանկավարժական գաղափարների կրողները: Ծնողների հոտ կստեղծվի այնպիսի վստահելի կապ և համագործակցություն,որ կշահի երեխան,ընտանիքը և հասարակությունը:

Համագործակցության արդյունքում ծնողները ավելի լավ կճանաչեն իրենց երեխաներին,որը և հիմք կդառնա համատեղ լուծելու երեխայի դաստիարակությանը և զարգացմանը նպաստող ամենատարբեր խնդիրներ ՝ հարստացնելով ընտանեկան դաստիարակության փորձը:Մանկապարտեզի և ընտանիքի համագործակցության կազմակերպումը վեր է հանվել որպես ժամանակակից խնդիր:Համագործակցության արդյունքում ծնողները ավելի լավ կճանաչեն իրենց երեխաներին և համատեղ կլուծվեն երեխայի դաստիարակությանը և զարգացմանը նպաստող ամենատարբեր խնդիրներ՝ հարստացնելով ընտանեկան դաստիարակության փորձը:

Հետազոտության նպատակը . Ուսումնասիրել ծնող մանկապարտեզ կապը և այդ համագործակցության արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները.

Բացահայտել՝

- Ծնողների փոխկապակցությունը երեխա-մանկապարտեզ –դաստիարակ կապի ապահովումը
- Ծնողների փոխհարաբերությունները միմյանց հետ
- Ծնող մանկապարտեզ կապի համագործակցության արդյունավետությունը:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը :Ո՞վ պետք է լինի դրա նախաձեռնողը : Անշուշտ՝ մանկավարժ-ները:Նրանք պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ ի շահ երեխայի դաստիարակութ-յան:Կարևոր է, որ ծնողները հավատ ընծայեն մանկավարժ- երեխա փոխհարաբերությանը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հատկանիշները: Այդ վստահությունը և հեղինակությունը հենց այնպես չի տրվում:Դա պետք է վաստակի մանկավարժը:Համագործակցելով ծնողների հետ մանկավարժները հնարավորություն են ստանում ավելի լավ ճանաչել յուրաքանչյուր երեխայի ընտանիքը, իմանալով դաստիարակության խնդրում նրա թույլ ու ուժեղ կողմերը,որոշել իրենց օգնության չափը:

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության պայմաններն են՝

- Համագործակցված ու նպատակային պլանայնություն
- Տարբերակված մոտեցում երեխաների նկատմամբ ըստ ընտանիքների ինքնատի-րապետության, բարյացակամության և հրապարակայնության :

Մեթոդներն են՝

Անկետավորում

- Երեխաների ընդհանուր նպատակային դիտումներ
- Զրույցներ
- Այցելություններ

Ձևերն են՝

- Խորհրդատվություններ,որոնք կազմակերպվում են անհատական և ենթախմբերով:
- Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է:

Հաջողակ երեխաներ ունենալու համար, առաջարկվում է մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ձևերը՝

- Շաբաթական կամ ամսեկան լրատուներ-տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին,որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:
- Ծնողական ժողովներ

  Քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտա-հոգությունների մասին հարցեր:

➢ Ծնողական համաժողովներ

Դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:Նախապես ծնողը դաստիարակի օգնությամբ ընտրում է թեման:

Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:

➢ Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին.

Դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները ,որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

➢ Գրքերի փոխանակումներ

Սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են ծնողների և մանկավարժների համար, ծնողներին տրվում են գրքեր , ովքեր սիրում են կարդալ ՝ կիսել իրենց գաղափարներն ու կարծիքները:

➢ Այցելություն ընտանիք

Սա շատ տեղեկատվություններ կարող է տալ երեխայի մասին , ամրապնդել հաղորդակցումը:Դաստիարակը նախապես տեղեկացնում է իր այցելության նպատակի մասին, այստեղ է , որ դատիարակը նկատում է և պարզում է երեխայի անձնավորության հետ կապված շատ հարցերի պատճառները:

➢ Բաց դռների օրեր

Այն հնարավորություն է ընձեռում ծանոթանալ մանկապարտեզի ավանդություն-ներին , կանոններին , ուսումնադաստիարակչական աշխատանքների առանձնա-հատկություններին և մասնակցելու ողջ կրթական և դաստիարակչական գործընթացին:Կարելի է ցուցադրել գործունեության որևէ

ձև, պարապմունք, միջոցառում, վերջում բացահայտել նրանց տպավորությունները:

- Հարց ու պատասխանի ցերեկութեր
- Մանկավարժական հյուրասրահ
- Գաղափարների տոնավաճառ
- Վստահության հեռախոս
- Բարի գործերի օրեը
- Կլոր սեղան

Մտքերի փոխանակության , բանավեճի ձևը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ծնողի բացահայտ արտահայտել իր կարծիքը, նման դեպքերում էլ ծնվում է ճշմարտությունը:

- Զրույցներ- անհատական, խմբային

2 դեպքում էլ հստակ նպատակ է դրվում թե ի՞նչ պետք է բացահայտել կամ ինչո՞վ բացահայտել կամ ինչո՞վ օգնել:

Զրույցի բովանդակությունը պետք է լինի հակիրճ և ծնողների համար նշանակալից լինի , կազմակերպվի այնպես, որ խոսակիցը արտահայտվի: Ծնողների հետ անպայման պետք է խոսել երեխաների բնավորության շատ գծերի մասին: Բացասական երևույթների մասին պետք է զրուցել զգուշորեն, զրուցել կարելի է մեղմ , հանգիստ:

- Խորհրդատվություններ
  - Անհատական
  - Ենթախմբերով
- Խմբային
  - Անկետավորում
  - Երեխաների՝ ընդհանուր նպատակային զննումներ:
  - Փառատոներ և տոնակատարություններ
  - Սպորտային միջոցառումներ, ցերեկույթներ: (5) 208-201

Կարևոր տեղ է հատկացվում ծնող- մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը: Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված

աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվում են ծնողների համար խորհրդա-տրվական նյութեր:
Նախադպրոցական հիմնարկներում պետք է գործի նաև «Վստահության հեռախոս», «Մանկավարժի հյուրասրահ», «Գաղափարների տոնավաճառ» : Դրանք հաղորդակցության ժամանակակից ձևերն են , որոնց միջոցով կապի մեջ են մտնում ծնողների հետ:

- Ոչ պաշտոնական գրառումներ

  Դաստիարակը կարող է երեխայի միջոցով տուն ուղարկել կարճ գրառումներ, դրանք կպարունակեն ընտանիքի անդամներին ուղղված տեղեկություններ՝ երեխայի կողմից հմտությունների ձեռք բերման մասին:Կարելի է նաև շնոր-հակալություն հայտնել ծնողներին:
- Անհատական գրառումների գրքույկներ

  Այս գրքույկը ընթացիկ տեղեկությունների համար է:Ընտանիքները կարող են մանկավարժին նախազգուշացնել հատուկ իրադարձությունների մասին (օրինակ՝ ծննդյան օրերի, նոր աշխատանքի հնարավորության, ճանապարհորդությունների):
- Կապի տեղեկատվական թերթեր

  Օգտակար է ընտանիքներին միշտ թարմ տեղեկատվություն հաղորդել:Դրա միջոցով կարելի է ազդարարել ժողովները, ամենօրյա դասացուցակը, միջոցառումները, հատուկ իրադարձությունները:
- Առաջարկությունների տուփ

  Ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը , մտահոգությունները, առաջարկություն-ներն ու հարցերը ներկայացնել հատուկ տուփի միջոցով: (5) 208-201 էջ

Մանկապարտեզ -ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա:Արդյունա-վետ հաղորդակցությունը բազմապատկում է այն: Ծնողներին ուշադիր լսելով կարելի է արժեքավոր տեղեկություններ ստանալ: Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու

մանկավարժները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

Դրույթներ ծնողների հետ աշխատելու վերաբերյալ

Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրավելու համար պետք է օգտագործել բազմատեսակ ձևեր, ցուցաբերել ստեղծագործական և ճկուն մոտեցումներ:

- Ժողովները և հանդիպումները կազմակերպել ծնողներին հարմար ժամերին:
- Պահպանել սերտ կապ:
- Յուրաքանչյուր երեխայի ծնողի հետ զրուցել շաբաթը մեկ անգամ:
- Փորձել ներգրավել ամբողջ ընտանիքին:

  Երբեմն հայրերը դուրս են մնում երեխայի համար իրականացվող ծրագրերից:Պետք է որոնել տարբերակներ ընտանիքի մնացած անդամներին ներգրավելու համար:

  - ✓ Լինել համբերատար
  - ✓ Հենվել ընտանիքի ուժեղ կողմերի վրա և արձագանքել դրականորեն:
  - ✓ Պահպանել գաղտնիությունը

Խորհուրդներ ծնողներին

- ✓ Խոսել երեխայի հետ մաթեմատիկայի լեզվով
- ✓ Տալ հարցեր «Բաժակդ լիքն է, թե՞ դատարկ» :

  Առաջարկել հետևյալ հարցերը «Ուզում ես այս ամբողջ կտո՞ր տամ քեզ, թե՞ կեսը», «Հացը եռանկյունաձև կտրտենք, թե քառակուսի»:
- ✓ Երգել կամ ոտանավորներ ու շուտասելուկներ արտասանել երեխաների համար:
- ✓ Երեխային հագցնելիս հաշվել վերնաշապիկի կամ վերարկուի կոճակները:
- ✓ Երեխային թույլ տալ օգնել սեղան պատրաստելիս հաշվելով դնի համապատաս-խան սպասքը:

Ձեր ստեղծագործ երեխան.(3-5 տարեկան):

- Հաճախակի զբոսանքի դուրս գալ երեխայի հետ և զրուցել նկատված ամեն բանի մասին:
- Փորձել տարբեր կերպարներ ու ձևեր որոնել երկնքով սահող ամպերի մեջ:
- Կազմակերպել պարզ բառախաղեր , թվարկել շրջապատում գտնվող առարկաների ու էակների անունները, այն ամենը ինչ կարմիր է կամ կանաչ:
- Օգնել երեխաներին սկսելու աշխատանքը
- Օգնել նկարել կամ գունազարդել , եթե ուզում է շնիկ նկարել , բայց դժվարանում է ծնողը կարող է ասել՝ արի պատկերացնենք շնիկին , քանի՞ ոտք ունի շնիկը, որտե՞ղ է մարմնի ամենամեծ մասը:
- Երեխայի աշխատանքը գնահատեք նկարագրելով այն ինչը ձեզ դուր է գալիս ,խոսել աշխատանքի առանձնահատկության մասին:
- Երեխային հնարավորություն տալ պատմել իր աշխատանքի մասին և արտահայտել իր զգացմունքները:

Երեխայի խոսքի զարգացումը (3-5 տարեկան)

- Երեխայի հետ խոսել հստակ և բառերն արտասանել բառ-բառ, արագախոսությունը կարող է շփոթություն առաջացնել , պետք չէ թույլ տալ թոթովախոսությանը:
- Ավելի հաճախ կազմակերպել խաղերը,որոնք պահանջում են անգիր կրկնել առանձին հատվածներ:
- Խաղերը պետք է լինեն հեշտ և զվարճալի:
- Զուգորդումներ կատարել առօրյա երևույթների ու առարկաների հետ,որոնք կօգնեն հիշել նոր բառեր:
- Կարդալ ամեն օր երեխաների համար և ընթերցանությունը պետք է լինի դանդաղ ,պարզ ու արտահայտիչ:
- Թույլ տալ երեխաներին ձեռք տալ գրքին, թերթել էջերը և զարմանալ զետեղված նկարներով:
- Երեխաների համար ընթերցելը դարձնել ամենօրյա գործ:
- Խոսել նկարների մասին, պատմությունը ներկայացնելու համար պարտադիր չէ գիրքը կարդալ:
- Բացատրել, թե ինչի մասին է պատմությունը

- Հարցեր տալ պատմվածքի վերաբերյալ
- Հնարավորություն տալ երեխային հարցեր տալու:
- Օգնել երեխային պատմվածք հորինել և գրի առնել, որից հետո նա կարող է նկարագրել իր սեփական պատմվածքը:

Երեխայի մտավոր զարգացումը (5-6տարեկան)

- Երեխայի հետ միասին դիտել ,թե ինչպես են աճում բույսերը, ի՞նչն է լողում ջրի երեսին, ի՞նչ է անում անձրևը :
- Ուշադրություն դարձնել մարդկանց , շինություններին, գործիքների ձևերին , բնության երևույթներին, օրինաչափություններին:
- Խոսել թվերի մասին
- Կարդալ խանութների ցուցանակները, գրված թվերը:
- Տան մեջ կատարել չափումներ:
- Խնդրել երեխային ասել , թե ժամը քանիսն է :Դա շատ կարևոր հմտություն է:
- Օգնել երեխային դասավորել ճաշի սեղանը , թող երեխան օրինաչափություն գտնի ընտանիքի անդամների և դրված սպասքի քանակի միջև:
- Զարգացնել շատի և քչի գաղափարը:
- Ծանոթացնել թղթադրամին և մասնակից դարձնել գնումներին:
- Գունավոր թղթերից կտրել երկրաչափական պատկերներ, կատարել կառուցումներ (տուն, ճուտիկ, մարդ) և այլն:
- Օգնել երեխային նկարել օրվա տարբեր պահերը, բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունները:
- Բնության մեջ գտնել երկրաչափական ձևեր
- Թաքցնել մի առարկա և թողնել երեխան հարցերի միջոցով գտնի:
- Ասել մի երկրաչափական ձև , իսկ երեխան գտնի նման պատկերներ:

Սոցիալական և հուզական զարգացումը (5-6 տարեկանում)

Այս տարիքի երեխաները ընկերական հարաբերություններ են հաստատում հասակակիցների հետ:Նրանց համար հնարավոր է դառնում՝

- Ճանաչել ուրիշներին և իրենց
- Հետազոտություններ կատարել,հանդես գալ նոր գաղափարներով

- Զարգացնել սեփական անձի կարևորության և ինքնավստահության զգացողությունը:(5) 214-218 էջ

Դպրոցի նախաշեմին

Ծնողները կարող են օգնել իրենց երեխաներին տարբեր հարցերով , որպեսզի դառնան գործուն և ինքնավստահ աշակերտներ:

- Ձևավորել դրական վերաբերմունք դպրոցի նկատմամբ
- Ծանոթացնել և ծանոթանալ դպրոցում կիրառելով կրթական համակարգին
- Օգնել երեխային՝ ձեռք բերելու սեփական խնամքի հետ կապված որոշ հմտութ-յուններ:

Երեխան պետք է կարողանա

- ✓ Հետևել ցուցումներին
- ✓ Ճիշտ արտահայտվել
- ✓ Ուշադիր լինել և հանգիստ նստել:

Մանկապարտեզ –ծնող փոխհարաբերության մեջ ծնողներին առաջարկվում է տարբեր մեթոդներ՝ ըստ իրավիճակների

- Սովորեցնել երեխային օգնել ինքն իրեն
- Խաղալ ուրիշների հետ
- Զգուշավորությամբ ուսումնասիրել ցանկացած նորություն
- Կառավարել սեփական զգացմունքները

Երեխայի հետ շփվելու խորհուրդներ

- Հարգել երեխայի կարծիքը անգամ այն ժամանակ երբ ծնողը դրա հետ համամիտ չէ
- Թույլ տալ,որ երեխան ավարտի իր միտքը ,փորձել նրան հուշել ճիշտ արտահայտություններ, որպեսզի նա կարողանա ձևակերպել նախադասութ-յունը
- Պետք է ուրախ բացականչություններով արձագանքել նրա արտահայտած մտքերին

Խորհուրդներ երեխայի դաստիարակության հարցում

- Ավելի շատ խրախուսել քան պատժել
- Խուսափել այնպիսի բախումներից ,որտեղ ծնողը հաղթող չի կարող լինել
- Կարևոր հարցերում լինել հետևողական և վճռական
- Նկատողություն անել նույն պահին
- Երեխային առաջարկել ընտրություն,որը բավարարում է ծնողին: (6)էջ 17

Մանկապարտեզ ծնող փոխհարաբերություններում կարևոր է նաև ծնողավարման հմտությունների ուսուցումը, որի ընթացքում երկուստեք կհաստատվի արդյունավետ համագործակցություն,ինչպես նաև կապահովի հետադարձ կապ: Յուրաքանչյուր փոխհարաբերություն համագործակցություն կառուցելու մի հնարավորութ-յուն է և ընտանիքների հետ շփվելիս դաստիարակը դառնում է առավել հաղորդակցվող: Անկաշկանդ ու ջերմ շփումը բարձրացնում է այդ գործընթացի արդյունավետությունը: Հետադարձ կապը պետք է կենտրոնանա դիտարկումների և նկարագրությունների վրա: Դաստիարակը պետք է ունենա ընտանիքի գրանցման թերթիկ.

Օրինակ(3) էջ 113

Ընտանիքի գրանցման թերթիկ

Քաղաք----------

Ամսաթիվ----------

Անուն,ազգանուն----------

Հասցե----------

Հեռախոսի համար----------

Երեխաներ ----------

Մեծահասակներ ----------

Աշխատանքի վայր----------

Ո՞վ է հիմնականում զբաղվում երեխայի դաստիարակությամբ և խնամքով----------

---

Դուք բավարարված ե՞ք այն ամենից ինչ սովորեցնում են երեխային մանկապարտեզում

Ինչպես ե՞ք գնահատում մանկապարտեզ ծնող համագործակցությունը----------

---

Շատ կարևոր է ծնողների հետ համատեղ ընտանիք- մանկապարտեզ- դպրոց անցումը, որտեղ ընդգծվում է սոցիալական հաստատությունների փոխներթափանցման խնդիրը: (3), էջ 113

Ընտանիքն ու մանկապարտեզը, ինչպես նաև դաստիարակն ու ծնողը չեն կարող փոխարինել միմյանց : Հաջողության պայմանը՝ վստահության գործարար կապերի հաստատումն է, ինչպես նաև ծնողների ու մանկավարժների դաստիարակչական դիրքորոշումը:

Մանկապարտեզի և ընտանիքի կապի համակարգված ձևը մանկապարտեզի և ընտանիքի գործընկերությունն է և երեխաների դաստիարակության խնդիրների փուլային համատեղ իրականացումը: (4) էջ 8

Չափորոշիչներ

Կարևոր է ծնողներին ծանոթացնել 0-6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչներին: Չափորոշիչները ներկայացնում են ընդհանուր նպատակներ երեխաների տարիքային զարգացման և կրթության համար , ինչպես նաև ուղղորդում են մեծահասակներին ճիշտ և արդյունավետ շփվելու երեխաների հետ : Չափորոշիչները գործիք են այն մեծահասակների համար, ովքեր պատասխանատու են այս նպատակները հասկանալու և բոլոր երեխաների առաջընթացն ապահովող հնարավորություններ ստեղծելու և փորձառություններ ապահովելու համար:

Չափորոշիչները ստիպում են նաև մտածել, խորապես ըմբռնել և գիտելիքներ ձեռք բերել երեխաների անհատականության, ընտանեկան մշակույթի , որոշակի հարմարեցումների և փոփոխությունների մասին, որոնք կարող են տարբեր լինել

երեխաների առանձնահատուկ հանգամանքների դեպքում: Ծնողները ընդհանուր առմամբ մեծ դեր և ազդեցություն ունեն երեխաների աճի և զարգացման վրա, և իսկապես ծնողներն են հանդիսանում երեխաների առաջին ու ամենակարևոր ուսուցիչը:Մանկապարտեզ և ծնող կապը սովորեցնում է ծնողին ,որ երեխայի զարգացումը տեղի է ունենում հաջորդական փուլերով և կախված է նրա ունեցած փորձառությունից , ընտանեկան մշակույթից և անհատականությունից:

Չափորոշիչները դաստիարակների և ծնողների համար ստեղծում են այն հիմքը, որի վրա նրանք կարող են պլանավորել երեխայի ուսուցումը:Այն կարող է լինել նաև գործիք այն ծնողների համար, որոնք հաճախ անհանգստանում են, թե արդյոք իրենց երեխաները ունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ՝ հետագայում դպրոց գնալու համար:

Ուստի կարևոր է դաստիարակի կողմից այս փաստաթղթի ճիշտ ներկայացումը ծնողներին երեխայի զարգացման մակարդակը ճիշտ գնահատելու :

Եզրակացություն

Այսպիսով՝ իմ հետազոտության արդյունքում ես հանգեցի այն պարզ գաղափարին , որ ընտանիքը մեծ ազդեցություն ունի երեխայի խնամքի և կրթության վրա:

Իմ կատարած սիստեմատիկ աշխատանքի արդյունքում ես կարողացա սերտ կապ և վստահություն ստեղծել ծնողների հետ,նրանց հետ համագործակցելով և ինտեգրելով մանկապարտեզում կատարվող աշխատանքներին, միջոցառումներին, երեխաներին հանձնարարվող առաջադրանքներին ծնող դաստիարակ կապը էլ ավելի ամրացավ :

Սեմինարների,ծնողական ժողովների ժամանակ ծնողների մեջ ձևավորվեց այն կարծիքը, որ ծնողական դաստիարակությունը կազմում է հենց այն կորիզը, որի շուրջը պատշաճ կերպ ձևավորվում է իրենց երեխայի մտահորիզոնը,աշխարհը ընկալման գաղափարը: Ընտանիքի ճանաչումը որպես հասարակական շփումների միջնորդ ուժի, ամրապնդում է , այն համոզմունքը, որ երեխայի՝ նախադպրոցական հաստատություններում ձեռք բերած փորձը պետք է ամրապնդվի ընտանիքում: Մանկապարտեզ- ծնող հարաբերությունների մասին քննարկումների գերակշռող մասն արծածում է այն միտքը, որ երեխայի համար սահմանված նպատակներին լավագույնս կարելի է հասնել , եթե նրա կյանքում ամենակարևոր մեծահասակները փոխհամաձայնության են գալիս և հետևողական են իրենց գործելակերպերում:

Ծնողները եկան այն եզրահանգման,որ մանկապարտեզն այն կրթօջախն է , որը կոչված է օգնելու ծնողներին ճիշտ դաստիարակելու երեխաներին:Իսկ այդ խնդիրը իրագործվում է փոխադարձ հարգանքի, բարյացակամության և վստահության դեպքում:

Գրականության ցանկ

1. Դուգլաս Ռ. Փոուել, Ընտանիքները և վաղ մանկական ծրագրերը էջ 160

2. Ծննդից մինչև վեց տարեկան երեխաների զարգացման և կրթական չափորոշիչներ , ՀՀ կրթության և գիտության նախարարություն ,Վերանայված է 2018 թ էջ 194

3. Ծնողական կրթություն «Վերապատրաստողների վերապատրաստման ձեռնարկ »ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ Երևան 2005 թ էջ 425

4. Հովհաննիսյան Ասյա «Դաստիարակենք միասին», Երևան 2014թ. Էջ151

5. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա: Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար. Երևան 2010 թ. էջ 221

6. Սեյվ դը չիլդրեն, Ես ճանաչում եմ իմ երեխային Ձեռնարկ ծնողների համար , Երևան 2013 թ էջ 71

Ընդամենը 16 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՎԱՂ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԴՐԱԿԱՆ ՀՈՒՅԶԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ»

ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ ԼԻԱՆԱ ԱՖՐԻԿՅԱՆ / ԹԻՎ 31 ՄԱՆԱԿԱՊԱՐՏԵԶ/

ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Գ. Թ. Լ.ՄԻՐԱԲՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Թեման շատ արդիական է, քանի որ ցավոք, ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում , որտեղ երեխային շրջապատող առարկաները կարող են խոչընդոտ հանդիսնալ նրա՝ վաղ տարիքում դրական հույզերի ձևավորմանը և առաջացնել բացասական հույզեր, որտեղից էլ առաջանում են վախեր, որն ակնհայտ երևում է յուրաքանչյուր երեխայի վարքից, շարժումներից: Պետք է նշել, որ այսօր հեռախոսի առկայությունը երեխայի կյանքում ավելի մեծ է, որի շնորհիվ բախվում ենք լուրջ հուզական խանգարումների հետ: Եվ այսօր սա լուրջ խնդիր է, քանի որ, միանշանակ, ազդում է բացասականորեն յուրաքանչյուր բալիկի վրա:Չէ՞ որ ամեն ինչ սկսվում է մանկությունից՝ վաղ տարիքից:Մենք նաև գիտեք, որ 2-8 տարեկանը բնավորության ձևավորման փուլն է, որտեղ ևս շատ կարևոր են դրական էմոցիաներով, հույզերով երեխաներին ապահովելը: Երեխան ունի մշտապես շփման կարիք՝իր հասակակիցների, մեծերի հետ, քանի որ շփումը դրսևորված է հույզերի մեջ: Երեխաները հաղորդակցման փորձ չունեն, որի արդյունքում սկսում են աստիճանաբար տիրապետել, վերահսկել հույզերը և սկսել հարաբերություններ:

<u>Աշխատանքի նպատակը</u>

Ուսումնասիրել գիտական, գիտամեթոդական , գիտատեսական գրականություն և վերհանել վաղ տարիքի երեխաների հուզական զարգացման առանձնահատկությունները:

<u>Աշխատանքի խնդիրներն են՝</u>

1. Նկարագրել ,Վաղ տարիքի երեխաների դրական հույզերի ձևավորումըե թեմայի վերաբերյալ տեսական մոտեցումները:

2. Բացահայտել մեծահասակների հետ շփման ոճի ազդեցությունը երեխայի հուզական ոլորտի զարգացման գործում:

3. Իրականացնել վաղ տարիքի երեխաների հուզական ոլորտի առանձնահատկությունների հետազոտությունները:

<u>Աշխատանքի կառուցվածքը</u>

Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, երեք գլխից , երեք փորձարարական մասերից, սեփական փորձի վերաբերյալ եզրակացությունից և գրականությունից: **Ծավալը 18 տպագիր էջ**

Գլուխ 1

Հուզական զարգացումը վաղ տարիքում

//Վաղ տարիքը երեխայի կյանքի գլխավոր փուլերից է: Մեծ է տարիքային այս շրջանի նշանակությունը երեխայի հետագա զարգացման համար: Այդ հիմքի վրա է ձևավորում մարդը: Վաղ տարիքում է տեղի ունենում հոգեֆիզիոլոգիական բոլոր գործընթացների արագընթաց զարգացում, ձևավորվում է սոցիալական վարքը : Այդ տարիքը համարվում է շրջապատող աշխարհի զգայական ընկալման շրջան և բնորոշվում է զգայական գործընթացների բուռն զարգացմամբ: Զգայական գործընթացների սաղմնային զարգացումն ապահովում է հուզական աշխարհաճանաչողությունը և նպաստում առարկայական աշխարհի անմիջական ընկալմանը:Վաղ տարիքի երեխայի զարգացման կարևոր պայման է նրա հուզական հաղորդակցումը մեծահասակի հետ :Սիրելու ընդունակությունը ծնվում է ընտանիքում՝ մեծահասակի և երեխայի փոխադարձ հաղորդակցման, հուզական շփումների հիման վրա:Մեծահասակի քնքուշ հպումները, ջերմությունը, բարեհունչ ձայնը երեխայի մեջ ստեղծում են մտերմիկ և հաճելի զգացումներ և ուրախություն պատճառում նրան: Դեռևս կյանքի առաջին ամիսներից անհրաժեշտ է ուշադիր նայել երեխայի աչքերի մեջ , ժպտալ, ասել անունը, ջերմորեն զգվել նրան:Նման վերաբերմունքի հաճախակի կրկնության արդյունքում երեխան նույն կերպ է պատասխանում մեծահասակին: /1-էջ 41/

Վաղ տարիքին բնորոշ է մեծահասակների հետ հաղորդակցման ընթացքում աստիճանաբար ձեռք բերվող սոցիալական փորձը:Այն դրսևորվում է բավականին ակտիվությամբ: Այս ամենի իրականացման լավագույն միջոցը առարկայական գործունեությունն է և դրա հիման վրա ձևավորված խաղերը: Դրանք ուղղորդվում են մեծահասակի կողմից և լինում են ուսուցանող, զարգացնող, զվարճալի: Վաղ տարիքի երեխայի համակողմանի դաստիարակության գործում մեծ նշանակություն ունեն մեծահասակների հետ կազմակերպվող հուզական խաղերը: Դրանք երեխայի մեջ առաջացնում են ուրախության զգացում և անհարաժեշտ պայմաններ ստեղծում երեխայի ուսուցման և դաստիարակության համար:Հուզական խաղերը հաղորդակցման առանձին ձև են համարվում:Երեխայի վրա առավել հուզական ազդեցություն է ունենում երաժշտական խաղերը: Խաղերի հետ զուգակցվող երաժշտությունը սկզբնական շրջանում լինում է օրորոցային, այնուհետև մեկ տարեկանից երեխաները կարող են լսել նաև դասական երաժշտություն ,Ինչը ինչպիսի ձայն է հանումեխաղն այս տարիքի երեխայի առաջին երաժշտական խաղն է :Մեծահասակը համապատասխան խաղալիքների օգնությամբ երեխային ծանոթացնում է տարբեր ձայների հետ :Անհրաժեշտ է յուրաքանչյուր նոր ձայն արձակող առարկա երեխայի երեխայի լսողական ընկալմանը վարժեցնել առանց շտապելու: Հետզհետե 1-2 տարեկան երեխան մեծ բավականությամբ է ունկնդրում մանկական երգերը և փոքրիկ բեմականացումները, սիրում է երաժշտության ներքո կատարել պարային շարժումներ: Հաճախակի անհրաժեշտ է երգել երեխայի համար , սովորեցնել շարժվել ռիթմին համապատասխան: Դրական հուզական վիճակը նպաստում է երեխայի ակտիվ զարգացմանը:Անհրաժեշտ է երեխայի համար ընտրել փոքրիկ մելոդիկ ստեղծագործություններ, որտեղ հստակ ներդաշնակում են խոսքն ու երաժշտությունը , որը հաճախ կիրառում ենք մեր միջոցառումների ժամանակ: /1-էջ42/

Ձայնով,շարժուձևով, առոգանությամբ , նուրբ զգվանքով մեծահասակը երեխային է փոխանցում իր սերը: Արձագանքելով նրահուզական իրավիճակներին՝ նրան ձերբազատում է բացասական հույզերից: 2-3 տարեկան երեխաները սիրում են շարժվել երաժշտության ներքո, սկզբնական շրջանում հետևելով

մեծահասակների շարժումներին, երեխաները փորձում են նմանվել նրանց, այնուհետև ներգրավվում են երաժշտական շարժախաղերի մեջ: Խաղի ընթացքում, մտնելով որևէ հերոսի կամ կերպարի մեջ, քաջ պատկերացնում են այդ կերպարը, զարգանում է ընկալունակությունը: Երաժշտության ներքո երեխաները սկզբում կատարում են նմանողական /իմիտացիոն/ շարժումներ , կրկնում երգի ինտոնացիան, օրինակ՝ ,Նապաստակներրը, ,Գնացքե,,Իմ ուրախ գնդակե, ,Թռչունները թռչում են Եշարժախաղերի ընթացքում երեխաները նմանակում են հերոսներին համապատասխան հնչարտաբերմամբ ՝ ներկայացնելով նրանց ձայները:Երեխայի կյանքում ներառելով տարբեր երաժշտական խաղեր, փոքրիկ երգեր՝օգնում ենք նրան լինել ակտիվ, կենսախինդ և ուրախ:Դա հնարավորությունէ տալիս երեխային հաջորդ տարիքային փուլում լիարժեք ընկալել և հուզականորեն արձագանքել երաժշտական տարբեր ստեղծագործություններին: 2-4 տարեկանում սկսում են ձևավորվել նաև բարոյական զգացմունքներ: Նախնական շրջանանում դրանք հիմնականում կրում են դիմացինին գոհացնելու , նրա ցանկությունները , պահանջները բավարարելու բնույթ :Օրինակ՝ 2,5 տարեկան երեխան կարող է հպարտորեն մորը ասել, որ ինքը չի կերել այն կոնֆետը, որը մայրը թույլ չի տվել և այլն:Տեսնելով մեծահասակի խիստ, դժգոհ հայացքը այն բանի նկատմամբ , որ ինքը մատը տարել է բերանը՝ երեխան , ամոթից կարմրելով, դադարեցնում է այդ գործողությունը:

Այսպիսով , հուզական դրսևորումները կատարում են նաև կարգավորիչ գործառույթներ:Երեխան սկսում է հասկանալ , թե ինչն է հակասում կամ համապատասխանում շրջապատող մարդկանց պահանջներին: Անհրաժեշտ է երեխաների մեջ զարգացնել ոչ միայն դրական , հաճելի հույզեր, այլև այնպես դաստիարակել, որ նրանց հասանելի լինեն իր վատ տարիքի դեպքում՝ ամոթի, ուրիշի անհաջողության դեպքում՝ կարեկցանքի և տխրության հույզեր:

Այսպիսով, կյանքի 3-րդ տարվա վերջին դաստիարակչական համապատասխան աշխատանքի արդյունքում , երեխան ունենում է հույզերի և ապրումների դրսևորման բավական հարուստ փորձ ու պաշար: 1-էջ 41-45 //

Գլուխ 2

Ինչպե՞ս ձևավորել և առաջացնել դրական հույզեր երեխայի մոտ վաղ տարիքում

Հույզերը շատ մեծ դեր են խաղում երեխայի զարգացման գործում: Երեխաների մոտ հույզեր կարելի է առաջացնել դիդակտիկ նյութերի, խաղալիքների միջոցով, դրանց ճիշտ ընտրությամբ:Երեխային շրջապատող առարկաները մեծ ,հումքե են պարունակում երեխայի հույզերի զարգացման համար, միայն թե այն պետք է օգտագործել տեղին, ճիշտ և հուզականորեն:Հույզերի առաջացմանն ու զարգացմանը երեխայի մոտ մեծապես օգնում են դաստիարակի, մեծահասակների խոսքը, պատմելու ձևը, հուզականությունը, վարպետությունն ու հնարները: Երեխայի հույզերի առաջացման համար վաղ տարիքում կարող են օգտակար լինել երաժշտությունը , վառ նկարները, ճիշտ ընտրված խաղալիքները և այլն:Կարևոր է նշել, որ երեխան դեռ վաղ տարիքից պետք է արտահայտի իրավիճակին համապատասխան հույզեր: Պետք է հասկանա,որ եթե ինչ -որ մեկին ցավ է պատճառել , պետք է անպայման աջակցի դիմացինին: Խոսքը վերաբերվում է հուզակամային ադեկվատ հույզերին: Երեխան պետք է ընկալի ՝ երբ պետք է զսպել կամ արտահայտել հույզերը: Փոփոխության պայմաններում երեխան պետք է կարողանա համապատասխան արձագանք դրսևորել: Երեխաների հետ անհրաժեշտ է կատարել խմբային և անհատական հոգեբանական աշխատանքներ ՝վարժանքների ձևով ՝ հուզական ինտելեկտի զարգացման համար:

Գլուխ 3

Ծնողների հետ համագործակցության կարևորությունը երեխաների վաղ տարիքում հույզերի ձևավորման գործում

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում:Համագործակցության արդյունքում թե ծնողը, թե դաստիարակը

արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների , հետաքրքրությունների, համակրանքի և հակակրանքի մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Եվ ծնողի հետ ճիշտ համագործակցությունը սերտորեն կապում ենք երեխայի հույզերի ձևավորման հետ, որն էլ շատ կարևոր դեր ունի երեխայի դաստիարակության և անձնավորության ձևավորման գործում: Ընտանիքը սոցիալական առաջին օղակն է, որտեղ յուրացվում են առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, որը նույնպես սերտորեն կապում ենք երեխայի հույզերի ձևավորման հետ: Երկկողմանի և կանոնավոր հաղորդակցության միջոցով ծնողներն ու դաստիարակները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման: Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաներ ունեցող ծնողների հետ աշխատանքը տարվում է հետևյալ երկու հիմնական ուղղություններով՝ ախտորոշվում է լուսավորչական աշխատանք:Ախտորոշման ընթացքում իրականացվում են տարբեր թեմաներով հարցումներ, անկետավորում, լուսավորչական աշխատանքի ընթացքում՝ խորհրդատվական աշխատանքներ, ինչպես նաև կազմակերպվում է բաց դասեր և սեմինարներ:

Փորձարարական աշխատանք ծնողների հետ՝ հարցումների միջոցով

Զուգահեռ անց է կացվում անկետավորում ծնողների շրջանում՝ հարցերի միջոցով

«Դուք և ձեր երեխան»

/հարցաթերթ ծնողի համար/

1. Ինչի՞ց է վախենում ձեր երեխան:

2.Օրվա ընթացքում որքա՞ն ժամանակ եք անցկացնում Ձեր երեխայի հետ:

3.Ի՞նչ թեմաներով եք առավել շատ զրուցում:

4. Ձեր համար հե՞շտ է Ձեր երեխայի հետ շփվել:Իսկ նրա համա՞ր Ձեզ հետ:

5.Դուք պատժու՞մ եք Ձեր երեխային:

6.Ինչի՞ համար և ինչպես:

7. Ինչի՞ մասին է երազում ձեր երեխան:

8. Թվարկեք այն խնդիրները, որոնք անհանգստացնում են Ձեզ երեխայի հետ կապված:

9. Երբ ազատ ժամանակ եք ունենում, ինչպե՞ս եք այն անց կացվում:

10. Ընտանեկան կարգավիճակի մասին հարցում , որը երեխայի հուզակամային ձևավորման համար ամենակարևոր հարցն է:

Ի վերջո, ծնողը պետք է հնարավորինս ազատ ձևով և մանրամասն պատմի իր երեխայի մասին:Պատմի ամենակարևորի մասին՝ իր տագնապների: Կարող է գրել այնքան, որքան կցանկանա, սահմանափակումներ չկան: Արդյունքում, ավելի սերտորեն ուսումնասիրում ենք յուրաքանչյուր երեխայի հուզակամային առանձնահատկությունները, վախերի աղբյուրները և սկսում ենք ավելի հեշտ աշխատել անհատական նրա հետ և գրեթե միշտ հասնում ենք արդյունքի և փոփոխությունների:

Փորձարարական մաս

Վարժանք 1. Դիմախաղային մարմնամարզություն

Նպատակը՝ դիմացինի հույզերը հասկանալու կարողության զգացում

Երեխաներին առաջադրանք ենք տալիս ցույց տալ հետևյալ հույզերը՝ վախ, բարկություն, սեր և այլն: Դաստիարակը ցույց է տալիս, ամբողջ խումբը հանդես է գալիս հայելու դերում և պետք է ցույց տված հույզը կրկնեն բոլորը:

Վարժանք 2. Գուշակեք հույզը

Դաստիարակը թղթով փակում է դեմքն այնպես , որ միայն աչքերը երևան: Այնուհետև առաջադրանք է տալիս միայն աչքերով տարբեր հույզեր գուշակեն և ասեն, թե ինչ հույզ է դա:

Վարժանք 3. Դուրս ենք նետում բարկությունը

Սև ամպիկներ ենք պատրաստում և մեկ տուփ, երեխային խնդրում ենք ասել, թե ինչ չար արարքներ է գործել օրվա ընթացքում: Որքան որ երեխան կթվարկի, այդքան սև ամպիկներ ենք նետում տուփի մեջ և վերջում երեխայի հետ պայմանավորվում ենք, որ անհապաղ պետք է տուփը դեն նետել , որպեսզի այդ վատ հույզերը մեր ներսում չմնան:

Վարժանք 4. Սիրո բուրգ

Երեխաներին առաջադրանք ենք տալիս վերհիշել այն ամենը,ինչ իրենք սիրում են՝ ընտանիք, խաղեր, խաղալիքներ և այլն: Դաստիարակը ձեռքը ուղիղ պարզում է և ասում, թե ինչ է սիրում ինքը, այնուհետև երեխաներից մեկը մոտենում է, թե ինչ է ինքը սիրում և ձեռքը դնում է դաստիարակի ձեռքի վրա և այդպես բոլոր երեխաները միասին բուրգ են կառուցում:

Վարժանք 5. Դու առյուծ ես

Փակիր աչքերդ և պատկերացրու առյուծին՝ կենդանիների արքային՝ ուժեղ, ինքնավստահ, հանգիստ, իմաստուն: Առյուծի միշտ գեղեցիկ տեսք ունի, հպարտ է:Այդ առյուծի անունը նույն քո անունից է, նրա աչքերը նման են քո աչքերին, դեմքը՝ քո դեմքին: Պատկերացրու , որ հենց դու ես առյուծը:

Վարժանք 6. Հույզերի մարզում

Երեխային խնդրում ենք դժգոհ դեմք ընդունել

- ինչպես աշնանային ամպերը
- բարկացած մարդը
- չար կախարդը

Ժպտալ, ինչպես՝

- կատուն՝ արևին
- արևը
- ինչպես խորամանկ աղվեսը
- ուրախ երեխան
- կարծես հրաշք ես տեսել

Վախենալ, ինչպես՝

- անտառում մոլորված երեխան
- գայլ տեսած նապաստակը
- կատուն, որի վրա հաչում է շունը

Հոգնել՝ ինչպես

- ծանր ճանճ տեղափոխող մեղուն

Վարժանք 7. Իրական պատկեր

Երեխաները հերթով խաղարկում են էտյուդները՝ ժեստերով, դիմախաղի միջոցով՝ ցույց տալով համապատասխան ,ժպիտիկե

1.Դու կորցրել ես բանալին, չես կարողանում այն դտնել և տխրել ես :

Տխուր- ժպիտիկ 😔

2. Բանալին գտնվեց և դու ուրախացել ես : Ուրախ -ժպիտիկ 😊

3.Մայրիկն արթնացնում է քեզ առավոտյան , դու լավ չես քնել գիշերը և չես ցանկանում արթնանալ: Հոգնած-ժպիտիկ 😫

4. Ընկերդ տխրել է, դու փորձում ես ոգեշնչել նրան: Հետաքրքրված -ժպիտիկ 😣

5. Քեզ անհանգստացնում է համառ ճանճը: Անհանգիստ -ժպիտիկ😯

6. Երկար ժամանակ է սպասում ես ընկերոջդ, իսկ նա չի գալիս: Զայրացած - ժպիտիկ😠

7. Երկար ժամանակ է սպասել ես մայրիկին, նա եկել է, դու շատ ուրախացել ես:

Ուրախ –ժպիտիկ 😃

Այսպիսով սմայլիկների և ժեստերի միջոցով երեխաները կսովորեն արտահայտել իրենց զգացմունքները՝ հանգիստ, անհանգիստ, տխուր, հետաքրքրված և այլն:Նաև կատարում ենք երեխայի կողմից հույզերի պատկերների ընկալման կարողության ստուգում: Երեխային ցույց ենք տալիս քարտերը և հարցնում, թե ինչպիսի դեմք է պատկերված: Պատասխանները գրանցում ենք և ճիշտ պատասխանի դեպքում դնելով ,+ե նշանը, սխալ պատասխանի դեպքում՝ ,-ե նշանը:

ուրախություն

տխրություն

բարկություն

զարմանք

վախ

հանգստություն

Զարգացնող աշխատանքներ հուզակամային ոլորտի խանգարումների դեպքում

Հուզակամային ոլորտի խանգարումների դեպքում , երեխաների հետ տարվում են զարգացնող աշխատանքներ

1. Քանդակ

Նպատակը՝ -հույզերի արտահայտում

Անհրաժեշտ նյութեր-պլաստիրին , թուղթ, մատիտ

Երեխային խնդրում ենք , որ որևէ քանդակ պատրաստի, որը ցույց կտա, թե ո՞վ է ինքը, կամ այնպիսի բան, որ ցույց կտա, թե ի՞նչ է ինքը սիրում կամ չի սիրում: Կապ չունի, թե դա երևակայական է, թե ՝ իրական:Այնուհետև դաստիարակը հարցնում է ՝

1.ի՞նչ է սրա անունը

2. եթե տարբեր գույներով է արված, ի՞նչ հույզ է ամեն գույնն արտահայտում

3. կապ չունի, այն մարդ է, թե առարկա, ի՞նչ է ցանկանում ասել իր մայրիկին, հայրիկին, եղբայրներին , քույրերին

4. ո՞րն է նրա սիրած ուտելիքը

5. ի՞նչ կամ ու՞մ է սիրում, ինչու՞

6. ի՞նչ է ցանկանում , որ աշխարհը իմանա իր մասին

Վարժությունը թույլ է տալիս բացահայտել երեխայի ներաշխարհը: /3-էջ 136/

2. Հույզերի աշխարհը

Նախատեսված է տագնապային և վարքային շեղումներ ունեցող երեխաների հետ աշխատանքի համար:

Անհրաժեշտ նյութեր- 10*15 չափսի 8 թուղթ, որոնց վրա հույզերի անուններն են գրված, մարկեր, բաժակ -1 հատ, որի մեջ պոկերի ֆիշկաներ են, կարելի է օգտագործել նաև շշի կափարիչներ:

Հրահանգ –Հիմա մենք միասին կխաղանք , թվարկիր այն հույզերը, որոնք կարող է ունենալ քո տարիքի երեխան:

Երեխա – երջանկություն, ուրախություն

Թղթերի վրա գրում ենք երեխայի թվարկած հույզերը : Երբ բոլոր հիմնական հույզերը թվարկված են , դաստիարակը թերթիկները դասավորում է երեխայի առջև և ասում՝

-Հիմա քեզ մի պատմություն կպատմեմ՝ պատկերացրու , որ դու խաղում ես ֆուտբոլային մի թիմում,քեզ հաջողվել է գոլ խփել, սակայն վերջում ձեր թիմը պարտվեց:Այդ դեպքում ի՞նչ հույզեր կունենայիր և ո՞րն ավելի ուժեղ կլիներ և դրա վրա շատ ֆիշկաներ դիր: Հետո երեխան փորձում է ինքը պատմություն պատմի իր կյանքից և նույն ձևով նշի հույզերը: Խաղը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև կվերհանվեն երեխայի իրական հույզերը : Եթե երեխան բացասական հույզերով հագեցած իրավիճակ է նկարագրում, դաստիարակը փորձում է, մնան իրավիճակում դրական հույզեր գտնել: /3-էջ137 /

2. Փորձարարական մաս 3

Սյուժետադերային խաղեր

Խաղ 1. Անտառի տնակները

Երեխաները ,նապաստակներրե կազմում են շրջան, որից դուրս գտնվում է ,գայլրե: ,Նապաստակներիցեմեկը նշանակվում է երգի և խաղի մենակատար: ,Նապաստակները եշարժումներով արտահայտում են երգի բովանդակությունը:

Առաջին քառյակ

Խիտ անտառում կանգնած էին փոքրիկ տնակներ

Երեխաները ձեռքերի մատների ծայրերը միացնելով իրենց գլուխների վրա, կազմում են եռանկյունի՝ պատկերելով անտառի փոքրիկ տնակների կտուրները:

Տնակներում ապրում էին գորշ նապաստակներ:

Երեխաները պպզում են և ցուցամատները տնկում քունքերին ՝ պատկերելով նապաստակների ականջները: Նրանք մնում են այդ վիճակում երրորդ քառյակի սկիզբը:

Երկրորդ քառյակ

Մեկ նապաստակ դուրս է ցատկում , անտառով վազում

Մենակատար ,նապաստակըեդուրս է գալիս իր տեղից և զույգ ոտքերի վրա ցատկոտելով մեկ նապաստակից դեպի մյուսը / շրջանի ներսում /

Թաթիկներով պատուհանին ամենքին խփում

Թաթիկներով թեթև խփում է շրջան կազմած յուրաքանչյուչ ,նապաստակիե ուսին /մեկ տակտին երկու ցատկոտում կատարելով /

Երրորդ քառյակ

Դե, դուրս եկեք նապաստակներ, խաղանք ու պարենք,

Եթե հանկարծ գայլ երևա , իսկույն կպահվենք:

Սկսում է երգել մենակատարը, իսկ շրջան կազմած ,նապաստակները ե ոտքի են կանգնում , մենակատարը շարունակում է երգել մյուս ,նապաստակներըե նրա հետ միասին կրկնում են վերջին չորս տակտը , ձեռք-ձեռքի բռնելով ՝ կազմում շրջան և սկսում համաչափ քայլելով , շրջանը մեծացնել և փոքրացնել , ապա ազատ զբոսնում են:

Հանկարծ լսվում է դաստիարակի ահազանգը՝ ,գայլը, գայլըե, ,նապաստակներըե շտապում են գրավել իրենց տեղերը և գլխի վրա կազմել եռանկյունի / ապաստանում են իրենց ,տնակներումե/

Գայլը փորձում է բռնել այն ,նապաստակներին ե, որոնք չեն հասցրել թաքնվել իրենց /տնակներում /: Խաղը կրկնվում է 2-3 անգամ: Խաղի միջոցով երեխաների մոտ առաջացավ այնպիսի բարոյական արժեք, ինչպիսին բարությունն է: Նրանք հասկացան, որ բարին հաղթում է չարին:

Խաղ 2

Աչքակապուկ փայտով

Երեխաները իրար ձեռք բռնած շրջան են կազմում , որի կենտրոնում կանգնած է մեկ երեխա դիմակով և փայտը ձեռքին, դիմակը ծածկում է նրա աչքերը:Երաժշտության ներքո երեխաները վազում են շրջանագծի ուղղությամբ՝ դեպի աջ:Դիմակը հագած երեխան փայտով խփում է հատակին ՝ երաժշտության ռիթմին համապատասխան: Շրջան կազմող երեխաները երկու անգամ ծափ են տալիս և անմիջապես ձեռքերը թաքցնում մեջքին: Ասում են ,դարձիրե, և դիմակով երեխան շրջվում է :Երեխաները ասում են ՝ ,ցույց տուր ե և դիմակով երեխան ձեռքի փայտը պարզում է առաջ : Նա , ում ցույց է տալիս , բռնելով փայտի ծայրը , պետք է ասի ՝ ,ո՞վ եմ ես ե: Եթե դիմակ հագած երեխան ճանաչի փայտ բռնող երեխայի ձայնը , ապա դիմակը

ստանում է ճանաչված երեխան , իսկ եթե չճանաչի, խաղը կրկնում է նույն դիմակով երեխան:

,Աչքակապուկե խաղի միջոցով երեխաների մոտ զարգանում է ռիթմի զգացողությունը , լսողությունը , տարածության մեջ կողմնորոշվելու զգացողությունը:

Խաղ 3

Կան խաղեր , որոնք մենք ստեղծագործում ենք

Ահա դրանցին մեկը ՝ «Ծիկ-ծիկ» խաղն է

1-ին մաս

Երեխաները թաքնվում են աթոռակների ետևում : Դաստիարակը երգելով , ձեռքը ճակատին դրած, փնտրում է երեխաներին ՝ այս կողմ, այն կողմ նայելով .

-Ու՞ր են, ու՞ր են բալիկներս , իմ սիրելի բալիկներս

Երեխաները ՝ երգելով դուրս են գալիս աթոռակների ետևից .

-Ծիկ, ծիկ , ծիկ-ծիկ-ծիկ, մենք այստեղ ենք թաքնվել /երկու անգամ /:

2 –մաս

Դաստիարակը թաքնվում է խմբասենյակի որևէ անկյունում / մեր խաղի ժամանակ թաքնվել էի թղթից պատրաստված մեծ ծաղիկի մեջ/

Երեխաները երգելով , ձեռքերը ճակատներին դրած փնտրում են դաստիարակին:

-Ու՞ր է , ու՞ր է ընկ. Լիանան , մեր սիրելի ընկ. Լիանան:

Դաստիարակը հանկարծ դուրս է գալիս անկյունից /իմ դեպքում ծաղիկից / և երգում

-Ծիկ-ծիկ, ծիկ-ծիկ-ծիկ, ես այստեղ եմ թաքնվել: /երկու անգամ /

Խաղի միջոցով տեղի է ունենում անձի լիարժեք ձևավորում : Խաղը զարգացնում է հուզային ոլորտը: Խաղի միջոցով կարող ենք առաջացնել դրական հույզեր, եթե այն ճիշտ է ընտրված:Փորձը ցույց է տալիս , որ երեխաները շատ են սիրում զանազան խաղեր , հատկապես երաժշտության ներքո: Խաղերից հետո ակնհայտ նկատվում է տրամադրության բարձրացում, ստեղծվում է հաճելի մթնոլորտ: Երեխաների մոտ ձևավորվում է մարդկային մեծ արժեքներ՝ ուրախանալ ընկերոջ հաղթանակի համար, , վերանում է նախանձը , ինքնամփոփ երեխաները դառնում են ակտիվ , ժիր ու շփվող : Ստեղծվում է ջերմ մթնոլորտ: Խաղի միջոցով ձևավորում ենք երեխայի մոտ հաղթելու և պարտվելու կարողություն : Խաղը նպաստում է հուզական հաղորդակցմանը:

Սյուժետադերային խաղերում երեխաներն արտացոլում են իրենց տրամադրությունները, հույզերն ու ապրումները:

Եզրակացություն

Սույն հետազոտության ընթացքում կատարեցի հետևյալ եզրակացությունները

- Հույզերի ձևավորումը երեխայի վաղ տարիքում շատ մեծ նշանակություն ունի նրա հետագա զարգացման համար, որի հիմքի վրա էլ ձևավորվում է մարդը:
- Ծնողների դերը վաղ մանկական և նախադպրոցական տարիքում երեխաների հույզերի ձևավորման գործում շատ մեծ է, քանի որ ընտանիքը սոցիալական առաջին օղակն է, որտեղ յուրացվում են առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները:
- Հետազոտությունները տվյալ ոլորտում ցույց են տալիս, որ երեխայի վաղ տարիքում հույզերի ձևավորման վերաբերյալ ճիշտ աշխատանք տանելու արդյունքում նրանց մոտ ոչ միայն երկար ժամանակ պահպանվում է ուրախ տրամադրություն, այլև նրանք հետզհետե կարողանում են վերահսկել սեփական հույզերը:

Գրականություն

1. Նախաշավիղ. 7.2011 ,Հուզական զարգացումը վաղ տարիքումե էջ 41-45

2. Ա. Ամիրջանյան ,Մանկավարժությունե, Երևան 2005թ.

   ,Մոտիվացիայի և հույզերի դերը ուսուցման գործընթացումե էջ 137

3. Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար

   Երևան 2018 էջ 153-158, էջ 136-138

4. Մեթոդական ձեռնարկ հոգեբանների և մանկավարժների համար

   Երևան 2019, էջ 90-95

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ԼԻԼԻԹ ՍԵԴՐԱԿԻ ԱՔԵԼՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԷՄԻՆՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն 3
1. Խաղը որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն..... 4
2. Սյուժետա-դերային խաղը նախադպրոցական տարիքում 10
3. Խաղի ազդեցությունը երեխայի զարգացման վրա 11
4. Խաղերի կիրառումը տարբեր խմբերում (դասավանդման փորձ).....13
Եզրակացություն.....19
Օգտագործված գրականության ցանկ.....21

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Եթե դաստիարակը ցանկանում է ուսուցման պրոցեսը դարձնել ավելի հետաքրքիր, մատչելի, բազմակողմանի, ակտիվ, մտերմիկ և այլն, պետք է օգտագործի տարբեր խաղեր: Այդ իսկ պատճառով էլ պատահական չէ թեմայի ընտրությունը:

Նախադպրոցական տարիքը համարվում է հոգեկանի ինտենսիվ զարգացման այն շրջանը, երբ շարունակվում է վաղ տարիքում զարգացման համար ձևավորված նախադրյալները: Տեղի են ունենում մի շարք փոփոխություններ՝ կատարելագործվում է խոսքը, զարգանում է հիշողությունը, մտածողությունը, գործունեության տարբեր ձևեր և այլն: Միաժամանակ շարունակվում է երեխայի հետագա սոցիալականացումը: Այստեղ էլ կարևորվում է մեծահասակի՝ ծնողի ու դաստիարակի դերն այդ գործում:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում խաղի կարևորությամբ՝ երեխայի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում, և մյուս կողմից՝ առօրյա կյանքում հարցի արդիականությամբ և անհրաժեշտությամբ: Մեր առօրյա կյանքում մենք երեխայի դաստիարակության գործում հանդիպում ենք մի շարք դժվարությունների, որոնց լուծման համար մեզ մշտապես օգնում են խաղային տեխնոլոգիաները:

Հետազոտության նպատակը. բացահայտել խաղի որպես նախադպրոցականների առաջատար գործունության առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են.

1. ներկայացնել խաղի դերը երեխայի կյանքում,
2. ուսումնասիրել նախադպրոցականի առաջնային գործունեության էությունը,
3. ուսումնասիրել դերային խաղերի առանձնահատկությունները նախադպրոցական տարիքում,
4. ներկայացնել զարգացնող խաղերի առանձին օրինակներ:

1. Խաղը որպես նախադպրոցականի առաջատար գործունեություն

Ակտիվ ոուսուցման իրականացման նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն սաների համար, այլև ունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ խթանեն սաների միտքը: Այդպիսի հնար է խաղը, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից:

Բոլոր երկերների ու ժողովուրդների, բորոր ժամանակների ու տարիքի երեխաներին հատուկ է մի բան՝ խաղը:

Խաղի ընթացքում սանը զարգանում է, սովորում, զբաղվում և հանգստանում: Հետևապես, խաղը երեխայի համար լուրջ և հետաքրքիր զբաղմունք է: Իսկական լավ խաղը միշտ էլ ունի հրապուրող հատկություն, որը գործի է դնում ֆիզիկական և մտավոր ուժերը: այդ նպատակին հասնելը, հանդիպող խոչընդոտները հաղթահարելն էլ հենց հանդիսանում է խաղի իսկական հմայքը:

Նախադպրոցական տարիքում երեխայի ակտիվությունը ոչ միայն ավելանում է, այլ ձեռք է բերում մարդկային գործունեության ձևերի ձևն ու համակարգը: Բավականին հստակ առանձնացվում են խաղը, աշխատանքը, ուսուցումը, արդյունավետ գործունեությունը՝ նկարչության և կոնստրուկտավորման ձևով:

Խաղն ունի սոցիալական-պատմական ծագում: Խաղը դա իրական սոցիալական իրականության յուրացման հատուկ ձևն է: Այն իրենից ներկայացնում է սիմվոլիկ-մոդելավորող գործունեության տիպ: Այն որպես մոդել իր մեջ ներառում է մանկական զարգացման «մշակութային կոդը»: Խաղը հուզականորեն լեցուն գործունեություն է, որը ամբողջովին երեխային գրավում է[1]:

Խաղը համարվում է երեխայի զարգացման առաջատար գործունեությունը ոչ միայն ժամանակի առումով, այլև ըստ ազդեցության ուժի, որը նա ունենում է ձևավորվող անձի վրա: Դ.Բ.Էլկոնինը իր «Խաղի հոգեբանություն» ուսումնասիրության մեջ այս հարցը դիտարկում է պատմական տեսանկյունից[2]: Նա ընդծում էր, որ խաղի

[1] Шаповаленко И.В. “Возрастная психология”М., 2005, էջ 202
[2]Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 149

հոգեբանական ուսումնասիրությունը երկար ժամանակ եղել է ֆենեմենոլոգիական մակարդակում, ուր շատ քիչ է ներկայացվել այս գործունեության հիմնական բնութագրերը: Խաղի մասին տեսությունը ի հայտ է եկել 19-րդ դարի վերջին: Փիլիսոփաները /Ֆ.Շիլլեր, Գ.Սպենսեր/ խպաղի առաջացման պատճառը համարում էին այն, որ բնական պահանջմունքների բավարարումից հետո «ուժերի ավելցուկը ինքնին դրդում է գործունեության»[3]: Այս իմաստով խաղը գեղագիտական գործունեություն է, քանի որ չի ծառայում գործնական նպատակներին: Զ.Ֆրեյդը խաղային դրսևորումներում տեսնում է փակ տենդենցներ, իսկ Ա.Ֆրեյդ ստեղծեց խաղային հոգեթերապիան որպես պայման, որի միջոցով երեխան արտահայտում է իր կոնֆլիկտները և խաղի միջոցով դրանք հեռացնում[4]: Մանկական խաղի մանրամասն մշակումը տվել է Լ.Ս.Վիգոտսկին իր «Խաղը և նրա դերը երեխայի հոգեկան զարգացման մեջ», որտեղ նշվում է, որ խաղը պետք է ընկալվի որպես հիմա չիրականցվող ցանկությունների երևակայական իրականացում. խաղը պետք է ունենա կանոններ, խաղում երեխան մեծ է իր հասակակցից, խաղը ստեղծում է զարգացման մերձավոր գոտին և այլն[5]:

Դ.Բ.Էլկոնինը զարգացրել է Լ.Ս.Վիգոտսկու մտքերը, ներկայացրել խաղային գործունեության պատմական բնութագիրը: Այն առանձնացվում է նրանով, թե ինչպես է աշխատանքը դառնում ավելի դժվար և անհասանելի երեխայի համար: Խաղի հիմնական տենդենցն ու դրդապատճառը դա երեխայի ձգտումն է մտնել մեծահասակի աշխարհ, լինել նրանց նման: Դերային խաղը սոցիալական է ըստ իր ծագման և բովանդակության: Խաղը դա սոցիալական հարաբերությունների մոդելն է, մարդկային գործունեության դրդապատճառների և իմաստների ճանաչման ձև: Խաղի հիմնական միավորը համարվում է դերը, այն թելադրում է վարքի կանոնները: Խաղի կառուցվածքում Դ.Բ.Էլկոնինն առանձնացնում է դերը, դրա իրականացման համար խաղային գործողությունները, առարկաների խաղային փոխարինումը, խաղացող երեխաների միջև իրական հարաբերությունները[6]:

Անձի օնտոգենեզում խաղի էվոլյուցիան ընդգրկում է մի քանի փուլ՝

---

[3] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 150
[4] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 150
[5] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 151
[6] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 152

1. Վաղ տարիքում խաղը առարկայական է, երբ երեխային գրավում է առարկայի հետ գործողության փոխանցումը նոր պայմաններ: Առարկաներին նրանք տալիս են տարբեր ոչ բնորոշ գործողություններ-գործառույթներ: Խաղի սկիզբը դա առարկաների նկատմամբ խաղային վերաբերմունքն է. օրինակ փայտիկն օգտագործում են որպես գդալ, գրիչ, սանր, ջերմաչափ: Միանշանակ առարկան բնորոշող գործողությունից բազմազան կիրառվող առարկայի գործողության անցում, որոնք տրամաբանորեն կապված են միմյանց հետ[7]: Մոտավորապես 3 տարեկանում սկսվում է սյուժետա-պատկերավոր խաղը. դերը գործողության մեջ: Այս դեպքում երեխան սկսում է խաղալ մենակ տարբեր խաղալիքների հետ: Խաղալիքներն ունենում են իրենց մայրիկները, երեխաները, բժիշկներ և հիվանդներ, բայց դեռևս երեխան չի կարողանում առանձնացնել դրանց միջև հարաբերությունները: Սակայն խաղալիքները սկսում են արտահայտել մարդկանց իրական վարքը: Խաղի միջոցով երեխան արտահայտում է այն ամենը, ինչ անում են իր հետ, կրկնում է դրանք: Նա կարող է ամենաանհավանական գործողությունները կատարել խաղի մեջ իր երևակայության միջոցով[8]:
2. Սյուժետա-դերային խաղ՝ խաղի ամենաբարդ ձևն է: Այն բարդ է նրանով, որ դրանում խաղում են մի քանի երեխաներ՝ յուրաքանչյուրն իր դերում: Խաղացողների միջև հարաբերությունները զարգանում են ինչպես սյուժետային, երևակայական, այնպես էլ իրական պլանում: դերերի ընտրությունը կարող է կոնֆլիկտի աղբյուր հանդիսանալ: Սյուժետի զարգացումն ու միտքը մշտապես իրար հետ համաձայնեցնելու անհրաժեշտություն է առաջանում: Սյուժետա-դերային խաղը զարգանում է տարբեր ուղղություններով՝ սյուժետները արտահայտում են իրականության ավելի լայն ոլորտները:

2-6 տարեկան երեխաների հոգեկան իմացական գործընթացների զարգացման վրա էական ազդեցություն ունեցող հիմնական գործոնը համարվում է խաղը: Երեխաների համար խաղը համարվում է ոչ թե հատուկ, այլ առաջատար գործունեություն: Խաղում երեխաները ստանում են մեծահասակների աշխարհի

[7] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 153
[8] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ 154

առարկայանցված առարկաների փորձը, ծանոթանում և յուրացնում են սոցիալական վարքի նորմերն ու կանոնները: Խաղը դա գործունեության ձև է պայմանական իրադրություններում՝ ուղղված հասարակական փորձի վերականգմանն ու յուրացմանը, որը ֆիքսված է առարկայական գործողությունների իրականցման սոցիալապես ամրագրված միջոցներում, գիտության և մշակույթի առարկաներում: 4 տարիների ընթացքում զարգանում են ոչ միայն հոգեկան գործընթացները, այլև փոխվում է հենց խաղի բովանդակությունը: Սկզբնական փուլերում երեխայի խաղային գործունեությունը հիմնականում կրում է մեծահասակի գործողության ընդօրինակման կոնկրետ իրադրության հետ չկապված բնույթ, այսինքն՝ խաղի հիմնական բովանդակությունը համարվում է մեծահասակների աշխարհի առարկաների մանիպուլյացիան: Ավելի ուշ երեխայի խաղային գործունեությունը ստանում է սոցիալական ուղղվածություն՝ երեխան ձեռք է բերում սոցիալական վարքի փորձ՝ փորձելով խաղում «կիրառել» իր վրա այս կամ այն դերը[9]:

Այսպիսով, խաղը երեխայի լեզուն է, կենսական տպավորությունների արտահայտման ձև: Դա երեխայի՝ մեծահասակների աշխարհ մտնելու սոցիալական-ընդունելի միջոցն է: Խաղի բարձրագույն ձևը համարվում է սյուժետա-դերային խմբային խաղը, որը պահանջում է խաղի պլանավորում, գործողությունների համաձայնեցում, հարաբերությունների զարգացում իրական և սյուժետային պլանում:

Նախադպրոցական տարիքի երեխան կարողանում է ոչ միայն խաղալ, այլև ստեղծագործել՝ նկարել, կառուցել, ծեփել, արտահայտել: Հատկապես երեխաների համար գրավական է նկարչությունը, սակայն նկարները ստացվում են յուրօրինակ: Մեծահասակը նկարում փոխանցում է տեսանելի, ընկալելի գծերը, երեխան ուզում է փոխանցել առարկայի իր ընկալումը: Կառուցումը պահանջում է ավելի բարձր պահանջներ ընկալման և տարածական երևակայության նկատմամբ: Երեխան սովորում է ձեռքերով և աչքերով զննել օրինակը, նմուշը: Ավելի բարձր տարիքի երեխաներին կառուցումը հասանելի է ըստ տրված պայմանների: Կառուցողականությունը պահանջում է գործունեության հատուկ կազմակերպում, քանի որ դրանում արտահայտվում են ավելի վառ արտահայտված պահանջներ կառուցման մասերի ընկալման և հասկացման փոխհարաբերությունների ճշգրտության

[9] Психология детства (под.ред. А.А.Реана) Спб:" прайм-Евро- знак'', 2003, էջ 97

նկատմամբ: Կառուցողականության ընթացքում ձևավորվում են կարևորագույն ունակություններից մեկը՝ գործունեության պլանավորման ունակությունը:

Աշխատանքի սկզբնական ձևերը նույնպես բարվոք են ազդում երեխայի զարգացման վրա: Աշխատանքը միշտ ուղղված է հասարակական օգտակար արդյունքին, զարգացնում է վարքի սոցիալ-արժեքավոր դրդապատճառներ: Երեխաների աշխատանքային ուժերն ուղղված են ամենից առաջ ինքնասպասարկման վրա: Աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը փոխվում է տարիքի հետ մեկտեղ[10]: Երեխաները սիրում են աշխատել մեծահասակի հետ մեկտեղ և կրկնել նրա գործողությունները. դա անմիջական ընդօրինակում է: դրա հիման վրա կարելի է երեխային հեշտությամբ սովորեցնել աշխատանքին, եթե երեխայի գործիքները նույն են, ինչ-որ մեծահասակինը, միայն ավելի փոքր չափերով: 5-6 տարեկանում երեխան յուրացնում է վարքի ստերոտիպերը և աշխատանքային գործողությունների բարդ շղթաները: Գործողությունների հաջորդակայության ամրապնդումը ապահովում է կայուն արդյունք, իսկ հաջողությունն ու խրախուսումը հանգեցնում է աշխատելու ցանկության: 6-7 տարեկանում հիմնական դրդապատճառը դառնում է «կատարել ճիշտ, ինչպես դպրոցականը»[11]: Եթե այս դրդապատճառը ընդգծվի հրահանգներում և կատարվածի գնահատման մեջ, ապա աշխատանքը նպաստում է երեխայի՝ դպրոցի նախապատրաստմանը ավելի շատ, քան հատուկ մարզումները:

Ուսուցումը որպես գործունեություն ձևավորվում է դպրոցական տարիներին, սակայն նրա հիմքերը առաջանում են նախադպրոցական տարիքում: Ժամանակակից պայմաններում երեխայի հետ զբաղվում են ինչպես տանը, այնպես էլ մանկապարտեզում: Պարապմունքների կարևորագույն տարրը համարվում է գրքերի և պատմվածքների ունկնդրումը: Լսելու կարողությունն իր մեջ ներառում է ճանաչողական և անձնային հատկություններ, իսկ ամենակարևորը՝ տեսական հետաքրքրվածություն գիտելիքների նկատմամբ: Նախադպրոցական պարապմունքների ընթացքում ձևավորվում է նաև խոսքային հրահանգների իրականցման ունակություն: Ուսումնական գործունեության ռանձնահատկությունը

[10] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ158
[11] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ160

կայանում է նարնում, որ այն դնում է ոչ թե գործնական նպատակներ, այլ ուսումնական՝ սովորեցնել անել[12]:

Սովորելու ունակությունը դրսևորվում է նրանում, որ երեխան ձգտում է ճիշտ կատարել: Դա կարելի է նկատել աշխատանքը գնահատելու խնդրանքով: Նախադպրոցականին ուսուցման լավագույն ձևը համարվում է դիդակտիկ խաղը և առաջադրանքների խաղային ձևակերպումը:

Ուսուցման գործունեությունը ունի հատուկ նպատակ՝ ստանալ նոր գիտելիքներ: Սովորելու ունակությունը ենթադրում է ուսումնական խնդրի տարբերակելու գործնական, կենսական իրադրությունից, ընդունել այն: Նախադպրոցական տարիքում կարևոր է համարվում ուսուցման դրդապատճառային հիմքի ձևավորումը ճանաչողական գործընթացների զարգացումը: Դիդակտիկ խաղը խաղի հատուկ ձև է, որը նպաստում է ճանաչողական, ուսումնական գործունեության իրականացմանը: Գործունեության վերարտադրողական ձևերը, որոնք իրականացնում են աշխատանքային և ուսումնական խնդիրներ, նպաստում են նախադպրոցականի անձի զարգացմանը:

Նախադպրոցականի գործունեության զարգացման ընդհանուր առանձնահատկությունը նրա բոլոր ձևերում համարվում է գործողությունների նպատակների և միջոցների գիտակցումը, դրդապատճառների բազմազանությունը, դրդապատճառների հիերարխիկ բնույթը և գլխավոր դրդապատճառի առանձնացումը՝ կատարել ճիշտ, արժանանալ մեծահասակի հավանությանը: Ցանկացած գործունեության մեջ երեխաների ակտիվության ներուժը համարվում է խաղի և մրցակցության տարրերը:

Նորմալ պայմաններում նորմալ զարգացման դեպքում այսպիսի նորագոյացությունները ամբողջության մեջ առաջացնում են ուսուցման գործառույթը: Ավագ նախադպրոցական տարիքում երեխաները շատ են ուզում սովորել, ճանաչել, կարողանալ անել՝ խնդրում են մեծահասակներին սովորեցնել այն ամենին, ինչին նրանք տիրապետում են:

Այսպիսով խաղի դերն ու նշանակությունը անգնահատելի է երեխայի կյանքում: Խաղը ծնվում է երեխայի հետ և դառնում նրա հավատարիմ բարեկամը: Բոլոր

[12] Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, էջ161

ժամանակներում էլ երեխաները ձգտել են խաղալ: Այն ինքնարտահայտման, ինքնակայացման, ինքնակատարելագործման, աշխարհը և ինքն իրեն ճանաչելու ամենակարևոր և որոշիչ միջոցներից մեկն է:

2. Սյուժետա-դերային խաղը նախադպրոցական տարիքում

Ընդունված է խաղերը բաժանել երկու հիամնական խմբի՝

1. **Ստեղծագործական**, որոնք ընդգրկում են սյուժետադերային խաղեր և խաղ-բեմականացումներ:
2. **Կանոնավոր** խաղերի մեջ մտնում են դիդակտիկ, շարժողական, երաժշտական խաղերը և խաղ-զվարճալիքները:

Նախադպրոցական տարիքում առաջատար գործունեության տիպը դա սյուժետա-դերային խաղն է: Այն խորապես ուսումնասիրված է Լ.Ս.Վիգոտսկու, Դ.Բ.Էլկոնինի, Ա.Վ.Զապորոժեցի, Ա.Պ.Ուսովայի, Ֆ,Ի.Դրադկինի և այլոց աշխատություններում: Մանկական խաղի հիմնական կողմերն են համարվում բովանդակությունը և սյուժետը: Վերջինս դա խաղում արտացոլվող մաս է, իրականության կողմ: սյուժետների բազմազանությունը ընդլայնվում է երեխայի՝ մեծահասակների կյանքի նոր ոլորտների ծանոթացման հետ[13]:

Խաղի բովանդակությունը դա այն է, ինչ երեխան առանձնացնում է որպես մեծահասակների գործունեության և հարաբերությունների հիմնական մաս, թե մարդկանց հենց ինչպիսի հիմնական գործողություններ և հարաբերություններ են հենց վերարտադրվում խաղային ձևով: Կրտսեր նախադպրոցական տարիքում խաղում գտնվում է գործունեության արտաքին կողմի արտացոլումը: Երեխաները վերարտադրում են առարկայական գործողությունները, որոնք բնորոշ են այս կամ այն դերը: Հետագայում խաղի բովանդակությունը դառնում է արտաքին սոցիալական հարաբերությունները և սոցիալական հիերարխիան:

[13] Шаповаленко И.В. “Возрастная психология”М., 2005,, էջ 202

Սյուժետա-դերային խաղի կառուցվածքը իր զարգացած ձևում ներառում է դերը, երևակայական իրադրությունը և խաղային գործողությունները: Դերը ընդգրկում է վարքի կանոնները: Խաղային գործողությունները դրանք դերի իրականացման ձևեր են, որոնք ունեն ընդհանրացված բնույթ[14]:

Համատեղ խաղում երեխաների միջև փոխհարաբերությունները կրում են տարբեր բնույթ: Դրանք ըստ բովանդակության հարաբերություններ են և դերերը՝ խաղային, իսկ երեխաների միջև փոխհարաբերությունները որպես գործընկերներ, որոնք կատարում են համընդհանուր գործ՝ իրական: Սյուժետա-դերային խաղի հետ մեկտեղ երեխաների վրա դրական ազդեցություն է թողնում նաև շարժողական խաղերը կանոններով, որոնք զարգացնում են կամքը, վարքի ինքակարգավորումը:

Գործունեության վերարտադրողական ձևերը դիտվում են որպես շրջապատող իրականության մոդելավորման յուրօրինակ ձևեր: Վերարտադրողական գործունեության ձևերը ընդգրկում են մտահղացում, որոնք ստեղծագործորեն իրագործվում են: Պատկերավոր գործունեությունը շարունակում է զարգանալ նախադպրոցական տարիքում խաղի ձևով: Այստեղ պատկերը երկար ժամանակ մնում է երկրորդական, իսկ կարևորը համարվում է հենց նկարչության գործընթացը: Առարկայի պատկերման գրաֆիկական կողմը պայմանավորված է երեխայի մոտ առկա տպավորություններով, գրաֆիկական պատկերներով, շարժողական փորձով[15]:

3. Խաղի ազդեցությունը երեխայի զարգացման վրա

Խաղային գործունեությունը ազդում է հոգեկան գործընթացների կամայինության ձևավորման վրա: Այսպես, խաղում երեխաների մոտ սկսում են զարգանալ կամային ուշադրությունն ու հիշողությունը: Խաղի պայմաններում երեխաներն ավելի լավ են կենտրոնանում և շատ մտապահում, քան լաբորատոր փորձերի ժամանակ: Եթե երեխան ուշադիր չէ նրա նկատմամբ, ինչ իրենից պահանջում է խաղային իրադրությունը, եթե չի մտապահում խաղի պայմանները, ապա նա պարզապես վռնդվում է հասակակիցների կողմից: Շփման, հուզական խրախուսանքի

[14] Шаповаленко И.В. “Возрастная психология”М., 2005,, էջ204
[15] Шаповаленко И.В. “Возрастная психология” М., 2005,, էջ 209-210

պահանջմունքը երեխային հարկադրում են նպատակաուղղված կենտրոնացում և մտապահում:

Խաղը շատ մեծ ազդեցություն է գործում խոսքի զարգացման վրա: Եթե երեխան ի վիճակի չէ խաղի ընթացքի վերաբերյալ իր ցանկությունները հստակորեն արտահայտելու, եթե չի հասկանում խաղընկերների հրահանգները, ապա նրա ներկայությունը բեռ է դառնում մյուս մասնակիցների համար: Այս պայմաններում առաջացող հուզական անբարեկեցիկ վիճակը խթանում է խոսքի զարգացմանը:

Խաղային իրադրությունները և նրա հետ կատարվող գործողությունները մշտական ներգործություն են ունենում նախադպրոցական տարիքի երեխայի մտավոր զարգացման համար: Աստիճանաբար առարկաների հետ խաղային գործողությունները կրճատվում են, երեխան սովորում է մտածել առարկաների մասին և գործել նրանց հետ մտավոր մակարդակում: Խաղը մեծ չափով նպաստում է նրան, որ երեխան աստիճանաբար անցնում է պատկերացումային մտածողության:

Երեխայի մտավոր զարգացման մասին Ժան Պիաժեի ստեղծած տեսության մեջ կան մտածողության և ընկալման այն առանձնահատկությունները, որն արտահայտվում է հետևյալ կերպ. երեխան շրջապատը և մարդկանց կարող է ընկալել և գնահատել միայն իր տեսակետից, մտովի կարող է կանգնել ուրիշի տեսակետի վրա: Այս երևույթը Պիաժեն անվանում է էգոցենտրիզմ (եսակենտրոնություն): Էգոցենտրիզմի հետևանքներն են երեխայի մտածողության այնպիսի առանձնահատկությունները, ինչպիսիք են սինկրետիզմը, հակասությունների նկատմամբ անզգայունակությունը: Էգոցենտրիզմը հանգեցնում է նաև սուբյեկտիվիզմի և սեփական ընկալումները ուրիշներին վերագրելուն: Դերային խաղը վճռորոշ նշանակություն ունի երևակայության զարգացման համար: Խաղային գործունեության մեջ երեխան սովորում է փոխարինել մի առարկան մյուսով, իր վրա տարբեր դերեր վերցնել: Այս ամենը նպաստում է երևակայության զարգացմանը:

Խաղի ազդեցությունը երեխայի անձի զարգացման վրա կայանում է նրանում, որ նրա միջոցով նա ծանոթանում է մեծ մարդկանց վարքի և փոխհարաբերությունների հետ, որոնք օրինակ են դառնում նրա սեփական վարքի համար, և նրանում է երեխան ձեռք բերում շփման հիմնական հմտությունները, որակները, որոնք անհրաժեշտ են հասակակիցների հետ շփման համար:

Գրավելով երեխային և նրան ստիպելով ենթարկվել իր վերցրած դերի կանոններին, խաղը նպաստում է զգացմունքների և վարքի կամային կարգավորման զարգացմանը:

Խաղային գործունեության ներսում սկսում է ձևավորվել նաև ուսումնականը, որն առավել է առաջատար: ՈՒսուցման տարրերը մտցնում է մեծահասակը, դրանք չեն բխում անմիջականորեն խաղից: Նախադպրոցականը սկսում է սովորել խաղալով, նա ուսուցմանը վերաբերվում է որպես յուրահատուկ դերային խաղ իր որոշակի կանոններով: Սակայն պահպանելով այդ կանոնները՝ երեխան իր համար աննկատ յուրացնում է տարրական ուսումնական գործողություններ: Նախադպրոցականի մոտ հայտնվում է սովորելու ցանկություն և կազմավորվում են առաջնային կարողությունները:

4. Խաղերի կիրառումը տարբեր խմբերում (դասավանդման փորձ)

3-4 տարեկան երեխաների խաղերը

Մանկապարտեզ հաճախելը երեխայի կյանքում զգալի փոփոխություններ է առաջացնում: Նրա համար սովորական ընտանեկան կենսաձևը փոխվում է: Երեխաներին անհրաժեշտ է հարմարվել նոր մարդկանց՝ մեծերին և երեխաներին, ռեժիմին, միջավայրին: Այս դեպքերում կարևոր նշանակություն է ձեռք բերում խաղը: Մանկապարտեզ մտնելիս խաղի հետ կապված դրական ապրումները դրականորեն են երանգավորում նրա հանդիպումը մեծերի և փոքրերի հետ: Խաղալիքներն ու խաղերը երեխային օգնում են ավելի հեշտ տանել տանից, մտերիմներից բաժանումը, ծանոթանալ միմյանց հետ:

Երեք տարեկան երեխայի մոտ խաղը հաճախ դրսևորվում է առարկայի հետ պարզ գործառնությունների մեջ. տեղափոխում է մի տեղից մյուսը՝ տեղաշարժում, հարվածում: Երբեմն խաղը սկսում է դերային բնույթ կրել. երեխան իրեն մեկ «մայրիկ» է երևակայում, մեկ «տատիկ», մեկ «դաստիարակչուհի»: Սյուժեի նկատմամբ

հետաքրքրությունը այս տարիքի երեխաների մոտ բավական մեծ է, բայց նրանք դեռևս ի վիճակի չեն այն բարդացնել: Տիկնիկով խաղալիս երեխան բավարարվում է նրանով, որ նրան պառկեցնում է քնելու և կերակրում է:

Առաջին խաղերը, որոնք սովորաբար յուրահատուկ ուրախություն են պատճառում փոքրիկ երեխային, երբ նրա հետ խաղում է դաստիարակչուհին, «մայրիկ-դուստր», «մայրիկ-որդի» խաղերն են: Նրանք հաճույք են պատճառում՝ հիշեցնելով մայրիկի, ընտանիքի, սովորական տնային միջավայրի մասին:

Միջին նախադպրոցական տարիքի երեխաների խաղերը

4–6 տարեկան երեխաների խաղերը բնորոշվում են մի շարք փոփոխություններով: Դրանցից կարևորը կայանում է խաղի բովանդակության ընդլայման մեջ առավել տարաբնույթ թեմատիկայի և դերային պատկերի ավելի ամբողջական նկարագրման հետևանքով:

Այս տարիքի երեխաների շրջանում առավել տարածված համարվում են խաղերի հետևյալ խմբերը. 1. Հասարակական խաղեր, որոնք արտացոլում են շրջապատող սոցիալական կյանքի երևույթները 2. նրանց հարող շինարարական խաղեր 3. «մանկապարատեզ» և «ընտանիք» խաղերը 4. «գեղարվեստական» խաղեր («տոներ», «համերգ», «թատրո», « կինո» և այլն):



Հասարակական կյանքի երևույթների նկատմամբ աճող հետաքրքրությունը բնութագրական է այս տարիքի երեխաների համար: Նախադպրոցականներին շրջապատող մարդկանց աշխատանքը առիթ է հանդիսանում խաղում ընդօրինակման համար: Երեխաներին ամենից առաջ գրավում է մոտ սոցիալական միջավայրը մանկապարտեզից դուրս (օրինակ՝ տրանսպորտ, խանութ, աշխատանք): Այս տարիքում բնորոշ է հետաքրքրությունը մեքենաների, «ուղևորության», իսկ ավելի ուշ նաև «տևական ճանապարհորդության» խաղերի նկատմամբ: Հաճախ երեխաների առաջին «մեքենաներով» խաղերը միասնական բնույթ են կրում, այսինքն երեխան միաժամանակ և՝ վարորդն է, և՝ մեքենան: Հետագայում դերի նկատմամբ հետաքրքրությունը նման խաղում ավելի մասնատված բնույթ է կրում,

հետաքրքրություն է առաջանում մեքենան վարող մարդու դերի, հենց մեքենայի՝ նրա կառուցվածքի նկատմամբ:

6 – 7 տարեկան երեխաների խաղերը

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների խաղերի մեծամասնությունը արտացոլում է բազմազան հասարակական կյանքի երևույթները: Ամենատարածվածը այս խմբում հանդիսանում են ստեղծագործական դերային խաղերը, նշանակալի տեղ են զբաղեցնում նաև սյուժետա–շինարարական, դիդակտիկ, սպորտային խաղերը: Նաև շարունակում են զարգանալ այնպիսի խաղերը, ինչպես «մանկապարտեզ», «շոգենավ», «թատրոն», «տոներ»: Երեխաները շատ են սիրում նաև «ճանապարհորդության» խաղերը: Սակայն ըստ բովանդակության և ձևի նրանք զգալիորեն տարբերվում են միջին տարիքի երեխաների համանման խաղերից:

Նման խաղերում հնարավոր է երեխաների մեծ խմբերի մոտեցում, նրանց ճանաչողական հետաքրքրությունների բավարարում, աշխատանքային ջանքերի ներդնում: Խաղը թույլ է տալիս երեխաներին դրսևորել իր ակտիվությունը:

Խաղերի բովանդակության հարստությունն ու բազմազանությունը որոշվում է երեխայի զարգացման մակարդակով և դաստիարակչական գործընթացի որակով: Հաճախ «մանկապարտեզ» խաղերը տարբեր բովանդակություն են ունենում. մի մասը նախընտրությունը տալիս է «երաժշտական պարապմունքներին», մյուսները՝ տարվում են տիկնիկներին ինչ–որ բաներ պատմելով, երրորդները՝ տիկնիկների հետ հաշվելու պարապմունքներով: Որոշ խաղերում զարգանում է գեղարվեստական բովանդակությունը (երգեցողություն, երաժշտություն, պար), մյուսներում՝ իմացականը (հաշիվների, հանելուկների գուշակում): Խաղում երեխաների վարքը անհրաժեշտ է դիտարկել այն տեսանկյունից, թե նրանում ինչպես են դաստիարակվում մաքրասիրությունը, համբերատարությունը, գործողությունների հետևողականությունը:

6–7 տարեկան երեխաների լավ կազմակերպված խաղում երեխան կարողանում է իր առջև նպատակ դնել, ինքնուրույն նյութ ընտրել, սկսածը համբերատար հասցնել ավարտին: Խաղը լավն է, եթե երեխաները, իրենք են այն կազմակերպում, կարողանում են կառավարել այն, ենթարկվել ուրիշներին, օգնել միմյանց:

«Կառուցի՞ր տնակներ և շրջակայքում տնկի՞ր ծառեր»

Անհրաժեշտ պարագաներ՝ գունավոր թղթի շերտիկներ՝ տնակների կառուցման և ճանապարհների անցկացման համար, 5 կանաչ եռանկյուն, երկու սնկի նմուշ. մի սունկն ընտրել մեծ գլխով և հաստ ոտքով, իսկ մյուսը՝փոքր գլխով և բարակ ոտքով :

Խաղի բովանդակությունը՝ ուսուցիչը պահանջում է կառուցել նախ մեծ, ապա ՝ փոքր տնակներ: Մեծ տան մոտ տնկել ցածր եղևնի, փոքր տան մոտ՝ բարձր եղևնի: Մեծ տնից մինչև փոքր տունն անցկացնել ճանապարհ՝ կանաչ թղթի երկու շերտիկներով: Այդ ճանապարհը լայնանում է մեծ տան մոտ և նեղանում՝ փոքր տան մոտ: Մեծ եղևնու մոտ տեղավորել մեծ սունկ, փոքր եղևնու մոտ ՝փոքր սունկ: Հաղթում է այն աշակերտը, որը պահպանել է խաղի կանոնները և գեղեցիկ է կառուցել:



Չպետք է մոռանալ, որ անհրաժեշտ է անընդհատ խրախուսել ճիշտ, սրամիտ պատասխանների, անսպասելի լուծումների համար:

«Կազմենք գնացք»

Բովանդակությունը՝ դաստիարակն հերթով երեխաներին կանչում է գրատախտակի մոտ: Նրանցից յուրաքանչյուրը, վագոնի դեր կատարելով, ասում է իր թիվը: Օրինակ՝ առաջին կանչված երեխան ասում է. «Ես առաջին վագոնն եմ»: Երկրորդ երեխան, երկրորդ վագոնի դերը կատարելով, միանում է առաջին վագոնին՝ (ձախ ձեռքը դնում է առջևի կանգնած երեխայի ուսին) ասելով իր թիվը, մնացածները վարվում են նույն կերպ: «Մեկ կրկին մեկ՝ ստացվում է երկու»: Հետո միանում է երրորդ վագոնը և բոլոր երեխաները, դաստիարակի ազդանշանով, կազմում են գումարման օրինակներ. «Երկու կրկին մեկ՝ կստացվի երեք» և այսպես շարունակ: Այնուհետև վագոնները (երեխանները) անջատվում են մեկ առ մեկ, իսկ խումբը կազմում է հետևյալ տիպի օրինակներ. «Երեք առանց մեկի կլինի երկու, երկուսը առանց մեկի՝ մեկ և այլն»:

Սովորողները խաղի ընթացքում ամրապնդում են իրենց գիտելիքները և մեկ անգամ ևս ընդհանրացնում , թե ինչպես են կազմում նախորդ և հաջորդ թվերը:

Բանջարեղենի խանութում

Մի ցրված, մտամոլոր մարդ մտնում է բանջարեղենի խանութ:

Վաճառող- Ողջույն, ի՞նչ եք ցանկանում գնել:

Մարդ-Ես մոռացա անունը, թե ինչ եմ ցանկանում գնել:

Վաճառող-Դուք ցանկանում եք միրգ, թե՞ բանջարեղեն:

Մարդ-Ես ցանկանում եմ բանջարեղեն:

Վաճառող-Ի՞նչ գույնի է:

Մարդ-Կանաչ:

Վաճառող-Ի՞նչ ձևի է:

Մարդ-Կլոր է:

Վաճառող-Ի՞նչ համի է, ի՞նչ համ ունի:

Մարդ-Այն քաղցր է:

Վաճառող-Ի՞նչ չափի է:

Մարդ- Փոքր է:

Վաճառող-Հա~, երևի դուք ցանկանում եք գնել ոլոռ:

Մարդ-Ճիշտ է, ես ցանկանում եմ գնել ոլոռ, այն բանջարեղեն է կանաչ է, կլոր, փոքրիկ և քաղցր:

Դերային և սյուժետադերային խաղ

Ընտանիք

Նպատակը՝ Խաղի հետաքրքիր զարգացում, դրական հարաբերությունների ձևավորում երեխաների միջև:

Անհրաժեշտ նյութեր, իրեր՝ Տիկնիկ՝ երեխայի դերում, իրեր տնակ պատրաստելու համար:

Նախապատրաստություն խաղին՝ Երեխան արթնացել է, մայրը տանը չէ, պետք է երեխայի համար ճաշ պատրաստել, կերակրել նրան: Քննարկել ընտանիք հասկացությունը, ընտանիքի կազմը, պարտականությունները:

Եզրակացություն

Գործունեության հիմնական տեսակներ են խաղը, ուսուցումը և աշխատանքը: Խաղի ընթացքում երեխան հեշտությամբ հասկանում է, որ իրական առարկան հնարավոր է փոխարինել խաղալիքով կամ որևիցե պատահական իրով: Այս բանը նա սովորում է մեծերից: Նա ոչ միայն կարողանում է առարկաները փոխարինել միմյանցով, այլև առարկաները, կենդանիները ու մարդկանց իր անձով:

Այսպիսով, խաղերի դաստիարակիչ նշանակությունը ամենից առաջ նրանց բովանդկության մեջ է:

Երեխան տեսնում է խաղում իր հնարավորությունները, համեմատում է իր ընդունակությունները ընկերների կարողությունների հետ, սովորում է համառորեն հասնել լավ արդյունքի: Խաղի տարբեր իրավիճակներում երեխան գիտակցում է, որ ինքը հանդիսանում է կոլեկտիվի մի մասնիկը և դրա համար էլ պետք է իր հետաքրքրությունները համաձայնեցնի ընկերների հետաքրքրություններին:

Դիդակտիկ խաղը նպաստում է, որպեսզի երեխան գիտակցաբար ենթարկվի խաղի կանոններին, նրա որոշակի սահմանափակումներին: Այդ քիչ նշանակություն չունի կարգապահություն, իրինքնատիրապետում և ինքնավերահսկում դաստիրարակելու գործում:

Խաղերի նշանակությունը նաև նրանումն է, որ դրանք նպաստում են ակտիվություն, ինքնուրույնություն և սեփական ուժերի նկատմամբ հավատ դաստիարակելուն:

Բերված խաղերն ուղղված էին՝

1. Մեծ-փոքր, աջ-ձախ, երկար-կարճ, բարձր-ցածր, շատ-քիչ, վերև-ներքև, ծանր-թեթև հասկացությունները յուրացնելուն:

2. Թվի, ապա՝ տասնյակի գաղափարը յուրացնելուն, երեխային թվագրության նախապատրաստելուն:

3. 10-ի սահմաններում բանավոր հաշվումներ կատարելուն, հմտություններ ձևավորելուն:

4. Օրինաչափությունները նկարագրելու, օգտագործելու պարզագույն հմտություններ ձևավորելուն և այլ մանկավարժական խնդիրներ լուծելուն:փությունները

նկարագրելու, օգտագործելու պարզագույն հմտություններ ձևավորելուն և այլ մանկավարժական խնդիրներ լուծելուն:

Նկատենք, որ երեխայի հետ աշխատանքի գլխավոր սկզբունքն խաղերի հետաքրքիր, ոչ ձանձրալի լինելն է:

Խաղերը ընտրելիս նկատի եմ ունեցել նաև «երեխա-դաստիարակ և «դաստիարակ-երեխաե փոխհարաբերության և դրական հույզերի առաջացման ու զարգացման վրա: Նման գործունեության ու հաջորդականության շնորհիվ զարգանում են երեխաների անհատական ու անձնական հատկանիշները, որոնք չեն կարող հաղորդվել պարապմունքների գործընթացում և բացահայտվել նրանց պոտենցիալ հնարավորությունները:

Խաղի կազմակերպումը իր մեջ ներառում է մի քանի բաղադրիչներ.

1) երեխաների կարողությունը ինքնուրույն ընտրել խաղը՝ իր հետաքրքրություններին և հակումներին համապատասխան և նրանում իրեն գիտակցաբար պահել

2)խաղի բովանդակության զարգացում, այսինքն բովանդակալից, սյուժետային խաղեր կառուցելու ունակություն

3)անհրաժեշտ խաղալիքների առկայություն կամ դրանք պատրաստելու կարողություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ալեքսանդրյան Է.Ա., Այվազյան Լ.Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» Ե.,1992 թ., 270 էջ
2. Մարության Ս., Դալլաքյան « Նախադպրոցական մանկավարժություն « Ե., 2008, 288 էջ
3. Лобанова Е.А. “Дошкольная педагогика” Балашов; Николаев, 2005, 76 стр.
4. Мухина В.С. “Возрастная психология”М., 2006, 608 стр.
5. Палагина Н.Н. “Психология развития и возрастная психология”М., 2005, стр.288
6. Психология детства (под.ред. А.А.Реана) Спб:" прайм-Евро- знак’’, 2003, стр.368
7. Шаповаленко И.В. “Возрастная психология”М., 2005, стр. 349

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ <<ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>>

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Բարոյական դաստիարակությունը ընտանիքում

Կատարող՝ Լիլիթ Բադալյան

Ղեկավար՝ Գ. Էմինյան

Վանաձոր 2022

Բովանդակություն

- Ներածություն..... 3
- Գլուխ 1. Բարոյական դաստիարակությունը՝ դաստիարակության ընդհանուր համակարգում 5
- Գլուխ 2. Բարոյական դաստիարակության խնդիրներն ու միջոցները..... 7
- Գլուխ 3.Բարոյական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում..... 9
- Գլուխ 4. Ընտանիքի դերը բարոյական դաստիարակության գործընթացում.....10
- Փորձարարական մաս.....12
- Եզրակացություն.....19
- Օգտագործված գրականության ցանկ..... 20
- Հավելվածներ……..…….21

Ներածություն

Թեմայի արդիականություն

Բարոյական դաստիարակությունը, դաստիարակության հիմնական տարրերից է և շատ կարևոր է նրա դերը մարդու համակողմանի զարգացման գործում: Բարոյական դաստիարակությունը՝ դաստիարակության այն կարևոր մասերից է, որն ուղղված է երեխայի ամբողջական անհատականության ձևավորմանն ու զարգացմանը և ներառում է նրա ինտեգրումը հայրենիքին, հասարակությանը, մարդկանց, աշխատանքին, իր պարտականություններին և ինքն իրեն: Բարոյական դաստիարակության նպատակը կայանում է նրանում, որ հասարակության սոցիալապես անհրաժեշտ պահանջները վերածվեն յուրաքանչյուր երեխայի անհատականության ներքին խթանների, ինչպիսիք են պարտականությունը, պատիվը, խիղճը և արժանապատվությունը: Այն միջավայրը, որտեղ երեխան մեծանում է, ամենաառաջնային դերն ունի բարոյական դաստիարակության գործընթացում: Այն ամենը, ինչը երեխան տեսնում է ընտանիքում, անմիջապես ընկալում է, և դարձնում իր համար կանոն և իզուր չէ ասված, որ երեխան ընտաիքի հայելին է:

Երեխայի բարոյական զարգացումը մեծապես կախված է ծնողի մասնակցության աստճիանից, քանի որ մեծահասակի հետ հաղորդակցվելիս երեխան սովորում, ընկալում և մեկնաբանում է բարոյականությունը: Բարոյական դաստիարակությունը ընտանիքում ներկայումս ավելի քան արդիական է, քանի որ հասարակության մեջ կան բազմաթիվ արատավոր երևույթներ, որոնք ազդում են մարդու բարոյականության վրա, իսկ ընտանեկան դաստիարակությունը անքակտելիորեն կապված է հասարակության հետ: Մեծահասակի խոսքը երեխայի անհատականության ձևավորման կարևորագույն գործիք է: Ծնողները պետք է գիտակցեն այն փաստը, որ իրենց դերը երեխաների բարոյական դաստիարակության գործընթացում անհամամեմատելի է և պետք է երեխաների մեջ սերմանեն, այնպիսի կարևոր հատկանիշներ ինչպիսիք են՝ հայրենասիրությունը, ընկերասիրությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը և այլն:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝

- Ուսումնասիրել բարոյական դաստիարակությունը ընտանիքում

Ելնելով առաջադրված նպատակից ներկայացնենք **հետազոտական աշխատանքի խնդիրները՝**

- Ուսումնասիրել բարոյական դաստիարակության վերաբերյալ գրականությունը
- Նկարագրել բարոյական դաստիարակությունը, ու միջոցները
- Ուսումնասիրել բարոյական դաստիարակության առանձնահատկությունները
- Նկարագրել բարոյական դաստիարակությունը՝ նախադպրոցական տարիքում
- Բացահայտել ընտանիքի դերը բարոյական դաստիարակության գործընթացում
- Իրականացնել փորձարարական աշխատանք ծնողների հետ

Գլուխ 1. Բարոյական դաստիարակությունը՝ դաստիարակության ընդհանուր համակարգում

Դաստիարակության ողջ համակարգում բարոյական դաստիարակությունը ամենակարևոր մասերից է համարվում է: Այն մեծ ազդեցություն ունի մարդու վարքի վրա: Նրա հիմնական գործառույթը անձի բարոյապես զարգացումն է: Մարդու բարոյական զարգացումը, կախված է այն հանրությունից, որում նա ապրում է: Մարդը իր ողջ կյանքի ընթացում անցնում է բարոյական դաստիարակության փուլերով: Բարոյական դաստիարակության հիմնական նպատակը հասարակության համար պիտանի մարդու ձևավորումն է: Մատաղ սերնդին դաստիարակելը դեռ վաղեմի ժամանակներից համարվել է կարևորագույն խնդիր և հենց այդ ժամանակ էլ բարոյական դաստիարակությունը դարձավ առաջնային: Սակայն խոսել բարոյական դաստիարակության մասին, չանդրադառնալով դաստիարակության ծագմանն ու էությանը սխալ կլինի: Դաստիարակությունը, ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը: Այն զարգացել է մարդու կայացմանը զուգահեռ: Բարոյական դաստիարակությունն արտահայտում է դաստիարակության նպատակների ու բովանդակության ամբողջության կարևորագույն ուղղություններից մեկը:

Մարդը իր ողջ կյանքի զարգացման ընթացում ձեռք է բերում որոշակի գիտելիքներ, հմտություններ, արրժեքային համակարգ, ձևավավորում է իր աշխարհայացքը, որի հիման վրա ընկալում է վարքի նորմերը, դրականն ու բացասականը, թույլատրելին և ոչ թույլատրելին, կարողանում է գիտակցել կյանքի իմաստը, գտնել իր դերն ու տեղը աշխարհում: Բարոյականությունն արժեքների և գերակա պահանջմունքների, համամարդկային գերակա նորմերի ու սկզբունքների համակարգ է, որը մարդկանց կողմնորոշում է դեպի համամարդկային համերաշխության, գթասրտության, սիրո և բարության գաղափարները, հոգևոր բարձր իդեալները: Բարոյականությունը ինքնին համարվում է, որպես մարդկանց վարքը կարգավորելու կարևոր գործառույթ: Բարոյական դաստիարակությունն անձի ընդհանուր դաստիարակության համակարգի կարևոր

բաղադրատարրն է, հասարակական գիտակցության ձև: Բարոյական դաստիարակություն, բարոյական զարգացում, բարոյական արժեհամակարգ, բարոյական գիտակցություն, բարոյական գործողություն, բարոյական վարք հասկացությունները բոլորը փոխկապակցված են և որոշ չափով պայմանավորված են տվյալ հասարակությունում առկա հարաբերությունների բնույթով: Բարոյական գիտակցությունը հասարակական գիտակցության ձևերից մեկն է, մարդկանց սոցիալական կեցության արտացոլումը: Հասարակական գիտակցությունից բացի բարոյականության մեջ պակաս դեր չի խաղում բարոյական գիտակցությունը: Հիմնվելով հասարակության կողմից մշակված բարոյական պատկերացումների վրա, անհատը կարող է զգալիորեն ինքնուրույն կերպով կարգավորել իր վարքը և դատել իր շուրջը տեղի ունեցող ամեն ինչի բարոյականության մասին: Դրա շնորհիվ բարոյականության մեջ նա հանդես է գալիս ոչ միայն որպես սոցիալական վերահսկողության օբյեկտ, այլև որպես նրա գիտակից սուբյեկտ: Բարոյական գիտակցությունը մարդուն բարու և չարի միջև ընտրության հնարավորություն է ընձեռում, որն իրականանում է սեփական համոզմունքով և խորապես գիտակցված վերաբերմունքով: Բարոյական գործողությունն այն արարքն է, որն ունի դրական կամ բացասական բարոյական արժեք, ենթակա է բարոյական գնահատման, և որի համար մարդը պատասխանատվություն է կրում: Յու. Ամիրջանյանը գրում է, որ արարքը գործողություն է. Մարդու արարքն արտահայտվում է ինչ-որ գործողության մեջ: Սակայն գործողությունը դեռևս արարք չէ, քանի որ գործողության իմաստը, որը նրա ներքին կողմն է, դեռևս հայտնի չէ, հայտնի է միայն արտաքին կողմը [5, էջ358]: Արարքի մասին շարադրանքից կարելի է եզրակացնել, որ մարդու արարքների գումարից կամ դրանց ամբողջությունից ձևավորվում է նրա վարքը, որը տվյալ հասարակության մեջ գործող պահանջների ու նորմերի իմացության աստճիանն է և կիրառումը տվյալ անձնավորության կողմից: Այս դեպքում նման վարքը կարելի է անվանել վարքի կուլտուրա: Վարքի ու վարքագծի հիմքը արարքն է: Հեգելն ասում էր «Մարդը ոչ այլ ինչ է քան արարքների ամբողջ շարք»[5,էջ359]: Իսկ իտալացի քաղաքական գործիչ Ա. Գրամշինը գրում է «Մարդը արարքների գործընթաց է»[5, էջ359]:

Բարոյական դաստիարակությունը նպատակաուղղված, սիստեմատիկ ներգործություն է երեխայի բարոյական հատկությունների ձևավորման,հասարակության բարոյականության պահանջներին համապատասխնող վարքի կանոնների, նորմերի կատարման ընտելացմանը: Մարդկանց վարքի կանոնները, նորմերը քարացած չեն, անընդհատ փոփոխվում են: Դրանք բնածին չեն, անհատական գիտակցության արդյունք չեն, ունեն հասարակական պատմական ծագում, յուրացվում են մանկական տարիքից:

Երեխայի բարոյական զգացումը համարվում է բարոյական դաստիարակության, շրջապատող միջավայրի ներգործության, երեխայի սեփական փորձի արդյունք: Բարոյական դաստիարակության արդյունավետությունը պայմանավորված է հասարակության բոլոր սոցիալական օղակների համագործակցությամբ նրանց ներուժով, և մեծերի մանկավարժական վարպետությամբ:

Գլուխ 2. Բարոյական դաստիարակության խնդիրներն ու միջոցները

Բարոյական դաստիարակության մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նրա խնդիրներին: Բարոյական դաստիարակության խնդիրների դասակարգման հարցը մշտապես հետաքրքրել է մանկավարժ-տեսաբաններին, որոնք փորձել են խմբավորել խնդիրները բարոյական դաստիարակության նպատակին հասնելու իրենց տրամաբանությամբ: Ըստ ժամանակակից տեսաբանների գոյություն ունի բարոյական դաստիարակության 2 խոշոր խնդիր.

- Բարոյական պատկերացումների, դրական սովորույթների և վարքագծի, սոցիալական զգացմունքների ձևավորում
- Անձնային բարոյական հատկությունների ձևավորում

Ժամանակակից նախադպրոցական մանկավարժությունը, սկզբունքորեն ընդունելով նրանց դասակարգման մոտեցումը, առավել կարևորում է խնդիրների իրականացման ոչ

այնքան հաջորդականությունը, որքան կազմակերպման եղանակը, նշելով, որ չպետք է անտեսել բարոյական դաստիարակության գործընթացում արդյունքը, քանի որ այն նույքան կարևոր և առաջնային է, որքան և ցանկացած այլ մանկավարժական գործընթացում: Այսպիսով ժամանակակից դասակարգման բարոյական դաստիարակության խնդիրները բաժանվում են երկու խմբի.

- Խնդիրներ, որոնք ուղղված են բարոյական դաստիարակության մեխանիզմների անխափան աշխատանքին, մեխանիզմի բաղադրատարրերի ձևավորմանը;
- Խնդիրներ՝ ուղղված անձնային բարոյական հատկությունների ձևավորմանը:

Առաջին խմբի խնդիրները կայուն են և անփոփոխ, դրանք արտացոլում են բարոյականության օբյեկտիվ՝ համամարդկային բնույթը և նպաստում երեխայի մեջ բարոյականության ընդհանուր պատկերի կառուցմանը, ինչպես նաև բարոյականության յուրաքանչյուր բաղադրիչի ինքնուրույն ձևավորմանը: Երկրորդ խմբի խնդիրներն իրենց բնույթով փոփոխական են ու շարժուն, դրանք բնորոշում են տվյալ հասարակության պահանջները՝ վաղվա քաղաքացու անձնային որակների ձևավորման ուղղությամբ:

Նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական դաստիարակությունն իրականցնելիս կարելի է օգտվել գեղարվեստական միջոցներից, որոնք առավել արդյունավետ են այդ տարիքում: Այս գործում կարևոր նշանակություն ունի մանկական գեղարվեստական գրականությունը: Այն հեքիաթի կերպարներին, որոնց ծանոթանում է երեխան, մեծ ազդեցություն են թողնում երեխայի հոգեբանության վրա՝ նա հաճախ կարող է կրկնօրինակել տվյալ կերպարի արարքները:

Չպետք է թերագնահատել բարոյական դաստիարակության գործընթացում բնության դերը: Բնությունը կարող է անմիջական ազդեցություն թողնել, երեխայի բարոյական դաստիարակության վրա: Մեկ այլ կարևոր միջոց կարելի է համարել երեխայի ինքնուրույնությունը:

Բարոյական դաստիարակության, որպես մեկ այլ հզոր միջոց կարելի է նշել երեխայի շրջապատող միջավայրը, այն սոցիալական միջավայրը, ուր երեխան ապրում և մեծանում է: Վաղ տարիքում երեխան յուրացնում է շրջապատում առկա սոցիալական փորձի էական մասը՝ փորձելով նմանվել շրջապատի մարդկանց: Սիրո և փոխադարձ հարգանքի վրա հիմնված բարոյական մթնոլորտը, ընկերական փոխադարձ վստահելի հարաբերությունները նպաստում են բարոյական դաստիարակության գործընթացի առավել արդյունավետ իրականացմանը:

Գլուխ 3. Բարոյական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում

Բարոյական դաստիարակությունը իրականացվում է մեծահասակների կողմից: Նախադպրոցական տարիքի երեխան չափազանց զգայուն է, այս տարիքում երեխան ցանկացած արարք փորձում է կրկնօրինակել և նմանվել դիմացինին և փորձում է այդ ձևով համապատասխանել հասարակությանը: Որպես բարոյականության որակ, կարելի է առանձնացնել բարոյական զգացմունքների, սովորույթների և վարքագծի ամբողջությունը՝ որը համալիր բարոյական հատկություն է: Բարոյական դաստիարակության ընթացքում երեխայի մոտ, բացի բարոյական գիտակցությունից ձևավորվում է նաև այնպիսի անձնային հատկություններ, ինչպիսիք են՝ բարությունը, մարդասիրությունը, աշխատասիրությունը, ընկերասիրությունը և այլն: Սակայն այս ամենին երեխան միայնակ հասնել չի կարող, նրան անհրաժեշտէ մեծահասակի օգնությունը: Այսինքն՝ բարոյական դաստիարակությունից բխում են բարոյական որակները, որոնց հիմքերը դրվում են նախադպրոցական տարիքում: Երեխային անհրաժեշտ է սնել բարոյական դաստիրակության մասին գիտելիքներով, որպեսզի նա հասկանա բարոյական դաստիարաության բովանդակությունը: Երբ երեխան գիտակցի բարոյական դաստիարակության բովանդակությունը, նա կկարողանա գնահատել

և իմաստավորել իր իսկ սեփական գործողությունները, որի արդյունքում կառաջանա գործողությունների դրդապատճառները: Դրանց շնորհիվ, որոշակի զգացմունքներ և վերաբերմունք կառաջանա իր գործընթացի հանդեպ: Այս ամենի շնորհիվ երեխան արդեն կդրսևորի գիտակցված վարքագիծ: Գիտակցված բարոյական վարքագիծը արդեն իսկ ձևավորված բարոյական որակի արդյունք է: Այսպիսով կարելի է ասել, որ նշված ձևով աշխատելիս նախադպրոցական տարիքի երեխաների մոտ նպաստում է բարոյական հատկության ձևավորմանը: Սակայն այն միանշանակ չէ, քանի որ նման կերպ կարելի է նույնիսկ բացասական որակներ ձևավորել :

Այսպիսով երեխան բարոյական դաստիարակության գործընթացում ձեռք է բերում հետևյալ կարևոր հատկանիշները՝ բարոյական գիտակցություն, բարոյական վերաբերմունք և բարոյական վարքագիծ:

Գլուխ 4. Ընտանիքի դերը բարոյական դաստիարակության գործընթացում

Երեխայի բարոյական դաստիարակությունը սկսվում է ընտանիքից: Որպես անձ երեխան ձևավորվում է ընտանիքում: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ իր բարք ու վարքով ազդում է երեխայի բարոյական դաստիարակության վրա: Ընտանիքը պետք է կարողանա դաստիարակել բարձր բարոյական հատկանիշներով անձ, հասարակության համար պիտանի անհատ: Ծնողներից պահանջվում է մեծ պատասխանատվություն երեխայի ամենօրյա պահվածքի և վարքի հանդեպ: Դաստիարակությունն անհրաժեշտ է տանել այնպիսի ուղղությամբ, որպեսզի երեխայի մտածելակերպը և վարքը չլինի հակահասարակական: Յուրաքանչյուր ծնող պետք է օրինակ ծառայի երեխայի համար, լինի նրա իդեալը: Ծնողի յուրաքանչյուր արարք երեխայի համար օրինակ է: Ինչպես ասել է ռուս գրող Տուրգեննն.**<<Անկարգություն չի լինի այն ընտանիքում, որտեղ ծնողի վարքը բարոյականության բարձրագույն տիպար է>>:** [8] Անձնական վատ վարք ունեցող ծնողը,

չի կարող դրական ազդեցություն թողնել երեխայի վարքի վրա: Օրինակ եթե երեխան ընտանիքում չի տեսնում մեծերի նկատմամբ հարգանք բնականաբար նրա մեջ, երբեք այդ որակը չի ձևավորվի:

Աշխարհը երեխան տեսնում է ծնողի աչքերով: Բայց սա միանշանակ չէ, քանի որ կան երեխաներ, ովքեր ունեն այլ աշխարհընկալում: Այսպիսի դեպքերում հիմնականում շրջապատն է կարողանում երեխայի վարքի վրա ազդեցություն թողնել: Եվ նման երեխաները զուրկ լինելով բարոյական արժեքներից, մեծանալով դառնում են հասարակության համար ոչ պիտանի անձ: Բոլոր դեպքերում երեխայի բարոյական դաստիարակության գործընթացում պատասխանատվության մեծ բաժինը ծնողինն է: Եվ ինչպես ասել է մանկավարժ Ա. Մակարենկոն "’Տունն ու ընտանիքը լքած երեխաներին և հասարակության հանդեպ պատասխանատվությունը կորցրած ծնողների վարքը համարում էր մարդկության ստորին սահմանին կանգնած հանցագործություն: Սա նշանակում է, որ ընտանիքը անհրաժեշտ մակարդակով չի կատարում իր առջև դրված բարոյական ֆունկցիան, չի ցուցաբերում պահանջվող խստությունն ու հսկողությունը, որի հետևանքը լինում է երեխայի արարտավոր արարքներն ու հակահասարակական սխալ մոտեցումները:

Փորձարարական մաս

Հետազոտական աշխատանքը իրականացրել ենք, այն նպատակով, որպեսզի պարզենք երեխայի բարոյական դաստիարակության գործընթացում ընտանիքի կատարած դերը: Հետազոտությունը իրականցվել է՝ <<Սպիտակ համայնքի Մեծ Պարնու մանկապարտեզ >> ՀՈԱԿ-ի կրտսեր երկրորդ խմբի ծնողների հետ մեր կողմից կազմված հարցաթերթիկի միջոցով: Հարցաթերթիկը ներառում է 15 հարց(Հավելված 1), հարցմանը մասնակցել է 20 ծնող: Ստորև ներկայացնում ենք հարցման արդյունքները՝

№1



Ինչպես, տեսնում ենք առաջին հարցի արդյունքներից ծնողների մեծամասնությունը՝ 50%-ը, նշել է «երբեմն» տարբերակը, իսկ 10%-ը նշել է «հաճախ»: Սակայն դա միանշանակ չենք կարող վերագրել, որպես ծնողի սխալ դաստիարակության արդյունք, կամ էլ պատճառաբանենք երեխայի ոչ լիարժեք դաստիարակված լինելը: Այս պարագայում, ծնողները պետք է հաշվի առնեն նաև երեխայի տարիքային առանձնահատկությունները՝ երեխան կարող է գտնվել իր տարիքին համապատասխան ճգնաժամային փուլում, որը հաղթահարելու համար նրան անհրաժեշտ է ծնողի օգնությունը:

№2



Ըստ երկրորդ հարցի ստացված պատասխաններից, որտեղ մեծամասնությունը նշել է, որ նման դեպքեր չեն լինում կարելի է եզրակացնել, որ երեխաները հակված չեն ֆիզիկական ուժ կիրառելու կամ ագրեսիվ վարք ցուցաբերելու դիմացինի հանդեպ, ինչը կարելի է համարել դրական վարկանիշ:

№3



Երրորդ հարցի արդյունքները ևս դրական ցուցանիշ կարելի է համարել, քանի որ մեծամասնությունը 80%-ը, նշել է որ երեխան անհրաժեշտության դեպքում օգնում է մեծահասակներին, ինչը գովելի է և փաստում է, որ ծնողները կարողացել են հարգանք սերմանել իրենց երեխաների մեջ:

№4



Այս հարցին ծնողների մեծամասնությունը 90%-ը պատասխանել է, որ երեխան ընդունում է իր սխալը և փորձում է շտկել: Դա լավ հատկանիշ է երեխայի մեջ, քանի որ նա եթե այդ տարիքում փորձում է շտկել իր սխալը, հետագայում ևս հեշտությամբ կհրաժարվի սխալ դիրքորոշումներից:

№5

Հինգերորդ հարցի արդյունքները հետևյալն են՝ երեխաների մեծ մասը այդքան էլ սեր չունեն կենդանիների հանդեպ:

№6



Վեցերորդ հարցը, որը վերաբերվում է դաստիարակչական միջոցների ազդեցությանը՝ այստեղ ծնողների մեծամասնությունը նշել է, որ ավելի հաճախ կարողանում են երեխայի վարքը շտկել զրույցների միջոցով, ինչը գովելի է: Սակայն ուշադրություն պետք է դարձնենք այն փաստին, որ 15%-ը նշել է, որ երեխայի վարքը կարողանում են շտկել միայն նվերներ խոստանալով: Դա սխալ դաստիարակության ձև է, քանի որ խրախուսանքները, խոստումները երբեք չպետք է համարվեն երեխայի համար նախապայման իր վարքը փոխելու համար:

№7



Ըստ յոթերորդ հարցի ստացված պատասխաններից, կարելի է եզրակացնել, որ ծնողները բացառում են ֆիզիկական պատիժը դաստիարակության գործընթացում: Դա նույնպես գովելի է, քանի որ ֆիզիկական ուժ գործադրելը, սպառնալիքները ոչ միայն չեն օգնում դաստիարակության գործընթացում այլ նաև կարող են թողնել հակառակ ազդեցությունը՝ երեխային դարձնելով ագրեսիվ:

№8



Տվյալ հարցի արդյունքերից կարող ենք փաստել այն, որ ծնողների մեծ մասը հաշվի չեն նստում երեխայի կարծիքի հետ, համարելով, որ երեխան պետք է ենթարկվի իրեն, քանի որ ինքը ավելի մեծ է: Սակայն երեխան համարվում է անհատ, ով ունի իր «ես»-ը, իրավունքները, և անկախ տարիքից ծնողները պետք է հաշվի նստեն նրա կարծիքի հետ:

№9



Իններորդ հարցը վերաբերվում է հայրենասիրությանը: Ծնողների մեծամանությունը նշել է, որ այդքան էլ հաճախ չեն զրուցում երեխաների հետ հայրենասիրության թեմայով: Սակայն այս թեման շատ կարևոր է և ցանակալի է, որպեսզի ծնողները մեծ

պատասխանատվությամբ մոտենան այս հարցին, քանի որ հայրենասիրությունը ոչ միայն ուղիղ կապ ունի բարոյական դաստիարակության հետ, այլև նաև մեր օրերում երեխան դեռ վաղ տարիքից պետք է պատկերացում կազմի հայրենիքի մասին:

№10



Ամփոփելով այս հարցի պատասխանները, կարելի է եզրակացնել, որ ծնողների մեծամսնությունը ուշադրություն է դարձնում, թե ինչպիսի մուլտֆիլմեր են դիտում երեխաները, շեշտը դնելով այնպիսի մուլտֆիլմերի, որոնք իրենց մեջ պարունակում են դաստիարակչական տարրեր:

№11

Այս հարցը նույնպես վերաբերվում է մուլտֆիլմերին: Այդքան էլ գովելի չէ, որ մեծամասնությունը նախապատվությունը տալիս են արտասահմանյան մուլտֆիլմերի այլ ոչ թե հայկական: Սակայն դիտելով նախորդ հարցի արդյունքները կարելի է եզրակացնել, որ ուշադրություն են դարձնում մուլտֆիլմի բովանդակությանը անկախ նրանից այն հայկական է, թե արտասահմանյան:

№12



Այս հարցի պատասխաններից կարող ենք եզրակացնել, որ երեխաների մեծամասնությունը հավաքում է իր խաղալիքները միայն ծնողի հիշեցումից հետո: Սակայն այս վարքը կարող է շտկվել, ծնողի կողմից իրականացված որոշակի դաստիարակչական քայլերի միջոցով և աշխատասիրության հանդեպ սեր սերմանելով:

Ամփոփելով հարցման արդյունքները, կարելի է եզրակացնել, որ ծնողների կողմից որոշակի աշխատանք է տարվում ուղղված բարոյական դաստիարակությանը: Հաշվի առնելով ծնողների կողմից տրված պատասխանները, եկանք այն համոզման, որ դաստիարակության գործընթացում ծնողները բացառում են ֆիզիկական պատիժը: Սակայն նկատեցինք որոշակի բացթողումներ ծնողների կողմից: Հատկապես ուշադրություն դարձնենք մուլտֆիլմերին, որոնց ծնողները այդքան էլ կարևորություն չեն տալիս և չեն գիտակցում դրանց ունեցած դերը բարոյական դաստիարակության գործում, որը շատ մեծ է: Նկատեցինք, որ հիմնականում երեխաները դիտում են արտասահմանյան և անհասկանալի բովանդակությամբ մուլտֆիլմեր, որոնք հիմնականում չունեն դաստիարակչական բովանդակություն, ունենում են հակառակ ազդեցություն երեխաների վարքի վրա:

Այսպիսով հասկացանք, որ բարոյական դաստիարակությունը ընտանիքում ունի ամուր հիմքեր, բայց կան նաև որոշ բացթողումներ և ծնողների մի մասը միգուցե անգիտակցաբար ուշադրություն չեն դարձնում բարոյական դաստիարակության որոշ տարրերի:

Եզրակացություն

<<Բարոյական դաստիարակությունը ընտանիքում>> թեմային ուղղված տեսական ուսումնասիրությունները և հետազոտությունները, թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացությանը.

1. Բարոյական դաստիարակությունը ընտանիքում արդիական խնդիրը, որը պահանջում է մեծ աշխատանք
2. Բարոյական դաստիարակության գործընթացում պետք է կիրառվեն որոշ միջոցներ, օրինակ գեղարվեստական միջոցները,որոնք նպաստում են երեխայի բարոյականության զարգացմանը գեղագիտական շեշտադրումներով
3. Բարոյականությունն արժեքների և գերակա պահանջմունքների, համամարդկային գերակա նորմերի ու սկզբունքների համակարգ է, որը մարդկանց կողմնորոշում է դեպի համամարդկային համերաշխության, գթասրտության, սիրո և բարության գաղափարները, հոգևոր բարձր իդեալները
4. Երեխայի բարոյական դաստիարակությունը սկսվում է ընտանիքից։ Նա,որպես անձ ձևավորվում է ընտանիքում, իսկ ընտանիքի յուրաքանչյուր անդամ իր բարք ու վարքով ազդում է երեխայի բարոյական դաստիարակության վրա։ Ուստի ընտանիքից պահանջվում է մեծ պատասխանատվություն այս գործընթացում։
5. Բարոյական դաստիարակությունը ընտանիքում ունի ամուր հիմքեր, բայց կան նաև որոշ բացթողումներ և ծնողների մի մասը միգուցե անգիտակցաբար ուշադրություն չեն դարձնում բարոյական դաստիարակության որոշ տարրերի։

Գրականության ցանկ

1) Ա.Ս. Մարության Ա.Մ. Դալլաքյան - Նախադպրոցական մանկավարժություն (էջ. 161-274), Երևան,2005 թ.

2) Գ.Պ. Ռազումիխինա - Ընտանեկան կյանքի բարոյագիտություն և հոգեբանություն, Երևան, 2000թ

3) Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան – Մանկավարժության տեսություն և պատմություն, Երևան 2007թ.

4)) Ղուկասյան Լ., Միքայելյան Լ. – Մանկավարժություն Երևան 2001թ.

5)Յու. Ամիրջանյան “Մանկավարժություն” Երևան, 2004թ.

6) Յու. Ամիրջանյան և Ա. Սահակյան “Մանկավարժություն” Երևան, 2004թ.

7) Յ.Կ. Բաբանսկի “Մանկավարժական պրոցեսի օպտիմալացում” Երևան, 1983

8) https://m.mamul.am/am/post/17452

Հավելված 1

1. Ձեր երեխան հաճա՞խ է ստիպում ձեզ ամաչել իր վատ պահվածքի համար:
    - Այո, հաճախ
    - Երբեմն
    - Երբեք
2. Ձեր երեխային խփել է իր ընկերներից մեկը և նա հայտնում է ձեզ: Ձեր խորհուրդը երեխային՝

3. Ձեր երեխան կիրառո՞ւմ է ֆիզիկական ուժ, վիրավորանքներ այլ երեխաների հետ վիճաբանության ժամանակ:

    - Այո, հաճախ
    - Լինում է, բայց ծայրահեղ իրավիճակներում
    - Ոչ նման դեպքեր չեն լինում
4. Ձեր երեխան հարգում է մեծահասակներին,անհրաժեշտության դեպքում փորձում է օգնել նրանց
    - Այո
    - Ոչ
    - Երբեմն
5. Ինչպե՞ս է ձեր երեխան արձագանքում մեծահասակների նկատողություններին:
    - Արհամարում է
    - Ընդունում է իր սխալը, փորձում է շտկել
    - Ագրեսիվ վարք է ցուցաբերում
6. Ձեր երեխան խնամում,կերակրում է կենդանիներին
    - Այո
    - Երբեմն
    - Ոչ

7. Ի՞նչ դաստիարակչական միջոցների ազդեցության տակ է ձեր երեխան փոխում իր վարքը:
    - Ֆիզիկական պատժի, սպառնալիքների
    - Շտկում է իր վարքը, եթե նվերներ եք խոստանում
    - Զրույցների միջոցով կարողանում եք հասնել ցանկալի արդյունքի
8. Հետևյալ դաստիարակության մեթոդներից ո՞րն եք համարում ամենաարդյունավետը:
    - Ֆիզիկական պատիժ
    - Զրկել իր սիրելի զբաղմունքից
    - Դաստիարակություն՝ հիմնված դրական օրինակների վրա
9. Ընտրեք այն արտահայտությունը, որի հետ համաձայն եք.
    - Երեխան երբեք չպետք է մոռանա, որ մեծերն իրենից, ավելի խելացի են և ավելի լավ գիտեն ամեն ինչ
    - Դաստիարակության բռնի մեթոդները մեծացնում են երեխայի վարքի անցանկալի դրսևորումները, առաջացնում բողոքի զգացում:
    - Երեխայի բացասական արարքները պետք է ճնշվեն՝ հանուն նրա բարօրության:
10. Հաճախ եք զրուցում ձեր երեխաների հետ հայրենասիրության թեմայի վերաբերյալ:
    - Հաճախ
    - Երբեմն
    - Երբեք
11. Ըստ Ձեզ մուլտֆիլմը կարող է, որևէ կերպ ազդեցություն թողնել երեխայի բարոյական դաստիարակության վրա
    - Այո
    - Ոչ
12. Նախապատվությունը ինչպիսի՞ մուլտֆիլմների եք տալիս
    - Արտասահմանյան
    - Հայկական

13. Նշեք մեկ կամ մի քանի մուլտֆիլմերի օրինակներ, որոնք ավելի հաճախ եք դիտում երեխայի հետ

14. Երեխան խաղալուց հետո հավաքում է իր խաղալիքները

- Այո, բայց միայն հիշեցումից հետո
- Հավաքում է իմ օգնությամբ
- Հավաքում է ինքնուրույն առանց հիշեցման
- Ընդհանրապես չի հավաքում

15. Պատկերացրեք մի իրավիճակ, երբ մանկապարտեզում ձեր երեխայի սիրելի իրերից մեկը վերցրել է իր ընկերը: Երեխան տուն վերադառնալուն պես վրդովված պատմում է այդ մասին: Ի՞նչ կանեք դուք.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Երեխայի ինքնուրույնության,նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

Կատարող՝ Լիլիթ Էդարյան

Ղեկավար՝ մ. գ. թ. Լուսինե Միրաբյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ1.Երեխայի ինքնուրույնության զարգացումը……..……5

1.2 Ստեղծագործական գաղափարներ……..……..……7

1.3 Նախաձեռնողականության ունակությունների զարգացում …….....…..10

Փորձարարական մաս……...13

Եզրակացություն……..……...14

Գրականության ցանկ……15

Ներածություն

Նախադպրոցական կրթության բարեփոխումների կարևորագույն ուղղություններից է զարգացնող միջավայրի ստեղծումը: Կրթության բարեփոխումների գործընթացին զուգընթաց օրեցօր նորանում է նախադպրոցական ուսումնական հաստատության կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ձևերը, մեթոդները և միջոցներ: Ուսուցման գործընթացը հնարավորություն է տալիս ստուգել, ճշտել թե ինչպես և ինչ ճանապարհով որտեղ ենք հասել հաջողության և դեռ ինչ ունենք անելու, ինչպես և ինչ ուղղությամբ շարունակել ճանապարհը:

Արդիական է քանի որ ներկայումս փոխվել է դպրոց ընդունվելու տարիքային շեմը, սակայն չեն փոխվել երեխայի տարիքին բնորոշ հոգեկան առանձնահատկությունները և անհրաժեշտություն կա, որ երեխաների մոտ, նշված հատկանիշները բավականին ձևավորված չլինեն: Ինքնուրույն և ստեղծագործ մտածող երեխայի ձևավորումը նախադպրոցական դաստիարակության հիմնական նպատակն է:

Նպատակը՝ ուսումնասիրել երեխաների ինքնուրույնության, ստեղծագործականության, նախաձեռնողականության խթանման գործընթացի առանձնահատկությունների վերաբերյալ գիտական, մեթոդական, գիտատեսական գրականություն և կատարել եզրահանգումներ:

Խնդիրներ՝

ա) Նկարագրել երեխաների ինքնուրույնության, նախաձեռնողականությանը միտված մանկավարժական մոտեցումները:

բ)Բացահայտել երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացումն ապահովող ձևեր, եղանակներ և մեթոդներ:

գ) Իրականացնել սեփական փորձի վերլուծություն:

Նախադպրոցական կրթության կարևորագույն ուղղություններից է զարգացնող միջավայրի ստեղծումը: Զարգացնող է համարվում այն միջավայրը, որն իր կառուցման եղանակներով և մանկավարժական հզոր հնարավորություններով նպաստում է երեխաների ակտիվության դրսևորմանը: Այստեղ երեխան բավարարում է իր

հետաքրքրությունները, զբաղվում իրեն հետաքրքրող և իր բնույթին համապատասխան գործունեությամբ:

Արդյունավետ է կրթադաստիարակչական գործընթացը պլանավորել առավելնպատակաուղղված, մատչելի և համակարգված: Խաղը երեխաների կյանքում ունի հսկայական նշանակություն: Խաղում իրականացվում են երեխայի սկզբնական դաստիարակության մի շարք որակներ՝ մտավոր, բարոյական, գեղագիտական, աշխատանքային, որոնք անհրաժեշտ են յուրաքանչյուր գործունեության համար: Խաղի ընթացքում երեխան զարգանում է հոգեպես և ֆիզիկապես: Նրա մոտ զարգանում է գիտակցություն, նախաձեռնողականություն, զսպվածություն, դիտունակություն, ինքնուրույնություն: Ինքնուրույնությունը զարգանում է նախադպրոցական տարիքում շարժողական և հոգեբանական ունակությունների հիման վրա: Ինքնուրույն գործունեության ընթացքում մշակվում են հասակակիցների խմբում համատեղ գործելու հմտություններ: Երեխան դառնալով իրադրության տերը, ստանում է իքնահաստատման հնարավորություն և ձեռք բերում ինքն իրեն հարգելու և ճանաչելու որակներ: Պայմաններ ստեղծել երեխայի բարոյական դասիարակության համար, խրախուսել հասակակցին ապրումակցելու, օգնելու երեխայի փոձերը: Ստեղծել խաղային իրավիճակներ, որոնք կոգնեն շրջապատի հանդեպ հոգատար, ուշադիր վերաբերմունքի հաստատմանը: Սովորեցնել մարդկանց հետ շփվել հանգիստ, առանց գոռգռալու: Դաստիարակել բարի տրամադրվածություն միմյանց հանդեպ, ընկերոջ հետ ինչ-որ մի բան կիսելու կարևորություն,վատ և լավ արարքները ճիշտ գնահատելու ձգտում: Աստիճանաբար ձևավորել <<Ես>> կերպարը: Նրա հնարամտությունը դրսևորվում է և՛ խոսում, և՛ երևակայելու ունակության մեջ:

Գլուխ 1

Երեխայի ինքնուրույնության զարգացումը

Կրտսեր նախադպրոցական մակարդակում ինքնասպասարկումը բարենպաստ ոլորտ է, երեխաները արագ ձեռք են բերում ուտելու, հագնվելու, լվացվելու հմտություններ և հարաբերականորեն ինքնուրույն են դառնում համապատասխան ռեժիմային գործընթացում:

Երեխայի յուրաքանչյուր տարիքային փոիլոիմ աստիճանաբար ձևավորվում է ինքնուրույնությունը: Անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից, զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ:

Ինքնուրույնությունը կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորվել հետագա կյանքում, կենսագործունեության տարբեր ոլորտներում:

Այդ ոլորտներից են՝ ստեղծագործական ակտիվությունը, վստահությունը, պատասխանատվության զարգացումը, համառությունը: Ինքնուրույնությունը կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշների հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը:

Երեխաները պետք է պատրաստ լինեն պատասխանատվություն կրել իրենց որոշումների հետևանքների համար:

«Ինքնուրույն» հասկացությունն ունի մի քանի սահմանումներ: Ըստ Սերգեյ Օժեգովի:

•Անկախ, ազատ

•Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն:

•Մյուսներից առանձնացված

•Ինքնուրույն ուժերով կատարվող գործողություն՝առանց կողմնակի օգնության և ուղղորդման

•Կողմնակի ազդեցությունից անկախ

Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող, օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ: Երեխան կզարգանա այն դեպքում, երբ նա լիակատար կերպով յուրացնի ուսումնական գործողություններ կատարելու կարողություններ, որոնք կարող են դառնալ նրա ինքնուրույնության ձևավորման հիմքը:

1.2 Ստեղծագործական գաղափարներ

Ստեղծագործող նշանակում է առաջ քաշել նոր գաղափարներ, իսկ հին գաղափարներն ըստանհրաժեշտության օգտագործել նոր և հնարամիտ ձևերով:

Երեխային պետք է թույլ տալ դրսևորել իր հնարամտությունը և քաջալերել նրա ստեղծագործական միտքը: Որոշ երեխաներ իրենց ստեղծագործական միտքը դրսևորում են՝ համադրելով բառերը, մյուսները համադրում են գույները կամ ձևերը, ոմանք էլ դա արտահայտում են իրենց շարժումների միջոցով:

Երեխան, որն ընկալում է աշխարհը հնչյունների միջոցով, կարող է հաճույք ստանալ երաժշտություն լսելիս և իր սեփական երգերը հորինելիս:

Աշխարհն աչքերով ընկալող երեխան հաճույք է ստանում նկարելուց և գծելուց: Եթե երեխան ձեռքերով է հետազոտում առարկաները, ապա պլաստիլինը կամ մատերով նկարելու ներկերը կարող են դառնալ նրա սիրած նյութերը: Եթե նա սիրում է շարժվել ապա պարը, վազքը և մագլցելը կարող է դառնալ նրա սիրած նյութը և ինքնաարտահայտման սիրած եղանակները: [1, էջ 279]

Նախադպրոցական տարիքի երեխաների ակտիվություն, ինքնուրույնություն, երևակայության ննախաձեռնողականության դրսևորման արդյունավետ միջոցներից են ստեղծագործական խաղերը: Խաղի նշանակությունն այն է, որ երեխան հայտնվում է ուրիշ մարդու դիրքում և աշխարհին նայում է այն մեծահասակի տեսանկյունից, որի դերը կատարում է:

Խաղը պահանջմունքների դպրոց է, որտեղ է ի հայտ գալիս ստեղծագործական երևակայությունը, զարգանում են մտահաղացման ունակությունը, երևակայությունը, ինքնաբերաբար ստեղծվում է խաղի բովանդակությունը:

Երեխայի երևակայությունը զարգանում է հատկապես ստեղծագործական դերային խաղերի միջոցով: Ստեղծագործական դերային խաղերի բովանդակությունն ինքնանպատակ չէ, այն արտացոլում է իրականության մեջ գոյություն ունեցող հարաբերությունները:

- Հուզական, բարյացկամ մթնոլորտի առկայություն խմբասենյակ

- Անհրաժեշտ միջավայրի ստեղծում
- Երեխայի ինքնուրույնության, նախաձեռնության ապահովում դաստիարակի մանկավարժական ղեկավարման առկայությամբ:

Ստեղծագործական խաղերին բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երեխաներն իրենք են ստեղծում խաղը և խաղային գործունեությունը կրում է ընդգծված ինքնագործ, այսինքն ստեղծագործական բնույթ: Երեխան հավատում է իր հորինած կերպարին: [4, էջ 111]

Սյուժետային խաղը կարող է որպես ստեղծագործական երևակայության զարգացման պայման դիտվելայն դեպքում, երբ մեծահասակն իրականացնելով մանկավարժական ղեկավարում, ստեղծում է համապատասխան մթնոլորտ, չի խախտում երեխայի նախաձեռնությունը և խաղի ընտրության ազատությունը:

Ստեղծագործական խաղը հիմանականում խմբային է: Մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրը կատարում է իր դերը: Հնարավոր է երեխաների մեջ ձևավորվել կարողություն ստեղծագործական խաղերի ժամանակ ընդգրկելու կառուցողական, շինարարական տարբերպարագաներ, ստեղծել՝ հետաքրքիր կառույցներ, ընկերների հետ կատարել կառուցողական նյութերի և համապատասխան դերերի բաշխում:

Վստահություն ձեռք բերելու համար

- Խաղալ երեխայի հետ, ինչպես ծնողը զավակի հետ
- Խրախուսել երեխային կրկնել գործողությունները
- Առաջարկել դեր այն երեխային, որը խաղին չի մասնակցում
- Խաղի ժամանակ օգատգործել խոսքն ու լեզուն խթանող վարժություններ
- Արտասանել պարզ մանկական ոտանավորներ
- Կատակել կամ ծիծաղելի մի բան խաղի ժամանակ
- Հաճախակի գովել երեխային

Երեխաների համար կարևոր է ստեղծագործելու գործընթացը: Երեխայի ստեղծագործական միտքը խրախուսելու համար կարևոր է ճիշտ մոտեցումը՝ հարկավոր չէ թելադրել, թե ինչ նկարել, պատրաստել, ստեղծել: Ստեղծելիս ազատություն տալ նրան և չպետք է սահմանափակել մեր պահանջներով և նմուշներով:

Հնարավորություն տալ երեխային սսովորելու, թե ինչպես պետք է հետազոտել, ուսումնասիրել և ինքնուրույն որոշումներ կայացնել: Օգնել երեխային սկսել աշխատանքը: Եթե երեխան չի կարողանում սկսել աշխատանքը, զրույցի մեջ ներքաշել նրան այդ թեմայի շուրջ: Առաջարկել տարբեր տեսակի նյութեր: Երեխայի աշխատանքը գնահատելիս, նկարագրել այն, ինչը մեզ է դուր գալիս նրա կատարած աշխատանքում: Օգտագործած գույների, նյութերի, գաղափարի աշխատանքի առանձնահատկությունների մասին: Պետք չէ երեխային շտապացնել երեխային և պարտադրել ինչնյութերով աշխատեն: Կլինեն նյութեր, որոնք երեխայի համար հաճելի չեն լինի: Ստեղծելու գործընթացը պետք է երեխային հաճույք պատճառի:

Երեխան կարող է ստեղծագործել առանց որևէ նյութի կամ գործիքի՝ օգտվելով միայն սեփական երևակայությունից: Որոշ երեխաներ ցուցաբերում են իրենց ստեղծագործական ունակությունները երևակայան ընկերոջ հետ խաղի միջոցով:

Երեխաների ստեղծագործական երևակայությունը զարգացնելու համար պետք է՝

- Զբոսնելիս երեխայի հետ զրուցել ամեն բանի մասին
- Երկնքով ամպերի մեջ փորձենք տեսնել տարբեր կերպարեր
- Երեխային խնդրենք նկարել մի կենդանի, որ գոյություն չունի աշխարհում:
- Երեխաներին խնդրենք ուշադիր տեսնել շրջապատի գույները և պատմել, թե ինչպիսի ձայներ է լսել:

1.3 Նախաձեռնողականության ունակությունների

զարգացում

Նախադպրոցական տարիքում ի հայտ եկող մի շարք պահանջներ չափազանց կարևոր են այն առումով , որ խթանում են երեխայի ընդհանուր զարգացումը։ Այս տարիքի երեխայի մեջ դրսևորվում են մեծ քանակությամբ անիրագործելի մղումներ և երազանքներ։ Խազի մեջ ընդօրինակելով մեծերի գործունեությունը և նրանց հետ կիսելով իր համար հասկանալի ուրախություններն ու տխրությունները՝ երեխան նման յուրօրինակ ճանապարհով դառնում է իրական կյանքի մասնակիցը։

-Խաղը երեխայի համար սոցիալական հասունացման ուղի է։ Խաղի ժամանակ երեխաներն առաջին անգամ շփվում են իրենց հասակակիցների հետ։ Խաղի մեջ մտավոր ակտիվությունը միշտ շաղկապված է երևակայությանը։

Երեխան պետք է իր համար դեր գտնի, պատկերացնի, թե ինչպես է վարվում այն մարդը, ում ցանկանում է ընդօրինակել։ Երևակայությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ երեխան փնտրում է իր մտադրությունն իրականացնելու միջոցներ. թռիչքի գնալուց առաջ պետք է ինքնաթիռ պատրաստել, խանութի համար համապատասխան ապրանքներ ընտրել։ Մանկապարտեզի խմբասենյակները, ննջասենյակները, սպորտդահլիճը, բուժկետը և ողջ տարացքը պետք է ձևավորված լինեն ճաշակով, ունենան հրապուրիչ տեսք, ներկված լինեն մեղմ, բայց ուրախ գույներով։ Վարագույները, կահույքը, խաղալիքները, սենյակային բույսերը պետք է կազմեն ներդաշնակ միասնություն։ Խմբասենյակի որոշ պատեր զարդարում են երեխաների կերպարվեստային աշխատանքները։ Անհրաժեշտ է հետևել, որ խմբասենյակի պատերը ծանրաբեռնված չլինեն, բոլոր նյութերը փակցվեն երեխայի հասակին համապատասխան և լինեն տեսանելի։ Թեմատիկ նյութերը պետք է փոփոխվեն ըստ իրենց անհրաժեշտության։

Այսպես՝ խաղի միջոցով դրսևորվում, զարգանում են երեխայի ստեղծագործական ունակությունները։ Խաղի միջոցով ընդլայնվում, խորանում է երեխաների հետաքրքրությունը տարբեր մասնագիտությունների նկատմամբ և հարգանք է ձևավորվում աշխատանքի հանդեպ։ [4, էջ 110]

Խաղ պարապմունքներին ներկայացվող պահանջները

1. Երեխաների ներուժին համապատասխան, հնարավարություն տալ հասկանալու և ցույց տալու մաթեմատիկական պատկերացումները։
2. Պահպանել բարիյացակամ վերաբերմունք և խոսելաձև
3. Հասնել նրան, որ երեխան ցանկանա հանձնարարությունը կատարել։
4. Խաղալով՝ սովորել։
5. Օգնել երեխաներին՝ հաղթահարելու դժվարությունները։

Խաղ պարապմունք

Տեսակը՝ կառուցողական

Թեմա՝<<Մտահղացմամբ>>

Նպատակը՝ երեխաներին սովորեցնել ինքնուրույն ընտրել թեմա և սեփական նախաձեռնությամբ կատարել հետաքրքիր կառուցումներ՝ հենվելով նախկինում ձեռք բերած գիտելիքների և շրջապատից ստացած տպավորությունների վրա։ Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, ընտրել համպատասխան կառուցողական նյութեր, մտահղացումը հասցնել ավարտին։ Զարգացնել ստեղծագործական միտքը; Զևավորել մաքուր և կոկիկ աշխատելու ունակություն։ Մշակել սեփական աշխատանքով ուրախանալու կարողություն։ Ստեղծել խաղային միջավայր։

Պարապմունքի անցկացման մեթոդիկան։

Կազմակերպել փոքրիկ զրույց, երեխաները խոսում են իրենց սիրելի խաղալիքների, հեքիաթների և այն մասին, թե ինչ են իրենք սովորել կառուցել։ Դաստիարակը հարցերի միջոցով ճշտում է, թե ով ինչ է կառուցելու։ Հարկավոր է հուշել երեխաներին, որ աշխատեն տարբեր ձևերի և չափերի կառուցողական նյութերով, երկրաչափական մարմիններով, աշխատեն առանց աղմուկի։ Ընթացքում օգնել դժվարացողներին։ [7, էջ 169]

Հայտնի է, որ խաղալիքն ընդլայնում է երեխաների աշխարհայացքը, հարստացնում նրանց գիտելիքները զանազան առարկաների և դրանց նշանակության վերաբերյալ, արթնացնում հետաքրքրություն իրական երևույթների նկատմամբ, նպաստում ընկերասիրական փոխհարաբերությունների, համաձայնեցված գործողությունների ձևավորմանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների վրա սեռային դասիարակության իմաստով բարերար ազդեցություն են թողնում կերխարային խաղալիքները՝ տիկնիկը, կենդանիները, մեքենաները, ամանեղենը, կահույքը և այլն: Այստեղ գլխավոր տեղը պատկանում է տիկնիկին, որի հետ են կապված երեխաների ապրումները: Խաղի ժամանակ երեխաները կերպավորում են տիկնիկին, խոսում նրա հետ, պատմում հեքիաթներ, սովորեցնում ոտանավորներ, վստահում գաղտնիքներ և խնամում նրան: Այսպես են վարվում, քանի որ հավատում են խաղի իրական լինելուն, թեև խաղից դուրս գիտեն, որ խաղալիքը կենդանի էակ չէ: Տիկնիկների միջոցով ապահովվում է մուտքը մշտական, իրական առարկաների աշխարհ: [2, էջ 46]

Փորձարարական մաս

Նպատակը՝ հասկանալ երեխայի ինքնուրույն ստեղծագործելու կարողությունը և ինքնուրույն աշխատելու հնարավորությունը: Փորձել երեխային թողնել մտածել և գործել ինքնուրույն: Հիշեցնելով շրջակա միջավայրի մասին մեր ունեցած տեղեկությունները առարկաների մասին՝ հնարավորություն տալ երեխային ընտրելու իրեն հոգեհարազատ առարկան: Յուրաքանչյուր երեխայի բաժանեցի անհրաժեշտ պարագաները՝ նկարչական թուղթ, գունավոր մատիտներ: Հանձնարարեցի կատարել նկարչություն իր մտահղացմամբ: Ընթացքում հետևեցի յուրաքանչյուր երեխայի աշխատանքը, հարկ եղած դեպքում ուղղորդեցի: Հետևելով երեխաների աշխատանքին, համոզվեցի, որ նման պարապմունքը ճիշտ և արդյունավետ է նրանց երևակայությունը, ինքնուրույն ստեղծագործելու կարողությունը զարգացնելու համար:

Եզրակացություն

Հաշվի առնելով ուսումնական աշխատանքի և իմ մանկավարժական գործունեության փորձից, կարող եմ եզրակացնել, որ նախադպրոցական երեխաների մոտ ինքնուրության և ստեղծագործականության համար անհրաժեշտ է երեխաների համար ստեղծվեն համապատասխան մեթոդներ և պայմաններ։

Ապահովել երեխայի հոգեբանական պաշտպանավծության զգացումը, հիմք դնել երեխայի անհատական զարգացմանը։ Չափազանց կարևոր են երեխայի ընդհանուր զարգացման համար տարբեր խաղերը։

Խաղային գործունեությունն ինչպիսի ձև ուզում է ունենա, միշտ ուրախություն է պատճառում երեխային իր անակնկալներով, դրական ներգործություն է ունենում երեխայի հոգեկանի վրա և նպաստում դաստիարակչական շատ խնդիրների իրականացմանը։

Որքան ավելի քիչ վերահսկենք և կառուցվածքային դարձնենք խաղը, այնքան ավելի հետաքրքիր կլինի երեխայի համար։ Մի քանի ոգեշնչող ուղղություն տանք ու թողնենք, որ երեխան ինքը ղեկավարի խազը։ Ազատ և ինքնակառավարվող խաղը երեխաներին ուժ է հազորդում՝ զարգացնելով ինքնավստահություն և ինքնուրույնություն։

Աշխատանքի բոլոր փուլերում պետք է նկատի ունենալ, որ մեր ակնկալած արդյունքներից գլխավորը ստեղծագործական կարողությունների զարգացումն է, երեխայի կողմից նոր գիտելիքների, կարողությունների ձեռքբերումը։

Շարունակել դաստիարակել սեր հայրենիքի, հայրենի տան, մանկապարտեզի հանդեպ։

Կիրառելով ուսումնական գործունեության կազմակերպման նորագույն մեթոդները; զարգացնել երեխաների ուշադրությունը, խոսքը, տրամաբանական մտածողությունը, հիշողությունը, երևակայությունը և կամային որակները։

Գրականության ցանկ

1. Զոհրաբյան Անահիտ «Այնքան ծանոթ և այնքան անծանոթ» ձեռնարկ Երևան 2006թ, 371 էջ
2. Թորոսյան Կարինե «Նախաշավիղ» 2.2012թ. 64էջ
3. Ղուրումչյան Գ. «Մանկավարժություն» Երևան 2008թ, 224 էջ
4. Միտոյան Հ. «Կրթական Համալիր» Երևան 2011թ. 165 էջ
5. Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ» Երևան 2010թ, 223 էջ
6. Սմբատյան Լալա «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղեր» Երևան 2014թ.136 էջ։
7. Սմբատյան Լալա «Կերպարվեստի պարապմունքներ» Երևան 1015թ.։

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Խաղը և նրա նշանակությունը նախադպրոցական երեխաների շրջանում (հոգեթերապևտիկ և ծիսական խաղեր)

ԿԱՏԱՐՈՂ՝ Լիլիթ Մակարյան

ՂԵԿԱՎԱՐ՝ Գագիկ Էմինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Գլուխ 1. Խաղի հոգեթերապևտիկ ֆունկցիան 6
Գլուխ 2. Ծիսական խաղերը որպես խաղային գործունեության տեսակ 8
Փորձարարական մաս 11
Եզրակացություն 15
Օգտագործված գրականության ցանկ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը. Խոսելով թեմայի արդիականության մասին՝ պետք է նշել, որ տեխնոլոգիաներով հարուստ այս ժամանակաշրջանում էլ ավելի է մեծանում խաղային գործունեության դերի և նշանակության վերաբերյալ խոսելու անհրաժեշտությունը, դրա բացակայության պայմաններում առաջացած և սպասվելիք խնդիրների մասին բարձրաձայնելը: Ելնելով սրանից՝ աշխատանքի շրջանակներում անդրադարձել ենք հոգեթերապևտիկ և ծիսական բնույթի խաղերին: Այս երկուսն էլ նպաստում են նախադպրոցական տարիքի երեխաների հոգեկան ն և ֆիզիկական համակողմանի զարգացմանը:

Տարբեր տեսաբանների կողմից խաղը բնութագրվում է որպես գործողություն, որ կատարվում է հաճույքի համար, իսկ երբեմն էլ օգտագործվում որպես ուսուցողական գործիք: Ասվածի ուղիղ արտահայտությունն են խաղային գործունեության միջոցով իրականացվող պարապմունքները, քննարկումները:

Խաղը ոչ աշխատանք է, ոչ էլ արվեստ: Սակայն խաղի և աշխատանքի միջև սահմանը հստակ չէ, և որոշ խաղեր համարվում են աշխատանք [2]:

Խաղը հոգեբանների կողմից բնորոշվում է որպես ներքին պահանջմունքներից և հետաքրքրություններից բխող վարքագծի դրսևորում: Այն առավելապես ուղղված է հաճույք, բերկրանք, բավականություն ստանալուն, ինչպես նաև մարդու հոգևոր պահանջմունքների բավարարմանը [1,93]: Սակայն նմանօրինակ մոտեցումները խաղի վերաբերյալ միանշանակ չեն ըմբռնվում. դրանք պայմանական են, ունեն ճշգրտման անհրաժեշտություն: Խաղի՝ հաճույքի հետ անմիջական կապը բացատրվում է հոգեբանական տեսանկյունից. Երեխան, թեկուզ և չափահաս մարդը, չի խաղա, եթե այդ զբաղմունքն իրեն հաճույք չպատճառի [1,93]: Նմանօրինակ մոտեցման կողմնակիցն էր նաև Կ. Բյուլերը: Նա խաղային գործունեությունը երեխայի կյանքում համարում էր զուտ հաճույքի զգացման ապահովման ձև [3]:

Առաջին խաղերը հանդիպում են դեռևս անհիշելի ժամանակներում՝ կենդանիների մոտ: Խաղերն առավել տարածված են եղել հատկապես կապիկների շրջանում, երբեմն դրանք նույնացվում են մարդկանց խաղերին: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մարդկությունը խաղում է դեռևս նախնադարյան ժամանակներից: Անգամ

մի թագավորական գերեզմանոցում հայտնաբերել են խաղատախտակ, որը գոյություն է ունեցել Ք. ա 3000-2000թթ։ Կ. Շիլլերի և Գ. Սփենսերի բնորոշմամբ՝ խաղը երեխայի համար էներգիայի սպառման միջոց է, քանի որ նա այդ կուտակված էներգիան այլ եղանակով չի կարող սպառել [3]։ Իրավամբ, այս մոտեցումը բնութագրական է նախադպրոցական տարիքի երեխաների համար, քանի որ նրանք առօրյա կյանքում գործունեության այլ ձևեր չեն իրականացնում, ու նրանց էներգիայի սպառման հիմնական և, կարելի է ասել, միակ միջոցը մնում է խաղը։ Ահա գործունեության այս ձևի մեջ է, որ ամբոջանում է և՛ հաճույք ստանալու տարրը, և՛ էներգիա ծախսման կարիքի բավարարումը։

Խաղային գործունեության մեջ կարևորն այն է, որ նրանում պետք է բացառել պարտադրանքի տարրը [3]։ Երբ այն դառնում է պարտադրված զբաղմունք, դադարում է խաղ լինելուց, վերածվում է գործունեության այլ ձևի՝ աշխատանք, ուսում և այլն։ Անգամ եթե կա երեխային խաղային գործունեության մեջ ուղղորդելու անհրաժեշտություն, դա պետք է կատարել շատ զգուշությամբ և պրոֆեսիոնալ ձևով։ Կարելի է երեխային առաջարկել խաղալ միասին, քանի որ շատ հաճախ երեխաները, հնարավորություն չունենալով գտվնելու այլ երեխաների շրջապատում, չեն տիրապետում, այսպես ասած, խաղային արվեստին, և դա նրանց պետք է սովորեցնել։

Զ. Ֆրեյդի համոզմամբ՝ խաղալու հիմնական դրդապատճառը երեխայի սեփական թերարժեքության զգացումն է [3]։ Սա առավել քան հոգեբանական ուղղվածություն ունի. փորձը ցույց է տալիս, որ երեխան ինքնադրսևորվում է խաղային գործունեության մեջ, ինչը մեր կարծիքով, պայմանավորվում է գործողություն կատարելու հանգամանքով։ Մեծահասակները ևս կարող են ինքնադրսևորվել որևէ տեսակի գործունեության մեջ, երեխաների շրջանում գործունություն ծավալելու հնարավորությունները սահմնափակվում են խաղով։ Ս. Լ. Ռուբինշտեյնը նշել է, որ խաղը պահպանում և զարգացնում մանկականը երեխաների մեջ, նա նրանց կյանքի դպրոցն է և պրակտիկայի զարգացումը [2]։ Այս առումով կարող ենք նշել սյուժետադերային խաղերի դերն ու նշանակությունը. դրանք յուրօրինակ կյանքի դպրոց են, որոնք երեխաներին նախապատրաստում են կյանքի հետագա՝ հասուն տարիներին։Դ. Բ. Էլկոնինայի կարծիքով «Խաղում ոչ միայն զարգանում կամ նորից ձևավորվում են առանձին ինտելեկտուալ օպերացիաներ, այլ նաև արմատապես փոխվում է երեխայի տեսակետը շրջակա միջավայրի նկատմամբ, ձևավորվում է տեսակետի հնարավոր փոփոխությունների մեխանիզմ և համաձայնեցում իր տեսակետը ուրիշների

տեսակետի հետ» [2]։ Նմանօրինակ մոտեցումը հնարավորություն է տալիս ասելու, որ խաղն իր ամբողջ ընկալմամբ կարող է նպաստել նաև երեխաների աշխարհայացքի ձևավորմանը։ Իրապես, նույնական չեն խաղային գործունեությունը նոր սկսած և որոշ ժամանակ այդ գործունեության մեջ ինքնադրսևորված երեխաների աշխարհընկալումներն ու պատկերացումները։

Հետաքրքրական են Լ.Ս. Վիգոտսկու մոտեցումները խաղային գործունեության վերաբերյալ. համաձայն նրա՝ խաղի պակասը երեխայի կյանքում կարող է ազդել զարգացման շատ հնարավորությունների ոչ համակողմանի ձևավորման վրա։ Սա պայմանավորվում է նրանով, որ խաղի մեջ երեխան իրեն գիտակցում է ավելի բարձր, քան իր առօրյա վարքագծում [1,95]։

Ի վերջո, կարող ենք ասել, որ խաղն իր տարաբնույթ դրսևորումներով նպաստում է երեխայի համակողմանի զարգացմանը, աշխարհընկալմանը, կյանքի հետագա տարիների վերաբերյալ նախնական պատկերացումների ձևավորմանը, հոգեբանական մի շարք առանձնահատկությունների բացահայտմանը, ֆիզիկական հնարավորությունների դրսևորմանը։

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

- Ուսումնասիրել հոգեթերապևտիկ և ծիսական բնույթի խաղերի դերն ու նշանակությունը նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում։

Հետազոտական աշխատանքի խնդիրն են

- Խաղային գործունության միջոցով նկարագրել երեխաների հոգեկան և ֆիզիկական առանձնահատկությունները։
- Ուսումնասիրել հոգեթերպևտիկ խաղերի թողած ազդեցությունը պարապմունքների անցկացման արդյունավետության վրա։
- Բացահայտել խաղային գործունեության դերն ու նշանակությունը երեխաների վարքագծի փոփոխության գործում։
- Բացահայտել երեխաների իրազեկվածության մակարդակը հինհայկական տոնակատարությունների և ավանդույթների մասին։

ԳԼՈՒԽ 1.

ԽԱՂԻ ՀՈԳԵԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՖՈՒՆԿՑԻԱՆ

Գիտական գրականության մեջ ընդունված է խաղի՝ որպես հոգեթերապևտիկ ֆունկցիա ընդունելու մոտեցումը: Այս առումով մեծ է հատկապես Կ.Ս. Ստանիսլավսկու դերն ու նշանակությունը: Նա նմանօրինակ մոտեցումը բացատրում է մարդուն բնորոշ հոգեբանական բնութագրերի տեսանկյունից: Այլ խոսքով ասված՝ մարդը խաղի միջոցով փորձում է ստանալ այն, ինչ կյանքում նրան չի հաջողվում [1]: Այս է պատճառը, որ խաղային գործունեության ժամանակ կարող է փոխվել երեխայի վերաբերմունքը իր և ուրիշների նկատմամբ, խաղում երեխան իրեն կարող է զգալ այն, ինչ ուզում է և դրանից ստանալ բավարարվածության զգացում:

Այս առումով մեծ է նաև Ն. Պ. Անիկեևայի դերն ու նշանակությունը հոգեթերապևտիկական հետաքրքիր խաղեր առաջարկելու գործում, որոնք օգտակար եղան նաև մեր ուսումնասիրությունը կատարելու ընթացքում: Ելնելով նրա դասակարգման պատկերից՝ փորձեցինք մեր հետազոտությունը իրականացնել նրա կողմից մշակված խաղերի կիրառմամբ [1]

Շրջանաձև պատմելը.

Խաղի հիմնական նպատակը մանկավարժի կողմից սկսված պատմության շարունակությունն է խմբի տարբեր երեխաների միջոցով, որի արդյունքում բացահայտվում են վերջիններիս ապրումները, զգացողությունները: Յուրաքանչյուր երեխա պատմությունը շարունակում է իր ցանկացած ձևով, այսպիսով նա հնարավորություն է ստանում արտահայտելու սեփական հույզերը:

Ն. Պ. Անիկեևայի առաջադրած խաղը փորձեցինք կիրառել հետաքրքրական պատմության շրջանակներում, պատմությանն առավել խաղային ընթացք հաղորդելու և երեխաներին հետագա ընթացքին ու գործողություններին նախապատրաստելու նպատակով սկսեցինք հետևյալ կերպ.« Երեխանե՛ր, այսօր ուզում էի ձեզ մի գեղեցիկ պատմություն պատմել, բայց ցավոք, պատմության շարունակությունը գրքի էջերից անհետացել է: Ես ձեր օգնության կարիքն ունեմ.սկսեմ պատմությունը, իսկ դուք ինձ

օգնեք շարունակել այն։ Եկե՛ք իրար հաջորդելով, իրար օգնելով փորձենք շարունակել պատմությունը»։

Պատմությունն ընտրելիս հիմնական շեշտը դրեցինք այն հանգամանքի վրա, որ պատումը կառուցելու հնարավորությունները համապատասխանեն երեխաների նախասիրություններին, սիրելի թեմային, տարիքային առանձնահատկություններին։ Ուսումնասիրության օբյեկտը 3-5 տարեկան երեխաներն էին, և հաշվի առնելով վերջիններիս տարիքային առանձնահատկությունները՝ պատմության շարունակությունը հիմնականում ապահովեցինք հարցադրումների միջոցով։ Հարցադրումների արդյունքում հնչեցին տարաբնույթ պատասխաններ՝ կախված վերջիններիս հուզական տրամադրությունից, զգացողություններից, ապրումներից։ Հետազոտական աշխատանքի ընթացքը առավել մանրամասն կներկայացնենք ստորև՝ «Փորձարարական մաս» բաժնում։

- **Հայտնի հեքիաթի խաղարկում**

Խաղը հնարավորություն է տալիս փոխել երեխաներին հայտնի հեքիաթի ընթացքը, այն պատմել նոր մոտեցումներով ու տարբերակներով [1]։

Նմանօրինակ խաղի ընտրության ժամանակ կարևորեցինք հատկապես հերոսի ընտրության, հեքիաթի ընթացքի, հանգուցալուծման և ավարտի խնդիրները։ Ընտրեցինք հայտնի «Գնդիկ Բոքոնիկը» հեքիաթը և կրկին հաշվի առնելով խմբում երեխաների տարիքային առանձնահատկությունները՝ հեքիաթի ընթացքի փոփոխությունը ապահովենքինք հիմնականում հարցադրումների միջոցով։ Խաղում երեխաների ակտիվ ներգրավվածությանը նպաստելու նպատակով՝ նախապես առաջադրեցինք լավագույն պատմողին խրախուսական «մրցանակ» տալու պայմանը։ Խաղի ընթացքի և դրա հիման վրա ստացված եզրակացությունների մանրամասն նկարագիրը ևս կներկայացնենք աշխատանքի «Փորձարարական մաս» բաժնում։

Երեխաների շրջանում հոգեթերապիա անցկացնելու լավագույն տարբերակը խաղային մոտեցում ցուցաբերելն է։ Խաղը միջոց է տրամադրում հակամարտությունները լուծելու և զգացմունքներ փոխանցելու համար [5]։

Ուստի այս մոտեցումը նպատակահարմար է նաև ինտեգրման և նոր ձևավորվող հարաբերություններ ստեղծելու պայմաններում, հատկապես մանկապերտեզ նոր

հաճախող երեխաների համար։ Այս շրջանում առավել քան կարևորվում է երեխայի ազատ ընտրության հնարավորությունը, քանի որ ազատ խաղի մեջ նա կարող է արտահայտել այն, ինչ ուզում է անել. . . Երբ նա խաղում է ազատ, և ոչ թե ինչ-որ մեկի հրամանով, նա կատարում է մի շարք անկախ գործողություններ [5]։

Այս գործողությունների արդյունքում դաստիարակը կարող է ձևավորել նախնական պատկերացումներ տվյալ երեխայի հոգեկան և անհատական առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք, իհարկե, կարող են փոփոխվել։

Խաղի միջոցով իրականացվող աջակցությունը կոչված է օգնելու երեխաներին գիտակցել սեփական «ես»-ը, հաղթահարել ներքին կոնֆլիկտները, վախերը, ֆոբիաները, ագրեսիվությունը, ավելորդ հուզական լարվածությունը, բարձրացնել ինքնագնահատականը, բացահայտել և զարգացնել իրեց ներուժին համապատասխան հնարավորությունները։

Մեր ուսումնասիրության շրջանակներում վերը նշված խաղային տեսակներից կիրառել ենք *«Նարնջի» , «Կախարդական թելը», «Գտի՛ր տարբերությունը»* խաղերը [6]։

Բերված խաղերը առավել նպատակահարմար են կիրառել հատկապես հիպերակտիվ, կենտրոնացում պահանջող երեխաների շրջանում, ուստի մեր կողմից կատարված ընտրությունը կանգ առավ հենց նման վարքագիծ դրսևորող երեխաների վրա։ Նմանօրինակ երեխաների մոտ, ինչպես գիտենք, կա մկանային լարվածություն,իսկ կենտրոնացում պահանջող երեխաների մոտ՝ ցրվածություն։

Լարվածությունը գերազանցապես արտահայտվում է ձեռքերի, պարանոցի, դեմքի, ուսերի, կրծքավանդակի և որովայնի հատվածում։

Խաղային այս տեսակների անցկացման ընթացքի, մանրամասն նկարագրի, ինչպես նաև հետազոտության արդյունքում ստացված վերլուծությունների մասին առավել հանգամանորեն ներկայացված է աշխատանքի՝ «Փորձարարական մաս» գլխում։

ԳԼՈՒԽ 2.

ԾԻՍԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՈՐՊԵՍ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿ

Նախադպրոցական տարիքի երեխաներին բնորոշ է շարժունակությունը, վազվզելը, աղմկելը [7]։ Նմանօրինակ վարքագծով են երեխաները ճանաչում շրջապատը,

բացահայտում իրենց «ես»-ը: Այս առումով մեծ է հատկապես ծիսական խաղերի դերն ու նշանակությունը նրանց խաղային ընդհանուր գործունեության մեջ: Հին Հայաստանում երեխաների դաստիարակության գործում գերազանցապես զգալի է եղել ընտանիքի ազդեցությունը, սրանից զատ երեխաների դաստիարակության համար ահռելի նշանակություն են ունեցել նաև ազգային ծեսերը, ավանդությունները, տոնակատարությունները, դրանց ժամանակ անցկացվող խաղերը [7]:

Աշխատանքի այս գլխում անդրադարձել ենք հինհայկական մի շարք խաղերի, ուսումնասիրել դրանց էությունը, ինչպես նաև դրանք անցկացրել նախադպրոցական տարիքի երեխաների խմբում: Ծանոթանալով հինհայկական խաղերին, ուսումնասիրելով դրանցից մի քանիսը՝ նկատեցինք, որ վերջիններս նպաստել են երեխաների ֆիզիկական հնարավորությունների բարձրացմանը, ճարպկությանը, արագ կողմնորոշվելու և որոշում կայացնելու կարողությունների զարգացմանը:

Այդ խաղերի շարքում առանձնակի տեղ են գրավում Ամանորյա ծիսական, մանկական ընկուզախաղերը, Բարեկենդանի մանկական խաղերը, Զատիկ Զվախաղերը, Համբարձման տոնի մանկական խաղերը [9]:

Երեխաների կողմից անչափ սիրված խաղերից են եղել հատկապես **ընկուզախաղերը** [9]:

Ստորև ներկայացնենք դրանցից մի քանիսը.

- Խաղացողները մի մետր տրամագծով շրջան են գծում և մեջտեղը ուղիղ գծով ընկույզներ շարում: Երեք-չորս մետր հեռավորությունից գցում են վեգերը (վեգի փոխարեն կարելի է օգտագործել մեծ ընկույզ): Եթե թեկուզ մեկն են շրջանից դուրս հանում, շահում են շարված բոլոր ընկույզները:
- Սեղանին կամ գետնին իրար զուգահեռ երկու շարքով շարվում են ընկույզներ: Խաղացողը, մի շարքի ընկույզները միջնամատի և բութ մատի միջոցով կտտացնելով, պետք է նշանառությամբ շարքից դուրս հանի մյուս շարքի ընկույզները:
- Սաներից յուրաքանչյուրի ձեռքին մեկական թելից կախված ընկույզ է (թելի երկարությունը՝ մոտ 30սմ): Նրանք կանգնում են շրջանաձև, իրար բավական մոտ, ձեռքերը մոտեցնում են և սկսում անկանոն թափահարել այնքան, մինչև թելերը խառնվեն իրար: Ստացվում է շրխկան – չարխափան:

Բարեկենդանի մանկական խաղեր

- *Մուկ – կատու*

Երեխաները ձեռք ձեռքի տված շրջան են կազմում՝ նախապես մեկին՝ մուկ, մյուսին կատու նշանակելով: Մուկը դրսից որևէ թևամիջով ներս է մտնում և կատվին խաբս տալով՝ դուրս է գալիս մեկ ուրիշ տեղով, իսկ կատուն հետապնդում է նրան և նույն տեղերով մտնելով ու դուրս գալով՝ աշխատում է բռնել նրան և դերը նրա հետ փոխել: Բայց երբ մկանը շուտ բռնելու տենչով կատուն ոչ թե նախորդի անցած ճանապարհով է անցնում, այլ ուրիշ թևամիջով, այն ժամանակ նրան փոխարինում էր շրջանում կանգնած մեկը՝ խաղը նույնությամբ շարունակելով:

- *Կարմիր կոճակ*

Երեխաները նստում են աթոռներին, ձեռքերը մեկնում են առաջ՝ ափերն իրար կպցրած: Խաղավարը իր ափի մեջ թաքցնում է կարմիր կոճակը, մոտենում է յուրաքանչյուր երեխայի ու նրա ափի մեջ մտցնելով իր ձեռքերը՝ կոճակը թաքուն գցում է երեխաներից մեկի ձեռքերի մեջ: Ընթացքում կարող է որևէ խաղերգ արտասանել: Վերջացնելուց հետո ասում է. - Կարմի՛ր կոճակ, դո՛ւրս արի:

Զատիկ. ձվախաղեր

- *Զուպտտոցի.*

Խաղացողները հրահանգով պտտում են ձվերը: Ում ձուն երկար պտտվեց, այդ ձուն համարվում է հաղթողը:

- *Ով դիպուկ կնետի Ակլատիզի փետուրը*

Ակլատիզի փետուրի ծայրին գնդիկ են ամրացնում և փորձում նետել նախօրոք գծված գծից այն կողմ կամ շրջանի մեջ: Կախված սանի տարիքից և ֆիզիկական կարողությունից, նետելու հեռավորությունը կարելի է կարճել կամ հեռացնել:

Մեր կողմից իրականացված փորձարարական աշխատանքի համար հին հայկական խաղերի հարուստ ընտրանիից առանձնացրել ենք 3-5 տարեկան երեխաների համար առավել նպատակահարմարները, ինչպիսիք են՝ **ընկուզախաղերը, Մուկ-կատու խաղը, Կարմիր կոճակ** խաղը:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Մեր կողմից իրականացված հետազոտական աշխատանքի գործնական կիրառման մասին ներկայացնենք փորձարարական մաս բաժնում։

Փորձարարական աշխատանքները իրականացրել ենք Ագարակ գյուղի ՆՈՒՀ-ում՝ 3-5 տարեկան երեխաների շրջանում։ Հաշվի առնելով ընտրված թեմայի հնարավորությունները՝ այն կազմակերպել ենք հիմնականում խաղային գործընթացի շրջանակներում։ Նախապես ուսումնասիրելով աշխատանքում մեր կողմից քննված խաղային տեսակների մասին եղած գրականությունը՝ դրանցից առանձնացրել ենք առավել նպատակահարմարները (հաշվի առնելով երեխաների տարիքային, ինչպես նաև անհատական առանձնահատկությունները)։ Այնուհետև պատրաստել ենք անհրաժեշտ բոլոր այն նյութերը, որոնք պետք է կիրառվեին աշխատանքի բուն ընթացքի կազմակերպման ժամանակ։ Սրան հաջորդող փուլերում մշակել ենք փորձարարական աշխատանքների հաջորդական պլան, որի հիման վրա որոշել ենք այն իրականացնել երկու փուլով։

Ելնելով աշխատանքի կառուցվածքից և հիմնական բովանդակությունից՝ փորձարարական աշխատանքի առաջին փուլում իրականացրել ենք հոգեթերապևտիկ խաղերի անցկացումը նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում, շեշտադրումը գերազանցապես դրել ենք հիպերակտիվ, ուշադրության կենտրոնացում պահանջող երեխաների վրա՝ ընդգրկելով նաև խմբի մյուս մասնակիցներին։ Փորձարարական աշխատանքի այս հատվածում՝ խաղային գործունեության ողջ ընթացքում, հետևել ենք ուսումնասիրվող օբյեկտների վարքագծերին, ուշադրություն դարձրել նրանց պատասխաններին, կատարել համապատասխան նշումներ և դրանց հիման վրա հանգել որոշ վերլուծությունների։

Այս փուլում մեր կողմից անցկացվել են վերը բերված խաղային տեսակներից հետևյալները՝ **«Շրջանաձև պատմելը»** և **«Հայտնի հեքիաթի խաղարկումը» «Նարնջի», «Գտի՛ր տարբերությունը», «Կախարդական թելը»**։

- **«Շրջանաձև պատմելը»**

Խաղի սկզբում երեխաներին ներկայացրինք 3-5 նախադասությունից կազմված համառոտ պատմություն՝ *«Սկյուռը»,* որից հետո խաղային գործընթացի հիմնական

նպատակը ապահովելու համար՝ նրանց առաջարկեցինք շարունակել պատմության ընթացքը ասելով .«Երեխանե՛ր, այսօր ուզում էի ձեզ մի գեղեցիկ պատմություն պատմել, բայց ցավոք, պատմության շարունակությունը գրքի էջերից անհետացել է, ուստի պատմությունը կիսատ մնաց: Ես ձեր օգնության կարիքն ունեմ: Եկե՛ք իրար հաջորդելով, իրար օգնելով փորձենք շարունակել պատմությունը»: Դրանից հետո փորձեցինք հարցադրումների միջոցով ստանալ պատմության շարունակական ընթացքը, որի ժամանակ երեխաների կողմից ստացված պատասխանների հիման վրա նշումներ կատարեցինք՝ աշխատանքի հետագա վերլուծության համար:

Խաղի անցկացման ընթացքում հնչեցին տարաբնույթ պատասխաններ պատմութան հերոսի՝ սկյուռի բնութագրի, կեցության և հետագա գործողությունների հետ կապված: Երեխաներից ոմաք նրան վերագրեցին փափուկ, ճարպիկ, նարնջագույն, իսկ ոմանք էլ՝ գեղեցիկ, վախկոտ, ընկերասեր, մենակ հատկանիշները: Հետաքրքրականն այն էր, որ այն երեխաները, որոնք խմբում աչքի են ընկնում իրենց անմիջական վարքագծով, սկյուռին համարեցին ընկերասեր, իսկ ինքնամփոփ երեխաները՝ միայնակ: Կային երեխաներ, որոնք շեշտեցին սկյուռի՝ վախկոտ լինելու հատկանիշը, նման երեխաների հետ աշխատելիս փորձեցինք պարզել վերջիններիս վախի պատճառները:

- **«Հայտնի հեքիաթի խաղարկումը»** խաղի շրջանակներում երեխաների համար ընթերցեցինք իրենց հայտնի «Գնդիկ Բոքոնիկ» հեքիաթը: Որից հետո առաջարկեցինք հեքիաթի հերոս Գնդիկ Բոքոնիկի փոխարեն ընտրել մեկ այլ հերոսի, հարցադրումների միջոցով այլ գործողություններ վերագրել վերջինիս: Երեխաների կողմից ստացված պատասխանների արդյունքում կարողացանք պատկերացում կազմել նրանց հուզական վիճակի մասին, խաղը նպաստեց նախորդ խաղի արդյունքում ստացված վերլուծությունների ճշգրտմանը:
- **«Նարնջի»** խաղի անցկացման համար ընտրեցինք հիպերակտիվ երեխայի՝ հաշվի առնելով խաղի իրագործման նպատակները: Երևակայական նարինջը փոխարինեցինք խաղալիք նարնջով: Խաղի նպատակն էր անընդհատ կրկնվող գործողությունների միջոցով (նարնջից հյութ քամելը) զգայական լարվածության թուլացմանը նպաստելը:

Խաղն անցկացրինք 3-5 րոպե՝ ընթացքում ապահովելով դադարներ. խաղի ավարտին նկատելի էր երեխայի լարվածության թուլացումը:

- **«Գտի՛ր տարբերությունը»** խաղն անցկացրինք ուշադրության կենտրոնացում պահանջող երեխայի հետ: Խաղի ընթացքում երեխային առաջարկվեց նկարել նկար, որից հետո խնդրեցինք տալ նկարը և շրջվել: Այդ ընթացքում նկարի վրա ավելացրինք փոքրիկ դետալներ և հարցրինք, թե ինչն է փոխվել նկարում: Սրան հաջորդող գործողություններում իրականացրինք դերային փոփոխություն և խաղն անցկացրինք հաջորդական սկզբունքով:

Խաղի իրագործումը իրականացրինք պարապմունքից առաջ և նկատեցինք, որ պարապմունքի ընթացքում ներկայացված նյութը մի քանի անգամ ավելի լավ յուրացվեց երեխայի կողմից՝ նախկինում արված պարապմունքների համեմատությամբ:

Փորձարարական մասի երկրորդ հատվածը նվիրել ենք ծիսական խաղերի անցկացմանը, սրա շրջանակներում փորձել ենք միջամտությունը հասցնել նվազագույնի: Յուրաքանչյուր երեխա խաղային գործընթացում ներգրավվել է տվյալ խաղի վերաբերյալ սեփական պատկերացումներով և ընկալումներով, ինչի արդյունքում հնարավորություն ենք ունեցել դիտել վերջիններիս վարքագիծը հնարավորինս անկախ և կամային ազատ դրսևորումներով:

Ծիսական խաղերի անցկացումը նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում նպաստեց վերջիններիս ազատ շփմանը, ինչպես նաև ֆիզիկական շարժումների ակտիվացմանը:

Այս շրջանակներում իրականացրինք հետևյալ խաղերը.

- **Ընկուզախաղեր**

Խմբասենյակի կենտրոնում թելի օգնությամբ գծեցինք մի մետր տրամագծով շրջան և շրջանի մեջտեղի հատվածում ուղիղ գծով ընկույզներ շարեցինք: Ապա երեխաներին առաջարկեցինք կանգնել շրջանից դուրս և ավելի մեծ ընկույզով դուրս հանել շրջանի ներսում գտնվող ընկույզները:

Խաղը նպաստեց երեխաների ակտիվացմանը, արագ կողմնորոշմանը, շարժողունակությանը, հաղթանակի զգացողությանը:

Երկրորդ ընկուզախաղի ժամանակ երեխաները պետք է ընկույզը հեռացնեին բթամատի և միջնամատի միացմամբ՝ կտտոցով: Ծիսական այս խաղը մանր մոտորիկայի զարգացման համար լավագույն խաղերից մեկն է:

- **Մուկն ու կատուն**

Հինհայկական այս խաղի անցկացման ժամանակ երեխաներին առաջարկեցինք կանգնել շրջանաձև և նրանց հերթով հանձնարարեցինք «մկան» և «կատվի» դերեր։ Խաղի անցկացումը նպաստեց երեխաների մեջ աշխուժության, ակտիվացման բարձրացմանը, արագ կողմնորոշմանը, խմբում ինտեգրմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական երեխաների շրջանում հոգեթերապևտիկ և ծիսական բնույթի խաղերի վերաբերյալ հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացությունների՝

- Հոգեթերապևտիկ խաղերի անցկացումը նպաստեց երեխաների հուզական վիճակի, վախերի, տագնապների բացահայտմանը,
- Նմանօրինակ խաղերի կիրառումը օգնեց պարապմունքների անցկացման արդյունավետության բարձրացմանը,
- Խաղերի կիրառումը հիպերակտիվ երեխաների շրջանում բերեց վերջիններիս մկանային լարվածության թուլացման,պարզվեցին երեխաների ազատ կամային դսևորման հնարավորությունները,
- Վերը բերված խաղային տեսակների կիրառումը հնարավորություն տվեց երեխաների՝ մի շարք վարքագծերի բացահայտմանը, ինչպիսիք են՝ ընկերասիրություն, օգնելու պատրաստակամություն, ազատ մրցակցություն։
- Հինհայկական խաղերի անցկացմամբ երեխաների շրջանում բարձրացավ ավանդույթի, տոնակատարությունների մասին իրազեկ լինելու մակարդակը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղույումչյան Գ. Ե. , Մանկավարժություն: Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով: Գիրք I, Երևան, Զանգակ-97, 2005, 464 էջ:
2. https://hy.wikipedia.org/wiki/%D4%BD%D5%A1%D5%B2, հասանելի է՝ 09. 12. 2022թ. :
3. https://mississauga.ru/raznoe/dmitrij-nikolaevich-uznadze-teoriya-igry-luchshie-knigi-dmitrij-nikolaevich-uznadze/ հասանելի է՝ 10. 12. 2022 թ.:
4. https://journalist.am/archives/5640 հասանելի է՝ 13.12.2022 թ.:
5. https://thestrip.ru/hy/smoky-eyes/igrovaya-terapiya-empiricheskoe-issledovanie-igrovoi-terapii/ հասանելի է՝ 13.12.2022 թ.:
6. https://mmkhitaryan91.wordpress.com/2020/04/18/%D5%AD%D5%A1%D5%B2%D5%A1%D5%A9%D5%A5%D6%80%D5%A1%D5%BA%D5%AB%D5%A1/ հասանելի է 14.12.2022 թ.:
7. https://harutyunyananna85.files.wordpress.com/2015/06/c2abd5aed5abd5bdd5a1d5afd5a1d5b6-d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5b4d5a1d5b6d5afd5a1d5afd5a1d5b6-d5add5a1d5b2d5a5d680d5a8-d5add5a1d5b24.pdf հասանելի է՝ 14.12. 2022 թ.:
8. https://www.dasaran.net/apps/wiki/view/id/5281 հասանելի է 15.12.2022 թ.:
9. https://marinemkrtchyan.files.wordpress.com/2017/04/d5aed5abd5bdd5a1d5afd5a1d5b6-d5b4d5a1d5b6d5afd5a1d5afd5a1d5b6-d5add5a1d5b2d5a5d680.pdf հասանեի է 15.12.2022 թ:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ

ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ `

Մանկավարաժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների հետ)՝ սաների կրթական աշխատանքների ակազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԿԱՏԱՐՈՂ ՝ Լիլիթ Մաղաքյան

ՂԵԿԱՎԱՐ ՝մ.գ.թ. Լուսինե Միրաբյան

ՎԱՆԱՁՈՐ 2022

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Երեխաների դաստիարակությունը ընտանիքում 4

Գլուխ 2. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների միջև համագործակցությունը 8

Հետազոտական մաս 15

Եզրակացություն 18

Գրականություն 19

Ներածություն

Ավանդաբար դաստիարակության գլխավոր ինստիտուտ է հանդիսանում ընտանիքը։ Այն, ինչ երեխան ձեռք է բերում մանկական տարիքում, ամրապնդվում և պահպանվում է նրա մոտ հետագա ամբողջ կյանքի ընթացքում։

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկայիս ծանր սոցիալ-տնտեսական վիճակի անկայունությունը, բարոյահոգեբանական զգացմունքների զարգացումը կողմնորոշված են դեպի վտանգավոր տենդենցները, որոնց ազդեցությունը մեծ է հասարակության վրա, իսկ հասարակության կարևորագույն հիմքի՝ ընտանիքի ինստիտուտը թուլացել է, թուլացել է նաև ուսումնական /կրթական/ հասարակություն-ընտանիք կապը։

Հետազոտական աշխատանքի նպատակը ուսումնասիրել ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները և մանկավարժական աշխատողի սաների ծնողների հետ տարվող գիտամեթոդական հենքով աշխատանքներին վերաբերող գիտական, գիտամեթոդական գրականությունը, գոյություն ունեցող առաջանային փորձը։

Հետազոտության խնդիրներն են.

- ✓ ուսումնասիրել ընտանիք-ծնող փոխգործակցության ձևերը, մեթոդները և միջոցները,
- ✓ բացահայտել ընտանեկան դաստիրակության առանձնահատկությունները,
- ✓ իրականացնել մանկավարժ-ծնող համագործակցությունը։

Գլուխ 1. Երեխաների դաստիարակությունը ընտանիքում

1.1. Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները որպես երեխայի դաստիարակության վրա ազդող գործոններ

Դաստիարակության գլխավոր ինստիտուտ է հանդիսանում ընտանիքը, որի դերն անփոխարինելի է երեխայի զարգացման, նրա սոցիալականացման գործընթացներում: Այն, ինչ երեխան ձեռք է բերում մանկության շրջանում, ամրապնդվում և պահպանվում է նրա մոտ հետագա ամբողջ կյանքի ընթացքում: Յ.Ա. Կոմենսկին ասել է.«Մարդու մեջ միայն հուսալի և հաստատուն է այն, ինչ նրա մեջ ներծծել են կյանքի առաջին տարիներին [1.60]:

Ընտանիքի՝ որպես դաստիարակչական ինստիտուտի կարևորությունը կայանում է նրանում, որ երեխան այնտեղ անցկացնում է իր կյանքի մեծ մասը, և անձի վրա ներգործության տևողությամբ ոչ մի դաստիարակության ինստիտուտ չի կարող համեմատվել նրա հետ:

Ըստ Ն.Նյուկոմբի յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր ծնող իր երեխային դաստիարակում է յուրահատուկ անհատական մոտեցումներով [2.395]:

Ընտանեկան դաստիարակության արդյունավետությունը կայանում է ընտանիքում բարենպաստ մթնոլորտի ստեղծման մեջ, երբ ընտանիքի անդամները միմյանց և երեխաներին վերաբերում են սիրով, վստահությամբ և հարգանքով [1.65]:

Մ.Ի. Լիսինան հետևել է նախադպրոցական տարիքի երեխաների ինքնագիտակցության զարգացմանը՝ կախված ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններից: Իրենց մասին ճիշտ պատկերացմամբ երեխաները դաստիարակվում են այն ընտանիքներում, որտեղ ծնողները բավականին ժամանակ են տրամադրում նրանց, գնահատում են նրանց ֆիզիկական, մտավոր տվյալները դրական, բայց նրանց հասակակիցների մեծ մասից զարգացման մակարդակն ավելի բարձր չեն համարում [3.165]:

Ե.Պ. Արնաուտովայի կողմից ծնողների հետ անցկացված զրույցների արդյունքները ցույց են տվել, որ յուրաքանչյուր երկրորդ ծնող չի գիտակցում երեխային զգալու հնարավորություն տալու դեպքում մեծանում է դաստիարակչական գործունեության արժեքը: Եթե մեծահասակը չի լսում երեխային, երեխան չունի սեփական կարծիք ունենալու իրավունք, ապա այդ դեպքում երեխայի համար դժվար է հասկանալ՝ ինքը

սիրելի է, թե՞ ոչ, միշտ է սիրելի. թե՞ միայն լավ գործ կատարելիս։ Այս մտքերը երեխայի մոտ առաջացնում են անբարենպաստ հուզական վիճակ և տագնապ [4.24]։

Ծնողները պետք է նպաստեն իրենց երեխաների մտավոր, ֆիզիկական զարգացմանը և ինքնուրույնության ձևավորմանը։ Երեխաների անցանկալի վարքային փոփոխությունները կապված են լինում հոգեբանական նահանջ կամ ռեգրես երևույթի հետ, երբ երեխան օրինակ 5 տարեկան է, բայց սկսում է պահել 1-2 տարեկանի պես, որպեսզի իր վրա հրավիրի ծնողի սերն ու ուշադրությունը, իսկ երբ այս վարքը երկարատև բնույթ է ունենում, տուժում է երեխայի զարգացումը և հասունությունը։ Երբեմն ծնողները ցանկանում են ուղղել իրենց երեխաներին՝ նրանց նկատողություն անելով, կոչելով վատ երեխա, կոպիտ, անզգույշ, այլ որակումներ տալիս։ Երբ երեխաները նման քննադատություն են լսում, նրանք իրենց մերժված և ձախողված են զգում։ Լիդերության փուձագետ Թիմ Էլմորը նշում էր, որ երեխաներին քննադատելով և նրանց ռիսկերը բացառելով՝ ծնողները նրանց մեջ սերմանում են ապագայում ցածր ինքնագնահատական և զրկում նրանց բարդ իրավիճակներից դուրս գալու համար ինքնուրույն ելքեր փնտրելու հնարավորություններից։

Ծնողները կարող են նպաստել երեխայի ճիշտ «Ես» կերպարի ձևավորմանը, երեխայի ինքնանպաստմանը, դրականորեն արձագանքել կամ ճիշտ ընթացք տալ երեխայի պլանների, երազանքների իրականացմանը։

Հասկանալի է դառնում, որ ծնողների վերաբերմունքը կարող է տպավորվել երեխաների ինքնագիտակցության մեջ և դառնալ ինքադրսևորման ձև [5.212-214]։

Ծնողների դրական օրինակը մեծ նշանակություն ունի երեխաների դաստիարակության համար։ Այն ընտանիքներում, որոնք լիարժեք են, երեխայի ծնողներից մեկի հետ նույնացումը լիարժեք է ընթանում, բնականոն, իսկ ոչ լիարժեք ընտանիքում կարող է ընդօրինակման խնդիր լինել։ Ծնողների հետ երեխաների հոգեբանական նույնացման գոյությունը պարտավորեցնում է նրանց և ստիպում ավելի ուշադիր լինելու իրենց վարքին, ասելիքին։ Ծնողները պետք է կանխեն այնպիսի բացասական երևույթներ, որոնք են ագրեսիվությունը, գերամաչկոտությունը, ինքնամեկուսացման հակումը [5.306-308]։

Հանդուրժողականությունը, համբերատարությունը, իսկական սերը, անհատականությունը հաշվի առնելու ընդունակությունը ծնողներին թույլ կտան ստեղծել ամուր հիմքով և սիրո վրա հիմնված ընտանիք [5.312]։

1.2. Ծնող-երեխա հարաբերությունների դերը երեխայի զարգացման գործում

Երեխայի հետ հուզական /էմոցիոնալ/ կապվածությունը ճակատագրական է նրա ապագա զարգացման և ծնող-երեխա հարաբերությունների առումով։ Նրանք պետք է զգայական կապվածություն ձևավորեն երեխաների հետ նարանց հնարավորինս լավ զարգացման համար։ Շատ կարևոր է բավական ժամանակ և զգացմունքներ ներդնել երեխաների հետ էմոցիոնալ կապվածություն հաստատելու համար։

Պետք է համոզվել, որ միջավայրը, բնակարանը անվտանգ է երեխայի համար և բոլոր վտանգները և սպառնալիքները դուրս են նրա ճանապարհից։

- ✓ Անհրաժեշտ է օգնել երեխային ստեղծելու և պահպանելու որոշ պարզ, բարի կանոններ, օրինակ՝ «տանը խաղալուց հետո խաղալիքները հավաքել», «տանը խաղալիքները ընդհանուր են»։
- ✓ Պետք է առավելապես կենտրոնանալ երեխայի դրական արարքների վրա և խրահուսել նրա լավ պահվածքը։
- ✓ Կարևոր է գովել երեխային և թույլ տալ, որ մյուսները ևս իմանան, որ երեխան իրեն լավ է դրսևորել։
- ✓ Որքան հնարավոր է պետք է խուսափել մատնացույց անել երեխայի «վատ» արարքը, պահվածքը, վարքը և չկառչել դրանից։
- ✓ Կարևոր է, որ երեխան իմանա, թե կոնկրետ ինչպիսի վարքն է խրախուսվում, գովելիս կարելի է դա արտահայտել նախադասության մեջ, օրինակ՝ «շատ ապրես, որ կապեցիր կոշիկիդ թելերը»։
- ✓ Երեխային միշտ պետք է ցույց տալ, որ սիրելի է անկախ նրանից, թե ինչպես է դրսևորում իրեն տվյալ ժամանակ։
- ✓ Ցանկալի է լավ արարքի համար ստեղծել հատուկ պարգևատրումներ՝ խուսափելով քաղցրավենիքով պարգևատրելուց։
- ✓ Բոլոր ուղղումները, նկատողությունները և բացատրությունները պետք է տեղում անմիջապես իրականացվեն, քանի որ նախադպրոցական տարիքի երեխաներն ի

վիճակի չեն մի քանի ժամ կամ օր հետո վերհիշել իրենց վարքը։ Նրանց պետք է տալ կարճ և հստակ բացատրություններ [6.56-57]։

Լավ հաղորդակցումը կարևոր սկզբունք է ծնող-երեխա հարաբերություններում երեխայի ինքնագնահատականի բարձրացման և փոխադարձ վստահության ու հարգանքի ստեղծման համար։

Ծնող-երեխա լավ հարաբերությունների հիմնական սկզբունքներից են.

- ✓ Երեխան պետք է իմանա, որ ծնողը միշտ հետաքրքրված է իրենով, իրեն անհանգստացնող հարցերով և պատրաստ է օգնելու։
- ✓ Կարևոր է, որ երեխայի հետ հաղորդակցման ժամանակ շուրջը այլ մարդիկ չլինեն։
- ✓ ՈՒրիշների ներկայությամբ երեխային նկատողություն անելը, ամաչեցնելը ճիշտ հաղորդակցում չէ և կարող է երեխայի մոտ առաջացնել շփոթմունք, անգամ թշնամանք ծնողի հանդեպ։
- ✓ Ծնողը բարկացած ժամանակ հաճախ օբյեկտիվ չէ իր գնահատականներում, այդ պատճառով ավելի ճիշտ կլինի երեխայի հետ հաղորդակցվել ավելի ուշ՝ հանգիստ ժամանակ։
- ✓ Պետք է ուշադիր լսել երեխային, չընդհատել նրա խոսքը, նրա նկատմամբ լինել հարգալից։
- ✓ Կարելի է հաղորդակցվել մեծահասակի ոճով՝ «խոսիր, երբ ես կվերջացնեմ», «արա այն, ինչ ես ասում եմ և դա կլուծի խնդիրը»։
- ✓ Պետք է խուսափել վիրավորական բառեր, արտահայտություններ օգտագործելուց՝ հիմար, ծույլ, «դու ի՞նչ գիտես, դեռ երեխա ես»։
- ✓ Կարևոր է խրախուսել երեխային բաց և վստահելի շփում ապահովելու նպատակով։

Հաճախ ծնողները կարող են հաստատել, որ երեխան իրենց համար թանկ է, բայց իրենց վարքով պնդել հակառակը։ Ծնողական սերը անհրաժեշտ, բայց միակ բավարար պայմանը չէ երեխայի բարենպաստ զարգացման համար [5.214]։

Դրական ուշադրությունը նպաստում է երեխայի բարեկեցությանը։ Երեխաները կարիք ունեն սիրված և գնահատված լինելու։ Շատ ծնողներ կարծում են, որ ավելի հեշտ է բացասական կարծիք տրամադրել, բայց միշտ պետք է փորձել խրախուսել երեխային [6.58-59]։

Գլուխ 2. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների միջև համագործակցությունը

2.1. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների միջև փոխգործակցության ձևերը

Նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական զարգացման համար գոյություն ունեն երկու ինստիտուցիոնալ կառույց՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք։ Անհրաժեշտ է և կարևոր մանկապարտեզի և ընտանիքի արդյունավետ համագործակցությունը։ Հասարակական նախադպրոցական հաստատությունը աջակցում է ընտանիքին՝ իրականացնելու համակարգված երեխայակենտրոն կրթություն։

Երբեմն գործնականում ծնողների հետ աշխատանքը ուղեկցվում է միայն մանկավարժական քարոզչությամբ, որի դեպքում ընտանիքի անդամները դառնում են ներգործության առարկա, իսկ արդյունքում հետադարձ կապը բացակայում է։

Նախադպրոցական կրթության համակարգի բարելավման ներկա գործընթացի հիմքում մանկավարժական հումանիզացումը և երեխայի անհատական զարգացման համար նպաստավոր մթնոլորտի ստեղծումն է [7.5-6]։

Նախադպրոցական մանկավարժները ընտանիքների հետ համագործակցելիս նկատել են, որ այսօր որոշ ծնողների մոտ մանկավարժական ժամանակակից մոտեցումների որոշակի պակաս կա։ Ծնողների հետ աշխատանքի ժամանակ չպետք է մեղավորներ փնտրել, այլ արդյունավետ համագործակցություն կկայանա այն դեպքում, եթե իրականում կողմերը ընդունեն և վստահեն միմյանց։

Մանկապարտեզը և ընտանիքը երկու կառույցներ են, որոնց փոխադարձ կապի հետևանքները կրողը երեխան է։ Կարևոր է, որ մանկապարտեզի և ընտանիքի պահանջները լինեն միասնական։ Դրա համար անհրաժեշտ է՝

- ✓ Աջակցության նպատակով բացահայտել ծնողների կարիքները։
- ✓ Իմանալ մանկավարժների, ծնողների, երեխաների իրավունքները և պարտականությունները։

Մանկապարտեզի և ընտանիքի կապի համակարգված ձևը մանկապարտեզի և ընտանիքի գործընկերությունն է և երեխաների դաստիարակության խնդիրների փուլային համատեղ իրականացումը՝

1. Առաջին փուլում նախագծվում են ծնողների հետ աշխատանքի բովանդակությունը, ձևերը, կատարվում է կարիքների գնահատման վերաբերյալ բլից հարցում։
2. Երկրորդ փուլում հետագա գործնական համագործակցության համար կողմերի միջև ստեղծվում են բարյացկամ միջանձնային կապեր։
3. Երրորդ փուլը երեխայի լիարժեք կերպարի և նրան հաղորդած գիտելիքների ճիշտ ընկալման վերաբերյալ ծնողների կարծիքի փնավորումն է։
4. Չորրորդ փուլում մանկավարժի ծանոթացումն է ընտանիքում երեխաների դաստիարակության խնդիրներին։ Դաստիարակները երկխոսության մեջ են մտնում ծնողների հետ և եր
5. Համատեղ հետազոտության և երեխայի անձի փուլում, որը հինգերորդն է, պլանավորվում են կոնկրետ բովանդակային աշխատանքներ և ընտրվում համագործակցության ձևեր [7.8-9]։

Համալիր աշխատանք իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել ծնողներին, որ նրանք մասնակցեն բոլոր դաստիարակչական աշխատանքներին [3.165]։

Մանկավարժների և սաների ծնողների միջև փոխգործակցության կազմակերպումը նախադպրոցական հաստատությունների գործունեության ամենադժվար ոլորտներից է։ Ծնողների և մանկավարժների փոխազդեցությունը գալիս է տարբեր արժեքային համակարգերից։ Իրենց հաղորդակցությունը և հարաբերությունները պետք է հիմնված լինեն փոխըմբռնման, վստահության սկզբունքների վրա։ Այդ փոխգործակցությունն անհնար է առանց ընտանիքի շահերը և կարիքները հաշվի առնելու։

Ախտորոշիչ փուլում անհրաժեշտ է կիրառել հետևյալ մեթոդները՝ ուսումնասիրություն, զրույց ծնողների, երեխաների հետ, նախագծային /պրոյեկտիվ/ մեթոդներ՝ նկար, պատմությունների անավարտ հետաքրքրող թեմայով, թեմատիկ նկարներին համապատասխան պատմության, պատմվածքի, հորինվածքի ստեղծում [5.212]։

ՈՒսումնական տարվա սկզբում դաստիարակը հավաքագրում և վերլուծում է երեխաների ընտանեկան դաստիարակության և սոցիալ-մանկավարժական փաստերը և այլն։ Արդեն ուսումնական տարվա ընթացքում օրացուցային պլանում պլանավորում

է՝ ամրագրելով ընտանիքում երեխա-ծնող փոխհարաբերություններում կիրառվող մեթոդները՝

- ✓ Երեխա-ծնող փոխհարաբերությունների բնույթի, նպատակային դիտարկումներ,
- ✓ երեխայի անհատական զարդացման վերաբերյալ քննարկումների պլանային զրույցներ,
- ✓ երեխաների գործունեության տարբեր տեսակների, նաև տեսաֆիլմերի դիտումներ ծնողների կողմից,
- ✓ ծնողների ընդգրկվածություն երեխաների գործունեության, օրինակ՝ համատեղ նկարչություն, ծեփակերտում, կառուցողական աշխատանքներ, խաղ-բեմականացումներ, սպորտակին խաղեր և այլն, մեջ ինչպես զուգընկեր,
- ✓ ծնողների ծանոթացում երեխաների արգասաբեր գործունեության և մանկական ստեղծագործության արդյունքներին,
- ✓ թեստավորում, հարցումների /բանավոր, գրավոր/ կազմակերպում, երեխաների ընտանեկան և հասարակական դաստիարակության, մանկապարտեզից ունեցած ակնկալիքների մասին հարցազրույցներ [4.110-111]։

Ծնողների հետ հանդիպումները նրանց հետ աշխատանքի ավանդական ձև է։ Թեմատիկ զրույցներ կարող են կիրառվել ընտանիքում, որոնց արդյունավետությունը պայմանավորված է ծնողների բարոյական-հոգեբանական, մշակութային և մանկավարժական զարգացվածության մակարդակից։ Արդեն ձեռք բերած փորձը հետագայում՝ խմբային և անհատական զրույցների ընթացքում, դաստիարակը կարող է օգտագործել զրույցն ակտիվացնելու, քննարկվող հարցերի բովանդակությունը հարստացնելու համար, որը նույնպես դաստիարակչական կարևոր նպատակ է և միջոց՝ սանի գիտակցությունը զարգացնելու համար [3.165]։

Ծնողների ներգրավածությունը մանկապարտեզային կյանքում ստեղծում է իրավիճակ, երբ նրանք մտածում են դաստիարակության խնդիրների մասին, հաճույքով խաղեր են խաղում իրենց երեխաների հետ, ինչը համախմբում է ընտանիքը։ Ծնողական ժողովը դաստիարակների և ծնողների միջև հաղորդակցման արդյունավետ ձև է։ Կարևոր է, որ ծնողների համար կազմակերպված հանդիպումները,

ժողովները, խորհրդակցությունները ձևական չլինեն։ Աշխատանքի հետաքրքիր ձև է նաև ծնողական ակումբը, որ մեծ հաջողություն ունի։

Մանկավարժների և ծնողների միջև փոխգործակցության այլ նոր ձև է ծնողների խմբի թերթը, որը դարձել է արդյունավետ միջոց՝ ծնողներին իրազեկելու տանը և մանկապարտեզում երեխաների հետ հնարավոր գործողությունների մասին։ Սրա առավելությունը այն է, որ կենտրոնացած է կոնկրետ ծնողների վրա՝ հաշվի առնելով նրանց կրթական մակարդակը, հետաքրքրությունները, նաև զերծ է պարտադրողականությունից, ինչը վանում է ծնողներին։

Ցանկացած համատեղ աշխատանք, միջոցառում թույլ է տալիս ծնողներին՝ ներսից տեսնել իրենց երեխաների խնդիրները, հարաբերությունների դժվարությունները, փորձարկել տարբել մոտեցումներ, տեսնել, թե ինչպես են դա անում մյուսները, այսինքն փորձ ձեռք բերել շփվելու ոչ միայն իր երեխայի, այլև ընդհանուր ծնողների հետ։ Կատարած աշխատանքն օգնում է բարձրացնել ծնողների հոգեբանական և մանկավարժական իրավասությունը ծնող-երեխա հարաբերությունների հարցում [8. 173]։

Այսպիսով, ընտանիքի, ծնողների հետ փոխգործակցության կազմակերպումը բարդ աշխատանք է, որը չունի պատրաստի տեխնոլոգիաներ։ Նրա հաջողությունը պայմանավորված է մանկավարժի մասնագիտական որակներով, նախաձեռնողականությամբ և համբերությամբ, ընտանիքում պրոֆեսիոնալ աջակցող դառնալու կարողությամբ։

2.2. Մանկավարժ-ծնող համագործակցությունը սաների կրթական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում

Ընտանիքի հետ համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որը ենթադրում է առաջին հերթին ընտանիքի, երեխաների, ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն։ Դաստիարանությունն արդյունավետ կլինի նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության

գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ և հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակության խնդիրները և դրանց լուծման ուղիները։

Ժամանակակից պրակտիկայում համագործակցությունը մնում է որպես դաստիարակի և ծնողի հաղորդակցման նպատակահարմար ոճ։ Համագործակցությունը բացառում է ճնշումը միմյանց նկատմամբ, օտարացումն իրարից, մանկավարժի կողմից անհասկանալի եզրույթների կիրառումը և այլն։

Մանկապարտեզի առաջնային խնդիրն է՝ որքան հնարավոր է շատ ծնողներ ցանկանան օգտվել այդ ծառայությունից, քանի որ այս կառույցը հիմնվել է բավարարելու ծնողների սոցիալական պահանջարկը [4.32-34]։

Ծնողների հետ համագործակցության հիմքը խմբային և անհատական աշխատանքի ձևերն են։ Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի ամենակիրառելի ձևերից մեկն է, որի միջոցով քննարկվում, նաև լուծվում են աշխատանքի ժամանակ առաջացած խնդիրներ [8.173-174]։

Մանկավարժ-ծնող համագործակցության կայացման դժվարություններից են ծնողական ժողովների ժամանակ դաստիարակի անհասցե հղումները, ժամանակավրեպ թեմաների ընտրությունը և այլն [7.33]։

Ծնողների հետ աշխատելու ժամանակ կարևոր է՝

- ✓ Նրանց պարապմունքների և կազմակերպչական աշխատանքներում ընդգրկելու համար օգտագործել բազմազան ձևեր, լինել ստեղծագործ և ճկուն։
- ✓ Ժողովները և հանդիպումները կազմակերպել ծնողներին հարմար ժամերի։
- ✓ Թույլ տալ, որ ընտանիքն ինքը որոշի, թե ինչպես կարող է լավագույն ձևով մասնակցել գործին։
- ✓ Լինել համբերատար։
- ✓ Հենվել երեխայի և ընտանիքի ուժեղ կողմերի վրա։
- ✓ Պահպանել գաղտնիությունը։

Ընտանիքի անդամներին պետք է առաջարկվեն ուսումնական հաստատության կյանքին մասնակցելու տարատեսակ հնարավորություններ։

Ընտանիքի հետ համագործակցության ձևեր են.

- ✓ Այցելություններ տուն՝ տեսնելու և ճանաչելու երեխային և նրա ընտանիքին իրենց միջավայրում։
- ✓ Երեխային հաստատություն բերելու և տուն տանելու ընթացքում ընկած հատվածը՝ այս ընթացքում ընկած ժամանակը կարելի է օգտագործել ծնողների հետ ոչ պաշտոնական հաղորդակցության ապահովման համար։
- ✓ Հեռախոսային զանգեր՝ որը կարելի է կատարել հատուկ նպատակով կամ պարզապես յուրաքանչյուր ընտանիքի հետ կապը պահելու համար։
- ✓ Ծնողական և մանկավարժական ժողովներ, որոնք պաշտոնական հանդիպումներ են և նպատակ ունեն քննարկելոր երեխաների առաջադիմությունը, ծնողներին հնարավորություն են տալիս կիսվել մտքերով, մտահոգություններով։
- ✓ Գրքույկներ, որոնք կարող են օգնել ծնողներին ծանոթանալ ծրագրին՝ նկարագրել դրա էությունն ու նպատակները։
- ✓ Շաբաթական գրություններ՝ ամեն շաբաթ առանձին գրություն ուղարկել յուրաքանչյուր ընտանիքի՝ տեղեկություն հաղորդելու նպատակով։
- ✓ Ոչ պաշտոնական գրություններ, որ ընտանիքի անդամները տեղեկանան երեխայի հմտությունների ձեռքբերման, իրականացված այլ գործունեության մասին, նաև նրանց շնորհակալություն հայտնել ուսումնական հաստատությանն աջակցելու համար։
- ✓ Անհատական գրառումների գրքույկներ, որոնք կարող են ամեն օր տնից մանկապարտեզ ուղարկվել և հակառակը՝ ընթացիկ կարևոր տեղեկատվություն միմյանց փոխանցելու նպատակով։
- ✓ Պատի տեղեկատվական թերթ, որը կարող է օգտակար լինել ընտանիքներին՝ միշտ թարմ տեղեկատվություն հաղորդելով նրանց»
- ✓ Առաջարկությունների տուփեր, որոնք նկատելի տեղում են դրվում և ծնողները կարող են ներկայացնել իրենց մտքերը, մտահոգությունները, հարցերը, ցանկությունները։

Ծնողների հետ համագործակցությունը կարող է իրականացվել նաև այլ պաշտոնական ձևերով՝ կլոր սեղաններ, տարբեր թեմատիկ քննարկումներ, ծնողների

համար բաց դիտումների կազմակերպում, խորհրդատվական հանդիպումներ, անհատական զրույցներ, ծնողական կրթություն և այլն[9.134-138]։

Դաստիարակը ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար պլանավորում է համընդհանուր /ֆրոնտալ/ հանդիպումներ խմբի ծնողների հետ։ Այս դեպքում նշվում է հանդիպման թեման, անցկացման ձևը, օրինակ՝ կլոր սեղան, թեմատիկ բանավեճ, թրեյնինգ, գործնական աշխատանք և այլն, նաև ծնողների, երեխաների դաստիարակության հետ կապված, փորձի հարստացման նպատակով։ Տարեկան խնդիրներից կարող են լինել՝

- ✓ Երեխաների խաղային գործունեության կազմակերպումը և ղեկավարումը ընտանիքում։
- ✓ Մանկապարտեզում և ընտանիքում երեխայի հուզական ինքնազգացողության ապահովումը [4.111]։

Կարևոր է այն, որ ընտանիքները ծնողները գիտակցեն իրենց մասնակցությունը խմբասենյակում և ներգրավումը տարբեր աշխատանքներում ողջունելի և բարձր գնահատականի արժանի է։ Նրանց ներգրավումը կարելի է կատարել աստիճանաբար՝ որոշակի ժամանակի ընթացքում։

Ընտանիքներին ներգրավելու համար խրախուսելը ևս կարևոր է։ Անհրաժեշտ է սերտ կապ պահպանել, առնվազն շաբաթական մեկ անգամ զրուցել ծնողների հետ։ Ցանկալի է փորձել աշխատանքներին ներգրավել ողջ ընտանիքին, քանի որ հաճախ հայրերը դուրս են մնում երեխաների համար իրականացվող ծրագրերից [9.139]։

Եթե ծնողների և երեխաների միջև ստեղծվել են հավատարիմ փոխհարաբերություններ և մանկավարժի հետ կա համագործակցություն, ապա կարելի է օգտագործել բազմաբնույթ մեթոդիկաներ, որոնք ուսուցանում են ծնողներին և դաստիարակներին իրենց գործունեության ընթացքում կիրառել հակազդիչ, վերլուծական մոտեցում [5.215]։

Այսպիսով, որքան ավելի սերտ լինի ուսումնական հաստատություն-ընտանիք կապը, այնքան սաներն ավելի մեծ աջակցություն կստանան, իսկ դաստիարակության և ուսումնառության գործընթացներն ավելի արդյունավետ կլինեն։

Հետազոտական մաս

Հետազոտական աշխատանքիս ընթացքում կատարել եմ ծնողական հանդիպումներ և ծնողների հետ քննարկել եմ այնպիսի թեմաներ, որոնք խիստ պարտադիր են նախադպրոցական տարիքի երեխային ճիշտ դաստիարակելու համար։Որպեսզի ծնողների մանկավարժական գիտելիքների մակարդակը բարձրացնենք,հարկավոր է հաճախակի լինեն ծնողական հավաքները,որոնց ընթացքում քննարկում ները կլինեն կոնկրետ դրված թեմաների շուրջ։Նպատակահարմար է նաև <<Հարթակում ծնողն է>> վերնագրով նախագիծ իրականացնել,որի ընթացքում ամեն ամիս մեկ սանի ծնող հանդես կգա իր մասնագիտական գիտելիքներով,մյուս ծնողների հետ կկիսվի իր մասնագիտական փորձով ,կլինեն հարց ու պատասխաններ։Օրինակ՝եթե ծնողը բժիշկ է,լրագրող կամ IT ոլորտի մասնագետ,ապա շատ լավ կլինի,որ հանդիպումների ընթացքում ներկա լինեն նաև երեխաները, և երեխաներին մատչելի ձևով տրվի տվյալ մասնագիտության մասին մինիմալ գիտելիքներ և դրանք հմտորեն օգտագործելու տեխնիկա։

Հերթական ժողով-սեմինարի ժամանակ փորձեցի հարցերի ու պատասխանների միջոցով պարզել ,թե որքան գիտակից և մանկավարժորեն են մտածում և դաստիարակում մեր ծնողները։ Հարցին ,թե ձեր երեխան երբ տուն է գալիս մանկապարտեզից,առաջինն ինչ եք հարցնում նրան,ծնողների մի մասը պատասխանեց ,որ հարցնում է,թե ինչ է կերել,մի մասը՝ քնել է, թե ոչ,իսկ մյուս մասը՝ հատկապես տղա երեխաների ծնողները, հարցնում են, թե ում հետ է կռվել,ում է ծեծել ,ցույց տվել ,որ ինքն է ուժեղ ,և նման հարցեր։Հարցադրումներիցս և ստացած պատասխաններից հանգեցի այն եզրակացության,որ ծնողների մի մասը շատ խիստ կենցաղային մակարդակի է մտածում։ Սեմինարի վերջում նրբանկատորեն փորձեցի ծնողներին հասցնել այն միտքը,որ երբ իրենց 4-5 տարեկան երեխան տուն է մտնում ,առաջին հարցերը թող հնչեն այսպես՝բալե՛ս, տղա՛ս,աղջի՛կս ,այսօր ինչպե՞ս անցավ օրդ, ի՞նչ նոր բան ես սովորել, ինպե՞ս էին ընկերներդ,ուսուցչուհիդ գո՞հ էր քեզնից,այն ինչ չէր ստացվում նախորդ օրերին ,փորձեք հարցնել դրա մասին, արդյո՞ք ստացվել է երեխայի մոտ, թե ՞ոչ։ Երբ մի քանի օր նման հարցեր տաք երեխային,ձեզ մոտ էլ կձևավորվի սովորություն նմանատիպ հարցեր տալու։Եվ ճիշտ հարցեր ուղղելով՝

դաստիարակում եք ձեր երեխային՝ նրա մեջ սերմանելով խոսել և բարձրաձայնել կարևորի մասին,որի արդյունքում նա կտարբերակի կարևորն ու երկրորդականը։
Երբ նրան հարցնում եք՝ այսօր կռի՞վ է արել,թե՞ չէ, ենթագիտակցաբար նրան ուղղորդում եք կռվել,գժտվել հասակակիցների հետ, և որպեսզի նա ձեզ պատմելու բան ունենա, նա կարող է կռիվ հրահրել։Իսկ եթե նրան տալիս եք ճիշտ հակառակ հարցը,թե այսօր ու՞մ հետ է լավ խաղացել ,ապա նա ոգևորված կգա և ձեզ կպատմի ,որ այսօր օրինակ՝ Աստղիկի հետ գեղեցիկ ծաղիկ է ծեփել,կամ Աշոտիկի հետ լեգո է հավաքել։
Եթե դուք ձեր երեխային տաք այն հարցը, թե ինչ է կերել,ապա նա միայն կկենտրոնանա սնվելու և երկրորդ բաժինն էլ ուզելու վրա, որպեսզի տանը ձեզ պատմելու բան ունենա։Դրա փոխարեն հարցրեք՝ ի՞նչ նոր բան է սովորել, և վստահ եղեք ՝10-12 օրից երեխան ավելի ուշադիր կլինի նոր նյութի ,մի նոր հեքիաթ լսելու,մուլտֆիլմ դիտելու վրա, և դա հիմք կհանդիսանա հետագայում երեխայի ուշադրությունը գիտելիքի ,ուսուցչի կողմից տրվող նյութի նկատմամբ ավելի մեծ հետաքրքրության բարձրացմանը , հետագայում կխթանի նաև կրտսեր դպրոցական տարիքում լինել ավելի ուշադիր,պատրաստ լինել լսել նոր նյութ,նոր տառի ուսուցում։
Հետազոտության ընթացքում կատարել եմ ևս մեկ հանդիպում <<Երեխայի հիգիենան>>թեմայով։ Քննարկման ընթացքում առանձնակի ուշադրության եմ ուղղել ծնողներին երեխաների հիգիենայով զբաղվելու և դա նրանց առօրյայի մի մասը դարձնելու մասին։ Շատ հաճախ այս խնդիրը արդյունք չի տալիս,քանի որ մենք երեխաներին այստեղ սովորեցնում ենք ճաշելուց առաջ և հետո,պետքարանից օգտվելուց առաջ և հետո անպայման լվանալ ձեռքերը,հագուստը կոկիկ պահել,մազերը հարդարել։ Բայց եթե ծնողը այդ ամենը անընդհատ չի ասում երեխային,չի հետևում դրանց կատարմանը,արդեն պատկերացնում եք չէ՞, որ մեր աշխատանքը լավ արդյունք չի կարող տալ։
Ծնողները միմյանց հետ խոսելիս շատ հաճախ օգտագործում են հետևյալ արտահայտությունը՝ (տղաս,աղջիկս)շատ կամակոր,լացկան,ագրեսիվ է դարձել,կամ հակառակը՝ շատ ինքնամփոփ է, իսկ մյուսներն էլ, ի սփոփանք այդ ծնողների ,ասում են՝ տարիքից է, կանցնի՝չհասկանալով, որ նման արտահայտությունը ունի գիտական մոտեցում և, այո՛, այդ շրջանում նախադպրոցական տարիքում ձեր երեխան ապրում է իր կյանքի ամենակարևոր ճգնաժամերից մեկը,և այն ավելի հարթ ու առանց

խնդիրների անցկացնելու համար կարևոր է ծնողների գիտակից և ինֆորմացված լինելը, և այդ հարցում պետք է օգնեն կրթված դաստիարակները։

Պետք չէ լացող երեխային մանկապարտեզ տանելուց հետո էլ ավելացնել,որ եթե շարունակի լացել, իրեն այնտեղ կթողնեն ու չեն գա տուն տանելու,և նմանատիպ արտահայտություններ։Առանց այդ էլ մանկապարտեզը երեխայի կյանքի առաջին վայրն է, որտեղ երեխան կտրվել է ընտանիքից,միայնակ է, առանց հարազատների,ծանոթ դեմքերի, և նա ունի վախեր և տագնապներ։Փոխանակ նրան օգնելու՝ դուք ձեր վարքով էլ ավելի եք վնասում երեխայի հուզական աշխարհը։ Եվ դրա համար էլ խիստ կարևոր է ծնողների հետ նման բովանդակալից և ուսուցողական սեմինարների վարումը։

Մեր այսօրվա կյանքից ելնելով՝ մեր ոչ բոլոր ծնողներն են շփվում մանկավարժական ոլորտի և երեխայի հոգեբանության հետ առնչվող մասնագետների հետ։

Եզրակացություն

Աշխատանքի արդյունքում հանգեցի այն եզրակացության, որ ժամանակակից ընտանիքներում ծնողները հաճախ դժվարություններ են ունենում երեխաներին դաստիարակելու, նրանց համար լավագույն կրթական մեթոդներն ու տեխնիկաները ընտրելու, տարատեսակ տեղեկատվական աղբյուրներից ստացվող տեղեկությունները ուղղակիորեն գործնականում կիրառելու հարցերում: Նախադպրոցական հաստատությունների գործունեության ժամանակակից պայմաններն առաջ են բերում ընտանիքի հետ փոխգործակցության, համագործկցության և սաների դաստիարակչական աշխատանքներում ծնողներին ներգրավելու կարևորությունը:

Ընտանիքի անդամներին պետք է առաջարկվեն նախադպրոցական ուսումնական հաստատության կյանքին մասնակից դառնալու տարատեսակ հնարներ: Դաստիարանությունն արդյունավետ կլինի մանկավարժ-ծնող համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ և հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակության խնդիրները և դրանց լուծման ուղիները: Սաների հետ իրականացվող դաստիարակչական գործունեությունը նրանց համակողմանի զարգացման հնարավորություններ է ընձեռում:

Այսպիսով, որքան ավելի սերտ և արդյունավետ լինի նախադպրոցական ուսումնական հաստատություն-ընտանիք կապը, այնքան ավելի մեծ աջակցություն կստանան երեխաները՝ ուսումնառության և դաստիարակության ընթացքն ավելի դրական և արդյունավետ կազմակերպելու գործում:

Գրականություն

1. Բեժանյան Ս. «Հայկական ընտանիքը և նրա սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները», «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հոդվածներ N1, 2019թ.
2. Գուզալ Կամալովայի խմբ. Դրական ծնողավարման ձեռնարկ Երեխաների դեմ բռնության կանխարգելում, Երևան Սեյվ դը չիլդրեն», 2011թ.
3. Ղույումչյան Գ.Ե. «Մանակավարժություն», 2 գրքով, Գիրք I (463), Եր. 2017թ.
4. Հովհաննիսյան Ա. «Մանկապարտեզ և ընտանիք համագործակցության կազմակերպումը»
5. Հովհաննիսյան Ա. «Ընտանեկան դաստիարակության գործելակերպի մոտավոր բնութագիրը»
6. Հայրապետյան Ս. «Սոցիալական ինստիտուտների համագործակցության ազդեցությունը երեխայի զարգացման վրա», «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հոդվածներ, 2019թ.
7. «3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպում այլընտրանքային մոդելներով», «Համագործակցություն ընտանիքի հետ»
8. Нюкомб Н. “Развития личности ребёнка”, Санкт-Петербург, 2003г.
9. Спиваковская А. С. “Психотерапия: игра, детство, семья”, ЗАО Изд-во ЭКСМО-Пресс, (464с.)-(Психология – XX века), 2002г.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԽԱՂԸ՝ ՈՐՊԵՍ Ն/ԴՊ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԻԼԻԹ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԷՄԻՆՅԱՆ ԳԱԳԻԿ

ՎԱՆԱՁՈՐ 2022թ

Բովանդակություն

Ներածություն……3

Խաղը՝ որպես ուսուցման միջոց……..…..5

Մանկական խաղերի դասակարգումը…….……..…..7

Եզրակացություն ……..…..……..……16

Օգտագործված գրական աղբյուրներ …….……17

Ներածություն

Մանկական խաղերը պետք է ուրախացնեն, զվարճացնեն, հաճելի լինեն երեխային և անպայման հարստացնեն նրա միտքը, «բան սովորեցնեն»:

Հովհաննես Թումանյան

Հետազոտության արդիականությունը.

Երեխայի հոգեկան զարգացման համար խաղը հանդիսանում է կարևոր գործոն: Խաղի արդյունքում երեխայի մոտ ձևավորվում է ինքնագիտակցությունը, վարքը, հուզական ոլորտը:

Նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում խաղը միշտ էլ եղել է առաջնային գործոն: Խաղի ընթացքում երեխաները ազատ և անկաշկանդ շփվում են հասակակիցների և մեծերի հետ, զարգանում է նրանց երևակայությունը, բանավոր խոսքը, ձեռք են բերում համախմբված աշխատելու հմտություններ, սովորում են ընկերասիրություն:

Խաղը երեխայի ամենասիրած զբաղմունքն է, որն ուղեկցում է նրան իր ողջ կյանքի ընթացքում: Խաղի յուրաքանչյուր տեսակ փոքրիկի զարգացման համար հրաշալի միջոց է: Այսպիսով՝ առանց խաղի չկա զարգացում: Ինչպես երեխան իրեն խաղի ժամանակ է դրսևորում, հիմնականում այդպես էլ կդրսևորի աշխատանքում, երբ մեծանա: Այդ պատճառով ապագա գործչի դաստիարակությունն ամենից առաջ տեղի է ունենում խաղի միջոցով [4, 34]:

Արդի կյանքում բոլոր տեսակի խաղերը պակասել են՝ իրենց տեղը զիջելով համակարգչային խաղերին: Սակայն խաղերը գերանհրաժեշտ են բոլոր երեխաների կյանքում: Լ. Ս. Վիգոնսկու կարծիքով քիչ խաղացող երեխան կորցնում է զարգացման բազում հնարավորություններ: Խաղալու համար երեխաներին շատ բան պետք չէ: Անհրաժեշտ է միջավայր, խաղալիքներ ու տարբեր տեսակի առարկաներ, և նրանց խաղը կարելի է ստացված համարել: Միշտ էլ պետք է խրախուսել երեխաների ազատ խաղերին, միաժամանակ խաղի ընթացքում հետևել երեխաների վարքին [5,9]:

Հետազոտության նպատակը՝ Ուսումնասիրել խաղը որպես ն/պ երեխաների զարգացման պայման ։

Հետազոտության խնդիրները

1. Բացահայտել խաղի կարևորությունը երեխայի զարգացման և հաղորդակցման գործընթացում
2. Ներկայացնել խաղի կարևորությունը երեխայի վարքի ինքնադրսևորման գործընթանում

Խաղը՝ որպես ուսուցման միջոց

Նախադպրոցական երեխաների համար ուսուցումը հետաքրքիր դարձնելու նպատակով պետք է ուսուցման գործընթացում ապահովվել ստեղծագործական մթնոլորտ: Այդ նպատակով անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք ցանկալի և հետաքրքիր կլինեն երեխայի համար և կունենան ուսուցողական, ճանաչողական նշանակություն և միաժամանակ կզարգացնեն երեխաների ստեղծագործական միտքը:

Այդ հնարներից լավագույնը խաղն է, որը հոգեհարազատ և սիրված է երեխաների կողմից և համարվում նրանց գործունեության հիմնական ձևը:

Երբ ուսուցումը համեմվում է խաղերով, այն երեխայի համար դառնում է ավելի հետաքրքիր, սրտամոտ և ցանկալի:

Խաղն ունի այնպիսի մի հիանալի հատկություն, որ երեխային կարող է աննկատելիորեն ընդգրկել ակտիվ ուսուցման մեջ: Օրինակ՝ ինտեգրված պարապմունք:

Եկավ մի ժամանակ, երբ COVID-ը մտավ մեր կյանք և անհրաժեշտ էր երեխաներին ծանոթացնել նրա հետ: Ես իմ պարապմունքը կազմակերպեցի այսպես. աթոռները շարեցի այնպես, որ այն նմանվի երթուղայինի: Երեխաները նստեցին աթոռների վրա, իսկ վարորդը՝ իր համապատասխան տեղում: Ներս մտավ աղջիկ երեխա: Ազատ նստատեղ չլինելու պատճառով տղաներից մեկը իր տեղը զիջեց աղջկան , այնուհետև ներս մտավ <<կնոջ դեր կատարող>> երեխա, որի գրկում կար փոքրիկ, հետո տատիկ կամ պապիկ, որոնց նույնպես տեղ զիջեցին:

Երթուղայինը կանգնում է կանգառում: Իջնում է տղաներից մեկը, տալիս է տոմսի գումարը և, վերցնելով մանրը (որի վրա նախապես քսված էր կարմիր ջրաներկ), գնում է՝ առանց ձեռքերը ախտահանելու:

Դաստիարակ.

- Տիգրան, նայիր ձեռքիդ ափի մեջ: Ի՞նչ ես տեսնում:

Տիգրան.

- Իմ ափը կարմրել է։

Դաստիարակը բոլոր երեխաներին հերթով ցույց է տալիս Տիգրանի ձեռքի ափը։ Բոլորը համոզվում են, որ այն կարմրած է։

Դաստիարակ.

- Երեխաներ, իսկ դուք գիտե՞ք, որ սա COVID-ն է՝ թագավարակը, որը ծնվել է Չինաստանի Ուհան քաղաքում։ Նա այսուհետ մեզ հետ է ապրելու։

Ցույց տվեցի նրա նկարը, որն ուներ բարի աչքեր և ընդհանրապես վախենալու չէր։

Նույնը կրկնեցինք 2-րդ ուղևորի հետ, որը տոմսի մանրը վերցնելուց հետո ախտահանվեց և նրա ձեռքի ափի մեջ ոչինչ չկար։

Դաստիարակ.

-Հասմիկ, ցույց տուր քո ձեռքի ափը։

Երեխաները տեսան Հասմիկի ձեռքի ափը և համոզվեցին, որ այն մաքուր է։ Արդյունքում երեխաները խաղի միջոցով նախ սովորեցին, որ երթուղայինում պետք է նստել լուռ կամ խոսել ցածրաձայն, հարգել աղջիկներին և մեծերին, ծանոթացան COVID-ի հետ և հասկացան, որ միշտ պետք է ախտահանվել և պայուսակներում ունենալ ալկոգել։ Թեման շարունակվեց փորձերով։ Բոլոր երեխաների ձեռքին քսեցի կարմիր ջրաներկ և ովքեր ախտահանվում էին ալկոգելով, այն մաքրվում էր, իսկ ովքեր չէին ախտահանվում ներկը չորանում էր։ Այսպիսով, եկանք եզրահանգման, որ ախտահանվելով կարելի է ոչնչացնել վիրուսը և պաշտպանված լինել։ Նկարչության պարապմունքի ժամանակ ներկեցինք թագավարակին։ Խաղի միջոցով թեման շարունակեցի օրվա երկրորդ կեսում՝ ծանոթացնելով կորոնավիրուսի ախտանշանների հետ և, թե ինչպես պետք է պաշտպանվել նրանից։

Մանկական խաղերի դասակարգումը

Մանկական խաղերը լինում են

1. Ստեղծագործական

- Ռեժիսորական
- Թատերական
- Սյուժետադերային
- Կառուցողական

2. Կանոնավոր

- Դիդակտիկ
- Շարժական

Ստեղծագործական խաղեր

Այս խաղերը հիմնականում խմբային են, խաղին մասնակցում են մի քանի երեխաներ, որոնցից յուրաքանչյուրն իր դերն ունի: Այս խաղի էական նշանակությունն այն է, որ երեխաներն իրենք են ստեղծում խաղը և հայտնվում ուրիշ մարդու կերպարի մեջ: Խաղի ընթացքում զարգանում է երեխաների երևակայությունը և ինքնուրույնությունը: Խաղի ընթացքում նախադպրոցական ստեղծագործական երևակայության զարգացման պայմաններն են.

ա. հուզական, բարյացկամ մթնոլորտի առկայություն խմբասենյակում

բ. անհրաժեշտ միջավայրի ստեղծում

գ. երեխաների ինքնուրույնության, նախաձեռնության, ազատություն ապահովում՝ դաստիարակի մանկավարժական ղեկավարման առկայությամբ [4, 111]:

- *Սյուժետադերային խաղեր*

Այս խաղերն ազատ և ինքնուրույն են: Խաղի ընթացքում մասնակիցների շփման և համատեղ ակտիվության դրսևորման պրոցեսում համագործակցության մեջ են մտնում երեխայի իրական և դերային հարաբերությունները: Այս խաղերը սկսում են առաջանալ 3-4 տարեկանում: Այս խաղերով երեխաները ընդօրինակում են մեծահասակների վարքը, նրանց դերը:

Բժիշկ-բժիշկ

Այս խաղին մասնակցում են մեկից ավելի երեխաներ: Խաղի ժամանակ ընտրում են բժիշկ, բուժքույր, հիվանդներ, շտապօգնության ավտոմեքենայի վարորդ: Բժիշկը և բուժքույրը հագնվում են համապատասխան համազգեստով, սենյակը կահավորում ենք համապատասխան իրերով և ստեղծում ենք անհրաժեշտ միջավայր: Խաղի ընթացքում բժիշկը զննում է հիվանդներին, նշանակում անում, իսկ բուժքույրը իրականացնում է բուժումը: Կարող է գրանցվել տնային կանչ: Երեխաներից մեկը զանգահարում է 1 -03, և հերթապահը գրանցում է կանչը: Այնուհետև շտապօգնության ավտոմեքենան բժշկին և բուժքրոջը հասցնում է համապատասխան հասցեով:

Խաղի նպատակը և խնդիրները.

▪ Ծանոթանալ բժշկի և բուժքրոջ մասնագիտության հետ

▪Ճշտել և ամրապնդել երեխաների գիտելիքները բժշկի և բուժքրոջ աշխատանքի մասին

▪Ծանոթանալ բժշկական մի քանի գործիքների հետ և կարողանալ ճիշտ անվանել դրանք

▪Սովորել 1-03 հեռախոսահամարից օգտվելու կանոնները խաղային իրավիճակում

▪Սովորել, որ կյանքում ամենակարևորը առողջությունն է և պետք է այն պահպանել

▪Ակտիվացնել երեխաների բառապաշարը(ներարկիչ, բուժքույր, բժիշկ և այլն)

Նույն կերպ կարող ենք խաղալ «տուն-տունիկ», «խանութ-խանութ» և այլն։ Սյուժետադերային խաղերը կարելի է իրագործել «Ծանոթացում շրջակա միջավայրին» պարապմունքների ժամանակ, երբ երեխաները շարունակում են ծանոթանալ մեծերի աշխատանքի հետ։

- ***Կառուցողական խաղեր***

Կառուցողական խաղերի ժամանակ երեխան ձեռք է բերում աշխատանքային կարողություններ և հմտություններ։ Զարգանում է երեխաների տարածական երևակայությունը, տրամաբանական մտածողությունը, մանր և միջին մոտորիկան և մարզում երևակայական մտածողությունը։ Այս խաղի ժամանակ երեխան պետք է պատկերացում ունենա, թե ինչ է ուզում կառուցել և հետո իրականացնի այն։ Կառուցում է, քանդում և նորից կառուցում։

Կառուցողական պարապմունքի ժամանակ երեխաներին տրամադրեցի կառուցողական տարբեր նյութեր (լեգոներ, կյուիզենների փայտիկներ, հաշվեձողիկներ, կոճակներ, գունավոր մատիտներ), որոնցով երեխաները կառուցեցին եղևնի։ Կառույցը ստացանք մեզ արդեն ծանոթ երեք տարբեր չափերի եռանկյունների միջոցով։

- ***Ռեժիսորական խաղեր***

Խաղն ունի մեկ դերակատար, «խաղընկերները» չունեն ցանկություններ, պահանջմունքներ, հավակնություններ, «խաղալիքներ, առարկաներ»։ Դերակատարը գործում է իր նախասիրություններով։

Օրինակ՝ Մանկապարտեզում երեխան կարող է վերցնել իր սիրած խաղալիքը և սկսել նրա հետ զրուցել, հանել ու հագցնել շորերը և երկար ժամանակ խաղալ՝ գործելով դերակատարի իր նախասիրություններով։

- ***Թատերական խաղեր***

Երեխաները խաղի ընթացքում փորձում են նմանվել հեքիաթային հերոսներին։ Թատերական խաղերը զարգացնում են երեխաների խոսքը, գեղարվեստական մտածողությունը, ստեղծագործական երևակայությունը։ Բեմականացումներին մասնակցելը հաճախ վերացնում է նաև երեխայի արտասանական թերությունները։ Օրինակ.

Ամանորյա միջոցառում

Քաջ Նազար.

-Բարև Ձեզ, շա՛տ բարի։ Երեխաներ, շատ եմ հոգնել, հազար ճանճ եմ ես կոտորել, ծառի տակ մի քիչ քնեմ մինչև նվերները բերեն

Ուստիան.

-Նազա՛ր, Նազա՛ր

Ա՛յ Նազար, վեր կաց, քո պատճառով ուշացանք ու հանդեսը չտեսանք։ Ձմեռ պապիկ, մեզ ներիր։ Նազար, վեր կաց, նայի-տես, տոնածառ է, չգիտե՞ս։

Նազար.

-Դե դհոլն էլ դու ճարի, առանց դհոլ չեմ պարի։

Ուստիան.

-Բա սա ի՞նչ է, դհոլ չի՞։ Վեր կաց, ինձ հետ պար բռնի։ Ձմեռ պապիկ, թե կարաս դու մեզ համար նվագի։

Հետո հնչում է «Վու՛յ, աման» երգը, և Նազարն ու Ուստիանը պարում են։

Կանոնավոր խաղեր

- ***Դիդակտիկ խաղեր***

Դիդակտիկ խաղերի ժամանակ երեխան պետք է արագ մտածի, համեմատի առարկաները, երևույթները, վերլուծի, համադրի դրանք և ինքնուրույն կերպով որոշակի եզրակացության հանգի։ Այս խաղերի միջոցով ընդլայնվում են երեխաների

պատկերացումները շրջապատի, կյանքի և բնության մասին։ Նրանք ծանոթանում են բնության երևույթներին։

Խաղի ժամանակ հարստանում և ակտիվանում է երեխաների բառապաշարը, զարգանում է կապակցված խոսքը, դիտունակությունը և կամային ուշադրությունը, կանոնավորվում է արտասանությունը, որոնք ապագա դպրոցականի համար խիստ կարևոր հատկություններ են [2, 63]։

Դիդակտիկ խաղերը կարելի է կիրառել բոլոր պարապմունքների ժամանակ՝ համապատասխանեցնելով երեխայի տարիքին և օրվա պարապմունքի թեմային։

Օր.՝ «Երկար», «Կարճ», «Քիչ», «Շատ» մաթեմատիկական հասկացությունները սովորելու և ամրապնդելու նպատակով կրառվել է Կյուիզենների գունավոր փայտիկներ դիդակտիկան։

Կյուիզենների գունավոր փայտիկները որպես դիդակտիկ նյութ՝ լիովին համապատասխանում են նախադպրոցականների տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման սպեցիֆիկ առանձնահատկություններին։ (Հասմիկ Միտոյան)

- Երեխաներին տալ նախապես ծանոթ կյուիզենների փայտիկներ, ապա հրահանգել գտնել երկար, հետո՝ կարճ փայտիկները։
- Երեխաներից մեկին հրահանգել վերցնել երեք սպիտակ, իսկ մյուսին՝ երկու կանաչ փայտիկներ։ Արդյունքում նրանք պետք է նշեն, թե ում փայտիկներն են ավելի շատ, իսկ ումն՝ ավելի քիչ։

Տարվա եղանակներն ամրապնդելու նպատակով երեխաներին բաժանել «Տարվա 4 եղանակները» քարտերը, ապա սեղանին դնել տարվա 4 եղանակներին բնորոշ փոքրիկ քարտեր։ Երեխան պետք է յուրաքանչյուր քարտը դնի իր համապատասխան տեղում։ Օրինակ՝ ձյան փաթիլ, տոնածառ, ձնեմարդ, ձեռնոց դնել «ձմեռ» քարտի վրա։

- Երեխաների հետ միասին թղթե արկղը նախապես երկու կողմից շրջանաձև կտրել այնպես, որ նրանց ձեռքերը անցքերից ներս մտնեն, ապա արկղի մեջ լցնել աշնան տարբեր մրգեր և բանջարեղեններ: Արկղը դնել այնպես, որ պարունակությունը տեսանելի չլինի երեխաներին: Երեխաները ձեռքերը մտցնելով շրջանաձև անցքից՝ վերցնում են որևէ մեկը, ապա շոշափելով գուշակում, թե որ միրգն է կամ բանջարեղենն, նշելով՝ կոշտ է, կլոր է, փափուկ է, մեծ է փոքր է և այդպես շարունակ:

Զարգացնող խաղեր

Երեխաների համար առաջնային և կարևոր են համարվում նաև զարգացնող խաղերը: Այս խաղերը զարգացնում են կապակցված խոսքը, բառապաշարը, ուշադրությունը, հիշողությունը:

Օրինակ՝ երեխաներին տրամադրել «Գտիր մրգերի և բանջարեղենների ստվերները» սեղանային խաղը: Այս խաղի ժամանակ երեխաների մոտ դրվում է մրգերի և բանջարեղենների ստվերներով քարտերը, իսկ դաստիարակը հերթով ցույց է տալիս մրգերը և բանջարեղենները: Ում մոտ գտնվում է համապատասխան մրգի կամ բանջարեղենի ստվերը, նա սկսում է նկարագրել տվյալ մրգին կամ բանջարեղենին (խնձոր - սա խնձոր է, աճում է ծառի վրա, այն կարմիր է, հարթ է, կլոր է, կորիզ ունի, հյութեղ է, պոչիկ ու տերև ունի) և դնում է քարտի վրա՝ իր համապատասխան տեղում:

Հրաշք պարկ-այս խաղի ժամանակ հրաշք պարկի մեջ կարող ենք լցնել և մրգեր ու բանջարեղեններ և ընտանի և վայրի կենդանիներ և տարբեր առարկաներ,որոնց հետ առնչվում են երեխաները:

Երեխաները նստում են կիսաշրջանաձև:Նրանցից յուրաքանչյուրը հերթով մոտենում է դաստիարակին և «Հրաշք պարկից» հանում է դրանցից որևէ մեկը, հետո նկարագրում է նրան:

Օրինակ՝ սա կով է, կովը ընտանի կենդանի է, մեզ տալիս է կաթ, կարագ, պանիր, յուղ և միս։ Կովը ունի կաշի, որը վերամշակում են և նրանից կարում են գոտի և պայուսակ։

- Երեխաներին տրամադրել գունավոր թղթերից նախապես պատրաստված կոշիկներ, ապա ցույց տալ , թե ինչպես են անցկացնում և կապում քուղերը, որից հետո հրահանգել կապել ինքնուրույն։ Արդյունքում երեխաները կսովորեն կապել քուղերը։
- Թափոններից (այս դեպքում հյութի շշերի գունավոր խցաններից) պատրաստել զարգացնող սեղանային խաղ։
- Պլաստմասե շշերի վերևի մասը կտրել, ապա սիլիկոնե սոսնձով հերթականությամբ սոսնձել հաստ պաստառի վրա։ Երեխաներին հրահանգել գտնել համապատասխան գույնի խցանը և պտտելով ամրացնել։

Խաղի ժամանակ զարգանում է երեխաների մանր մոտորիկան, գունազգացողությունը։

- ***Շարժական խաղեր***

Այս խաղը հիմնականում իրագործվոյմ է ֆիզկուլտուրայի պարապմունքի ժամանակ և կարևորվում է երեխայի օրվա ռեժիմի մեջ։

Շարժախաղերը կազմված են տաբեր բնույթի շարժումներից (վազք, քայլք, ցատկ, մագլցում, նետում, սողանցում և այլն)։ Խաղի ժամանակ ակտիվ շարժուն գործունեությունը մարզում է երեխայի նյարդային համակարգը։ Այս խաղի ժամանակ երեխաները գործում են միասին և կազմակերպված։ Խաղի ժամանակ երեխաները պետք է կենտրոնացնեն ուշադրությունը, ցուցաբերեն ակտիվություն, արագաշարժություն, շուտ կողմնորոշվելու կարողություն։

Խաղ-մրցույթներ

Այս խաղի ժամանակ երեխաները սովորում են հաղթել ու պարտվել։ Երեխաները բաժանվում են թիմերի, կանգնում են շարքով։Հեռվում դրված են շշեր, իսկ նրանց մոտ դույլով ջրեր։ Առաջին մասնակիցները դույլերից բաժակով ջուր են վերցնում և վազելով

հասցնում են տեղ, լցնում շշերի մեջ և հետ վերադառնալով, բաժակը փոխանցում են հաջորդ երեխային։ Այսպես շարունակում ենք, և շուտ ավարտող թիմը հայտարարում է ավարտ։ Դաստիարակը համեմատում է շշերի ջուրը, որ թիմի շշի ջուրը շատ է, նա էլ համարվում է հաղթող։

Խաղ-զվարճանք

Այս խաղերը երեխաների սիրված զբաղմունքներից են։ Այս խաղերն անցնում են ուրախ, անկաշկանդ, զարգանում է երեխաների շփման հմտությունը և ուշադրությունը։ Օրինակ՝ ամռան զբոսանքի ժամանակ վերցնել նախապես կտրված թիթեռի պատկեր, աղջկա գլուխ, ծաղկաման։ Ուղևորվել դեպի մոտակա դաշտ, որտեղ շատ դաշտային ծաղիկներ կան։ Երեխաներին հրահանգել քաղել գեղեցիկ բուրումնավետ ծաղիկներ, ապա դրանք դասավորել աղջկա գլխի վրա՝ նրան տալով մազեր։ Ծաղկամանի մեջ դնել ծաղիկներ, իսկ թիթեռին միատոն ծաղիկներով տալ գույն։

Թեմատիկ պարապմունքներ շարքից «Աշուն»

1.Թթուդրիկ

Հնչում է երաժշտություն։

Երեխաները հագնում են համապատասխան արտհագուստ։ Սեղանին դրված են թթվի համար անհրաժեշտ բանջարեղեններ՝ սխտոր, ծաղկակաղամբ, կաղամբ, կանաչ լոլիկ, վարունգ, բազուկ, գազար։ Երեխաները դաստիարակի հետ սկսում են թթուդրիկի արարողությունը՝ յուրաքանչյուր բանջարեղեն վերցնելիս նշում են տվյալ բանջարեղենի անունը և օգտակար հատկությունները։ Այնուհետև տեղավորում են համապատասխան տարայի մեջ։

Երեխաների հետ միասին բռնել շուրջպար՝ ավարտելով թթուդրիկի արարողությունը։

2.Նույն կերպ կազմակերպել նաև ավանդական «Ղափամայի» պատրաստումը։

«Ղափամա» պատրաստելու ժամանակ երեխաները հագնում են հայկական տարազ։ Հնչում է «Հ՛եյ ջան,ղափամա» երգը, դաստիարակը երեխաների հետ միասին բարձր տրամադրությամբ բռնում է շուրջպար։

Պատրաստման ժամանակ դաստիարակը ցույց է տալիս բաղադրիչները,երեխաները նշում են օգտակարությունը։

3.Ամռանը պղպջակ-շոու կազմակերպելու նպատակով երեխաների հետ միասին թափոններից՝ պլասմասե շշերից, կտրել պղպջակ արձակող «սարք»։ Այնուհետև մեծ տարայի մեջ օճառափրփուր լցնել, կտրված շշերը թափահարել նրա մեջ, շնչառական վարժություններ կատարելով պղպջակ-շոու կազմակերպել։ Խաղն անչափ ոգևորող ։

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում եկա այն եզրակացությանը, որ նախադպրոցական տարիքում խաղը երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգեկան զարգացման առումով ունի կարևոր և բացառիկ նշանակություն։

Խաղի բոլոր տեսակները յուրովի են ազդում երեխայի բնականոն զարգացման վրա։ Երեխայի զարգացման փուլում խաղի բացակայությունը նրա մոտ կարող է առաջացնել զարգացման տարբեր խնդիրներ։

Նախադպրոցականի կյանքում խաղի դերն ու նշանակությունը դիտվում է որպես նրա համակողմանի զարգացման կարևորագույն միջոց։

Խաղի միջոցով է ձևավորվում երևակայելու, ստեղծագործելու և զգացմունքներն ինքնուրույն կառավարելու ունակությունները։ Այդ ընթացքում երեխան հնարավորություն է ունենում ինքնադրսևորվելու, շփման մեջ մտնելու հասակակիցների հետ։ Խաղերը կարող են հիմք հանդիսանալ նաև հետագա աշխատանքային գործունեության զարգազման համար։

Այսպիսով ն/պ տարիքի երեխաների կյանքում խաղը լավագույն միջոցներից մեկն է նրա բնականոն զարգացումն ապահովվելու համար։

Օգտագործված գրական աղբյուրներ

1. Ամիրջանյան Յ., Սահակյան Ա., Մանկավարժություն, ուսումնական ձեռնսրկ։ Երևան 2005թ; 456 էջ։
2. Գյուլամիրյան Ջուլիետա; Խաղալով սովորնք;/ Եր.։ Զանգակ 97, 2009թ, 80 էջ։
3. Մարության Ս., Դալլաքյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, 126 էջ։
4. Միտոյան Հ, Մարության Ս., Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր։ ՀՀ ԿԳՆ, Կրթ. ազգ. ինստ-տ. 2011.- 168 էջ։
5. Սմբատյան Լ. Խաղերի և խաղ-զվարճալիների կազմակերպումը մանկապարտեզում; Երևան 2014թ։

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ – ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԿԱՏԱՐՈՂ – ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՔՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ – Մ. Գ. Թ. ԼՈՒՍԻՆԵ ՄԻՐԱԲՅԱՆ

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ I. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 5

1. 1. Շարժախաղերի դասակարգումը.....5

1.2. Շարժախաղերի դերն ու նշանակությունը ֆիզիկական զարգացման գործում 9

ԳԼՈՒԽ II. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ 14

ԳԼՈՒԽ III. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 20

Հավելված 1. 23

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՌԻԹՄԻ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ 233

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ 23

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԽԱՂԵՐ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 24

ՓՈՔՐ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐ.....24

Հավելված 2. 26

Բաց պարապմունք ֆիզկուլտուրայից ավագ խմբում.....26

Պլան-կոնսպեկտ 26

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ,,,,,,,,,,,,,,,.....28
8

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների կրթության, դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացումն ապահովելու հարցերը մեր պետության և ամբողջ աշխարհի առաջնային խնդիրներից են: Դա հասկանալի է՝ ժամանակակից հասարակությանը պետք են ստեղծագործ, ներդաշնակ զարգացած, ակտիվ ու առողջ անհատականություններ, իսկ վաղ մանկության և նախադպրոցական տարիքում ձեռք բերված առողջությունը հանդիսանում է ընդհանուր զարգացման հիմք և պահպանում է իր նշանակությունը հետագա կյանքում:

Ժամանակակից հասարակությունը մեծ պահանջներ է ներկայացնում նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատանքին, որոնք նախատեսված են երեխայի ամուր առողջության և անհատականության համակողմանի զարգացման հիմքերի նախապատրաստման համար: Չի կարելի չհամաձայնել, որ դաստիարակության գործընթացի առաջնային խնդիրներից է նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությունը, նրանց ֆիզիկական որակների զարգացումը:

Նոր ուղիների որոնումը, նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական որակների զարգացման խնդիրը լուծելը, որպես ֆիզիկական պատրաստվածության հիմք, կապված է նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական որակների զարգացման գործընթացի բարելավման օրինաչափությունների, մեթոդիկայի և մեթոդական պայմանների ուսումնասիրության անհրաժեշտության հետ:

Հայտնի է, որ ինչպես նախադպրոցական, այնպես էլ բոլոր տարիքի երեխաների կյանքում ֆիզիկական զարգացման և դաստիարակության գործընթացում խաղն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Խաղը մարդկային գործունեության ամենահետաքրքիր ձևերից մեկն է: Այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում: Խաղի հիմնախնդիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և այլոց:

Ժամանակակից աշխարհում երեխաները քիչ են շարժվում հեռուստացույցին և համակարգչային խաղերին կապված լինելու պատճառով: Մեր ժամանակներում երեխաների շրջանում համակարգչային կախվածությանը վերաբերող հարցերը

դառնում են էլ ավելի արդիական։ Ծնողները և մանկավարժներն ավելի ու ավելի են մտահոգվում, թե ինչպես, որտեղ և երբ երեխաներին տալ ակտիվ և ստեղծագործ խաղալու հնարավորություն։ Իսկ նման խաղերի նկատմամբ երեխաների հետաքրքրությունը պահպանելու համար նրանք պետք է ճանաչեն դրանք, իսկ դաստիարակների խնդիրն է օգնել նրանց այս հարցում։ Եվ որքան էլ ուսումնասիրված լինի խաղային գործունեությունը այն միևնույնն է արդիական է, քանի որ յուրաքանչյուր երեխա խաղի մեջ ինքնադրսևորվում է ուրույն ձևով։ Վերընշված բոլոր հանգամանքները ապացուցում են սույն հետազոտության **արդիականությունը**։

Աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել հիշյալ թեմայով գիտական, գիտամեթոդական գրականությունը և այլոց փորձը, կատարել եզրակացություն։

Նպատակից ելնելով առաջ ենք քաշել հետևյալ **խնդիրները**.

- Նկարագրել շարժախաղերի տեսակները, ներկայացնել առանձնահատկություններն ու դերը նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական զարգացման գործում,
- Բացահայտել նախադպրոցական տարիքի երեխաների հետ կազմակերպվող շարժախաղերին ներկայացվող պահանջները և կիրառման մեթոդիկան,
- Իրականացնել հետազոտություն ցույց տալ շարժախաղերի դերը և տեղը երեխաների ֆիզակական զարգացման գործում։

Աշխատանքը բաղկացած է 30 տպագիր էջից։

ԳԼՈՒԽ I. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ և ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Շարժախաղերի դասակարգումը

Խաղն առաջնային դեր ունի նախադպրոցական երեխայի զարգացման, դաստիարակության, աշխարհընկալման գործում: Դաստիարակը խաղի բովանդակությունը ճիշտ օգտագործելու դեպքում կարող է հասնել երեխայի մեջ դրական և կարևոր որակների, հատկությունների ձևավորմանն ու դրանց հետագա զարգացմանը:

Մանկավարժական բազմամյա փորձը միշտ էլ փաստել է, որ խաղը ցանկացած գործունեության աշխուժության և առողջության աղբյուր է, անձի ձևավորման և զարգացման միջոց: Ընդհանուր առմամբ, խաղը երեխայի ակտիվ գործունեության տեսակ է, որը սովորաբար շրջապատող աշխարհի, մեծերի գործողությունների և փոխհարաբերությունների ընդօրինակումն է: Մանկական խաղերն իրենց ծագումով, բնույթով և բովանդակությամբ սոցիալական են, կրում են ազգային, ժողովրդական բնույթ և փոխանցվում են սերնդեսերունդ: Դրանցում ձևավորվում և դրսևորվում է աշխարհը ճանաչելու, նրա վրա ներգործելու երեխայի պահանջը, ինչպես նաև զարգանում են նրա կամային, ֆիզիկական հատկությունները:

Համաձայն մասնագիտական գրականության վերլուծության՝ խաղերն իրենց բովանդակությամբ բաժանվում են **շարժախաղերի** և **սպորտային** խաղերի [10; 3]:

Մանկավարժության մեջ տարբերում են **մանիպուլացված** (մինչև 3 տարեկանների), **սյուժետային**, **դիդակտիկ շարժական** մանկական խաղեր:

Մսուրային տարիքի երեխաներին խաղի ընթացքում սովորեցնում են առարկաներով գործողություններ կատարել, ծանոթացնում են դրանց ձևին, գույնին, նշանակությանը և այլն:

Փորձը ցույց է տվել, որ ավագ խմբի երեխաների համար առավել մատչելի են առանց սյուժեի պարզ խաղերը, ինչպես նաև սյուժետային շարժախաղերը: Շատ հետազոտողներ սյուժետային և առանց սյուժեի խաղերը կիրառել են որպես որակների զարգացման մեթոդ: Այսպիսով՝ Վ.Ա. Կովալյովը երեխաների շարժումների արագությունը զարգացնելու գործընթացում հենվել է շարժախաղերի վրա [5, 153]:

Նախադպրոցականների սյուժետային խաղերի համար հաճախ փոքրածավալ թեմաներ են ընտրվում գեղարվեստական գրքերից, ռադիո և հեռուստատեսային հաղորդումներից, մանկական ու ժողովրդական հեքիաթներից: Խաղն սկսվում է դերերի բաշխումով: Երեխաներին տրվում է կենդանու, մեքենայի, ծառի և այլ իրի դեր, խաղի մեջ են մտնում նաև կենցաղային առարկաներ, խաղալիքներ, գործիքներ: Խաղային իրադրությունը նպաստում է երեխաների գիտելիքների, մտածողության ու երևակայության զարգացմանը: Երեխաներին դերի հետ միասին տրվում են խաղալիքներ, օգտագործվում է նաև տիկնիկային թատրոնը:

Երեխաների, նախադպրոցականների մտավոր դաստիարակության գործուն միջոցներից են դիդակտիկ խաղերը, որոնց նպատակն է նոր գիտելիքներ հաղորդել առարկաների, նրանց դասակարգման, նշանակության, հատկությունների, աշխատանքի տեսակների, բնության երևույթների և այլնի մասին [4]: Լայն տարածում ունեն առանց խաղալիքի, բանավոր մանկական խաղերը՝ հանելուկները, վանկախաղերը և այլն: Հաճախ դիդակտիկ մանկական խաղերը կրում են ճանաչողական-մարզական խաղ-վարժությունների և խաղ-մրցույթների բնույթ:

Մի շարք խաղեր ունեն կանոններ: 4-5 տարեկանները խաղալով մրցում են վազքում, թռիչքում և այլ ձևերում: 5-6 տարեկանների մոտ շարժուն խաղերը ստանում են մարզական բնույթ: Շարժախեղերը, ինչպես և այլ խաղի տեսակները հանդիսանում են երեխաների կյանքի կազմակերպման ձև, ունեն մեծ նշանակություն փոխհարաբերությունների դաստիարակության մեջ: Այս խաղերում մասնկցում են ընդհանուր հետքրքրվածությամբ միավորված խմբեր:

Տարբերակվում են **շարժուն խաղերի ևս երեք** հիմնական տեսակներ, իրենց ենթատեսակներով. անհատական կամ միայնակ, ազատ կամ կամային, կոլեկտիվ կամ խմբակային:

Անհատական կամ միայնակ շարժախաղերը ստեղծվում, կազմակերպվում և վարվում են մի երեխայի կողմից: Այս դեպքում երեխան կարող է ինքը որոշել խաղի իմաստը և բովանդակությունը, ժամանակային կանոնները, որոնք խաղի ընթացքում կարող են նույն երեխայի կողմից ձևափոխվել նպատակին առավել էֆեկտիվ հասնելու համար:

Նախադպրոցական տարիքի երեխաները նախընտրում են այսպես կոչված, **ազատ կամ կամային** խաղերը: Դրանք կայանում են նրանում, որ երեխաներն իրենք են հնարում են խաղը նպատակի առկայության և դրան հասնելու պարտադիր պայմանով: Նման խաղերը հիմնականում ունենում են սյուժետային բնույթ համապատասխան սյուժեի դերերի բաշխման, և հաճախ մանկավարժների կողմից օգտագործվում են հոգեբանական խնդիրներն ընդլայնելու համար:

Կոլեկտիվ կամ խմբակային շարժախաղերն այդպես են անվանվում խաղում միաժամանակ կոնկրետ քանակառյամբ խաղացողների մասնակցության պատճառով: Խաղի այս ձևն ավելի տարածված է երեխաների մեջ և առանձնանում է մեծ բազմազանությամբ: Կոլեկտիվ խաղերն իրենց հերթին ստորաբաժանվում են **թիմային** և **ոչ թիմիային** խաղերի:

Ոչ թիմային խաղերն անցկացվում են **խաղավարի** և **առանց խաղավարի**: Գործառութային առումով **առանց խաղավարի** ոչ թիմային խաղերին հատուկ է, պայմանավորված խաղի կանոներով, խաղացողների միջև անհատական մրցակցությունը խաղահրապարակում կամ խաղացողների շարքերում իրենց տեղի հաստատման համար, ինչպես նաև խմբակային գործողություններում կանոնների հետևման անհատական մուտեցումը: **Խաղավարի** առկայության դեպում առաջանում է «հակամարտություն» խաղավարի հետ:

Թիմային խաղերը ստորաբաժանվում են այնպիսի խաղերի, որոնց ընթացքում, համապատասխան խաղի բովանդակության և կանոնների, մասնակիցները **ֆիզիկական շփման մեջ չեն մտնում** մրցակցի հետ, և այնպիսի խաղերի, որնցում առկա է **ֆիզիկական հակամարտությունը** մասնակից մրցակիցների հետ:

Մրցակիցների միջև **առանց ֆիզիկան շփման** խաղերում մասնակիցների գործառութային առումով առկա է համատեղ պայքարի ցուցաբերում իր թիմի համար ֆիզիկական փոխօգնության և նեցուկ հանսիսանալու ձևով:

Հակամարտող թիմերի մասնակիցների միջև **ֆիզիկական փոխազդեցությամբ** շարժուն խաղերը մասնակիցների գործառութային առումով ենթադրում են անհատական պայքար իր թիմի համար, պայքար իր թիմի հետաքրքրությունների համար, բայց համատեղ պայքարի գործողությունների ամբողջության

առկայությամբ. թիմակիցներին նեցուկ հանդիսանալը և միմիյանց ֆիզիկական օգնությունը:

Մրցակցի հետ ֆիզիկական շփմամբ շարժուն խաղեր կան, որոնք ունեն միջնորդավորված բնույթ: Օրինակ, պարանի քաշումը, որտեղ խաղը և նրա մասնակցիներին ընտրելիս անպայմանորեն հարկավոր է խուսափել պոտենցիալ վնասվածքների վտանգ պարունակող խաղերից:

Մի շարք թիմային խաղեր ունեն **գրեթե սպորտային** բնույթ, որոնց բովանդակության մեջ մտնում են հասարակ տարրեր, կոնկրետ սպորտային խաղերի գործելաձևեր, որոնք չեն պահանջում հատուկ ուղղվածության տեխնիկական նախապատրաստություն: Սպորտային խաղերը հստակ կանոններ ունեցող խաղերն են, որոնց անցկացման համար պահանջվում են հատուկ հրապարակներ՝ տարածքներ, և կահավորում: Եթե իրական շարժախաղերը տարբերվում են շարժումների պարզությամբ, ապա սպորտային խաղերին բնութագրական է շարժումների բարդ տեխնիկան և խաղի ընթացքում դրսևորվող վարքի որոշակի մարտավարությունը: Սպորտային խաղերն անցկացվում են հատուկ կանոններով և խթանում են խաղացողների տարրական տեխնիկական և ֆիզիկական պատրաստվածությունը: Սպորտային խաղերն իրենցից ներկայացնում են շարժուն խաղերի բարձրագույն ձև՝ որպես արդյունավետ միջոց և մեթոդ ֆիզիկական դաստիարակության:

Երաժշտական շարժուն խաղերում օգտագործվում են երկու տեսակի երաժշտություններ: Առաջինը հիմնված է շարժախաղի սյուժետային կողմի երաժշտական ձևակերպման վրա, ինչպես օրինակ, հեքիաթային ժանրը: Երկրորդ ձևը հիմնված է երաժշտության օգտագործման վրա, այն օգտագործելով որպես երաժշտական ֆոն շարժախաղի բովանդակության համար, որը նպատակ ունի առավել բարձրացնել զգացմունքայնությունը:

Այսպիսով՝ վերոնշյալն ապացուցում է շարժախաղերի ներուժային հնարավորությունները նախադպրոցականների դաստիարակության և ֆիզիկական զարգացման գործընթացում:

1.2. Շարժախաղերի դերն ու նշանակությունը ֆիզիկական զարգացման գործում

Բազմաթիվ հետազոտություններով հաստատված է, որ անցկացվող խաղերով ուղեկցվող ֆիզիկական վարժությունները ամրապնդում են երեխաների առողջությունը, թույլ են տալիս ապահովել սովորողների ֆիզիկական զարգացման և պատրաստվածության անհրաժեշտ մակարդակը:

Շարժախաղերը նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված խաղերի մեծ մասն են կազմում: Դրանք շատ տարբեր են ինչպես իրենց շարժողական և խաղային գործողություններով, այնպես էլ սյուժեով, կազմակերպման և անցկացման ձևով և, որպես կանոն, իրականացվում են առավել բնական շարժումներով: Այս ամենը շարժախաղը դարձնում է շարժողական ոլորտի զարգացման և տարածության մեջ կողմնորոշվելու շատ մատչելի միջոց: Շարժախաղերը զարգացնում են մանուկների ֆիզիկական ուժը, նշանառությունը, ճարպկությունը, արագ կողմնորոշվելու ու որոշում ընդունելու կարողությունը:

Շարժախաղը նախադպրոցական տարիքի երեխայի համակողմանի դաստիրակության կարևոր միջոցներից մեկն է և դրա առանձնահատկությունն ազդեցության կոմպլեկտայնությունն է երեխայի օրգանիզմի և նրա անձի բոլոր կողմերի վրա: Շարժուն խաղը երեխայի բարդ զգացմունքային գործողությունն է՝ հիմնված շարժումների և կանոնների առկայության վրա, որն ուղղված է լուծելու շարժողական խնդիրները:

Ֆիզիկական դաստիարակության գիտության հիմնադիրներից Վ.Վ. Գորինևսկին խաղերը դիտարկել է որպես մանկական տարիքի և դպրոցական կյանքի վարժությունների կարևոր տարատեսակ: Շարժախաղերը համարելով երեխայի բազմակողմանի զարգացման միջոց և տարիքային առաջատար գործունեության հիմնական ձև՝ նա մատնանշել է դրանց կարևորագույն դերը կամային որակների դաստիարակության և անձի ձևավորման գործում: Նա իր աշխատություններում բացառիկ նշանակություն էր տալիս շարժախաղերին՝ որպես ակտիվ հանգստի միջոցի, և փաստում դրանց բարենպաստ ազդեցությունը մարդու աշխատունակության վրա [10, 35]:

Շարժախաղերի տեսության հիմնադիրներից Վ.Գ. Մարցը, շարժախաղերը համարելով բարոյական և ֆիզիկական դաստիարակության միջոց, համոզված էր, որ

դրանք պետք է ներգրավվեն դպրոցական ուսուցման ծրագրերում: Իր դասական գիտական ժառանգության մեջ բացահայտելով նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների խաղի անատոմիական, ֆիզիոլոգիական, հոգեբանական և մանկավարժական բնութագիրը՝ Վ. Մարցը բարձրացնում է այնպիսի հարցեր, որոնք կապված են խաղի կազմակերպման և անցկացման միջոցների, մոտեցումների ընտրության և մշակման հետ [9, 123]:

Պ.Ֆ. Լեսգաֆտը խաղը դիտում էր որպես «վարժություն, որի միջոցով երեխան պատրաստվում է կյանքի»: Նա մեծ ուշադրություն էր դարձնում շարժախաղերին և գնահատում էր դրանք որպես ընդհանուր առաջադրանքներին հասնելու երեխաների փորձ, որի շնորհիվ, ըստ կանոնների, պահպանվում են խաղում ներգրավված յուրաքանչյուր մասնակցի սահմանափակ իրավունքները [7, 122]: Ա.Պ. Ռուդիկը նշել է, որ շարժախաղերի կազմակերպումն ու անցկացումը, բովանդակությունն ու ծանրաբեռնվածությունը պետք է համապատասխանեն սովորողների տարիքին, նրանց պատրաստվածությանը, հնարավորություններին [11]:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը, կարելի է ընդգծել, որ շարժախաղերն իրենց բնական շարժումներով, բարձր հուզականությամբ, երեխայի դաստիարակության և զարգացման վրա դրական ներգործությամբ մատչելի են բոլոր տարիքի երեխաների համար և հիմնավորված են լայնորեն կիրառելու ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ արտադասարանական պարապմունքների ժամանակ:

Երեխաների դաստիարակության հայտնի մասնագետ Ե.Ա. Արկինը երեխայի զարգացման և դաստիարակության գործընթացում առաջնակարգ դեր էր հատկացնում խաղին: Նա իր աշխատության մեջ խաղը դիտում էր որպես երեխայի զարգացման հզոր միջոց՝ դաստիարակության «հիմնական լծակ»: Նա նաև կապել է երեխայի «աղքատ» խաղային գործունեությունը խոսքի հետ [2, 175]: Այսպիսով՝ խաղը, որպես տարիքային առաջատար գործունեության հիմնական և կարևորագույն ձև, կարող է դառնալ նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության այնպիսի միջոց, որը կնախապատրաստի դպրոցական ուսուցմանը:

Շարժախաղերը ներառված են ինչպես նախադպրոցական հաստատությունների, այնպես էլ հանրակրթական դպրոցների տարբեր ծրագրերում, իսկ շարժախաղերի

կազմակերպման և անցկացման խնդիրը միշտ էլ եղել է շատ հայ մանկավարժների, հոգեբանների, գիտնականների, ֆիզկուլտուրայի և սպորտի հատուկ մասնագետների ուշադրության կենտրոնում: Երեխայի բազմակողմանի զարգացման և դաստիարակության միջոց հանդիսացող շարժախաղերի խնդիրն այժմ էլ շարունակում է մնալ գիտնականների, դպրոցների մանկավարժների, հոգեբանների, ուսուցիչների և դաստիարակների ուշադրության կենտրոնում:

Վ.Ի. Լյախն իր հետազոտություններում ցույց է տվել, որ հատուկ ընտրված կամ մշակված շարժախաղերը երեխաների և դեռահասների հստակության, արագաշարժության, համաձայնեցված շարժումների և ճկունության զարգացման լավագույն միջոց են համարվում, քանի որ դրանք մեծացնում են կատարվող շարժումների ծավալը և ուժգնությունը [8, 3]:

Շարժախաղերը խաղային գործունեության այնպիսի ձև են, որտեղ ցայտուն կերպով արտահայտվում է շարժման դերը. դրանք կազմված են տարբեր բնույթի շարժումներից (քայլք, վազք, ցատք, մագլցում և այլն): Շարժուն խաղերն ազդում են երեխայի բնավորության դրական գծերի, բարոյական որակների, գեղագիտական զգացումների ձևավորման վրա (ընկերասիրություն, համաձայնություն, վճռականություն, գեղեցիկը տեսնելու ունակություն՝ խաղում, շրջապատում, ընկերական փոխհարաբերություններում): Խաղում ակտիվ շարժուն գործունեությունը մարզում է երեխայի նյարդային համակարգը:

Շարժախաղերում բնորոշ է երեխայի շարժումների ինքնուրույն օգտագործումը, նոր շարժումների ստեղծումը: Խաղերը հնարավորություն են տալիս երեխաներին մտնել դերի մեջ, կատարել նմանողական շարժումներ տվյալ խաղի ընթացքում: Երեխաները կարողանում են կատարել մտքերի փոխանակություն, արտասանել կարճ ոտանավորներ:

Խաղերն իրենց բովանդակությամբ և ձևով մատչելի են բոլոր տարիքի երեխաների համար: Նրանք խաղում են տարբեր բովանդակության, շարժունակության և իրենց պահում բնական, առանց լարվածության, անկեղծորեն դրսևորում բնավորության դրական և բացասական գծերը, դա էլ իր հերթին հնարավորություն է տալիս դաստիարակին ծանոթանալու յուրաքանչյուր երեխայի անհատական

առանձնահատկություններին և ներգործելու դրանց վրա՝ տալով որոշակի դրական ուղղվածություն:

Շարժախաղերում երեխաները գործում են միասին և կազմակերպված: Այդ ամենը դաստիարակում է երեխայի վարքը՝ կարգապահություն, ինքնատիրապետում: Խաղերում նա պետք է զսպի իրեն, օգնի ընկերոջը, հաղթահարի որոշ դժվարություններ: Խաղը՝հատկապես շարժախաղը, որը իրենից ներկայացնում է ակտիվություն, մեծ նշանակություն ունի երեխայի կյանքում:

Չեխ մանկավարժ Յա.Ա.Կոմենսկին բարձր էր գնահատում «շարժման մեջ գտնվող» շարժախաղերի դերը առողջական, կրթական և դաստիարակչական խնդիրների լուծման համար:

Շարժախաղերը հանդիսանում են շարժողական ընունակությունների համալիր կատարելագործման կարևորագույն միջոց: Շարժախաղերի բովանդակությամբ և ձևով կանխորոշվում են հետևյալ մեթոդական յուրահատկությունները՝ պատկերավորությունը, գործողությունների ինքնուրույնությունը, մրցակցային պահի առկայությունը, ֆունկցիոնալ և շարժողական հնարավորությունների մոբիլիզացումը, շարժումների բնականությունը, խիստ կանոնակարգման բացակայությունը, խաղային իրավիճակի հանկարծակի փոփոխությունը, նախաձեռնության և ստեղծագործության դրսևորումները, խաղի ընթացքում որոշակի դերերի կատարումը, շարժողական գործողությունների ընտրողականությունը, բարձր հուզականությունը:

Շարժախաղերի երեք կարևոր հատկություններն են.

1. Շարժախաղը հանդիսանում է տարբեր տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության շատ կարևոր միջոց, որտեղ իրականացվում է գործնականում հայտնի խաղային մեթոդը:

2. Ֆիզիկական դաստիարակության պարապմունքներում խաղերը նպաստում են տարբեր շարժական հմտությունների և ընդունակությունների մշակմանը:

3. Խաղերի միջոցով երեխաները ճանաչում են իրենց շրջապատող աշխարհը:

Շարժախաղերը տարբեր տարիքային ժամանակաշրջանում ունեն իրենց հոգեմանկավարժական ուղղվածությունն ու նշանակությունը: Դրանք ուղղված են կենսականորեն անհրաժեշտ շարժողական ընդունակությունների ու հմտությունների

զարգացմանը, ինչպես նաև նպաստում են վճռականության, համարձակության, հնարամտության, ընկերասիրության, բարձր բարոյականության դաստիարակմանը։

Նախադպրոցական տարիքում ձևավորվում են կենսական կարևոր հենքային շարժողական կարողություններն ու հմտությունները, ստեղծվում է շարժողական փորձի հիմքը, որի վրա հետագայում ձևավորվում է երեխայի և մեծահասակի շարժողական գործողությունը։ Ընդ որում, մասնագետները առաջարկում են երեխաների ուսուցման և դաստիարակության կազմակերպման գործընթացում հենվել շարժողական հմտությունների և ընդունակությունների ձևավորման օրինաչափությունների իմացության վրա։

Հուզականությունը խաղի կարևոր հատկանիշն է։ Խաղի ընթացքում երեխաները ստանալով մեծ բավականություն, դրսևորում են ազատ ստեղծագործական գործունեություն, որին մասնակցում են երեխայի հոգեկան ամենատարբեր բաղադրիչները՝ երևակայությունը, մտածողությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, հույզը, մկանային լարվածությունը։ Դրանով էլ կարևորվում է խաղերի նշանակալից ազդեցությունը երեխայի անձնավորության՝ նրա կամքի, բարոյական կերպարի վար։ Առավելապես մեծ է շարժախաղերի դերն ու նշանակությունը անձի ձևավորման և ֆիզիկական զարգացման գործընթացում։

ԳԼՈՒԽ II. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Բոլոր տարիքի երխաների համար մեծ պահանջմունք է խաղը, որի մեջ շատ կարևոր են շարժուն խաղերը ոչ միայն ֆիզիկական շարժողական ունակությունները զարգացնելու, այլև երխայի անհատականության բազմակողմանի դաստիարակության համար: Շարժախաղերի ճիշտ կիրառումը և ճիշտ մեթոդի ընտրությունը նպաստում է երեխայի անհատական ունակությունների բացահայտմանը, օգնում են նրան դաստիարակել առողջ, կենսախինդ, ակտիվ:

Յուրաքանչյուր անգամ խաղը պլանավորելիս դաստիարակը պետք է լավ պատկերացնի այն խնդիրները, որոնք դրել են իրենց առջև, ինչպիսի ունակություններ ու կարողություններ պետք է զարգացնել և ամրապնդել խաղի միջոցով, որովհետև մի խաղում երեխաները տիրապետում են վազքին, մյուսում՝ ցատկին, մի խաղում զարգանում է զսպվածությունը, համարձակությունը, մեկ այլում՝ ճարպկությունն ու արագավազությունը: [1, 12]

Փոքրերի խմբերի երեխաների տեսադաշտը փոքր է, ուշադրությունը կայուն չէ, այդ իսկ պատճառով նրանց համար խորհուրդ են տրվում խաղեր հասարակ և մատչելի սյուժեով, որտեղ գործող անձիք լավ հայտնի են երեխաներին առօրյա կյանքից (շուն, կատու) կամ որոնց հետ նրանց հեշտությամբ կարելի է ծանոթացնել՝ օգտագործելով նկարներ, խաղալիքներ (արջ, աղվես): Այս խաղերում կանոնները շատ հասարակ են և անմիջականորեն կապված են սյուժեին:

Տարիքային այս խմբերում մեծ տեղ են զբաղեցնում խաղային վարժությունները, որոնց մեջ մտնում են հասարակ շարժողական վարժությունները, ինչպես օրինակ, բռնել գնդակը, զանգը տալ և այլն: Այս շարժումները երեխաներին ծանոթ են և հասանելի (վազք, քայլք և այլն):

Մեծ հետաքրքրություն են առաջացնում փոքրիկների մոտ շարժախաղերը, որոնց սյուժեում կատարվում են իրենց ծանոթ վարժությունները: Մի խաղում երեխաները պետք է կարողանան շարժվել իրար ետևից կամ կոնկրետ ուղղությամբ, վարժությունն սկսել և վերջացնել կոնկրետ ազդանշանով, մյուսներում ինքնուրույն շարվել, շրջան կազմել և այլն: Սա մեծ նշանակություն ունի երեխաների՝ շարժումները կոորդինացնել կարողանալու համար, կարողանալ տեղորոշվել, նպաստում է ինքնուրույնության և ակտիվության դաստիարակմանը:

Խաղի անցկացման նախապատրաստումը: Անհրաժեշտ է նախօրոք ծանոթանալ խաղի և/կամ վարժության պայմաններին, առարկաներին, որոնք պետք է օգտագործվեն Խաղում: Կանխավ նախապատրաստվածությունը որևէ գործողության ապահովում է երեխայի առավել ուրախ և ակտիվ մասնակցությունը, քանի որ նա սկսում է հասկանալ տվյալ խաղի/ վարժության իմաստն ու հիմնական կանոնները: Սա էական ազդեցություն է թողնում շարժողական ունակությունների և ընդունակությունների զարգացման մեջ: Այս իսկ պատճառով համապատասխան մանակավարժը պետք է մանրամասն նախապատրաստվի անցկացվող խաղին. հավաքել անհրաժեշտ առարկաներ, մտածել՝ որտեղ կլինեն տնակները և այլն, ով կխաղա գլխավոր դերը և այլ նման բաներ: Բացի այդ մանկավարժը պետք է լավ իմանա խաղի բովանդակությունը, ընթացքը, կանոնները և տեքստը:

Խաղի կանոնների կատարումը երեխաների մոտ զարգացնում է համակարգվածությունը, կազմակերպվածությունը, կարգապահությունը, անձնական գործողությունների ուղղումը կոլեկտիվ խնդիրներին, դրանց զսպումը, իմաստավորված գործելը [12, 185]: Այս տարիքի երխաների նկատմամբ հիմնական պահանջը գործել ազդանշանին համաձայն, իրար ետևից շարժվել, վարժությունը կատարելուց հետո վերադառլն իր տեղը: Բացի այդ խաղի մեջ երեխան հաճախ պետք է կոնկրետ ձևով գործի, օրինակ, գնդակը գցել երկու ձեռքով, սողալ չորեքթաթ և այլն: Քանի որ փոքրիկները բավականին դանդաղ են ըմբռնում մանրուքները, այդ իսկ պատճառով դաստիարակը կարող է նույն խաղը մի քանի անգամ կրկնել: Նպատակահարմար է խաղը կրկնել 2-3 անգամ, ապա երեխաներին նոր խաղ առաջարկել կամ էլ իրենց իմացածից, իսկ հետո նորից վերադառնալ նույնին: Արդյունքում երեխաների մոտ ինքնուրույն կատարողականությունը մեծանում է, որն առվել մեծ հրճվանք է պարգևում նրանց և խաղի նկատմամբ հետաքրքրությունն առավել է մեծացնում: Խաղի կրկնության դեպքում, մանկավարժը պետք է ի նկատի ունենա յուրաքանչյուր երեխայի շարժողունակությունը և այն ուղղորդել (ժամանակին կանգնեցնել մեկին, մյուսին ակտիվացնել, երրորդին համապատասխան դեր տալ և այլն), պետք է ձգտել նրան,

որ երեխաները սիրեն շարժախաղերը: Հանգստի ընթացքում կարելի է նրանց հետ զրուցել, օրինակ, ճշտել խաղի կանոնները, կրկնել բանաստեղծությունը:

Շարժուն խաղերի դեպքում, հատկապես եթե ունեն որոշակի թեկուզ մանր սպրոտային բնույթ, պետք է հաշվի առնել ֆիզիկական ծանրաբեռնավածությունը: Պատք է սկսել ոչ բարդ խաղից/ վարժությունից, իսկ ապա ակտիվորեն ներքաշել դրա մեջ երեխաներին:

Խաղի վերահսկումը: 3 տարեկան երեխայի համար մեծ նշանակություն ունի անընդհատ շփումը մեծահասակների հետ: Փոքրիկները հաճույքով խաղում են, երբ մեծահասակները ակտիվ են, զգացմունքային, հետաքրքրություն են ցուցաբերում խաղերի նկատմամբ և իրենք էլ մասնակցում են: Դաստիարակի ուրախ և մեղմ ձայնը ներքաշում է երեխաներին խաղի մեջ և ուրախ տրամադրություն է հաղորդում: Նման դեպքում փոքրիկները ուշադիր լսում են դաստիարակին, կատարում են նրա պահանջները, կրկնում են խաղերը:

Դաստիարակը հաճախ պետք է իր կողմից խաղի ղեկավարումը զուգորդի գլխավոր դերակատարումը, օրինակ ցույց տա, հուշի խաղի ընթացքը:

Խաղի բացատրումը: Խաղի բացատրումը շատ պատասխանատու պահ է, որն էլ ազդում է խաղի ընթացքի վրա: Փոքրիկներին խաղը պետք է բացատրել զգացմունքայնորեն, յուրաքանչյուր պերսոնաժի հատուկ բնութագրիչները ինտոնացիայով ընգծել: Օրինակ, նապաստակների մասին խոսելիս կարելի է խոսել մեղմ, քնքուշ ձայնով, իսկ գայլը, որն ուզում է նապաստակներին բռնել, ցածր և զգուշավոր, զգուշություն հաղորդելու համար:

Խաղի բացատրման ժամանակ պետք է հստակորեն ընդգծել ազդանշանները, որոնցով երեխաներն իրենց գործողությունները փոխելու են: Եթե որպես ազդանաշան ծառայում է տեքստի վերջին բառը, ապա այն պետք է ընդգծել ինտոնացիայով:

Անընդհատ խոսակցական շփումը մեծահասկների հետ փոքրիկներին մեծ բերկրանք է բերում, բացի այդ այն զարգացնում է նրանց խոսքը:

Խաղի ընտրությունը: Խաղն ընտրելիս, կարևոր է ի նկատի ունենալ պայմանները, որտեղ է անցկացվելու խաղը: Բաց տարածքում անցկացնելու դեպքում պետք է հաշվի առնել տարվա եղանակը, եղանակային պայմանները և անրհաժեշտ հագուստը: Ըստ այդմ էլ ընտրել ճիշտ շարժախաղեր և դրանց մեթոդիկան:

Նախադպրոցական տարիքի երեխաների շարժախաղերի մեթոդական հիմքն ուղղված է դաստիարակելու զգացմունքային, իր հնարավորություններին հապատասխան գիտակցված գործող և տարաբնույթ շարժողական ունակություններ ունեցող երեխայի:

Արդյունավետ շարժախաղի անցկացման համար պետք է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները: Շարժուն խաղի ընտրությունը պետք է պայմանավորված լինի երեխաների ֆիզիկական և մտավոր ունակություններով, բացի այդ անհատական մոտեցում ցուցաբերվի բոլոր առումներով նաև չմոռանալ անցկացման տեղանքի պայմանները:

Սյուժետային խաղի դեպքում, հաշվի պետք է առնել որքանով է երեխան ընբռնում իր դերը: Հասկանալի դարձնելու համար մանկավարժն անցկացնում է նախապատրաստական աշխատանքեր՝ կարդում է գեղարվեստական գործեր, կազմակերպում է բնության դիտում, մարդկանց գործունեությունը տարբեր մասնագիտություններում, ցուցադրում է մուլտֆիլմեր և այլն:

Ուշադրություն պետք դարձվի նաև խաղում առկա ատրիբուտներին, որոնք պատրաստվում են երեխաների հետ միասին՝ կախված տարիքից:

Խաղի ընտրությունը: Խաղերը ընտրվում են համապատասխան դաստիարակության խնդիրների, երեխաների տարիքային անռանձնահատկությունների, նրանց առողջական վիճակի, պատրաստվածության: Ի նկատի են առնվում խաղի անցկացման վայրը, օրվա ռեժիմը, տարվա եղանակը և այլն: Պետք է հաշվի առնել նաև երեխաների կազմակերպվածության և կարգապահության աստիճանը, եթե այն թերանում է, ապա հարկավոր է կազմակերպել քիչ շարժուն խաղեր:

Հետաքրքրության առաջացումը խաղի նկատմամբ: Մինչև խաղին անցնելը նախ պետք է երեխաների մոտ հետաքրքրվածություն առաջացնել խաղի նկատմամբ: Այդ դեպքում նրանք ավելի լավ են սովորում կանոնները, ավելի լավ են կատարում շարժումները: Օրինակ՝ կարելի է կարդալ բանաստեղծություն տվյալ թեմայից, ցույց տալ նկարներ, առարկաներ, պատմել համապատասխան պատմություն:

Խաղացողների կազմակերպումը, խաղի բացատրումը: Կարևոր է երեխաներին ճիշտ տեղավորել: Նախադպրոցական տարիքի երեխաներին հիմնականում

կանգնեցնում են այնպես, ինչպես պահանջում է խաղը: Իսկ դաստիարակը պետք է կանգնի այնպես, որ երեխաները նրան բոլոր կողմերից տեսնեն:

Այս խմբի երեխաներին բացատրությունները, որպես կանոն, արվում են խաղի ընթացքում: Եթե երխաներն արդեն ծանոթ են կանոններին, ապա նրանց ևս պետք է ներգրավել բացատրման մեջ: Բացտրությունը պետք է լինի կարճ, հստակ և զգացմունքային: Շարժումները կարելի ցույց տալ թե՛ մինչև խաղի սկսելը, թե՛ ընթացքում: Բացատրմանը հաճախ զուգորդում է նաև ցույց տալը:

Խաղի հաջող անցկացումը կապված է դերերի ճիշտ բաշխումից, այդ իսկ պատճառով կարևոր է հաշվի առնել երեխաների անհատական-անձնային առանձնահատկությունները՝ ամաչկոտություն, աշխույժ և այլն:

Խաղի սկզբում դաստիարակն ինքն է իր վրա վերցնում գլխավոր դերը, իսկ ապա, երբ երխաները ինտեգրվում և հարմարվում են խաղին, իրենց է հանձնարարում: Դեռ բացատրման ժամակ ընտրում է վարողին և մնացածին կանգնեցնում է իրենց տեղերում, կարող է օգտագործել նաև պատահականության սկզբունքը:

Խաղի անցկացումը և ղեկավարումը: Խաղը ղեկավարում է դաստիարակը և նրա դերակատարումը կախված է խաղի բնույթից, խմբի տարիքային և քանակային թվից, մասնակիցների վարքագծից. որքան փոքր են՝ այնքան մեծ է դաստիարակի դերակատարումը խաղի վարման մեջ: Դաստիարակը հրահանգներ տալիս է տեսողական կամ ձայնային ազդանշանների օգնությամբ: Վերջինները չպետք է լինեն շատ բարձր:

Դաստիարակը ուղղորդում է ինչպես խաղի ընթացքում, այնպես էլ այն կրկնելուց առաջ և գնահատում է երեխաների վարքագիծը: Սակայն պետք չէ չարաշահել դիտողությունները, որոնք կարող են իջեցնել դրական էմոցիաները: Դիտողությունենները ավելի լավ է անել դրական ձևով, պահպանելով ուրախ տրամադրությունը, խրախուսելով ճարպկությունը, հնարամտությունը, հաստատակամությունը, և նման հատկությունների միջոցով երեխաների մոտ ավելի է բարձրանում շարժումը ճիշտ կատարելու ցանկությունը:

Դաստիարակը ղեկավարում է նաև ֆիզիկական ծանրաբեռնվածության աստիճանը, որը պետք է ավելանա աստիճանաբար:

Խաղի ավարտը և արդյունքների ամփոփումը: Նախադպրոցական տարիքի երախաների խմբերում դաստիարակը շարժախաղն ավարտում է մեկ այլ ավելի հանգիստ բնույթի խաղի անցնելու առաջարկով:

Խաղերը ավելի բազմազան և հետաքրքիր դարձնելու համար դրանք կարելի է աստիճանաբար բարդեցնել, որտեղ երեխան պետք է կատարի ավելի բարդ գործողություններ: Նման տարբերակի կիրառումը ևս կատարելագործում է երեխաների շարժումները, զարգանում է ուշադրությունը և տարածական կարողությունները:

Շարժախաղերը, այսպիսով, կարող են հանդիսանալ դաստիարակչական հրաշալի միջոց, երբ դաստիարակը պահպանում է պարբերականության և հաջորդականության սկզբունքները, կրկնում են դրանք առավել հետաքրքիր ձևերով:

ԳԼՈՒԽ III. ՇԱՐԺԱԽԱՂԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Շարժուն խաղերի հիմնական խնդիրն է զարգացնել երեխայի կամքը, ուշադրությունը, շարժողական ակտիվությունը, արագ կողմնորոշվելու, դժվարությունները հաղթահարելու ընդունակություններ, ընկերներին օգնելու, համագործակցելու կարողությունները, համարձակությունը, արագաշարժությունը, ճկունությունը: Խնդրի արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է տիրապետել երեխաների տարիքային հոգեբանական և ֆիզիոլոգիական զարգացումներին, համապատասխան որոնց էլ ներկայացվում են պահանջներ, որոնք լրացնելու համար օգտագործվում են համապատասխան մեթոդներ:

3-4 տարեկան երեխան դրսևորում է խոշոր շարժումներով պայմանավորված հիմնական հմտությունները՝ ցուցաբերելով հավասարակշռության, կորդինացիայի զարգացնող ունակություններ՝ կանգնելու, քայլելու, վազքի, ցատկելու, մագլցելու, աստիճաններով իջնելու և բարձրանալու ժամանակ: Ցատկում է մեկ ոտքի վրա 2 և ավելի անգամ: Քայլում է՝ շրջանցելով խոչընդոտները: Քայլում է ոտքերի մատների վրա: Վազում է առնվազն 8 մետր տարածություն: Ինքնուրույն բարձրանում է աստիճաններով՝ հերթագայելով ոտքերը: Մեծահասակի օգնությամբ իջնում է աստիճաններով՝ հերթագայելով ոտքերը: Վարում է եռանիվ հեծանիվ: Նետում է գնդակն ընկերոջը ճիշտ ուղղությամբ: Ֆուտբոլ խաղալիս, ոտքը ետ տանելով, հարվածում է գնդակին:

Երեխան ցուցաբերելով ձեռքի և մատների շարժումների կառավարման տարբեր հմտություններ՝ կատարում է պարզ գործողություններ փոքր առարկաներով (թերրթում է գիրքը էջ առ էջ, հավաքում է գլուխկոտրուկներ, պտտելով կափարիչը՝ բացում և փակում է շիշը, խոշոր կամ միջին չափսի ուլունքներով հավաքում է շղթա): Կառուցում է միջին բարդության շինություններ (խորանարդիկներից կառուցում է կամրջակ, պատ): Ծեփում է պարզ՝ կլոր, տափակ, պարանաձև առարկաներ: Ցուցաբերում է մկրատով կտրտելու պարզ հմտություններ: Երեխան դրսևորում է նկարելու հմտություններ (բռնում է մատիտը ձեռքի առաջին երեք մատներով, արտանկարում է երկրաչափական պատկերներ): Կատարում է ինքնասպասարկման առօրյա գործողություններ (արձակում և կոճկում է մեծ

կոճակները, արձակում է կոշիկի քուղերը, ինքնուրույն օգտվում է սպասքի որոշ տեսակներից):

4-5 տարեկան երեխան ցատկում է մեկ ոտքի վրա առնվազն 5 անգամ: Քայլում է ոտնաթաթերը դնելով կրունկ-թաթ հաջորդականությամբ: Խաղում է ակտիվ, շարժուն խաղեր, ցատկում է փոսերի և իր մարմնի չափսերին համապատասխան այլ արգելքների վրայով, թռչկոտելով առաջ է շարժվում: Ինքնուրույն բարձրանում և իջնում է աստիճաններով: Գնդակը հարվածում է գետնին, այնուհետև բռնում երկու ձեռքով: Երեխան ցուցաբերում է ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ (կառուցողական առարկաներով կառուցում է 10 և ավելի կտորներից բաղկացած շինություններ ՝ աշտարակ, կամուրջ): Աշխատում է մանր առարկաներով (միջին կամ փոքր չափսի ուլունքներով հավաքում է վզնոց): Երեխան ցուցաբերում է նկարչական և գրի պարզագույն հմտություններ (արտանկարում է տառեր, թվեր, երկրաչափական պատկերներ, մարմնի մասեր):

Ըստ այդմ առկան են շարժուն խաղերի հետևյալ տեսակները՝ «Ծուղրուղու», «Զիլինա», «Խնոցի-հարոցի», «Ալիս պալիս», «Աղջիկ փախցնոցի», «Թզուկներ և հսկաներ», «Գործնագործ» և այլն: Ազգային շարժախաղեր՝ «Օղակների միջով», «Վերցրու գնդակը», «Բասկետբոլ», «Գնդակը պարկում», «Ծափով վազել», «Նստարանների վրայով» և այլն: Մարզական խաղեր՝ «Ափ ու պտղունց», «Ափ ու բռունցք», «Քարկտիկ», «Կոտոշ-կոտոշ», «Ծափոցիկ», «Թռավ-թռավ», «Մատ ճանաչել», «Մատնամիջի կամ միջնամատի»: Ձեռնախաղեր:

Այս խաղերը կարելի է կրառել, որպես օրինակ 3-5 տարեկանների դեպում հետևյալ նպատակների համար.

3-4 տարեկանների համար ոտքերի մկանների զարգացման համար՝ «Թաքնվել-երևալ», «Ոտքի բարձրացում», «Կարճ և երկար ոտքերը»: «Թռչունները թափահարում են թևերը», «Ճոճանակ», «Գնացք», «Գրկել Մայրիկին», որոնք նպաստում են ձեռքերի և ուսագոտու մկանների զարգացմանը: «Քամին ճոճում է ծառերը», «Թաշկինակի փոխանցում», «Թաքցնել գլուխը», «Ստուգել շոգեքարշի անիվները», «Հեծանիվ», «Նավակ»: Որոնք նպաստում են իրանի զարգացմանը:

4-5 տարեկան երեխաների համար նպատակահարմար են հետևյալ շարժախաղերը՝ «Որսորդը և նապաստակները», «Մկան թակարդ», «Անտուն

նապաստակը», որոնք զարգացնում են ցատկելու, վազելու, հավասարակշռությունը պահպանելու կարողությունները, ամրանում են ջլերը, ոտքերի մկանները: Մարզական խաղերից՝ «Ով ավելի լավ կցատկի», «Յոթ քար», «Գնդակը նետիր օղակի մեջ», «Ով ավելի արագ օղակը կգլորի մինչև դրոշակը»: Մարզական խաղերը նպաստում են վազելու, մագլցելու կարողությունների ամրապնդմանը, որոնք ձևավորում են երեխայի մոտ ճարպկություն, արագաշարժություն, ճկունություն, արագ կողմնորոշվելու կարողություն: Ազգային խաղերից՝ «Թզուկներ և հսկաներ», «Գործնագործ», «Ծուղրուղու», «Աղջիկ փախցնոցի» և այլն:

Ընդհանուր առմամբ, խաղը պետք է բավարարի տվյալ տարիքի երեխաների հետաքրքրությունը: Ամեն մի տարիքի համար խաղ ընտրելիս պետք է ելնել մանկավարժական ընդհանուր սկզբունքներից, աստիճանաբար բարդացնելով՝ հեշտից անցնել դժվարին, պարզից՝ ավելի բարդի: Խաղը պետք է լինի մատչելի տվյալ տարիքի ամեն մի երեխայի համար՝ իր կանոնների բարդությամբ, ծավալով ու գործողությամբ:

Հավելված 1.

ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՌԻԹՄԻ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ

«Մենք զինվորներ ենք»

Մասնակիցները կանգնում են զույգերով: Դաստիարակի հաշվի տակ (ծափեր) յուրաքանչյուր զույգը փորձում է ուսուցչի կողքով այնպես անցնել, ինչպես քայլում են զինվորները (կտրուկ քայլեր, գլուխը ուղիղ, լայն թափահարելով ձեռքերը): Հաղթող զույգը դառնում է առաջատար:

«Քայլում ենք գլխարկներով»

Մասնակիցերը կանգնած են: Ըստ «Հագնել գլխարկները» հրահանգի՝ նրանք «գլխարկը» դնում են գլխին (150-200 գ. ավազով պարկ): Դաստիարակը ստուգում է երեխաների կեցվածքը և քայլքի ազդանշան տալիս: Երեխաները պետք է քայլեն լայն, ազատ քայլերով՝ պահպանելով ճիշտ կեցվածք: Հաղթում է նա, ում «գլխարկը» ոչ մի անգամ չի ընկում, և նա, ով կեցվածքը չի շեղում, իսկ ձեռքերի և ոտքերի շարժումները կատարվում են լավ ամպլիտուդով:

ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԽԱՂԵՐ

«Կարողացիր լսել»

Խաղի մասնակիցները գծով մեկական կանգնում են: Հերթով երեխաները մոտենում են 10-20 մ. հեռավորությամբ և ըստ ազդանշանի կատարում են դաստիարակի առաջադրանքը (քայլք թաթերի վրա, քայլք՝ ծնկները վեր բարձրացնելով և այլն): Նշվում են այն երեխաները, ովքեր առաջադրանքը կատարել են հստակ, գեղեցիկ, ճիշտ: Վերահսկվում է կեցվածքը և առաջադրանքի կատարման արագությունը:

«Անցիր պարանի վրայով»

Ճանապարհի լայնությամբ երկու-երեք տեղով ձգված են պարաններ (հատակից 10-15 սմ բարձր): Դաստիարակի հրահանգով երեխաները հերթով պետք է անցնեն ճանապարհը՝ անցնելով պարանների վրայով: Մինչև ձգված պարանին հասնելը երկու-

երեք քայլի վրա տրվում է ազդանշանը, և երեխաները կողմնորոշվելով պետք է անցնեն պարանի վրայով ու շարունակեն իրենց ճանապարհը: Ստուգվում է լսողությամբ կողմնորոշվելու հստակությունը, քայլվածքը և կեցվածքը: Հաղթում է նա, ով ճիշտ կողմնորոշվելով՝ անսխալ անցնում է տարածությունը՝ պահպանելով լավ կեցվածք:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԽԱՂԵՐ ԵՎ ԽԱՂԱՅԻՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Ով ավելի երկար կկանգնի մի ոտքի վրա»

Մասնակիցները հերթականությամբ մի ոտքի վրա ընդունում են որոշակի դիրք: Ժամանակը որոշվում է վայրկենաչափով: Հաղթում է մի ոտքի վրա առավել երկար կանգնողը:

«Կեցվածք ընդունիր»

Արագ քայլքից կամ վազքից հետո առաջադրանք է տրվում որոշակի դիրք ընդունել, օրինակ՝ «կանգնել մի ոտքի վրա, մյուսը՝ ծալված կամ պարզած կողք»: Հաղթում է նա, ով կարողանում է 10 վայրկյան կանգնել այդ դիրքով և չկորցնել հավասարակշռությունը:

«Անձրև է գալիս»

Մասնակիցները կանգնում են հատակին գծված շրջանների մեջ: Խաղավարը երեխաներին շրջանից դուրս է հրավիրում զբոսնելու: «Անձրև է գալիս» հրահանգը լսելով՝ թաթերի վրա արագ քայլելով պետք է զբաղեցնեն ցանկացած շրջան: Շրջանից դուրս մնացողը կամ հավասարակշռությունը կորցնողը խաղից դուրս է գալիս:

«Կանգնի՛ր» Խաղի մասնակիցները դահլիճում կամ խաղահրապարակում ազատ քայլում են, վազում են: «Կանգնի՛ր» հրահանգով բոլոր երեխաները կանգնում են այն դիրքում, ինչպես կային (մի ոտքի վրա, կիսանստած կամ թեքված և այլն): Հավասարակշռություն չպահող երեխան դուրս է գալիս խաղից:

ՓՈՔՐ ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԽԱՂԵՐ

Փուչիկ

Սկզբում խաղի մեջ ընդգրկում են ոչ մեծ թվով երեխաներ: Տեքստը պետք է արտասանել դանդաղ, հասկանալի:Երեխաները բռնում են միմյանց ձեռք, շրջան կազմում և արտասանում.

Դե փքվիր իմ փուչիկ,

Էլ մի մնա դու պստիկ,

Փուչիկ դու շատ չփքվես,

Թե չե հնկարծ կպայթես:

Երեխաները աստիճանաբար շրջանը մեծացնում են, կանգնում այնքան ժամանակ, քանի դեռ դաստիարակը չի ասել «Փուչիկը պայթեց»: Այդ ազդանշանով երեխաները թողնում են ձեռքերը, կատարում կքանիստ և ասում. «Բում»: Հետո բռնելով միմյանց ձեռքերը աստիճանաբար շրջանը փոքրացնում են ասելով՝.

Մեր փուչիկը փոքրացավ

Փոքրիկ կծիկ նա դարձավ:

Խաղի նպատակն է՝. սովորեցնել շրջան կազմել, շրջանը կարողանալ մեծացնել, շրջանը կարողանալ փոքրացնլ, շարժումները համաձայնեցնել արտասանությանը (տեքստի ռիթմին):

Մկան թակարդ

Խաղի կանոնները.

1.Ձեռքերը իջեցնել կարելի է միայն դաստիարակի «հոպ» ազդանշանով:

2.Երբ թակարդը փակ է, «մկներին» չի թույլատրվում շրջանից դուրս գալ կամ ճեղքել շրջանը:

Մեթոդական ցուցումները.

1.Դաստիարակը հետևում է, որպեսզի երեխաները տեքստը արտասանեն պարզ, չաղավաղեն բառերը:

2.Պետք է խաղի մեջ ներգրավել ճարպիկ «մկներին», որոնք ոչ մի անգամ չեն մնացել թակարդում:

3.Այս խաղը դաստիարակում է զսպվածություն, ճարպկություն, շարժումների համաձայնեցում:

4.Երեխաները վարժվում են արագ վազելու, կքանստելու մեջ, կարողանում են կազմել շրջան և քայլել շրջանով: Խաղը նպաստում է նաև խոսքի զարգացմանը:

Հավելված 2.

Բաց պարապմունք ֆիզկուլտուրայից ավագ խմբում

Պլան-կոնսպեկտ

Թեմա «Մենք առողջ ենք հոգեպես և ֆիզիկապես»

Նպատակը՝

- առաջացնել հետաքրքրություն պարապմունքի նկատմամբ,
- մշակել ճիշտ կեցվախք ավազե պարկերի օգնությամբ,
- խթանել երեխաների շարժողական ակտիվությունը՝ ընդհանուր զարգացմանը նպաստող վարժությունների միջոցով (փայտիկով),
- ամրապնդել հեռացատկ կատարելու կարողությունը և հավասարակշռությունը պահելու ունակությունը՝ ֆիտնես գնդակի օգնությամբ,
- ստեղծել ուրախ մթնոլորտ խաղի միջոցով, դաստիարակել մարդկային այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ ազնվությունը, գիտակցված կարգապահությունը, ընկերասիրությունը, միևնույն ժամանակ՝ արագաշարժությունն ու ճարպկությունը,
- ամրապնդել կանոնները ընկալելու և դրանք ճիշտ դործելու կարողությունը։

Անհրաժեշտ գույք և պարագաներ.

- մարմնամարզական փայտիկներ (երեխաների թվով),
- 2 մեխ ֆիտնես գնդակ,
- 1 դափ,
- ավազե փոքրիկ պարկեր (երեխաների թվով)։

Պարապմունքի ընթացքը.

Ներգրավիչ մաս։ Շարվել մեկ շարքով, քայլել թաթերի վրա, քայլել անկյունագծով, քայլել կից քայլերով՝ ավազե պարկերը գլխներին դրված, վերցնել փայտիկները և կազմել եռյակներ։

Հիմնական մաս.

Վարժ. 1. - ԵԴ՝ կանգնել՝ ոտքերը մի կողմ զատած, ձեռքերը ցած, փայտիկը բռնած ուսերի լայնությամբ։ 1-2 հաշվին փայտիկը բարձրացնել առաջ և վեր, նայել

փայտիկին, 3-4 հաշվինփայտիկը իջեցնել ցած, ընդունել ելման դրություն (կրկնել 6 անգամ)։

Վարժ. 2. – ԵԴ՝ նույնը։ 1 հաշվին իրանով դառնալ աջ, փայտիկը առաջ, 2 հաշվին ուղղվել, ընդունել ելման դրություն, 3 հաշվին դառնալ ձախ՝ փայտիկը առաջ, 4 հաշվին ուղղվել ելման դրություն (կրկնել 6 անգամ)։

Վարժ. 3. - ԵԴ՝ ոտքերը հիմնական կանգ, ձեռքերը վեր՝ փայտը հորիզոնական բռնած։ 1 հաշվին բարձրացնել ծնկում ծալված աջ ոտքը, փայտիկը իջեցնել ծնկին, 2 հաշվին ընդունել ելման դրություն։ Նույնը կատարել ոտքով (կրկնել 6 – 8 անգամ)։

Վարժ. 4. - ԵԴ՝ հիմնական կանգ, ձեռքերը ցած՝ փայտիկը բռնած։ 1 հաշվին կատարել կքանիստ, փայտիկը դնել հատակին, 2 հածվին ուղղվել, ծափ տալ գլխավերևում, 3 հաշվին կքանստել, վերցնել փայտիկը, 4 հաշվին ընդունել ելման դրություն (կրկնել 6 անգամ)։

Բաժանվել 2 խմբի, կատարել հեռացատկեր ֆիտնես գնդակի օգնությամբ։

Կանոնը՝ նստած գնդակի վրա, ցատկելով հասնել վերջնակետին՝ պտտելով հետ գալ, գնդակը հանձնել ընկերոջը։

Խաղալ «Ով շուտ կհասնի դափին» խաղը։

Խաղի կանոններն են՝ շրջանի կենտրոնում կանգնած երեխան զարկում է դափին՝ պատկերելով երաժշտության ռիթմիկ պատկերը։ Հետո շրջանաձև ցատկեր է անում։ Երաժշտության դադարից հետո միաժամանակ կանգնում է։ Որ երեխայի վրա վերջանում է երաժշտությունը, այդ երեխաները շրջանից դուրս շրջանաձև վազում են հակառակ ուղղությամբ։ Ով ավելի շուտ է հասնում դափով երեխայի մոտ, ձեռքով հարվածում է դափին և հաղթում։ Խաղը շարունակում է հաղթող երեխան (խաղալ 3-4 անգամ)։

Եզրափակիչ մաս։ Հանգիստ քայլք միմյանց հետևից։

Այս շարժախաղը հնարավորություն տվեց երեխաներին դրսևորել նախաձեռնողականություն, ակտիվություն, բացահայտել սեփական անձնավորության ձևավորման ներքին ռեզերվները։ խաղի կանոններին ենթարկվելը՝ երեխայի համար առավելագույն բավականություն ստանալու ուղղի է։ Զարգանում է իրավիճակը ըմբռնելու կարողություն, մտքի ճկունություն, հիշողություն, կամք, մկանների լարում, ինքնուրույն դրսևորվելու և հաղորդակցվելու կարողություն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ուսումնասիրելով գիտական գրականություն և հիմնվելով սեփական փորձի վրա, եկանք հետևյալ եզրակացությունների.

Ինչպես ն/ոիմ է Էլկոնինը, ֆիզիկական դաստիարակության հիմնական նպատակը առողջացնող, զարգացնող, կրթող և դաստիարակող խնդիրների լուծման մեջ է: Ժամանակակից «համացանցային» աշխարհում երեխայի առողթությանը, շարժունությանը և ֆիզիկական զարգացմանը պետք է միտված լինի նախակրթարանների գործունեությունը [13, 354]:

Շարժախաղերը խաղային գործունեության այնպիսի ձև են, որտեղ ցայտուն կերպով արտահայտվում է շարժման դերն ու ֆիզիկական զարգացման նախադրյալները: Նրանք կազմված են տարբեր բնույթի ֆիզիկական շարժումներից (քայլք, վազք, ցատք, մագլցում և այլն): Բացի ֆիզիկական զարգացումը, շարժախաղերն ազդում են նաև երեխայի բնավորության դրական գծերի, բարոյական որակների, գեղագիտական զգացումների ձևավորման վրա (ընկերասիրություն, համաձայնություն, վճռականություն, գեղեցիկը տեսնելու ունակություն՝ խաղում, շրջապատում, ընկերական փոխհարաբերություններում): Խաղում ակտիվ շարժուն գործունեությունը մարզում է երեխայի նյարդային համակարգը:

Շարժախաղերում բնորոշ է երեխայի շարժումների ինքնուրույն օգտագործումը, նոր շարժումների ստեղծումը: Խաղերը հնարավորություն են տալիս երեխաներին մտնել դերի մեջ, կատարել նմանողական շարժումներ տվյալ խաղի ընթացքում: Երեխաները կարողանում են կատարել մտքերի փոխանակություն, արտասանել կարճ ոտանավորներ:

Խաղերն իրենց բովանդակությամբ և ձևով մատչելի են բոլոր տարիքի երեխաների համար: Նրանք խաղում են տարբեր բովանդակության, շարժունակության և իրենց պահում բնական, առանց լարվածության, անկեղծորեն դրսևորում բնավորության դրական և բացասական գծերը:

Վաղ տարիքի երեխաների համար շարժախաղերը հնարավորություն են տալիս զարգացնելու ունկնդրելու, շոշափելու, ճանաչելու, տարբերելու առարկաները ունակությունները: Շարժախաղի ընթացքում ձեռք բերած գիտելիքների օգտագործման կարողությունը դառնում է մտավոր զարգացման գլխավոր ցուցանիշներից մեկը, երեխային սովորեցնում է գործնականում կիրառել ստացած գիտելիքները: Շարժախաղերը սովորեցնում են տարբերել առարկաների ձևը, մեծությունը և գույնը: Շարժումները զարգանում են սողանցում կատարելով, գնդակը գլորելով, մագլցելով սանդուղքի վրա, ծափերով, ոտքերի շարժումներով և այլն:

Ի վերջո ֆիզիկական զարգացման գործընթացում իր կարևորագույն դերակատարումն ունի շարժախաղը, որը դրականորեն նպաստում է երեխաների ոչ միայն ֆիզիկական, այլ նաև ներդաշնակ և հմակառողմանի դաստիարակմանը և զարգացմանը: Շարժախաղերի կիրառումը երեխաների առողջության ամրապնդման գրավականն է և դրանց ներմուծումը կրթության և դաստիարակության ընդհանուր համակարգում խիստ անհրաժեշտ է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առաքելյան Ռ.Շարժախաղեր. - Երևան, 2009, - 177 էջ:
2. Аркин Е.А. Дошкольный возраст. - М., 1948.
3. Кенеман А.В., Осокина Т.И. Детские народные подвижные игры. - М., 1995. - 224 с.
4. Коротков И.М. Подвижные игры в занятиях спортом. - М., 1971. -120 с.
5. Коротков И.М. Подвижные игры в школе. - М., 1979. -183 с.
6. Ковалев В.Д., Голомазов В.А., Кераминас С.А. и др. Спортивные игры. М., 1988. -304 с.
7. Лесгафт П.Ф. Избранные труды. – М., 1987. -374 с.
8. Лях В.И., Мейксон Г.Б. Соблюдая основополагающие принципы // Физ. культура в школе. - М., 1993. № 1. С. 2–7.
9. Марц В.Г. Беседы по методике и теории игры. – М., 1925. -204 с.
10. Паженская М.А. Валентин Владиславович Гориневский, его роль и значение в развитии теории физического воспитания. - М., 1957. -72 с.
11. Рудик П. А. Игры детей и их педагогическое значение. – М., 1948. - 64 с.
12. Хухлаева Д.В. Методика физического воспитания в дошкольных учреждениях: Учеб. для учащихся пед. уч-щ по специальности. – М., 1984. – 208 с.
13. Эльконин Д.Б. Психическое развитие в детских возрастах. - М., 1997. – 416 с.
14. Яковлев В.Г., Ратников В.П. Подвижные игры: Пособие для студентов. - М., 1977. -143 с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՅԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ*

ԿԱՏԱՐՈՂ՝ *ԼՈՒՍԻՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*

ՂԵԿԱՎԱՐ՝ *Գ. ԷՄԻՆՅԱՆ*

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ----------3

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԽԱՂԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ----------5

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ----------6

ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ----------8

ԳԼՈՒԽ.2. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ---------- 10

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ----------12

ԿԱՆՈՆՈՎ ԽԱՂԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ----------14

ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ----------16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ----------20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ----------22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ նախադպրոցական տարիքի երեխայի առաջատար գործունեությունը խաղն է: Այն համարվում է առաջատար, քանի որ խաղի միջոցով տեղի են ունենում երեխայի հոգեկանի զարգացումը, ուսուցումն ու դաստիարակությունը: Խաղում դրսևորվում է երեխայի վերաբերմունքը շրջապատող աշխարհի, մարդկանց, առարկաների և երևույթների նկատմամբ: Երեխայի անհանգստությունը, վախերը, չիրականացած ցանկությունները նույնպես դրսևորվում են նրա խաղերում: Խաղը նպաստում է նախադպրոցականի ճանաչողական, հուզակամային և բարոյական զարգացմանը, նորմերի յուրացմանը, բառապաշարի հարստացմանը, հաղորդակցական հմտությունների ձևավորմանը: Կարելի է ասել, որ երեխայի և՛ ֆիզիկական, և՛ հոգեկան առանձնահատկությունները, ինչպես նաև նրա ընդունակություններն ու հոգեկան հակազդումները խորապես պայմանավորված են խաղի բնույթով: Երեխաների անհատական առանձնահատկությունները և բնավորության գծերը վառ արտահայտվում են խաղի բնույթի և այն դերի միջոցով, որը իր վրա վերցնում է երեխան ընդհանուր խաղերում:

Թեմայի արդիականությունը որոշվում է ժամանակակից երեխաների խաղային գործունեությունը ուսումնասիրելու անհրաժեշտությամբ և դրա ազդեցությունը նրանց հուզական դժվարությունները հաղթահարելու վրա՝ նախադպրոցական կրթության համարժեք ռազմավարություն մշակելու համար: Մինչ օրս մանկական խաղի առանձնահատկությունների վերաբերյալ մեծ թվով ուսումնասիրություններ են հրապարակվել: Այնուամենայնիվ, դրանք բնույթով ավելի մանկավարժական ուղղվածություն ունեն՝ միտված խաղային գործունեության օրինաչափություններին և կիրառվում են կրթական նպատակներով: Հատկանշական է նաև, որ կրթօջախներում առավել ուսումնասիրված են նախադպրոցական տարիքի երեխաների խաղերը: Ժամանակակից մանկավարժական տեսության մեջ խաղը համարվում է որպես նախադպրոցական տարիքի երեխայի գործունեության առաջատար ձև: Խաղի առաջատար դիրքը որոշվում է ոչ թե այն ժամանակի քանակով, որը երեխան նվիրում է դրան, այլ այն փաստով, որ այն բավարարում է նրա հիմնական կարիքները: Խաղի

հիմքում ծագում և զարգանում են գործունեության այլ տեսակներ, որը առավելագույն չափով նպաստում է մտավոր զարգացմանը, կամայականության զարգացմանը:

Հետազոտության **նպատակն է.** ուսումնասիրել խաղը՝ որպես նախադպրոցականի կյանքի կազմակերպման և գործունեության առաջատար ձև:

Հետազոտության **խնդիրներն են՝**

- Ներկայացնել տարբեր մանկավարժների և հոգեբանների կատարած վերլուծությունները խաղի տեսության մասին:
- Ուսումնասիրել խաղի բնութագրումը որպես նախադպրոցականի կյանքի կազմակերպման և գործունեության առաջատար ձև:
- Ներկայացնել ստեղծագործական խաղերի բովանդակությունն ու կառուցվածքը:

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1.1.ԽԱՂԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքի այս հատվածում կփորձեմ հակիրճ ներկայացնել խաղ երևույթի նկատմամբ տարբեր հոտազոտողների վերաբերմունքն ու բնութագրումները: Ինչպես նշում է անվանի գիտնական Յ. Հայզինգան, խաղն ավելի հին է, քան մշակույթը, քանի որ մշակույթը, ինչքան էլ որ թերի լինի այս սահմանումն ի հայտ է եկել մարդկային հասարակության հետ, մինչդեռ կենդանիների մոտ խաղն առկա էր դեռ վաղուց՝ առանց մարդու միջամտության: Հայզինգան իր «Homo ludens» աշխատության մեջ խաղը դիտարկում է տարբեր տեսանկյուններից, բայց հիմանական շեշտը դնում է հետևյալ խնդիրների վրա՝

1. Խաղը, որպես մշակույթի արտացոլման ինքնատիպ դրսևորում:

2. Խաղը, որպես կենսընթացի բաղկացուցիչ՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը:

3.Պատմական զարգացման ընթացքում խաղի վերածումը մշակութային արժեքի: [1; էջ 6]:

20-րդ դարի 30-ական թվականներին Պ. Պ. Բլոնսկին ապացուցեց, որ «խաղ» անվանումը միայն ընդհանուր անուն է երեխայի գործունեության բազմազան տեսակները բնութագրելու համար: Նա ասում էր, որ ընդհանուր առմամբ «խաղ» գոյություն չունի, այսինքն՝ չկա գործունեության այնպիսի տեսակ, որը կհամապատասխանի այս գաղափարին, քանի որ «խաղ»-ը հենց մեծահասակների պատկերացումն է, մինչդեռ երեխայի համար ամեն ինչ «լուրջ է»: [3; էջ 157-159]:

Ի հակադրություն այս մտքի՝ Դ. Բ. Էլկոնինը, որը խաղի հոգեբանական տեսություններից մեկի հիմնադիրն էր, ասում էր, որ «խաղը պետք է դիտարկել, որպես բացարձակ յուրահատուկ և ինքնուրույն գործունեություն, այլ ոչ թե հավաքական հասկացություն, որը միավորում է երեխաների գործունեության բոլոր տեսակները»: [7; էջ 199]: Նա առաջարկեց տարբերակել խաղի սյուժեն և բովանդակությունը: Եթե սյուժեն արտացոլում է սոցիալական իրականության այն տարածքը, որը երեխաները վերարտադրում են իրենց խաղում, ապա

բովանդակությունն այն է, ինչ վերարտադրվում է որպես մարդկային հարաբերությունների կենտրոնական պահ, դրանց մեջ ներթափանցման խորությունը: Հենց խաղի բովանդակությունն է արտահայտում խաղային գործունեության զարգացման մակարդակը: Էլկոնին, ամբողջ նախադպրոցական տարիքը պտտվում է, կարծես իր կենտրոնի, մեծահասակի, նրա գործառույթների, նրա առաջադրանքների շուրջ: Չափահաս մարդն այստեղ հանդես է գալիս որպես սոցիալական գործառույթների կրող սոցիալական հարաբերությունների համակարգում (չափահասը հայր է, բժիշկ, վարորդ և այլն): Էլկոնինը զարգացման այս սոցիալական իրավիճակի հակասությունը տեսնում էր նրանում, որ երեխան հասարակության անդամ է, նա չի կարող ապրել հասարակությունից դուրս, նրա հիմնական կարիքը շրջապատի մարդկանց հետ ապրելն է, բայց նա չի կարող դա իրականացնել, քանի որ երեխայի կյանքն անցնում է միջնորդավորված պայմաններում, այլ ոչ թե աշխարհի հետ անմիջական շփման:

Ռուս հետազոտող Ի. Մորոզովը խաղերը դասակարգել է ըստ ձևաբանական կառուցվածքի, և գտնում է, որ խաղային ձևերը անձի սոցիալական ադապտացիայի և տարբեր սոցիալական խմբերում անհատի ներգրավվածության և դաստիարակության միջոց են: [6; էջ 10]:

Ընդհանրացնելով կարող եմ ասել, որ խաղը զարդարում և համալրում է կյանքը, և անհրաժեշտ է որպես անհատի կենսաբանական գործառույթ, իսկ հասարակությանն անհրաժեշտ է իր պարունակած իմաստով, նշանակությամբ, արտահայտչական արժեքներով, հոգևոր և սոցիալական կապերի ստեղծմամբ, այսինքն՝ որպես մշակութային գործառույթ իրականացնող:

1.2. ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խաղը մարդկային գործունեության անենահետաքրքիր ձևերից մեկն է, այն ծագում է մանկության շրջանում և ուղեկցում մարդուն ողջ կյանքի ընթացքում:

Խաղի հիմնախնդիրը մշտապես հետաքրքրել է ոչ միայն հոգեբաններին և մանկավարժներին, այլև փիլիսոփաներին, հասարակագետներին, ազգագրագետներին, կենսաբաններին և հոգեթերապևտներին:

Քննարկելով խաղային գործունեությունը տարբեր տեսանկյուններից գիտնականները միահամուռ նշում են, որ խաղը մարդկային մշակութային համակարգի ուրույն և անբաժանելի մասն է:

Խաղը նախադպրոցականի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է և նրա հետագա զարգայման հիմնական գրավականը: Միավորելով խաղային գործունեության սուբյեկտիվ արժեքը և զարգացնող օբյեկտիվ նշանակությունը՝ կարելի է եզրակացնել, որ խաղը նախադպրոցական տարիքի երեխաների կյանքի և գործունեության կազմակերպման ամենանահարմար ձևն է: Համոզվելու համար նշվածում, փորձենք մանրամասն քննարկել խաղային գործունեության հիմնական առանձնահատկությունները:

1. Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու:

2. Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով **զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները**, ձևավորվում են նորագոյացություններ, որոնք նախապատրաստում և ապահովում են երեխայի հոգեկանի զարգացման հաջորդ փուլը:

3. Խաղային գործունեությունը նպաստում է գործունեության նոր ձևերի՝ աշխատանքի և ուսումնական գործունեության, առանձնացմանը: Երեխայի խաղն իր զարգացման ընթացքում ձեռք է բերում աշխատանքային և ուսումնական գործունեությանը բնորոշ կառուցվածքային տարրեր՝ նպատակ, պլանավորում, արդյունք, որոնք, ձևավորվելով խաղային գործունեության ընթացքում, տեղափոխվում են գործունեության այլ ձևեր:

4. Խաղային գործունեությունը բնական գործունեություն է, ուր չկա ճնշում և հարկադրանք, առկա է երեխաների համար բնական միջավայր: Խաղի ընթացքում երեխաներն ազատ են և ինքնուրույն, ունեն հավասար իրավունքներ և ինքնադրսևորման լայն հնարավորություններ:

5. Խաղը ստեղծագործական գործունեություն է, քանի որ այն նպաստում է յուրաքանչյուր խաղացող երեխայի անհատական առանձնահատկությունների

բացահայտմանը և կրեատիվ (ստեղծագործական) ընդունակությունների զարգացմանը:

6. Խաղը աշխարճանաչման և աշխարհի արտացոլման եղանակ է, իմացական գործունեություն: Խաղային գործունեության ընթացքում ձեռբերած գիտելիքները կրկնակի արժեքավոր են՝ դրանք և տեղեկատվական են և գործնական բնույթի:

7. Խաղային գործունեությունն իր բնույթով ուղղված է նախադպրոցականի հուզակամային ոլորտի զարգացմանը, հետևաբար և հիմնարար անձնային որակների ձևավորմանը: Նախադպրոցականի անձնավորության ձևավորման գործընթացը պայմանավորված է նրա հուզական և կամային ոլորտների ներդաշնակ զարգացմամբ, ինչը լավագույնս ապահովվում է խաղային գործունեության ընթացքում:

Ամփոփելով խաղային գործունեության առանձնահատկությունները, միևնույն ժամանակ նրա առավելությունները մանկան գործունեության այլ ձևերի նկատմամբ՝ կարելի է համարձակորեն արձանագրել, որ խաղը, հանդես գալով որպես նախադպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեություն, նախադպրոցահասակ երեխաների զարգացման և դաստիարակության լավագույն միջոցն է, նրանց կյանքի և գործունեության կազմակերպման հիմնական ձևը:

1.3. ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂ ԵՎ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Վաղ տարիքում երեխայի խաղային գործունեության զարգացումը սերտ կապված է նրա ընդհանուր զարգացման հետ: Վաղ տարիքի երեխաների խաղային գործունեությանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- խաղային գործունեությունը ծագում է առարկայական գործունեության հիման վրա և իրենից ներկայացնում է արտաքին աշխարհի դերային արտացոլում՝ ձևավորված առարկայական գործողությունների միջոցով,

- խաղային գործունեությունը արտացոլող բնույթի է, խաղի միջոցով արտահայտվում են երեխայի հույզերն ու տպավորությունները, նրա ընդհանուր հուզական վերաբերմունքն արտաքին աշխարհին,

- վաղ տարիքի երեխայի խաղի էությունը կարելի է բնութագրել որպես «դեր գործողության մեջ» բառակապակցությամբ, քանի որ խաղի պարզ սյուժեն կառուցվում է դերային գործողությունների շուրջ,

- խաղային գործունեությունը ձևավորվում և զարգանում է մեծահասակների օգնությամբ և նրանց հետ համատեղ գործունեության շնորհիվ:

Նախադպրոցականի խաղային գործունեությունը զարգանում է հետևյալ առանձնահատկություններով:

1. **Խաղային գործունեության ընթացքին բնորոշ է սյուժե,** որն ի հայտ է գալիս երկու տարեկան հասակում և աստիճանաբար բարդանում ու հարստանում է: Եթե կրտսեր նախադպրոցականի խաղի սյուժեները անկայուն են, փոփոխական, հաճախ, նույնիսկ, անտրամաբանական, ապա ավագ նախադպրոցականների սյուժեն իրենից ներկայացնում է թեմատիկ բովանդակության տրամաբանական զարգացում և վերլուծություն՝ խաղային կերպարների, գործողությունների և հարաբերությունների միջոցով:

2. **Խաղային գործունեության նպատակը սոցիալական դերերի յուրացումն է**: Սոցիալական դերերով պայմանավորված խաղային հարաբերությունները սոցիալական հարաբերությունների նմուշների արտապատկերները չեն, դրանք ենթակա են վերլուծության, վերանայման և կատարելագործման: Վերակառուցված խաղային հարաբերությունները կարող են խաղից հանգիստ փոխանցվել իրականություն և դառնալ սոցիալական հարաբերությունների նմուշ: Նախադպրոցականի խաղային գործունեության հիմնական միավորը դերն է, որի յուրացմանն են ուղղված խաղային գործողություններն ու հարաբերությունները:

3. **Ստեղծագործական բնույթի խաղային գործունեությունը նախադպրոցահասակ երեխայի համակողմանի զարգացման և դաստիարակության արդյունավետ միջոց է**: Խաղային գործունեության գրագետ ղեկավարումը ենթադրում է խաղի ընկալում և դիտարկում երեխայի տեսանկյունից: Նախադպրոցական տարիքի երեխաներին խաղը հրապուրում է իր երկակի բնույթով: Վասիլևան իր «Զարգացող խաղեր նախադպրոցական տարիքի երեխաների համար» գրքում գրում էր, որ «խաղը միաժամանակ և՛ հաճույք է և՛ լուրջ աշխատանք»: [5; էջ 85-89]:

ԳԼՈՒԽ.2. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Խորհրդային մանկավարժության ներկայացուցիչները դասակարգում են խաղի խմբերն ըստ բնույթի, բաժանելով դրանք երկու խմբի՝ *ստեղծագործական և կանոնով*: Ստեղծագործական խաղերը բնորոշվում են ստեղծագործական բնույթով և ներքին «թաքնված» կանոններով: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է և սահմանափակվում մեծահասակների կողմից հստակ կանոններով: Բնույթով դրանք ուսուցանող և զարգացնող են:

Խաղերի երկրոդ խումբն են կազմում **կանոնով խաղերը**, որոնք հատուկ կազմակերպվում են մեծահասակների կողմից երեխաներին ուսուցանելու, դաստիարակելու և զարգացնելու նպատակով: Այս խմբին են պատկանում դիդակտիկ խաղերը, շարժողական խաղերը և տարբեր բնույթի զարգացնող խաղեր: Կանոնով խաղերը մշակվել են ժողովրդական խաղերի հիման վրա, դրանք ունեն հստակ մանկավարժական ուղղվածություն: Կանոնով խաղերի բովանդակությունը նախապես մշակվում և պատրաստի ձևով ներկայացվում է երեխաներին: Խաղի բովանդակությունը միտումնավոր սահմանափակվում է կանոններով, որոնք կարգավորում և նպատակաուղղում են երեխաների խաղային գործողությունները:

Խաղերի տեսակները ներկայացրել եմ աղյուսակի տեսքով.

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂԵՐ			
Սյուժետադերային խաղեր	**Ռեժիսորական խաղեր**	**Կառուցողական խաղեր**	**Խաղ-թատերացումներ**
			• խաղ – դրամատիզացիա, • սեղանային թատրոն • տիկնիկային թատրոն, • խամաճիկների թատրոն, • մատնայի թատրոն

ԿԱՆՈՆՈՎ ԽԱՂԵՐ

ԽԱՂ ԶՎԱՐՃԱՔՆԵՐ	ԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԵՐ	ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽԱՂԵՐ	ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԽԱՂԵՐ	ՇԱՐԺԱԽԱՂԵՐ			ԴԻԴԱԿՏԻԿ ԽԱՂԵՐ			
	- ածելին իմ առանձիններով - մոտիվով - շարժվելիություն - բառախմբերով	- պտուժեռային - առաց ցնցառ - երաժշտությունով - խմբապար		- ինտելեկտուալ խաղեր	- սպորտային խաղեր ու վարժություններ	- պտուժեռային - առաց ցնցառ մուժեի - ատոակցիոն խաղեր - ցածր, միջին, բարձր շարժունության - շոկո

Արդյոք աղյուսակները հեղինակային են?

2.2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ստեղծագործական խաղերի բովանդակությունը կառուցվում է խաղացող երեխաների կողմից, այն ստեղծագործական բնույթի է: Ստեղծագործական խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումները արտաքին աշխարհի հանդեպ, ինքնուրույնության և ակտիվության մղումները, ցանկությունները, նախասիրություններն ու հետաքրքրությունները: Խաղի սյուժեն ընտրվում է խաղացող երեխաների կողմից և դրա հիման վրա կառուցվում է խաղի բովանդակությունը: Ստեղծագործական խաղերը նպաստում են սոցիալական դերերի յուրացմանը, սոցիալական փորձի ձեռքբերմանը և սոցիալական հարաբերությունների հաստատմանը: Ինքնուրույն եղանակով յուրացված սոցիալական փորձը վստահություն է ներշնչում աշխարհի և սեփական «ես»-ի հանդեպ և օգնում երեխային ինքնահաստատվելու հասակակիցների միջավայրում:

Բուրինինան իր «Театр всевозможного» աշխատության մեջ գտնում էր, որ ստեղծագործական խաղերը դիտարկվում է որպես վարքի փորձառության հավաքագրման ու կշռադատման ընդհանրական և երեխայի բարոյական ու սոցիալական ձգտումների հիմական բաղկացուցիչների ձևավորման միջոց է: Խաղի այս տեսակներում երեխան վերարտադրում է իրեն ծանոթ իրավիճակներն ու հարաբերությունները: Այդ խաղերը սովորաբար մեծերի կյանքի մանկական մեկնաբանություններն են, որոնցում դրսևորվում է փոքրերի վերաբերմունքը մեծերի «խաղի» նկատմամբ: Այդ ընթացքում երեխան գնահատում և յուրացնում է հասարակության մեջ ընդունված սոցիալական դերերն ու հարաբերությունները, վերարտադրում դրանք: Օգտագործելով փոխարինելու, համոզելու, բանակցելու ունակությունները՝ լուծվում են խաղընկերների հետ առաջացող խնդիրները: [4, 45-49]:

Սյուժետադերային խաղերի ղեկավարման նպատակաուղղվածությունը հնարավորություն է տալիս խաղի ընթացքում լուծելու մի շարք մանկավարժական խնդիրներ, որոնցից առավել կարևորվում է երեխաների փոխհարաբերությունների ձևավորումը: Խաղի նպատակին հասնելու համար նա փորձում է լուծել բարդ՝

իրական կյանքում անլուծելի խնդիրներ, ինչը հնարավոր է երևակայական կերպարների ստեղծման միջոցով: Խաղի ընթացքում նա փորձում է հորինել և ստեղծագործել: Սյուժետադերային խաղերի գլխավոր կառուցվածքային տարրերն են՝ **երևակայական խաղային մտահղացում, խաղի սյուժե, և դեր:**

Սյուժետադերային խաղերում արտացոլվում են երեխաների տպավորություններն ու պատկերացումներն արտաքին աշխարհի հանդեպ, դրսևորվում են նախասիրություններն ու հետաքրքրությունները, զարգանում է նրանց երևակայությունը: Սյուժետադերային խաղերի պրոցեսում զարգանում է երեխայի բանականությունն ու հուզականությունը, նա կարողանում է ճանաչել կյանքն ու որոշել իր տեղը, ձեռք է բերում կոլեկտիվ աշխատանքի փորձ, տարբեր նյութերով ու գործիքներով աշխատելու հմտություն, ինքնատիրապետում: Տեխնիկական մանկական ստեղծագործությունը պոլիտեխնիկական կրթության ու մասնագիտական կողմնորոշման կարևոր միջոցներից է: Սյուժետադերային խաղերը խթանում են ստեղծարարությունն ու փոխգործակցությունը և կարևոր դեր են կատարում մարդկանց մտավոր և սոցիալական զարգացման գործում: Անդրադառնալով Ակուլովայի «Թատերական խաղեր» աշխատությանը, կարող եմ գրի առնել, որ սյուժետադերային խաղն այն եզակի ոլորտներից է, որտեղ մեծահասակներն ու երեխաները կարող են մտքեր փոխանակել հավասարը հավասարի պես (տարբեր սերունդների միջև շփումներ): «Սյուժետադերային խաղի ժամանակ սահմանված կանոններին ենթարկվելը և հրահանգներին հետևելը, զարգացնում են երեխաների կարգապահութունը, անկախությունը և ինքնուրույնությունը»: [2; էջ 27-32]:

Դերերի միջոցով երեխաները նույնացվում են իրենց սյուժեի կերպարներին և փորձում արտացոլել կերպարին բնորոշ գործառույթները և հարաբերությունները: Ցանկացած դեր պարտադրում է վարքագծի և հարաբերությունների կանոններ, որոնք ակամայից յուրացվում և գիտակցվում են խաղի ընթացքում, դառնում սովորական ու ընդունելի և աստիճանաբար փոխանցվում իրական կյանք: Այստեղ ուսումնական խնդիրը թաքնված է:

Երեխան ինքնուրույն չի կարողանա խաղալ սյուժետադերային խաղը, իսկ եթե խաղա, ապա դա կլինի շատ կարճ ժամանակով: Դա տեղի է ունենում այն

պատճառով, որ երեխան դեռ ամբողջությամբ չի տիրապետել իրեն շրջապատող աշխարհին: Սյուժետադերային խաղը դաստիարակության և կրթության զարգացման միջոցն է, որը ձևավորում է երեխայի անհատականությունը: Դերային խաղը ուսման և փորձի ձեռք բերման արդյունավետ ձևերից մեկն է, որը կարող է նպաստել երեխաների վարքի պատճառները հասկանալու ունակությանը:

2.3. ԿԱՆՈՆՈՎ ԽԱՂԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կանոնով խաղերը կոչվում են նաև խաղեր պատրաստի բովանդակությամբ, քանի որ այդ խաղերի բովանդակությունը նախապես մշակվում է մանկավարժների կողմից և ներկայացվում երեխաներին կանոնների ձևով: Կանոնով խաղերը լինում են երկու տեսակի՝ **դիդակտիկ և շարժողական:** Կանոնով խաղերին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ, որոնք ներկայացնում են դրանց էությունն ու մանկավարժական արժեքը:

- Կանոնով խաղերի բովանդակությունն ուղղված է մանկավարժական տարբեր խնդիրների իրականացմանը,
- Կանոնով խաղերն ունեն մանկավարժական հստակ նպատակ և խնդիրներ,
- Կանոնով խաղը նպատակային մանկավարժական գործընթաց է, որի ընթացքում միասնաբար լուծվում են մի շարք կրթադաստիարակչական խնդիրներ,
- Կանոնով խաղերի կրթադաստիարակչական բովանդակությունը երեխաների կողմից չի ընկալվում իբրև ինքնուրույն խնդիր, այն նրանց ներկայացվում է խաղի նպատակի և կանոնների ձևով, որոնք թելադրում են համապատասխան խաղային գործողություններ,
- Կանոնով խաղերի ընթացքում երեխաների խաղային գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են խաղի կանոններով,
- Կանոնով խաղերը ղեկավարվում են ուղղակի եղանակներով՝ սահմանված կանոնների շրջանակներում,
- Կանոնով խաղերին բնորոշ պատրաստի բովանդակության և կանոնների հստակությունը նպաստում է դրանց ինքնուրույն կազմակերպմանն ու ինքնաղեկավարմանը:

Կանոնով խաղերը սկիզբ են առնում ժողովրդական խաղերից, դրանց վերամշակման և կատարելագործման միջոցով: Յուրաքանչյուր ժողովուրդ դարերի ընթացքում մշակել և սերնդես ռունդ է փոխանցել ազգային խաղիկներ և խաղեր, որոնք ժողովրդական բանահյուսության յուրահատուկ ձևեր են և իրենց մեջ պարունակում են հսկայական մանկավարժարժական ներուժ: Ժողովրդական խաղերի ազգային բնույթը, հարուստ բովանդակությունը, պարզությունն ու մատչելիությունը, դրանց բնորոշ հումորն ու հետաքրքրաշարժությունը հիմք են հանդիսանում դիդակտիկական և շարժողական խաղերի մշակման համար:

Դիդակտիկ խաղերը ուսուցանող բնույթի խաղեր են: Այս խաղերի հիման վրա ձևավորվում են երեխաների ուսումնական գործունեության կարողությունները, զարգանում են ինտելեկտուալ ընդունակնություններն ու իմացական ակտիվությունը: Այսինքն, դիդակտիկ խաղերը նպաստում են ուսումնական և իմացական, ինչպես և ինտելեկտուալ գործունեության ձևավորմանը: Այս խաղերը դրդում են երեխաներին ինքաուսուցման և նպաստում երեխաների ինքնուրույնության հաստատմանը և ինքնակազմակերպմանը: Դիդակտիկ խաղի յուրահատկությունները հիմք են տալիս մտածելու, որ դա նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման կազմակերպման լավագույն ձևն է, նրանց դաստիարակության և զարգացման արդյունավետ միջոցը: Կազմակերպման ձևով դիդակտիկ խաղերը բաժանվում են **առարկայական, սեղանային և բանավոր դիդակտիկ խաղերի**:

Շարժախաղերի միջցով բավարարվում են նախադպրոցական տարիքի երեխաների շարժման, ֆիզիկական ակտիվության պահանջմունքները, ձևավորում է ֆիզիկական կարողություններն ու հմտությունները, ձեռք են բերվում շարժողական հատկություններ և որակներ:

Շարժախաղերը լինում են ընդօրինակող (իմիտացիոն) բնույթի, առարկայական և սյուժետային, խաղ- մրցույթներ և խաղ- էստաֆետներ, սպորտային շարժախաղեր և շարժախաղեր նպատակային ուղղվածության:

Գլուխ 3. Փորձարարական աշխատանք ստեղծագործական խաղերի միջոցով

2.1.Հետազոտական աշխատանք

Խաղ բեմականացում

Մեր փորձից

Դաստիարակը երեխաների հետ միասին որոշում է պատրաստել խաղ բեմականացում: Նախ երեխաների համար ընտրեցվեց հեքիաթը, «Պապն ու շաղգամը», որի հիման վրա պետք է պատրաստվի խաղ բեմականացումը: Դաստիարակը նրանց համար կարդում է հեքիաթը, հետո միասին քննարկում են այն: Երեխաները վերարտադրում են իրենց զգացմունքները: Դաստիարակի և երեխաների հարց ու պատասխանի միջոցով քննարկվում է՝ արդյոք հերոսները ընկերասեր էին և միասնական, իսկ եթե մկնիկը չգար ինչ կլիներ, իսկ եթե դու լինեիր նրա փոխարեն ինչպես կվարվեիր: Դաստիարակը փորձում է երեխաներին ներգրավել հեքիաթի մեջ: Այնուհետև երեխաները իրենք են ընտրում հեքիաթի հերոսին, որին ցանկանում են մարմնավորել: Դերերը բաշխելուց հետո փորձում են դերային խաղով ներկայացնել հեքիաթը: Ասպիսով, հեքիաթն ամրապնդվելուց հետո պատրաստվում ենք խաղ բեմականացմանը:

Մենք ընտրեցինք 2- 4 տարեկան երեխաների խումբը: Ամեն ինչ այնպես էր ինչպես իրական թատրոնում: «Մեծերը» մեծ պատասխանատվությամբ ցուցադրեցին իրենց ներկայացումը, իսկ փոքրիկները մեծ խանդավառությամբ դիմավորոցին նրանց: Այս նախագիծն իրականացնելով մենք կարողացանք լուծել մի շարք խնդիրներ, որոնց մասին կխոսենք ստորև:

Դերասան-երեխաները ցուցադրելով թատրոն, իրենց զգում են հասարակության լիիրավ անդամ, կատարելով շատ կարևոր գործ: Երեխաների մոտ արթնանում է պատասխանատվության և պարտաճանաչության զգացում, ցուցաբերելով գործին լուրջ վերաբերմունք: Փորձերի ընթացքում երեխաների մոտ ձևավորվում է փոխզիջման և փոխըմբռման հատկանիշներ:

Փոքրիկ դերասանները սովորում են հստակ արտաբերել բառերը, կառավարել իրենց ձայնը, խոսքի տեմպը, յուրաքանչյուր դերին տալիս են բնավորությանը

բնորոշ ձայն: Զարգանում է փոքրիկ դերասաների երաժշտական տակտը, ռիթմը, ծանոթանում են երաժշտական ժանրերի հետ:

Ներկայացման միջոցով երեխաները հարստացնում են իրենց տպավորությունները, առաջանում են դրական հույզեր: Ցույց տալով օրինակներ երեխաների մեջ ձևավորվում է ընկերասիրություն, բարություն, անկեղծություն, սեր, աշխատասիրություն: Դերասան- երեխաները սովորում են ժեստերը, մարմնի լեզուն, օրինակ՝ որպեսզի ցույց տա նապաստակի ուրախությունը ՝նա թռչկոտում է, վախի ժամանակ՝ դողացնում է և այլն:

Երեխաների մոտ զարգանում է կոլեկտիվում աշխատելու ունակությունները և դրսևորվում է համբերատարություն կոլեկտիվի անդամների նկատմամբ:

Թատրոնը երեխաների մեջ դաստիարակում է բարոյական և գեղագիտական հատկանիշներ, ընդլայնվում է երեխաների ճանաչողական աշխարհընկալումը:

Հանդիսատես երեխանրի մոտ առաջանում է ցանկություն ընդգրկվել դերասանական կազմի մեջ, և ներկայացումից հետո նրանք խաղում են թատրոն փորձելով ընդօրինակել դերասաններին:

«Պապն ու շաղգամը» մատնային թատրոն

Նպատակները՝

Կրթական՝

Ձևավորել գիտելիքներ միասնականության և ընկերասիրության մասին:

Ամրապնդել գիտելիքները աշխատասիրության վերաբերյալ:

Դաստիարակչական՝

Դաստիարակել բարի և դրական վերաբերմունք միմյանց և մեծերին օգնելու նկատմամբ:

Զարգացնող՝

Շարժումները միաժամանակ կատարելու կարողություն

Կապակցված խոսքի զարգացում

Ճիշտ շնչելու ունակություն

Շարժողական վոլորտ՝ Չափորոշիչ 1. Ցուցիչ 1.2.

Խոսքի զարգացում և հաղորդակցման ոլորտ՝ Չափորոշիչ 2.3ուցիչ 2.4.

Իմացական ոլորտ՝Չափորոշիչ 17. 3ուցիչ17.1

Մատնային թատրոնի ցուցադրությունը կազմակերպեցի երկուսից-չորս տարեկանների խմբում: Երեխաները, մատնային թատրոնի ցուցադրմամբ, դիտեցին և ունկնդրեցին «Պապն ու շաղգամը» հեքիաթը: Սովորեցին լինել աշխատասեր, հասկացան հիմնական գաղափարը՝ ցանկացած աշխատանք ավելի հեշտ է լինում, երբ այն կատարում ես ընկերներիդ հետ:

Նախագիծ. Համբարձման ծեսը

Նպատակը

- ծանոթանալ ազգային ծեսերին ու տոներին,
- ծեսը վերականգնել, նոր կյանք տալ:

Սովորողների տարիքային խումբը

Միջին խմբի երեխաներ՝չորսից-հինգ տարեկան

Ընթացքը

- տարբեր աղբյուրներից ուսումնասիրել Համբարձման ծեսը,
- համակարգել հիմնական գործողությունները,
- որոշել՝ ծիսական որ գործողությունների վրա է կառուցվելու ծեսը,
- սովորել Համբարձման ծիսական, ծեսին համապատասխան երգեր, պարերգեր, պարեր,
- համացանցից գտնել և ունկնդրել Համբարձման ծիսական երգեր («Ջա՛ն, ծաղիկ» , «Համբարձման անուշ գիշեր է» , «Ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն» և այլն),
- սովորել պատրաստել Վիճակի տիկնիկ ,
- սովորել պսակ հյուսելու տարբերակներ,
- որոշել գործողությունների հաջորդականությունը, կազմել նախնական սցենարը:

Աշխատանքների ծավալը և ժամանակացույցը

- ծեսից առաջ սկսել նախապատրաստական աշխատանքները,

- ծեսն իրագործել Համբարձման նախորդ՝ չորեքշաբթի և հաջորդ՝ հինգշաբթի օրերին:

Արդյունքներ

Ծեսն իրականացնողը կիմանա

- ազգային ծեսերը,
- ազգային սովորույթները,
- ազգային ավանդական պարերը,
- հայկական ժողովրդական և ծիսական երգերը,
- ծիսական կերպարները,
- ժողովրդական, մանկական, ծիսական խաղերը,
- ծիսական պարագաները:

կկարողանա

- երգել հայկական ժողովրդական և ծիսական երգեր,
- պատրաստել ծիսական պարագաներ,
- խաղալ ժողովրդական, մանկական, ծիսական խաղեր,
- համացանցից, այլ աղբյուրներից ծեսին վերաբերվող նյութեր գտնել,
- ծեսին նոր կյանք տալ:

կլինի

- ծեսը իմացող ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ սովորողները ծեսի նախապատրաստական և իրականացման ընթացքում կկիրառեն իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով այս աշխատանքը կարող եմ ասել, որ խաղը, որպես էթնիկ մշակույթի բաղադրիչ, կարևորվում է ոչ միայն որպես ժամանցի ձև, այլ դաստիարակության յուրօրինակ մեթոդ և լավագույն միջոց՝ երեխաների մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացման գործում: Եթե մեծահասակ մարդու համար խաղը հանգստի և ժամանցի միջոց է, երեխայի համար իր ապրելակերպն է:

Խաղերը բնորոշ են սեռատարիքային գրեթե բոլոր խմբերին: Մանկական խաղերի նպատակը նրանց մատչելի ձևով կենցաղավարության հմտություններին նախապատրաստելն է: Արդի կենցաղում նկատվում է խաղի մասնակիցների սեռա-տարիքային բաժանումների որոշակի անկում, որի արդյունքում գերակայում են միջսեռային խաղերը:

Մեր ուսումնասիրության տվյալները ցույց են տվել, որ խաղի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների բնավորության և կարողությունների զարգացման գործընթացը պահանջում է նպատակային մանկավարժական առաջնորդություն, որը բաղկացած է այս գործընթացը ղեկավարելու ազդեցիկ եղանակների հաստատումից:

Մանկական խաղերը խիստ բազմազան են իրենց բովանդակությամբ, բնույթով, կազմակերպման ձևերով, ուստի դրանց ճշգրիտ դասակարգումը բարդ է:

Եվ այսպես, ուսումնասիրելով խնդրո առարկայի վերաբերյալ մեթոդական գրականությունը, դիտարկելով և վերլուծելով նախադպրոցական տարիքի երեխաների համար կազմված համալիր ծրագրերը, հանգեցի հետյալ եզրակացության՝

1. Խաղերի կիրառման գործընթացը մեծապես նպաստում է ոչ միայն երեխայի համակողմանի և ներդաշնակ դաստիարակության և զարգացման իրականացմանը, այլև դրանցում մարդկության փորձի ու գիտելիքների փոխանցմանը:
2. Արդի ժամանակաշրջանում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը, որտեղ նախադպրոցական տարիքում հիմնական շեշտը դրվում է խաղայի գործունեության վրա:

3. Քանի որ նախադպրոցական տարիքի երեխայի հիշողությունը և ուշադրությունը ոչ կամածին է (գիտակից, կանխամտածված հիշողությունը և վերհիշումը երևում է երբեմն), երեխան իր առջև նպատակ չի դնում որևէ բան մտապահելու, հիշելու, սակայն դերային խաղի միջոցով, հեքիաթներն ու դրանցում առկա ազգային ավանդույթները երեխան արագ մտապահում է և ապրումնակցում հերոսներին:
4. Խաղերի միջոցով ձևավորվում է անձնային - հասարակական կապ, դաստիարակության կապը կյանքի և աշխատանքի հետ: Խաղայի գործունեության միջոցով բացահայտվում են այնպիսի մարդասիրական որակներ, ինչպիսիք են՝ ազնվություն, բարություն, հարգանքը մեծերի նկատմամբ, համագործակցություն:
5. Այսպիսով երեխան դաստիարակության գործընթացի սուբյեկտ է, ով կրում է մարդկության կուտակած փորձն ու գիտելիքները, իսկ մանկական խաղերը այդ գործընթացի կազմակերպման լավագույն ուղեկիցն են և որքա՛ն արդյունավետ կազմակերպվի ուսուցման և դաստիարակության գործընթացը, այնքան կունենանք բանիմաց և կրթված սերունդ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայզինգա Յ., Homo ludens, Երևան, Փրինթինֆո, 2007. -374 էջ
2. Акулова О. Театрализованные игры // Дошкольное воспитание, 2005 №4; - 34с.
3. Блонский П. П., Педология, Кн. Для преподават. и студ. высш. пед. учеб. заведений, под ред. В. А. Сластенина, изд. Центор Владос, 2000. -287 с.
4. Буренина А.И. Театр всевозможного. Санкт-Петербург,. 2002. - 203 с.
5. Васильева Н.Н. Развивающие игры для дошкольников. – Ярославль, 1996. - 165 с.
6. Морозов И., Слепцова И., Круг игры. Праздники игра в жизни севернорусского крестьянина, Москва, 2004 . -920 с.
7. Эльконин Д. Б., Психология игры, монография Л. С. Эльконин, Изд. 2-е, Москва-Владос 1999. – 360 с.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ԽԱՂԱԼԻՔԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ*

ԿԱՏԱՐՈՂ՝ *Լ. ՊՈՂՈՍՅԱՆ*

ՂԵԿԱՎԱՐ՝ *մ.գ.թ. Լ. ՄԻՐԱԲՅԱՆ*

ՎԱՆԱՁՈՐ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
Գլուխ 1. Խաղ, խաղային գործունեություն.....5
1.1. Խաղային գործունեության առանձնահատկությունները.....5
1.2. Խաղերի տեսակները.....8
ԳԼՈՒԽ 2. Խաղալիքի դերը երեխայի կյանքում.....15
2.1. Խաղալիքի տեսակները.....15
2.2. Խաղալիքին ներկայացվող պահանջները.....20
Փորձարարական մաս.....21
Հավելվածներ.....23
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....26
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու կյանքում զարգացման բոլոր փուլերը փոխպայմանավորված են, ամեն բան սկսվում է մանկությունից: Մանկության շրջանում ձեռք բերվածը ուղեկցում է երեխային ողջ կյանքում: Երեխան զարգանում է, ընկալում աշխարհն ու արձագանքում արտաքին միջավայրին մեծահասակների միջնորդությամբ:

Այս ամենի մեջ կարևոր դեր ունի խաղը՝ մարդկային գործունեության ամենահետաքրքիր ուրույն ձևը, որը ծագում է մանկության շրջանում և նրան ուղեկցում ողջ կյանքում: Խաղն ուղղված է նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր զարգացմանը, նպաստում է նրանց հոգեկան աշխարհի զարգացմանը, հասակակիցների հետ փոխհարաբերությունների հաստատմանը, սեփական փորձի ձեռքբերմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանն ու զարգացմանը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այսօր երեխայի զարգացման և դաստիարակության գործում հսկայական դերը պատկանում է խաղին: Այն արդյունավետ միջոց է նախադպրոցական տարիքի երեխայի անհատականությունը, նրա բարոյական և կամային հատկանիշները ձևավորելու համար: Խաղի մեջ գիտակցվում է աշխարհի վրա ազդելու անհրաժեշտությունը: Խաղի կրթական արժեքը մեծապես կախված է մանկավարժի մասնագիտական հմտություններից, երեխայի հոգեբանության իմացությունից՝ հաշվի առնելով նրա տարիքը և անհատական հատկանիշները, երեխաների հարաբերությունների ճիշտ մեթոդաբանական ուղղորդումը, ճշգրիտ կազմակերպումը և վարքագիծը բոլոր տեսակի խաղերում: Շատ կարևոր է հաշվի առնել յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները, ճիշտ ընտրել խաղը և խաղային գործունեության հիմնական միջոցը՝ խաղալիքը:

Աշխատանքի նպատակն է .

Ուսումնասիրել նախադպրոցական տարիքի երեխայի խաղային գործունեության հիմնական միջոցի հիմնախնդիրը գիտական, գիտամեթոդական գրականության մեջ:

Աշխատանքի խնդիրներն են.

- ✓ Նկարագրել նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում խաղի և խաղային գործունեության առանձնահատկությունները:
- ✓ Բացահայտել խաղի, խաղալիքի կարևորությունը:
- ✓ Իրականացնել հետազոտություն՝ նախադպրոցական տարիքի երեխայի խաղային գործունեության առանձնահատկությունների դրսևորման վերաբերյալ:

Աշխատանքի կառուցվածքը. Աշխատանքը բաղկացած է ներածական մասից, 2 գլուխներից, առաջին գլուխը բաղկացած է 2 ենթագլխից, երկրորդ գլուխը բաղկացած է 2 ենթագլխից, հետազոտական մասից և եզրակացությունից: Հարցաթերթերի նմուշները կցված են:

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂ, ԽԱՂԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1.1. Խաղային գործունեության առանձնահատկությունները

▪Խաղային գործունեության ընթացքում նախադպրոցական տարիքի երեխայի հիմնական պահանջմունքները բավարարվում են: Դրանք են՝ հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու, ինքնուրույնության և ակտիվության, արտաքին աշխարհը ճանաչելու և այն արտացոլելու:

▪«Երեխան խաղի ընթացքում փորձարկում է իր ապագա կյանքը և փորձում սեփական ուժերը»: ՈՒշինսկի Կ.Դ. [3, 96]

▪Խաղային գործունեության ընթացքում բնականոն ճանապարհով զարգանում են երեխայի հոգեկան գործընթացները, որոնք ապահովում են երեխայի հոգեկան զարգացման հաջորդ փուլը: Երեխան որևէ այլ գործունեության ընթացքում չի գործում «երևակայական իրադրության» պայմաններում և չի օգտագործում փոխարինող առարկաներ:[3, 96]

▪Խաղային գործունեությունը նպաստում է նաև աշխատանքի և ուսումնական գործունեության առանձնացմանը: Զարգացման ընթացքում ձեռք է բերվում նոր բնորոշ տարրեր՝ պլանավորում, նպատակ, արդյունք, որոնք էլ տեղափոխվում են գործունեության այլ ձևեր:

▪Խաղային գործունեությունը բնական է, քանի որ չկա ճնշում և հարկադրանք, միջավայրը երեխաների համար բնական է: Երեխաներն այստեղ ինքնուրույն և ազատ են, հավասար իրավունքներ ունեն և լայն հնարավորություններ՝ ինքնադրսևորման համար: Խաղի ընթացքում մթնոլորտը հագեցած է հուզականությամբ և կան լավագույն պայմանները համագործակցելու համար:

▪Խաղային գործունեության ընթացքում զարգանում է նաև նախադպրոցական տարիքի երեխայի հուզական ոլորտը և ձևավորվում են հիմնարար անձնային որակներ, ինչն էլ նպաստում է հուզական և կամային ոլորտների ներդաշնակ զարգացմանը:

«Այստեղ և անհապաղ», ինքնահաստատվելու հնարավորությունը երեխայի խաղային գործունեության հիմնական դրդապատճառն է [3, 95]

Խաղային գործունեությունը զարգանում է հետևյալ առանձնահատկություններով.

✓ Խաղային գործունեության ընթացքին բնորոշ է սյուժե: Սյուժեն ի հայտ է գալիս երկու տարեկան հասակում, հետո բարդանում է և աստիճանաբար հարստանում: Կրտսեր նախադպրոցականի սյուժեն անկայուն է, փոփոխական, երեմն՝ անտրամաբանական, իսկ ավագ նախադպրոցականների սյուժեն արդեն իրենից ներկայացնում է թեմատիկ բովանդակության տրամաբանական զարգացում և վերլուծություն՝ խաղային կերպարներով, գործողություններով և հարաբերություններով:

Սյուժեի զարգացման գործում դեր են խաղում երեխաների սոցիալական փորձը, խաղային գործունեության դրդապատճառները, կազմակերպման և ղեկավարման եղանակները:

✓ Սոցիալական դերերի յուրացումը խաղային գործունեության նպատակն է: Այն ուղղված է խաղային փոխհարաբերությունների սոցիալական նմուշների յուրացման եղանակով մարդկության հավաքական փորձի փոխանցմանը:

Խաղային հարաբերությունները արտապատկերներ չեն, այլ ենթակա են վերանայման, վերլուծության և կատարելագործման: Արդեն վերակառուցված խաղային հարաբերությունները կարող են փոխանցվել իրականություն:

Դերային խաղի հիմնական միավորը այստեղ դերն է, որի յուրացմանն են ուղղված խաղային հարաբերություններն ու գործողությունները: Խաղն ընթանում է երեխայի մտածողության զարգացման հետ համահունչ և փոխպայմանավորված:

Դերային խաղի զարգացման ընթացքը պայմանավորված է խաղի դերերով:

Սյուժետային խաղի կառուցողական միավորը.



Կրտսեր նախադպրոցական երեխան խաղային գործունեության ընթացքում առաջնորդվում է գործողություններով, նրա միտքը բխում է գործողություններից, նախ գործում է, հետո՝ մտածում:

Միջին նախադպրոցական տարիքում երեխան նախ պատկերացնում է, հետո արդեն պատկերավոր կերպարները փորձում է արտացոլել գործողությունների միջոցով:

Ավագ նախադպրոցական տարիքում երեխան պատկերացնելով մտածում է, վերլուծում, հետո նոր միայն պլանավորում իր խաղային գործողությունները:

✓ Ստեղծագործական բնույթի խաղային գործունեությունը նախադպրոցական տարիքի երեխայի դաստիարակության և համակողմանի զարգացման արդյունավետ միջոց է, որը մանկավարժից պահանջում է ղեկավարման նրբանկատ հմտություններ և կազմակերպման վարպետություն: Երբ խաղային գործունեությունը տարվում է գրագետ ձևով, խաղը ընկալվում է երեխայի կողմից: Այս տարիքում խաղը երեխաներին գրավում և հրապուրում է երկու ձևով. և՛ որպես լուրջ աշխատանք, և՛ որպես հաճույք:

Խաղը ինքնուրույն և ազատ գործունեություն է, սակայն հնարավոր է նաև մեծահասակների մասնակցությունն ու աջակցությունը: Խաղը հնարովի երևակայական է, երեխան շատ լավ հասկանում է, որ վերապրում է իրական կյանքի տարբեր դեպքեր խաղի ընթացքում:

Այսպիսով, խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ ակտիվության և ինքնուրույնության, արտաքին աշխարհը ճանաչելու, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն հաղորդակից լինելու: Իր բնույթով այս խաղային գործունեությունը ուղղված է նախադպրոցականի հուզական, կամային ոլորտի զարգացմանը, հետևաբար նաև հիմնարար անձնային որակների ձեռքբերմանը:

Խաղային գործունեության հոգեբանական կառուցվածքը.



Դրդապատճառներ (մոտիվներ) – այն ամենը, ինչը դրդում է գործունեության, պահանջների ու հետաքրքրությունների ձևավորման:

Նպատակներ – ցանկալի արդյունքները, որոնց հասնելուն է ուղղորդված գործունեությունը:

Գործողություններ – գործառույթներ, որոնք անհրաժեշտ են ցանկալի արդյունքին հասնելու համար:

Միջոցներ – ցանկալի արդյունք ստանալու համար անհրաժեշտ առարկաներ, ձևեր:

Վերլուծություն – ստացված արդյունքի համեմատումը ցանկալի արդյունքի հետ:

Կշռադատում – գործունեության մեջ սեփական անձի գիտակցումը գործող սուբյեկտի միջոցով:

1.2. Խաղ, խաղերի տեսակները

Խաղը երեխայի համար առաջնային գործունեությունն է: Այն զգացմունքների արտահայտման և շրջապատող իրականության ճանաչման հզոր միջոց է: Երեխան լրջորեն է վերաբերվում խաղին և նույնպիսի մոտեցում էլ պահանջում է շրջապատից: Խաղի ընթացքում զարգանում է երեխայի ֆիզիկական ուժը, նրա ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը, կարգապահությունը, ճարտարությունը,

ընկերասիրությունը: Բացի այդ, խաղը սոցիալական փորձի յուրացման յուրօրինակ միջոց է, որը բնորոշ է նախադպրոցական տարիքին: Խաղի ընթացքում տեղի են ունենում երեխայի անհատականության էական փոփոխություններ՝ նախապատրաստելով անցումը զարգացման նոր փուլի: Հենց սա էլ, ըստ հոգեբանների, նախադպրոցական երեխայի առաջատար գործունեության հսկայական կրթական ներուժն է:

Խաչատուր Աբովյանը հորդորում էր մանկավարժներին «չզրկել երեխաներին անմեղ խաղերից»: [3, 95]

Մեծն Հովհաննես Թումանյանը գտնում էր, որ խաղը երեխայի «բնական, օրգանական պահանջ է, նրա լրջությունը, նրա էությունը»: [3, 95]

Յուրաքանչյուր խաղացող երեխա փորձում է առաջին հերթին ինքնահաստատվել հասակակիցների միջավայրում: Այստեղ առավելությունը այն է, որ դրա համար կան բոլոր հնարավորությունները:



Խաղը ապահովում է շփումը հասակակիցների հետ, նրանք սովորում են իրարից և ընդօրինակում միմյանց, զարգացնում է խոսքը, հիշողությունը, մտածողությունը, երևակայությունը: Զարգացնում է հուզակամային ոլորտը՝ հույզերը, զգացմունքները, վարքը դառնում է կամածին, երեխան կարողանում է գիտակցաբար վերահսկել իր գործողությունները, պահվածքը, շարժումները, այսինքն, նպատակ է դնում և ջանքեր գործադրում դրանց հասնելու համար: Զարգանում է մոտիվացիոն ոլորտի պահանջմունքները, խաղի միջոցով հեշտ է նպատակադրում իրականացնելը, սովորեցնելը, ցանկություններ առաջացնելը: Կարելի է փոխել նույնիսկ վարքը ճիշտ

խաղերի և խաղալիքների միջոցով: Էական տարբերություն կա այն երեխաների մեջ, ովքեր խաղացել են խաղալիքներով և նրանց, ովքեր չեն խաղացել: Խաղի ժամանակ հնարավոր է նաև հիասթափություն, երբեմն վիրավորանքի և այլ զգացումների դրսևորումներ:

Խաղն ինքնարժեք գործունեություն է և բացարձակ անփոխարինելի է նախադպրոցականի կյանքում: [3, 96]

Խաղ

- ✓ հասակակիցների հետ շփում
- ✓ ճանաչողական գործընթացների զարգացում
- ✓ հուզակամային ոլորտի զարգացում
- ✓ կամածին վարքագծի ձևավորում
- ✓ մոտիվացիոն պահանջմունքային ոլորտի զարգացում

Ըստ Վիգոտսկու՝ եթե նախադպրոցական տարիքում չզարգանային այնպիսի կարիքներ, ինչպիսիք հնարավոր չլիներ անմիջապես իրագործել, ապա խաղը գոյություն չէր ունենա: [5, 7]

Խաղն ունի դրական վերաբերմունք ձևավորելու առավել մեծ հնարավորություն, հետաքրքիր խաղի միջոցով ստեղծվում է աշխույժ, զվարթ տրամադրություն, երեխաների կյանքը դառնում է լիարժեք և բավարարվում է ակտիվ գործունեության պահանջմունքը:

Յուրաքանչյուր խաղին բնորոշ են.

- մտահղացում
- թեմա
- սյուժե
- դերեր
- բովանդակություն

Խաղը կյանքի արտացոլումն է: Խաղի յուրաքանչյուր տեսակ երեխայի զարգացման հրաշալի միջոց է, այստեղ նրա զգացմունքներն ու ապրումներ իրական ու

անկեղծ են, ինչն էլ խոր հետք է թողնում երեխայի գիտակցության վրա: Խաղի միջոցով երեխան մտնում է իր համար անմատչելի իրավիճակների մեջ և ձեռք է բերում իրական փորձ: Խաղի միջոցով երեխան հայտնաբերում է սեփական թաքնված հնարավորությունները և հասնում է կարևոր հաջողությունների: Սա անհաջողակ ու ինքնամփոփ լինելու, անվստահության զգացողությունները թոթափելու հիանալի միջոց է հանդիսանում: Խաղի միջոցով երեխան կարողանում է իր մտքերն ու գործողությունները ծառայեցնել որոշակի նպատակի, դառնում է նպատակասլաց, իրեն համարում է խմբի անդամ, կարողանում է վերահսկել իր արարքները, խորանում է տարբեր մասնագիտությունների նկատմամբ երեխաների հետաքրքրությունը:

Խաղի ժամանակ կարելի է իրականացնել ձևավորվող և նպատակային դաստիարակչական ծրագիր՝ փոխելով տիկնիկների դերը խաղի սյուժեում՝ կարելի է փոխել փոխհարաբերություններում երեխաների դերակատարությունը: Երբ բաշխում ենք դերերը, պետք է հաշվի առնենք, ոչ թե այն փաստը, թե ով լավ կկատարի տվյալ դերը, այլ այն՝ թե ինչ դրական ազդեցություն կունենա երեխաների փոխհարաբերություններում:

Երեխաները խաղալ շատ են սիրում, դա դատարկ հաճույք կամ հասարակ զբաղմունք չէ: Խաղը երեխաներին ուրախություն է պատճառում, երջանկացնում է նրանց: Նրանք դառնում են կենսուրախ և անհոգ: Երեխան խաղի ժամանակ շարժվում է, վազում, թռչկոտում, կառուցում՝ մեծանալով առողջ, ամուր, ուժեղ և հնարամիտ: Խաղալով սովորում են միմյանց մասին հոգ տանել, լինել ուշադիր, ապրել համերաշխ, զիջել ընկերներին: Զարգանում է նաև երևակայությունը և տրամաբանությունը, օրինակ՝ փորձում են գնացք կամ ավտոմեքենա կառուցել ձողերից կամ փայտից:

Շրջապատի կյանքի և բնության մասին պատկերացումները ևս զարգանում են խաղի ժամանակ, նրանք ծանոթանում են մարդկանց կենցաղին, բնության երևույթներին: Ակտիվանում ու հարստանում է բառապաշարը, զարգանում է դիտունակությունը, կապակցված խոսքը, կամային ուշադրությունը, կանոնավորվում է արտասանությունը:

Դաստիարակը պետք է հոգ տանի, որ խաղերը լինեն բազմաբնույթ, հետաքրքիր և օգտակար, քանի որ երեխաները վերարտադրում են այն, ինչ հետաքրքրում է իրենց կամ տեսնում են շրջապատում: Երբեմն երեխաները ինքնուրույն հնարում են օգտակար և հետաքրքիր խաղեր, սակայն չեն կարողանում ստեղծել համապատասխան միջավայր: Այս դեպքում անհրաժեշտ է միջամտել և օգնել՝ ուղղորդելով և միավորելով նրանց: Հաճախ երեխաների մոտ խաղի ժամանակ առաջանում է անհամաձայնություն, օրինակ՝ ինչպես պատրաստել մեքենա կամ որտեղ տեղադրել լուսամուտը, այդ դեպքում դաստիարակը կարող է օգնել նրանց: Սակայն օգնել՝ չի նշանակում նրանց փոխարեն անել այն, ինչ ինքնուրույն էլ կարող են անել: Խաղի ընթացքում երեխաներին պետք է մղել ինքնուրույնության և նպատակին հասնելու ձգտման: Երբեմն մեծահասակների խումբը խաղում է փոքրերի հետ, նմանատիպ խաղերը օգտակար են նրանով, որ փոքրերը մեծերից շատ բան են սովորում, իսկ մեծերն էլ իրենց հերթին հոգ են տանում փոքրերի մասին:

Լինում են դեպքեր, երբ երեխաներից մեկը հաճախակի լինում է ղեկավար, կապիտան, օդաչու, բժիշկ: Այս դեպքում ցանկալի է դաստիարակը ավելի ճիշտ տեղաբաշխումներ անի, որպեսզի մյուս երեխաներն էլ դուրս չմնան խաղից:

Խաղերի մեծ մասը արտացոլում է մեծահասակի աշխատանքը, երեխաները ընդօրինակում են մայրիկների ու տատիկների տնային գործերը, բժշկի, օդաչուի, վարորդի, ուսուցչի աշխատանքը: Խաղերի միջոցով հարգանք է դաստիարակվում ցանկացած գործի նկատմամբ, որը օգտակար է հասարակությանը և խաղն ու աշխատանքը միավորվում են: Այսօր արդեն ժամանակակից համարվող համակարգչային խաղերի ժամանակ երեխան կարող է ձեռք բերել տեսողական խնդիրներ, կեցվածքի ոչ ճիշտ ձևավորում, երբեմն դառնում են ջղագրգիռ, ամփոփվում խաղի մեջ, կտրվում իրականությունից: Յուրաքանչյուր ծնող հետևողական պետք է լինի, որպեսզի երեխան նման խաղերից քիչ օգտվի՝ հետագայում առողջական խնդիրներից խուսափելու համար:



Խաղերի դասակարգումը

Ըստ Կ. Գրոսի	**Ըստ Ա. Գոմի**
1. ռազմական 2. սիրային 3. նմանակող 4. սոցիալական	1. դրամատիկական 2. խաղեր՝ կառուցված ճարպկության և հաջողության

Ե. Հ. Դոբրինսկի և Է.Վ. Սոկոլով

*1. **Ըստ բովանդակության**՝ ռազմական, սպորտային, գեղարվեստական, տնտեսական, քաղաքական*

*2. **Ըստ մասնակիցների**՝ մանկական, մեծահասակների, միայնակ, զույգերով, խմբային*

*3. **Ըստ ընդունակությունների բացահայտման և զարգացման**՝ ֆիզիկական, մրցակցային, ստեղծագործական*

Ըստ Պիաժեի՝ առանձնացվում է խաղի 4 տեսակ՝

- գործնական խաղ

- խորհրդանշական խաղ (սիմվոլիկ)
- կանոններով խաղ
- կառուցողական խաղ

Գործնական խաղի նպատակը խաղային գործունեությունից հաճույք ստանալն է: Օրինակ՝ երբ երեխան սահում է դահուկներով, ամեն անգամ փորձում է ավելի լավ տիրապետել տեխնիկային և զարգացնել արագությունը:

Խորհրդանշական խաղը իրենից ենթադրում է բացակա առարկայի առկայություն և դրամատիկ ներկայացում: Օրինակ՝ «Կարմիր գլխարկ»-ի բեմադրության ժամանակ երեխաներից մեկը ասում է, որ ես կլինեմ փայտահատ և առաջարկում կացինի փոխարեն բարձրացնել իր ձեռքը:

Կանոններով խաղերի ժամանակ բովանդակությունը նախօրոք մշակվում է և պատրաստի ձևով ներկայացվում երեխաներին: Այստեղ երեխաները կամավոր ենթարկվում են խաղին և առկա է հետաքրքրություն և համագործակցություն, առանց որի խաղը չի կարող շարունակվել:

Կառուցողական խաղերը միջանկյալ օղակ են խաղի և աշխատանքի միջև: Երեխան այս ընթացքում ակտիվորեն փորձարկումներ է կատարում, որոնք նրան մղում են ստեղծագործական լուծման և համագործակցության:

ԳԼՈՒԽ 2. ԽԱՂԱԼԻՔԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԿՅԱՆՔՈՒՄ

2.1. Խաղալիքի տեսակները

Խաղալիքը մանկության արբանյակն է, խաղային գործունեության «նյութական հիմքը»:[3, 113]

Ե.Ա. Ֆլյորինան նշում է. «Խաղալիքը երեխային սովորեցնում է ապրել և գործել...»: Խաղալիքը ստեղծվում է երեխաների խաղի նպատակով և խաղային գործունեության հիմնական միջոց է համարվում: Խաղալիքն օգնում է, որ երեխան ճանաչի աշխարհը, յուրացնի մարդկային փորձը, իր գործողությունները դարձնի իմաստավորված, տեսնի աշխարհի բազմազանությունը: Երեխան քաջ գիտակցում է, որ խաղալիքը իսկական չի, բայց արտացոլում է իրական աշխարհը:

Սովորաբար խաղալիքներ են անվանում այն առարկաներին, որոնցով խաղում են: Խաղերն ու խաղալիքները մեզ են հասել անցյալից: Խաղալիք կարող է դառնալ ինչպես երեխայի ձեռքին գտնվող սովորական փայտը, որով նա «ձի–ձի» է խաղում, այնպես էլ որևէ բարդ սարքավորում: Այսինքն՝ խաղի մեջ օգտագործվող ցանկացած առարկա կարող է դառնալ խաղալիք:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խաղալիքը օգտագործվել է դեռ հին ժամանակներից, միայն գնալով փոխվում են նրա տեսակները: Խաղալիքները կատարելագործվում են, նրան ներկայացվող պահանջները՝ ժամանակին համընթաց փոխվում, որովհետև խաղալիքի միջոցով մենք ապահովում ենք երեխաների զարգացումը: Ենթադրվում է, որ տիկնիկները եղել են ամենաառաջին խաղալիքները:

Եթե խաղը համարենք երեխայի աշխատանքը, ապա խաղալիքը կլինի նրա գործիքը: Իսկ պատշաճ խաղալիքը կօգնի երեխային արդյունավետորեն կատարելու իր աշխատանքը:

Օրինակ, երբ երեխան խաղալիք-սայլակ է հրում, զարգանում է նրա մկանային համակարգը, իսկ երբ պարան է խաղում՝ կոորդինացիան, երբ մի ոտքով հարվածում է գնդակին, սովորում է հավասարակշռություն պահպանել, իսկ երբ խորանարդիկներով

որևէ բան է կառուցում, սովորում է ճշգրտորեն կառավարել շարժումները: Շարժական խաղալիքները ապահովում են երեխայի ֆիզիկական զարգացումը, ակտիվ, առողջ երեխան պետք է անընդհատ գտնվի շարժման մեջ:

Երեխաները խաղում են նաև կենցաղային առարկաներով՝ դրանք դարձնելով խաղալիքներ և դրանով յուրացնելով փոխարինող առարկաների ֆունկցիաները: Ճիշտ ընտրված խաղալիքների միջոցով երեխաները սովորում են սիրել, հոգատար լինել շրջապատի նկատմամբ, զարգանում է նրանց հուզական աշխարհը: Խաղալիքների միջոցով երեխաները ձեռք են բերում ընդհանուր որակներ:

Ցանկացած զարգացնող խաղալիք դնում է երեխայի առաջ ուսուցողական խնդիր, որի լուծումը խաղալիքի մեջ է: Խաղալիքները նպաստում են մտավոր ունակությունների, ուշադրության և հիշողության զարգացմանը: Ձևավորվում են կարողություններ և հմտություններ՝ առարկայի անջատման, միացման, շարման, դասակարգման, գործողությունների վերլուծության, համեմատության և ընդհանրացման: Ձևավորվում են ճանաչողական ունակություններ, օրինակ՝ հավաքել ու շարել խորանարդիկները, բացել ու փակել տուփը: Երեխան յուրացնում է նաև առաջ և հետ գործողությունները, ճանաչում առարկաների հատկանիշները (մեծ-փոքր, լայն-նեղ), որակը (ամուր, կարծր, փափուկ, ծանր, թեթև), քանակը (մեկ, շատ, քիչ), չափը, ձևը (շրջան, խորանարդ, գունդ):

Շատ են օգտագործվում «Լեգո» կոնստրուկտորները, որոնք արտահայտում են այսօրվա պահանջները, լայն տարածում են գտել ամբողջ աշխարհում և այսօր արդեն խոսվում է Լեգո-մանկավարժության մասին: [3, 113]

Լեգոներով խաղը զարգացնում է մանր մոտորիկան, գույնի և ձևի մասին պատկերացումները, տարածական կողմնորոշումը, դրական է ազդում խոսքի զարգացման վրա:

Խաղալիքը, իր վառ գույներով ու կերպարային առանձնահատկություններով, երեխային դրդում է ակտիվ գործողությունների և պետք է նպաստի նրա զարգացմանը:

Ցանկացած խաղալիք իր բնույթով բազմաբնույթ է և օգտագործվում է տարբեր նպատակներով:

Խաղալիքների տեսակները

- կերպարային կամ սյուժետային,
- դիդակտիկ,
- առարկայական,
- սպորտային,
- տեխնիկական,
- երաժշտական,
- հետաքրքրաշարժ,
- թատերական,
- շինարարական,
- ինքնաշեն:

Խաղալիքների տեսակներն ըստ Ե.Ա. Արկինի

1. Ձայնային խաղալիքներ – չխկչխկաններ
2. Շարժական խաղալիքներ – գնդակ, հոլ
3. Ձենք – նետ ու աղեղ, բումերանգ
4. Պատկերային խաղալիքներ – տիկնիկներ, կենդանիների պատկերներ
5. պարան, որից տարբեր պատկերներ են պատրաստում

Երեխայի համար խաղալիքը խաղի կենտրոնն է, նրան մղում է դեպի խաղի թեմա, նոր կապեր է ծնում, հարստացնում է զգայական փորձը:

Շատ հաճախ աղջիկները խաղում են միայն տիկնիկներով, հետևաբար և զրկվում են այնպիսի խաղեր խաղալու բերկրանքից, որոնցում ձևավորվում է հնարամտություն և ստեղծագործական հմտություններ: Տղաները սովորաբար մեքենաներով ու զենքերով են խաղում:

Խաղալիքների տեսակները առանձնացնում ենք ըստ սեռի, որովհետև խաղի միջոցով երեխային պատրաստում ենք իր ապագային, այն գործառույթներին, որոնք նա պետք է կատարի հասուն տարիքում:

Իհարկե, կարելի է խաղալ հակառակ սեռին բնորոշ խաղալիքներով, օրինակ՝ տղաները խաղան տիկնիկներով հետաքրքրության համար, բայց եթե ուզում ենք ձևավորել այն կամային որակները, որ տղան պետք է կռվի, պայքարի, համարձակ ու խիզախ լինի, ուրեմն պետք է խաղա համապատասխան խաղալիքով:

Երեխան կարող է կիսվել խաղալիքի հետ, նախատել ու պատժել նրան, խղճալ ու մխիթարել:

Խաղալիքն օգնում է երեխային հաղթահարել մենակության վախը, երբ ծնողները տանը չեն, մթության վախը, երբ անջատում են լույսերը:

Երեխան պետք է ունենա այնպիսի խաղալիքներ, որոնք նպաստում են նրա զգայական ընկալմանը, մտածողության զարգացմանը՝ խաղալով իրական և հեքիաթային իրավիճակներ: Զգացմունքային և բարոյական զարգացման մեջ տիկնիկը մեծ նշանակություն ունի: Երեխայի կամքից ու երևակայությունից ելնելով՝ տիկնիկն իրեն այնպես է պահում, ինչպես նպատակահարմար է փոքրիկ տիրոջը: Տիկնիկը իդեալական ընկեր է, որն ամեն ինչ հասկանում է, խելոք է, լսող և չի դժգոհում: Երեխան տիկնիկի հետ ապրում է ուրիշի բարոյական և զգացմունքային և իր սեփական կյանքը: Երեխաները սիրում են խաղալ նաև փափուկ խաղալիքներով, քանի որ նման խաղալիքները առաջացնում են դրական զգացմունքներ, երբեմն երեխաները քնում են այդ խաղալիքներին փաթաթված: Տիկնիկը կախարդական զորություն ունի, խոսեցնում է նույնիսկ ամենալռակյաց երեխային:

Ճիշտ խաղալիք ընտրելով՝ ծնողը կարող է նաև զարգացնել երեխայի մտածողությունը, ստեղծագործ միտքը, աշխարհընկալումը: Հարկավոր է, որ ծնողը ուշադիր լինի ոչ միայն այն փաստին, թե ինչ խաղալիք է գնում, այլ նաև՝ թե ե՞րբ, երեխայի ո՞ր տարիքում է այն գնում: Խաղալիքը պետք է համապատասխանի երեխայի

տարիքին, քանի որ տարիքից ուշ կամ շուտ այդ խաղալիքը իր գործառույթը չի կատարում:

Խաղալիքի ընտրությունը ըստ տարիքի

Մինչև 1 տարեկան	**1-3 տարեկան**
Չխկչխկաններ Փափուկ խաղալիքներ Խորանարդներ Բուրգ	Սպասք Ծեփամածիկ Խճանկար Ներկեր
3-6 տարեկան	**Բիբաբո** զարգացնում է
Կոնստրուկտոր Գնդակ Հեծանիվ Տիկնիկներ Մեքենաներ	1. Խոսք, բառապաշար 2. Մանր մոտորիկա 3. Հաղորդակցական ընդունակություններ

Խաղալիքներին երեխաները նաև անուններ են տալիս, որոնք հոգեհարազատ են իրենց: Ճիշտ կլինի, որ երեխաները խաղան նաև վարսավիրական խաղալիքներով, թեյի և սեղանի հավաքածուներով, բժշկական պարագաներով, որոնք կարտացոլեն իրականության տարբեր կողմերը:

Խաղալիքը կարող է նաև վախ առաջացնել երեխաների մոտ, օրինակ՝ կան տիկնիկներ, որոնց մազերի ետևի մասը չկա և երեխան ուսումնասիրելիս վախենում է:

Խաղալիքների առատությունը ևս կարող է բացասական ազդեցություն ունենալ երեխայի կյանքում: Այդ պարագայում նա ուշադրությունը կենտրոնացնում է ոչ թե մեկի, այլ բոլորի վրա, դրանից հոգնում ու նյարդայնանում: Խաղալիքը այդպես դառնում է սովորական իր:

2.2. Խաղալիքին ներկայացվող պահանջները

Յուրաքանչյուր տարիք ունի իրեն բնորոշ խաղն ու խաղալիքը, և հարկավոր է մեծահասակի անմիջական միջամտությունը, որպեսզի երեխան համապատասխան տարիքում խաղա համապատասխան խաղալիքներով, դա էլ կնպաստի երեխայի ճիշտ և արդյունավետ հոգեկան զարգացմանը:

Լինելով մանկության անբաժանելի մաս՝ խաղալիքը պետք է համապատասխանի 2 կարևորագույն ցուցանիշի՝ չվնասի երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջությանը և լինի էկոլոգիապես մաքուր ու անվտանգ:

Լավ խաղալիքը պետք է համապատասխան լինի երեխայի տարիքին, նման լինի բնականին և լինի բավականաչափ ամուր: Շատ կարևոր է գնել ոչ միայն գեղեցիկ, ալ նաև անվտանգ ու ճիշտ խաղալիքներ: Խաղալիքներ գնելիս պետք է ինքներս մեզ հարց տանք, թե ինչն է զարգացնում, ինչ գործառույթ է կատարում: Ցանկալի է խաղալիքներ գնել մասնագիտացած խանութներից, որովհետև այնտեղ հայտնվելուց առաջ խաղալիքները անցում են հետազոտություն: Ստուգվում է նրանցում տոքսիկ նյութերի առկայությունը՝ կապար, մկնդեղ, սնդիկ:

Շատ կարևոր է նաև խաղալիքի պաշտպանիչ թաղանթի դիմացկուն լինելը թքի հանդեպ: Փափուկ խաղալիքների համար պետք է խնամքի և մաքրման ցուցումներ լինեն, քանի որ նրանց վրա հավաքված փոշին ալերգիայի առաջացման պատճառ կարող է հանդիսանալ:

Պետք է ուշա դիր լինել նաև քիմիական անվտանգությանը, քանի որ ոչ բոլոր խաղալիքներն են ներկվում էկոլոգիապես մաքուր նյութերով:

Խորհուրդ է տրվում հրաժարվել իրականությանը չհամապատասխանող խաղալիքներից, օրինակ՝ կարմիր ճագար, աստղիկներով կովեր, զոլավոր շներ:

3 տարեկանից փոքր երեխաներին արգելված է տալ այնպիսի խաղալիքներ, որոնց ամրացված են փոքր դետալներ: Նա կարող է դրանք մտցնել քիթը, ականջը, տանել բերանը:

Խորհուրդ չի տրվում նաև չափազանց աղմկոտ խաղալիքներ, որովհետև դրանք կարող են վնասել երեխայի նուրբ ու զգայուն ականջը: Բարձր ձայնը և աղմուկը կարող են հանգեցնել երեխայի գրգռվածության, գլխացավերի ու քնի խանգարման:

Խաղալիքը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին:

1. Տարիք
2. Նյութ
3. Անվտանգություն
4. Ամրություն
5. Նշանակություն
6. Որակ
7. Արտաքին տեսք

Փորձարարական մաս

Փորձարարական մասում կներկայացնենք մեր կազմակերպած խաղերի վերլուծությունը.

Որտեղից է լսվում ձայնը

Խաղի նպատակը – Զարգացնել լսողությունը և ձայնի օգնությամբ կողմնորոշումը տարածության մեջ

Խաղի ընթացքը – Խաղին մասնակցում են 2 երեխա: Մեկը պետք է ձեռքից տարբեր իրեր ցած գցի, օրինակ՝ մատիտ, տետր, պլաստմասսայից բաժակ, մյուսը պետք է գուշակի աչքերը փակ վիճակում, թե որ կողմից է լսվում ձայնը և որ իրը ընկավ ցած:

Նախապես խաղը անց է կացվում բաց աչքերով:

Այս խաղի միջոցով զարգանում է երեխաների լսողությունը, ուշադրությունը, արագ կողմնորոշվելու կարողությունը:

Դիդակտիկ խաղ՝ **«Խանութ»**

Խաղի նպատակը – տղաներին սովորեցնել աղջիկների հետ քաղաքավարի վարվել:

Աղջիկները հանդես են գալիս վաճառողուհիների դերում, տղաները՝ գնորդների:

Խաղի կանոնները – Վաճառողուհիները գնորդների ցանկացած իրերը պետք է տան այն դեպքում, երբ տղաները օգտագործեն «հրաշագործ» բառերը, սիրալիր արտահայտություններ, խոսեն ճիշտ ձևով: Որքան շատ սիրալիր բառեր օգտագործեն տղաները, այնքան շատ իր կստանան:

«Հրաշագործ» բառեր - «Բարև ձեզ», «Խնդրում եմ», «Կարող եք տալ այն մեքենան», «Թույլ տվեք ուսումնասիրեմ այս զենքը», «Ներեցեք», «Շնորհակալություն», «Ցտեսություն» և այլն:

Նույն արտահայտությունը երկրորդ անգամ կրկնել չի կարելի, իսկ սխալ արտահայտության դեպքում գնորդը իր չի ստանում:

Այսպիսով, խաղը երեխաներին սովորեցնում է կիրթ վարվելաձևին, շրջապատում իրենց ճիշտ դրսևորելուն, գրագետ խոսքին, ամրապնդում «հրաշագործ» բառերի մասին գիտելիքները:

Օգնենք իրար - Կառուցողական

Օրիգամի – նավակ

Խաղի նպատակը – Զարգացել երեխաների մտածողությունը, դժվար իրավիճակներից ելք գտնելու կարողությունը:

Կանոնները

Երեխաներին բաժանում ենք զույգերի: Յուրաքանչյուր զույգի տրվում է 1 թուղթ, պետք է պատրաստեն նավակ՝ օգտագործելով մեկ ձեռք (յուրաքանչյուրի): Ժամանակ հատկացնել ռազմավարություն մշակելու, ում որ ձեռքով է հարմար աշխատել, քանի որ մյուս ձեռքով պետք է բռնեն զուգընկերոջ ձեռքը:

Խաղը միտված է զարգացնելու համագործակցություն, աջակցություն ընկերոջը, փոխօգնություն: Հրաշալի տարբերակ է նաև հաշտեցնել 2 անհաշտ երեխաների:

Հետազոտական աշխատանքը կատարելիս օգտվել եմ հարցաթերթիկների մեթոդից.

Հարցաթերթիկ ծնողներին

Հարց 1. Կարևորո՞ւմ եք արդյոք խաղը երեխայի կյանքում.



ա) այո

բ) ոչ

Ծնողների 80%-ը ընտրել է այո, 20%-ը՝ ոչ:

Հարց 2. Որքա՞ն ժամանակ է երեխան խաղում օրվա մեջ խաղալիքով.



ա) 1 ժամից ավել

բ) 1 ժամից պակաս

ա) տարբերակ - 60%, բ) տարբերակ - 40%

Հարց 3. Խաղալիք ընտրելիս արդյո՞ք հաշվի եք առնում երեխայի տարիքը:



ա) այո 70%

բ) ոչ 30%

Հարց 4. Արդյո՞ք հաշվի եք առնում այն փաստը, թե ինչ նյութից է պատրաստված խաղալիքը և ինչ գործառույթ է կատարելու:



ա) այո 40%

բ) ոչ 60%

Հարց 5. Խաղալիք գնելիս երբևէ ուշադրություն դարձրել եք նրա ամրությանը և անվտագությանը.

ա) այո 90%

բ) ոչ 10%

Հարց 6. Ձեզ համար կարևո՞ր է խաղալիքի արտաքին տեսքը.



ա) այո 80%

բ) ոչ 20%

Հարց 7. Խաղալիք գնելիս երեխայի հետաքրքրությունները հաշվի ե՞ք առնում.



ա) այո 50%

բ) ոչ 50%

Հարցաթերթիկ դաստիարակներին

Հարց 1. Կարևորո՞ւմ եք արդյոք խաղը նախադպրոցական տարիքի երեխայի կյանքում.

ա) այո 100%

բ) ոչ 0%



Հարց 2. Հաճախակի եք պարապմունքն անցկացնում խաղի միջոցով.

ա) այո 80%

բ) ոչ 20%



Հարց 3. Ո՞ր խաղերն եք առավել հաճախ կիրառում ձեր պարապմունքներում.

ա) սյուժետադերային 40%

բ) դիդակտիկ 60%

գ) սեղանային 10%



Հարց 4. Արդյոք կիսում եք այն տեսակետը, որ խաղալիքը խաղային գործունեության հիմնական միջոցն է.

ա) այո 100%

բ) ոչ 0%



Հարցաթերթիկ երեխաներին

Հարց 1. Սիրո՞ւմ եք խաղալ խաղալիքներով.

ա) այո 80%

բ) ոչ 20%



Հարց 2. Ո՞ր խաղալիքներով եք նախընտրում խաղալ (տղաներ).

ա) մեքենա 70%

բ) զենք 20%

գ) լեգո 10%



Հարց 3. Ո՞ր խաղալիքներով եք նախընտրում խաղալ (աղջիկներ).

ա) տիկնիկ 70%

բ) խոհանոցային 20%

գ) բժշկական 10%



Հարց 4. Արդյոք տանը խաղո՞ւմ եք խաղալիքներով.

ա) այո 30%

բ) ոչ 70%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքի ընթացքում, ուսումնասիրելով գիտական, գիտամեթոդական գրականություն նախադպրոցական տարիքի երեխայի խաղի, խաղային գործունեության հիմնական միջոցի՝ խաղալիքի վերաբերյալ, կատարելով հարցադրումներ երեխաների, նրանց ծնողների և դաստիարակների շրջանում, վերլուծելով գործնականում անցկացրած խաղերի առանձնահատկությունները, եկանք այն եզրահանգման, որ խաղը երեխայի կյանքում առաջատար գործունեություն է: Խաղային գործունեության ընթացքում բավարարվում են նախադպրոցականի հիմնական պահանջմունքները՝ արտաքին աշխարհը ճանաչելու, ակտիվության և ինքնուրույնության, հաղորդակցման և մեծահասակների կյանքին անմիջականորեն մասնակից լինելու: Խաղային գործունեությունը նպաստում է նախադպրոցական տարիքի երեխայի հուզական, կամային ոլորտի զարգացմանը, գեղագիտական դաստիարակության ու ճաշակի ձևավորմանը:

Խաղի միջոցով կարելի է լուծել ուսումնական խնդիրները պարապմունքների ժամանակ: Դրա համար անհրաժեշտ է ոչ թե պարապմունքը բաժանել խաղի ու աշխատանքի, այլ խաղը ամբողջովին մտցնել ուսումնական գործընթացի մեջ և նպատակներն իրականացնել խաղի միջոցով: Խաղի ընթացքում զարգանում են երեխայի մտավոր ունակությունները, ֆիզիկական ուժը, վարքը, հանդուրժողականությունը, ընկերասիրությունը:

Խաղն ապահովում է հուզական հաղորդակցում մեծահասակների հետ և հասակակիցների հետ, զարգանում է մոտիվացիոն ոլորտի պահանջմունքները, երեխաների կյանքը դառնում է ուրախ և լիարժեք:, իսկ ուսուցման պրոցեսում խաղն ակտիվացնում է անհամարձակ երեխային, քանի որ խաղալիս երեխան իրեն ազատ է զգում:

Յուրաքանչյուր տարիք ունի իրեն բնորոշ խաղն ու խաղալիքները և շատ կարևոր է հաշվի առնել այս փաստը խաղալիք ընտրելիս, քանի որ խաղալիքները նպաստում են

երեխայի մտավոր ունակությունների, հիշողության, ուշադրության, լսողության, մտածողության, տեսողության, երևակայության, մատների մանր մոտորիկայի և ձեռքերի շարժողական կոորդինացիայի զարգացմանը:

Երեխաների մոտ արթնանում է հետաքրքրասիրություն և ձևավորվում է նպատակին հասնելու ունակություն:

Խաղալիք ընտրելիս պետք է հաշվի առնենք նրան ներկայացվող պահանջները՝ երեխայի ճիշտ զարգացումը ապահովելու համար, որովհետև տարիքից ուշ կամ շուտ խաղալիքը իր գործառույթը չի կատարում : Թեև համակարգչային խաղերը մեծ թափով մտել են մեր կյանք՝ իրենց դրական և բացասական կողմերով, սակայն դեռևս պահպանվում է խաղալիքներով խաղալու ձգտումը, քանի որ գնալով կատարելագործվում են նաև խաղալիքները, նրանք դառնում են արդիական և ժամանակին համահունչ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալեքսանդրյան Ա., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 1992, 163 էջ
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, 2004, 446 էջ
3. Մարության Ս.Ա., Դալլաքյան Ա.Մ., Նախադպրոցական մանկավարժություն, Երևան, 2005, 126 էջ
4. Սմբատյան Լ., Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերի կազմակերպումը մանկապարտեզում, Երևան, 2014, 151 էջ
5. Սմբատյան Լ., Խաղերի և խաղ-զվարճալիքների կազմակերպումը մանկապարտեզում, Երևան, 2014, 222 էջ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՆՈՒՀ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ << Նախադպրոցական երեխաների էկոլոգիական կրթության և դաստիարակության էությունը>>

ԿԱՏԱՐՈՂ՝ Լուսինե Սանթոյան

ՂԵԿԱՎԱՐ՝ մ.գ.թ. Լուսինե Միրաբյան

Վանաձոր 2022թ.

Ներածություն----------3
2.Գլուխ 1. Նախադպրոցական երեխաների էկոլոգիական կրթության և դաստիարակության էությունը----------4
3.Գլուխ 2.Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցներն ու մեթոդները----------6
4.Գլուխ 3. Ծնող-մանկապարտեզ կապի դերը էկոլոգիական դաստիարակության հարցում----------
9
5.Գործնական աշխատանք----------10
6.Հետազոտական մաս----------
12
7.Հարցման արդյունքները----------
13
7.Եզրակացություն----------15
8.Գրականության ցանկ----------
16

Ներածություն

Թեմայի արդիականությունը՝

Երեխայի աշխարհաճանաչողականությունը սկսվում է բնաճանաչողությունից: Երեխայի խոսքի ձևավորման հիմքում ընկած են բնական առարկաներն ու երևույթները:

Նախադպրոցական տարիքի երեխաները առաջին հերթին մտածում են գույներով, ձևերով, պատկերներով և դրանցից ձևավորում են ընդհանուր հասկացությունները:

Ցավոք սրտի շատ հաճախ երեխա-բնություն կապը սահմանափակվում է միայն սենյակային բույսերի, կենդանիների խնամքով: Մինչդեռ նախադպրոցական տարիքի երեխաները մեծերի հետ պետք է հաճախ լինեն բնության գրկում, որի արդյունքում նրանք կսովորեն ճիշտ ու նրբանկատորեն ընկալել շրջապատող աշխարհը:

Իմ կարծիքով հաջողությունը կախված է նրանից, թե որքան հաջողված են էկոլոգիական պարապմունքները նախադպրոցական հաստատություններում և որքան սերտորեն են աշխատում ծնողները և խնամողները երեխաների հետ:

Հոր և մոր օրինակը մեծ ազդեցություն ունի տվյալ պարագայում: Ուստի էկոլոգիական կրթությունը նախադպրոցական

Տարիքում մեծ ազդեցություն ունի անձի ձևավորման հարցում: Ճիշտ կրթության և դաստիարակության արդյունքում ձևավորվում են նրբանկատ, բարի, բնասեր, հայրենասեր անձնավորություններ:

Սիրելով իրենց շրջապատը, բնությունը՝ սիրում են իրենց հայրենիքը:

Հետազոտական աշխատանքի նպատակը՝

Ուսումնասիրել էկոլոգիական դաստիարակության նպատակը լուսաբանող գիտական, մեթոդական գրականություն և այլոց փորձերը, կատարել եզրահանգումներ:

Այս նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

1. Նկարագրել էկոլոգիական կրթության և դաստիարակության էությունը
2. Վերլուծել նախադպրոցականների էկոլոգիական կրթության և դաստիարակության մեթոդները

3.Իրականացնել ծնողների ներգրավման աշխատանքներ նախադպրոցական հաստատությունում էկոլոգիական կրթության և դաստիարակության գործընթացում:

Հետազոտական աշխատանքը ներառում է 3 գլուխ, գործնական մաս, հետազոտական մաս:

Գլուխ 1. Նախադպրոցական երեխաների էկոլոգիական կրթության և դաստիարակության էությունը

Մեր մոլորակը կանգնած է գլոբալ աղետի առաջ, էկոլոգիական աղետի եզրին: Հատկապես, երբ երբ մենք ապրեցինք կորոնավիրուսային համաճարակի ժամանակաշրջան: Մարդն ապրում է անընդհատ սպառելով բնության բարիքները և մեր ընդհանուր <<տունը>> կարող ենք փրկել բոլորս միասին: ՞

Ուստի էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը մեր ժամանակաշրջանի կարևոր գոյապահպանման պահանջն է: Արդեն նշել եմ, որ էկոլոգիական կրթության սկիզբը դրվում է նախադպրոցական տարիքում:

Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում իրենից ներկայացնում է մանկավարժական նպատակային ներգործություն՝ ուղղված երեխաների էկոլոգիական մշակույթի (վարվելակերպի) ձևավորմանը, որն արդյունք է էկոլոգիական գիտակցության և մտածողության ու դրսևորվում է շրջակա միջավայրի հանդեպ որոշակի հուզական վերաբերմունքով և բնապահպան գործունեությամբ: [2, էջ 87]

Ելնելով սրանից մեր խնդիրն է երեխայի մոտ պատկերացում ձևավորել կենդանի և անկենդան բնության մասին: Վաղ տարիքում երեխան տեսնելով ծառի կտրված ճյուղը կամ թևը վնասված թռչունին կարող է լաց լինել: Այսինքն, փոքրիկը ընկալելով այս ամենը, կարեկցանքի զգացմունք է ապրում:

Երեք տարեկան երեխայի մտածողությունը կապված է ընկալման հետ, նա մտածում է այն բանի շուրջ, որն ընկալում է տվյալ պահին: Իսկ այն տարիքում, երբ երեխան ճանաչում է իր շրջապատող աշխարհը, կարևոր է, որ նրա շրջապատում լինեն բույսեր, կենդանիներ, թռչուններ, բնական նյութեր, որոնց կարող է հետևել, դիտել, խնամել:

Իսկ արդեն կրտսեր և միջին խմբերում անհրաժեշտ է, որ երեխաները իմանան բնության մեջ գոյություն ունեցող կապերի մասին: Օրինակ երեխաներին ներկայացնում ենք, որ սենյակային բույսերն ունեն խնամքի կարիք՝ հետևելով բնության անկյան բույսերին: Կամ ձմռանը կերակրելով ձմեռող թռչուններին՝ երեխաները հասկանում են, որ նրանք էլ ունեն սննդի կարիք:

Երեխաները պետք է իմանան, որ բնության մեջ չկան վնասակար կենդանիներ: Էկոլոգիայի պարապմունքների ընթացքում երեխան իմանում է, որ իր պատկերացրած չար գայլը այդքան էլ չար չէ: Այն համարվում է <<բնության սանիտար>>, որովհետև սնվում է հիվանդ եղնիկներով: Բացատրում ենք, որ պարտավոր չէ սիրել բոլոր կենդանիներին, բույսերին, բայց նա պետք է սովորի պահպանել, չավիրել այն տարածքները, բնության այն անկյունը արտեղ ապրում են այդ կենդանիները, աճում են այդ բույսերը:

Էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունն առավել բարձր մակարդակի հասցնելու նպատակով մենք խմբասենյակում ունենք բնագիտակ անկյուն, որն անընդհատ փոփոխվում է՝ ելնելով եղանակային փոփոխություններից և թեմատիկ պարապմունքներից:

Այստեղ կատարվում ենք զանազան փորձեր, որոնց միջոցով երեխաներին ներկայացնում ենք բնական տարբեր երևույթներ. օրինակ մագնիսականությունը, ջրի հատկությունները և այլն: Այստեղ տեղ են գտել մագնիսներ, կողմնացույց, հեռադիտակ, ժամացույցներ, ջերմաչափեր: Մանր նյութերը պահում ենք (ավազ, քարերի տեսակներ, կոճակներ, ուլունքներ, որոնք վտանգ են ներկայացնում ավելի փոքր տարիքի երեխաների համար) փակվող տուփերի մեջ: Խմբասենյակում ունենք գյուղատնտեսական փոքրիկ գործիքներ՝ բահեր, դույլեր, փոցխեր, ցնցուղներ, որոնք օգտագործում ենք բակում ծաղիկներ աճեցնելու, ծառերը խնամելու, սերմեր ցանելու նպատակով: Այս ամենի նկատմամբ երեխաները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում:

Պետք է նշեմ նաև, որ նախադպրոցական տարիքում երեխաները անշունչ առարկաներին շունչ ու հոգի են տալիս: Նրանք կարծում են, որ կենդանիները, բույսերը կարող են խոսել, մտածել, զգալ: Օգտագործելով այդ հատկանիշը՝ մենք կարող ենք երեխայի մեջ ձևավորել, որ մարդը բնության մի մասնիկն է, որ կենդանիների, բույսերի բոլոր տեսակները արժեքավոր են:

Այսօր նախադպրոցական կրթության ծրագրում էկոլոգիական անվտանգությանն ավելի քիչ ուշադրություն են դարձնում: Մինչդեռ երեխան պետք է իմանա, որ մասսայական ծառահատումներն ու ջրերի մեջ աղբ նետելը վնասակար է առողջության համար: Այդ բացը լրացնում է նախադպրոցական հաստատության դաստիարակը՝ կազմակերպելով էքսկուրսիաներ և զբոսանքներ:

Գլուխ 2.Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցներն ու մեթոդները:

Մեթոդը բնապահպանական կրթության տեսանկյունից, դաստիարակի և երեխաների համատեղ գործունեության միջոց է, որի ընթացքում իրականացվում է բնապահպանական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների, ինչպես նաև արտաքին աշխարհի նկատմամբ վերաբերմունքի ձևավորում: [3, էջ 25]

Մանկավարժական գործունեության մեջ կիրառվում են հետևյալ ձևերը՝

1. Ֆրոնտալ
2. Խմբակային
3. Անհատական [3, էջ 35]

Էկոլոգիական դաստիարակության հիմնական մեթոդը դիտումն է: Առավոտյան հավաքին կամ զբոսանքի ժամանակ դիտում ենք ամպերը, հնարավորության դեպքում անձրևի և ձյան երևույթը՝ ելնելով տարվա եղանակից: Դիտումների շնորհիվ երեխան ձեռք է բերում տարբեր հմտություններ: Այն ամենը ինչ կարելի է երեխաների ձեռքը դնել, նրանց առաջարկվում է փորձաքննություն, որում ներառում ենք հնարավորին շատ զգայարաններ: Երբ երեխան վերցնում է բնական բանջարեղենը, մրգերը, հարվածում է, զննում է, սեղմում է, հոտոտում է և վերջապես համտեսում է, այսինքն՝ զննում է բոլոր զգայական ձևերով:

Դիտումներն ամրապնդվում է նաև, երբ ձեռքերով պատկերում ենք բնական առարկայի չափը, ձևը, բարձրությունը, երկարությունը: Նկարելով օդում լոլիկ, խնձոր, գազար կամ կլոր ձմերուկ, խնդրում եմ երեխաներին կրկնել նույնը իրենց ձեռքերով: Շարժումներն ամրապնդում են այն ինչ տեսել են աչքերով և նշել բառերով:

Ավագ նախադպրոցական տարիքում երեխաները մեծ հաճույքով փորձեր են կատարում: Օրինակ խաղ-փորձի ընթացքում երեխաները բացահայտում են, որ ջուրը պինդ վիճակիրց՝ սառույցից վերածվում է հեղուկ ջրի: Այդպես մենք սառույցն ափի մեջ պահելով՝ անմիջական մասնակցություն ենք ցուցաբերել ջրի կաթիլի ծնվելու գործընթացին: Հետազոտական նման աշխատանքները խթանում են երեխաների հետաքրքրասիրությունը:

Փորձերը միշտ կատարվում են իմ օգնությամբ և եթե կարիք կա նաև՝ մասնակցությամբ: Օրինակ, երբ հեղուկ ջուրը տաքացնելու ընթացքում վեր է ածվում գոլորշու: Այս բոլորը նախապես պլանավորվում և նախապատրաստվում է շաբաթվա այլ ռեժիմային պահերի ժամանակ՝ ազատ գործունեության ժամանակ:

Երեխաները էկոլոգիական դաստիարակություն են ստանում նաև պրակտիկ գործունեության ընթացքում՝ հենվելով մեծահասակների օրինակների վրա: Օրինակ ծառ տնկել, ծաղիկ աճեցնել, կենդանիներին խնամել, բակը ազատել աղբից:

Համագործակցային մեթոդի կիրառումը օգտակար կարող է լինել թե՛ բարձր առաջադիմություն, թե՛ ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար: Դրա կիրառման հիմնական քայլերն են՝

1. Ուսուցանող նյութի նպատակի հստակ սահմանում
2. Շարժառիթի, դրդապատճառի ստեղծում
3. Ուսուցանվող մյութի, թեմայի վերաբերյալ տեղեկատվության մատուցում
4. Համագործակցային խմբերի ստեղծում, երեխաների թիմերի բաժանում
5. Թիմային աշխատանքի վերջնական արդյունքի ներկայացում: [4, էջ 48]

<u>Խաղ-փորձի մեթոդիկա</u>

Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում այս մեթոդիկայով աշխատելը մեծ հետաքրքրություն է առաջացնում: Նախապես երեխաներին ներկայացնում ենք փորձի նպատակը, որպեսզի երեխաները ինքնուրույն կարողանան կատարել փորձը: Երեխաները որոշակի ժամանակահատվածում քննարկում են խնդիրը և որոշում կայացնում: Փորձերը կատարում ենք 2 տարբերակով՝

1. Երեխաները կատարում են փորձ՝ չիմանալով արդյունքի մասին:
2. Երեխաները նախապես կանխատեսում են փորձի արդյունքները:

Առաջին դեպքում բացում ենք տաք թերմոսի բերանը և վերևում պահում ենք ապակի: Որոշ ժամանակ անց ապակու վրա հայտնվում են ջրի կաթիլներ: Կատարում ենք եզրակացություն՝ դա գոլորշին է, այսինքն ջուրը՝ գազային վիճակում: Կատարեցինք փորձը՝ չիմանալով արդյունքի մասին:

Երկրորդ դեպքում՝ յուրաքանչյուր երեխաներին տրամադրվում է երկուական ափսե: Մեկի մեջ դրված է սառույց, մյուսում՝ ձյուն: Կատարելուց հետո եզրակացնում ենք. ձյունը և սառույցը նույնպես ջուր են, սակայն պինդ վիճակում: Այս փորձի ժամանակ երեխաներն արդեն գուշակում էին արդյունքը:

Բնության հետ ծանոթանալու մեթոդ է նաև <<բնության արտացոլված մեթոդը>>, որ իրականացվում է տարբեր խաղային իրադրություններում և երեխայի կողմից նկարագրվում են բնության տարբեր երևույթներ, որոնք վերլուծվում և ամփոփվում են դաստիարակի օգնությամբ:[2, էջ 88]

Օրինակ <<Քամին ու տերևները>> խաղի նպատակն է ամրապնդել էքսկուրսիաների, զբոսանքների ժամանակ ստացած գիտելիքները աշնանային երևույթներից՝ քամու, տերևաթափի մասին: Երբ հրահանգում են <<քամին փչեց և տերևները պտտվեցին>> երեխաները պտտվում և ասում են <<ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ>> և կքանստում: <<Քամին տերևները տարավ>> հրահանգի դեպքում երեխաները շրջան են բռնում և երգում:

Երեխաները էկոլոգիական գիտելիքներ են ստանում նաև էքսկուրսիաների, զբոսանքների ժամանակ: Դիտում ենք ամպերը, գուշակում օրվա եղանակը,

հնարավորության դեպքում անձրևի և ձյան երևույթը՝ ելնելով տարվա եղանակից: Զմռանը պատրաստում ենք ձնեմարդ, որի ժամանակ ուշադրություն ենք դարձնում ձյան կպչուն հատկանիշին: Դիտում ենք անձրևից առաջացած ջրափոսը, դուրս եկած որդերին: Լրացնում ենք բնության օրացույցը:

Նկարների միջոցով ճանաչում և պատմում ենք, թե տրված նկարում ո՞ր կենդանին է գիշատիչ, ինչո՞վ են նրանք սնվում:

Էկոլոգիական դաստիարակության հաջորդ միջոցը մանկապարտեզում իրականացվող օրինակելի պարապմունքն է: Այն նախապես պլանավորված է և նպաստում է էկոլոգիական գիտելիքների յուրացմանը:
Էկոլոգիական դաստիարակության կազմակերպման ձևերն են՝

Էքսկուրսիաները և արշավները
Բացօթյա կամ բնության գրկում կազմակերպվող հանդեսներն ու տոնակատարությունները
Բնաճանաչողական տոնահանդեսները (ծաղկի տոն, բերքահավաքի տոն, վարդավառ)
Էկոլոգիական միջոցառումները՝ շաբաթօրյակները, ծառատունկը, միջավայրի բարեկարգումը: [2, էջ 88]

Գլուխ 3. Ծնող-մանկապարտեզ կապի դերը էկոլոգիական դաստիարակության հարցում

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում դաստիարաության կարևորագույն միջոցներից է՝ ծնողների հետ տարվող համատեղ աշխատանքը:
Մեր ժամանակներում ծնողներից շատերը իրենց ուշադրությունը սևեռում են ոչ թե երեխայի անձի զարգացման վրա, այլ գրելու, կարդալու, հաշվելու, ունակությունների ձևավորման վրա:
Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ էկոլոգիական դաստիարակությունը հնարավորություն է տալիս, որպիսի երեխան բազմակողմանի զարգանա (խոսք, հիշեղություն, հետևողականություն և այլն):
Դաստիարակի խնդիրն է ծնողներին այդ մասին տեղեկացնելով փոխել նրանց վերաբերմունքն այդ ուղղությամբ: Երբեմն ծնողները տեղեկատվություն են ստանում <<մանկապարտեզ-ընտանիք>> կապի շնորհիվ: Այն իրականացնում ենք ծնողական ժողովների, զրույցների, կլոր սեղանի, բանավեճերի միջոցով:
Ծնողների միջոցով մանկապարտեզում կազմակերպում ենք <<Անտառի տուն>>, <<Ծաղկի տոն>>, <<Պահպանիր բնությունը>>, <<Աշնան տոն>> և այլն:
Սրանք նախադպրոցական տարիքի երեխաների մոտ ձևավորում են սեր դեպի հայրենի բնությունը:
Բացի տոներից ծնողների անմիջական մասնակցությամբ երեխաների հետ կազմակերպում ենք շաբաթօրյակներ, որոնք երեխաների մեջ սերմանում են սեր ու հարգալից վերաբերմունք շրջակա միջավայրի հանդեպ: Ինչպես նաև երեխայի մոտ ձևավորվում է կոկիկություն, մաքրություն, ուշադրություն:
Մանկապարտեզում ծնողների օգնությամբ մենք պատրաստել ենք թռչնաբներ, որոնք փակցրել ենք բակի ծառերի վրա: Գործընթացի ընթացքում երեխաները գաղափար կազմեցին չվող և ձմեռող թռչունների մասին:
Այսպիսով, իմ աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ ճիշտ մոտեցման դեպքում ծնողները սկսում են ձգտել ակտիվ համագործակցության և մեր միջև փոխըմբռնում է ձևավորվում: Այսօր էկոլոգիական բարեփոխումների այնպիսի մի դարաշրջանում ենք ապրում, որ ծնողները հաճախ չեն հասկանում այդ փոփոխությունները: Եվ մեր առջև գերխնդիր կա՝ իրազեկել ծնողին այդ փոփոխությունների մասին: Ստանալով ճիշտ գիտելիք՝ ծնողը երեխայի հետ միասին կկանգնի էկոլոգիական դաստիարակության ճիշտ ուղու վրա:
Այսպիսով էկոլոգիական դաստիարակության գործընթացի մեջ ծնողին ներգրավելու դեպքում պետք է հաշվի առնել նաև ծնողի նախասիրությունները:

<u>Գործնական աշխատանք</u>

Թեմա ՝<<Ջուրը կյանք է>>

Նպատակը- տալ գիտելիքներ բնության մեջ, կենցաղում ջրի դերի և նշանակության մասին
Ծանոթանալ թրի հատկություններին, վիճակներին

Խնդիրներ –գիտելիքներ հաղորդել շրջակա միջավայրի, ջրի մասին
Ծանոթանալ առանձնահատկություններին
Զնավորել պատկերացում ջրի ճանապարհորդության մասին

Անհրաժեշտ նյութեր- քարտեզ, գետերի, լճերի, օվկիանոսների, ծովերի նկարներ, ջուրը կենցաղում պատկերող նկարներ, թեյնիկ, սառույց, ջրով լի բաժակներ

Պարապմունքի ընթացքը ՝

Խթանում-պարապմունքն սկսեցի կանելուկի առաջադրմամբ.

Ցրտին ճերմակ վերմակ է փռում,
Շոգին ծարաված շուրթերն է բացում:
Այն գործածում են ամեն օր ու ժամ,
Ցանկալի հյուրն է ամեն-ամեն տան:
(ջուր)

Զրույց ՝ ջրի կարևորության մասին
1.Ո՞ւմ է անհրաժեշտ ջուրը և ինչո՞ւ:
2.Ի՞նչ կլիներ, եթե երկրի վրա ջուր չլիներ:
3.Ասում են՝ ջուրը շատ գործեր ունի: Որո՞նք են դրանք:
4.Ինչպե՞ս է մարդն օգտագործում ջուր:
5.Քարտեզի վրա ո՞ր գույնն է ավելի շատ:

Իմաստի ընկալում ՝Երեխաների հետ քննարկեցինք մեր դիտումների արդյունքները: Դիտելով աշխարհի քարտեզը նկատեցինք, որ կապույտ գույնը շատ է, դա ջրի գույնն է: Շարունակեցի բացահայտել, որ գետերում, լճերում, ծովերում ջրերը տարբեր են՝ աղի, անհամ: Մենք խմում ենք քաղցրահամ ջուր: Մարդը չի կարող աղու ջուր խմել, իսկ քաղցրահամ ջուրը քիչ է երկրագնդի վրա: Մենք օգտագործում ենք գետերի և լճերի ջրերը, իսկ

դրանք մաքրված են հատուկ կայաններում: Իսկ ինչպիսին է ջուրը, ունի հոտ, սառն է, թե տաք (թափանցիկ է, հեղուկ, անհոտ և անհամ):

Ֆիզդաստար-

Երբ արևը շողշողում է,
Ես ձեռքերս լվանում են,
Օճառում եմ, տրորում եմ,
Միկրոբներին հեռացնում եմ,
Երբ լուսինը փայլփլում է,
Ես ձեռքերս լվանում եմ,
Օճառում եմ, տրորում եմ,
Միկրոբներին հեռացնում եմ:

Միաժամանակ ցուցադրում եմ համապատասխան գործողություններ:
Այնուհետև հիշեցնում եմ երեխաներին, որ ջրի կաթիլները, երբ սառչում, վերածվում են ջրի կաթիլների, իսկ ցրտին, սառնամանիքին ջուրը սառչում է, վերածվում սառույցի:
Իսկ այժմ եկեք տեսնենք, թե ջուրն ինչպե՞ս է ճանապարհորդում (ցուցադրվում է <<Կաթիլի ճանապարհորդությունը>> մուլտֆիլմը):
Կշռադատում հարցնում եմ
1.Ի՞նչն էր ձեզ համար ամենահետաքրքիրը:
2.Կա՞ր մի բան, որն արդեն գիտեիք:

Երեխաները խմբերում հարցերը քննարկելուց հետո պատասխանում են: Նյութն ամփոփեցի՝ մեջբերելով երեխաների պատասխանները:
Օրինակ՝ - <<Ես հասկացա, որ ձեզ համար ամենահետաքրքիրն այն էր, որ…>>
Պարզվեց, որ դուք արդեն գիտեք, որ՝
Փորձ 1. Ջրով լի բաժակի մեջ գցում ենք ուլունք, ցույց տալիս, որ մաքուր ջուրը թափանցիկ է, իսկ ջուրը կեղտոտելուց հետո (ջրաներկով ներկում ենք) ուլունքը չի երևում:
Եզրակացնում են՝ մաքուր ջուրը թափանցիկ է:
Փորձ 2. Երեխաներին բաժանում ենք սառույցի կտորներ: Երեխաները ափի մեջ տաքացնելով ստանում են ջրի կաթիլներ:
Եզրակացնում են՝ տաքացնելուց հետո պինդ ջուրը վերածվում է հեղուկ ջրի:
Փորձ 3. Ձյան հալոցքի ջուրը լցրեցի զտիչ թղթով ծածկված ափսեի մեջ: Երեխաների հարցրեցի <<Ջուրը մաքու՞ր է, թե՞ կեղտոտ: Ի՞նչ ենք տեսնում թղթի վրա: Արդյո՞ք մաքուր է ձյունը>>: Երեխաները սեփական աչքերով տեսնում են և համոզվում, որ

հալոցքի ջուրը մաքուր չէ: Եզրակացություն. Ջյունը չի՛ կարելի համտեսել, քանի որ այն մաքուր չէ, կեղտոտ է:
Փորձ 4.Բացեցի տաք թերմոսի բերանը և վերևում պահեցի ապակի:Որոշ ժամանակ անց ապակու վրա հայտնվեցին ջրի կաթիլներ: Եզրակացություն. Դա գոլորշին է, այսինքն ջուրը՝ գազային վիճակում:

<u>Հետազոտական մաս</u>
Հետազոտության իրականացման նպատակով ուսումնասիրել եմ մի շարք ուսումնական աշխատություններ: Գիտամանկավարժական գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակն է՝

- Բնության, նրա հարստության, շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում:
  Այս առումով կրթական համալիրն ունի ավելի բարդ առաքելություն, այն է ձևավորել սերունդ, որն ունի ինքնուրույնություն, մտածելու, վերլուծելու կարողություն:

Հետազոտությունս անց եմ կացրել Վանաձոր քաղաքի թիվ 11 մանկապարտեզի ավագ ,,բ,, խմբի երեխաների հետ: Հետազոտության մեջ ներառել եմ հետևյալ հարցերը՝

1.Մարդ պետք է արդյո՞ք վնասի բնությունը, նրա գեղեցկությունը:
ա) այո
բ) ոչ

2. Քայլում ես փողոցով ու քո ձեռքի օգտագործած անձեռոցիկը
ա) թափում ես ուր պատահի
բ) պահում ես այնքան ժամանակ, մինչև հանդիպի աղբարկղ

3. Ծորակից ջուր լցնելուց հետո
ա) անմիջապես փակում ես
բ) բաց ես թողնում

4. Կմաքրե՞ք ուրիշի թափած աղբը
ա) այո
բ) ոչ

5.Մարդը և բնությունը կարո՞ղ են բարեկամներ լինել
ա) այո
բ) ոչ
6. Երբևէ պոկե՞լ եք ծառի ճյուղեր:

ա)այո
բ)ոչ

<u>Հարցման արդյունքները</u>

1.Մարդ պետք է արդյո՞ք վնասի բնությունը, նրա գեղեցկությունը:



Գծապատկերից երևում է, որ դեռ կան երեխաներ, ովքեր գտնում են, որ պետք է վնասել բնությունը:

2. Քայլում ես փողոցով ու քո ձեռքի օգտագործած անձեռոցիկը
ա) թափում ես ուր պատահի
բ) պահում ես այնքան ժամանակ, մինչև հանդիպի աղբարկղ

Գծապատկերից երևում է, որ երեխաների միայն 10% են թափում որտեղ պատահի:

3. Ծորակից ջուր լցնելուց հետո
անմիջապես փակում ես
բաց ես թողնում



Գծապատկերից երևում է, որ երեխաները խնայում են խմելու ջուրը:

4. Կմաքրե՞ք ուրիշի թափած աղբը

Գծապատկերից եզրակացնում ենք, որ այն երեխաները, ովքեր անձեռոցիկը փողոցում թափում են ուր պատահի, ուրիշի թափած աղբը չեն մաքրի:

5.Մարդը և բնությունը կարո՞ղ են բարեկամներ լինել

Չնայած նրան, որ բոլորի պատասխանը դրական էր, սակայն քչերը կարողացան հիմնավորել այն:

6. Երբևէ պոկե՞լ եք ծառի ճյուղեր:



Գծապատկերը ցույց է տալիս, որ դեռ կան երեխաներ, ովքեր վնաս են հասցնում բնությանը:
Հարցումն ինձ օգնեց ավելի ճիշտ գնահատել երեխաների գիտելիքները: Ես համոզված եմ, որ մինչև տարեվերջ այն երեխաները, ովքեր ճիշտ չէին պատասխանել կշտկեն իրենց՝ կդառնան ավելի բանիմաց:
Սա տեղիք է տալիս մտածելու, որ ես դեռ անելիք ունեմ և չի կարելի սահմանափակվել
միայն մանկապարտեզի էկոլոգիական դաստիարակությամբ: Այն շարունակական պրոցես է և պետք է ուղեկցի երեխային իր ողջ կյանքի ընթացքում:

Եզրակացություն

Հետազոտության արդյունքում եկա այն եզրակացության, որ էկոլոգիական կրթությունը մեծ ազդեցություն է ունենում անձի ձևավորման վրա: Այն ոչ միայն էկոլոգիական գիտելիքներ է տալիս նախադպրոցական տարիքի երեխաներին, այլ նաև ձևավորում է մաքուր, կոկիկ, ուշադիր անհատներ:
Էկոլոգիայի պարապմունքի ընթացքում երեխայի մեջ ձևավորում է սեր դեպի գեղեցիկը, բնությունը մի հզոր գործիք է դառնում նոր ձևավորվող մարդու համար: Անգամ հեքիաթ պատմելու ընթացքում, երբ կենդանիներին նմանեցնում ենք մարդկանց՝ դա ևս դաստիարակության միջոց է դառնում. չլինել խոզի պես ագահ ու փնթի, այլ լինել առյուծի պես հզոր ու խելացի: Երեխայի մեջ կենդանիների ամեն տեսակին բնորոշ բացասական ու դրական կողմով սերմանվում է սեր դեպի լավը և զզվանք դեպի վատը:
Ես հասկացա, որ այնքան էլ հեշտ չէ երեխայի գիտակցությանը հասցնել այն, որ մեր մոլորակի գոյատևումը կախված է մեր իսկ հոգատարությունից: Եվ որ ամենակարևորը անհրաժեշտ է ամեն բան ցուցադրել փորձով՝ զարգացնելով ուսումնասիրելու կարողությունը: Չէ՞ որ բնության մեջ կան դեռ չբացահայտված երևույթներ…
Կատարելով հետազոտական աշխատանք եկա հետևյալ եզրահանգումների.

1. Էկոլոգիական կրթության համակարգում էկոլոգիան առաջին հերթին դիտարկվի որպես գիտություն՝ կենդանի օրգանիզմների և շրջակա միջավայրում միմյանց հետ կապերի մասին:
2. 2.5-6 տարեկանում դիտվում է երեխաների ճանաչողության աստիճանական անցում ավելի բարձր աստիճանի՝ բարձրակարգ մտածողության:
3. Անցկացրած հարցումները ցույց տվեցին, նախադպրոցականների մի մասը <<բնություն>> հասկացությունը ընկալում է որպես ինչ-որ հեռու երևույթ՝ ուշադրություն չդարձնելով իր շրջապատի բնական օբյեկտներին:
4. Երեխաների վարքագիծը ձևավորվում է իրենց շրջապատող մարդկանց ընդօրինակմամբ:

Գրականության ցանկ

1.Ա. Յու. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան <<Մանկավարժություն>>, Երևան 2005թ. 455էջ
2. . Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարքում, մեթոդական ուղեցույց դաստիարակների համար, Երևան 2007թ. 77էջ
3.Ս.Ա. Մարության, Ա. Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>> Երևան 2005թ., 128 էջ
4. 3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակերպումը այլընտրանքային մոդելներով, մեթոդական ուղեցույց դաստիարակների համար, Երևան 2018թ., 200 էջ